

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**  
**YEREVAN STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
*ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*  
**ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА**  
*ПРАВОВЕДЕНИЕ*  
**JOURNAL OF YEREVAN UNIVERSITY**  
*JURISPRUDENCE*

**№ 2(43)**  
**2025**

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երկու անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի

Журнал «Вестник Ереванского университета. Правоведение» выходит два раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета" Two issues of "Journal of Yerevan University. Jurisprudence" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009

**Խմբագրական խորհուրդ.**

**Редакционная коллегия:**

**Editorial Board:**

**Գլխավոր խմբագիր՝**

**Главный редактор:**

**Editor-in-chief:**

**Դանիելյան Գևորգ** (Ի.գ.դ., պրոֆ.,

gdanielyan@ysu.am)

**Даниелян Геворг** (Ժ.յու.դ., պրոֆ.)

**Danielyan Gevorg** (Sc. D. in Legal Sciences, Prof.)

**Անտոնյան Յուրի** (Մոսկվա, Ի.գ.դ.,

պրոֆ., antonyaa@yandex.ru)

**Антонян Юрий** (Москва, Ժ.յու.դ., պրոֆ.)

**Antonyan Yuri** (Moscow, Sc. D. in Legal Sciences, Prof.)

**Ավագյան Սուրեն** (Մոսկվա, Ի.գ.դ.,

պրոֆ., avakian@law.msu.ru)

**Авакян Сурен** (Москва, Ժ.յու.դ., պրոֆ.)

**Avagyan Suren** (Moscow, Sc. D. in Legal Sciences, Prof.)

**Գևորգյան Կարեն** (Ի.գ.թ.,

k.gevorgyan@ysu.am)

**Геворкян Карен** (Կ.յու.դ.)

**Gevorgyan Karen** (PhD in Legal Sciences)

**Դյուրան Բեռնարդ** (Մոնպելյե, Ի.գ.դ.,

պրոֆ., pas2k@orange.fr)

**Дюран Бернард** (Монпелье, Ժ.յու.դ., պրոֆ.)

**Duran Bernard** (Montpellier, Sc. D. in Legal Sciences, Prof.)

**Խաբրիևա Տալիա** (Մոսկվա, Ի.գ.դ.,

պրոֆ., ՌԴ ԳԱ ակադեմիկոս, office@izak.ru)

**Хабриева Талия** (Москва, Ժ.յու.դ., պրոֆ., академик РАН)

**Khabrieva Talia** (Moscow, Sc. D. in Legal Sciences, Prof., Academician of RAS)

**Կուրի Հելմուտ** (Ֆրայբուրգ, Ի.գ.դ.,

պրոֆ., helmut.kury@web.de )

**Кури Хельмут** (Фрайбург, Ժ.յու.դ., պրոֆ.)

**Kury Helmut** (Freiburg, Sc. D. in Legal Sciences, Prof.)

**Հարությունյան Գագիկ** (Ի.գ.դ., պրոֆ.,

ggharut@yahoo.com)

**Арутюнян Гагик** (Ժ.յու.դ., պրոֆ.)

**Harutyunyan Gagik** (Sc. D. in Legal Sciences, Prof.)

**Հովհաննիսյան Վահե** (Ի.գ.դ., պրոֆ.,

vahehovhannisyan@ysu.am)

**Оганнисян Варе** (Ժ.յու.դ., պրոֆ.)

**Hovhannisyan Vahe** (Sc. D. in Legal Sciences, Prof.)

**Ղազինյան Գագիկ** (Ի.գ.դ., պրոֆ., ՀՀ

ԳԱԱ ակադեմիկոս, gghazinyan@ysu.am)

**Казинян Гагик** (Ժ.յու.դ., պրոֆ., академик НАН РА)

**Ghazinyan Gagik** (Sc. D. in Legal Sciences, Prof., Academician of NAS RA)

**Մարգարյան Աննա** (Ի.գ.դ., պրոֆ.,

annamargaryan@ysu.am)

**Маргарян Анна** (Ժ.յու.դ., պրոֆ.)

**Margaryan Anna** (Sc. D. in Legal Sciences, Associate Prof.)

**Չուչա Սերգեյ** (Մոսկվա, Ի.գ.դ., պրոֆ.,

chuchaigpan@gmail.com)

**Чуча Сергей** (Москва, Ժ.յու.դ., պրոֆ.)

**Chucha Sergey** (Moscow, Sc. D. in Legal Sciences, Prof.)

**Ուայթսել Աննա Մարի** (ԱՄՆ, Ջորջթաունի համալսարան, Ի.գ.դ., պրոֆետոր, aw813@georgetown.edu)

**Уайтселл Энн Мари** (ՄԱՄ, Ջորջթաունի համալսարան, Ժ.յու.դ., պրոֆ.)

**Whitesell Anne Marie** (USA, Georgetown University, Sc. D. in Legal Sciences, Prof.)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ \* СОДЕРЖАНИЕ \* CONTENTS

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА THEORY AND HISTORY OF STATE AND LAW

- Սերգեյ Քոչարյան* – Իրավական ակտերի համակարգման ձևերը..... 6  
*Sergey Kocharyan* – Формы систематизации правовых актов  
*Sergey Kocharyan* – Forms of Systematization of Legal Acts

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО CONSTITUTIONAL LAW

- Հրանուշ Հակոբյան, Ռուզաննա Հակոբյան* – Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի իրացման հիմնախնդիրների մասին ..... 18  
*Грануш Акобян, Рузанна Акобян* – Об основных проблемах реализации института гражданской законодательной инициативы  
*Hranush Hakobyan, Ruzanna Hakobyan* – On the Main Issues of Implementing the Institute of Citizens' Legislative Initiative

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ УГОЛОВНОЕ ПРАВО CRIMINAL LAW

- Աննա Մարգարյան, Անահիտ Առաքելյան* – Ազատության սահմանափակումը պատիժների համակարգում..... 35  
*Анна Маргарян, Анаит Аракелян* – Ограничение свободы в системе наказаний  
*Anna Margaryan, Anahit Arakelyan* – Restriction of Liberty within the System of Punishments
- Սերգեյ Առաքելյան, Վիրաբ Համբարձումյան* – Ապօրինի շրջանառության մեջ գտնվող զենքի հանձնումը խրախուսող նորմերի քրեաիրավական որոշ հիմնահարցեր..... 53  
*Sergey Arakelyan, Virab Hambardzumyan* – Некоторые уголовно-правовые вопросы норм, поощряющих сдачу оружия, находящегося в незаконном обороте  
*Sergey Arakelyan, Virab Hambardzumyan* – Criminal Law Issues of Norms Encouraging the Surrender of Weapons in Illicit Trafficking

- Տիգրան Միմոնյան*** – Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին առնչվող որոշ հիմնախնդիրներ..... **68**
- Тигран Симомян*** – Некоторые вопросы института освобождения от уголовной ответственности в связи с истечением сроков давности
- Tigran Simonyan*** – Some Issues Concerning the Institute of Exemption from Criminal Liability Due to the Expiration of the Limitation Period

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ**  
**УГОЛОВНОЕ СУДОПРОИЗВОДСТВО И КРИМИНАЛИСТИКА**  
**CRIMINAL PROCEEDINGS AND CRIMINOLOGY**

- Գևորգ Բաղդասարյան*** – Քրեական հետապնդման «գործառույթը»..... **83**
- Геворг Багдасарян*** – «Функция» уголовного преследования
- Gevorg Baghdasaryan*** – The «Function» of Criminal Prosecution

- Արթուր Չախոյան*** – Հանրային մեղադրանքի պաշտպանության կրի-մինալիստիկական հիմնախնդիրները..... **99**
- Артур Чахоян*** – Криминалистические вопросы защиты государственного обвинения
- Artur Chakhoyan*** – Criminalistic Issues of Public Prosecution Defense

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**  
**ГРАЖДАНСКОЕ ПРАВО**  
**CIVIL LAW**

- Արմեն Հայկյանց, Եվա Սաղոյան*** – Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի փոփոխման և լուծման առանձնահատկությունները ..... **113**
- Армен Айкянци, Ева Сагоян*** – Особенности изменения и расторжения договора об оказании туристических услуг
- Armen Haykyants, Yeva Saghoyan*** – Specifics of Amending and Terminating the Contract for the Provision of Tourist Services

- Արփինե Հովհաննիսյան*** – Համացանցային միջնորդների պատասխանատվության առանձնահատկությունները և զարգացման միտումները (անգլ.)..... **135**
- Арпине Оганнисян*** – Особенности и тенденции развития ответственности интернет-посредников (англ.)
- Arpine Hovhannisyanyan*** – The Specifics and Development Trends of Internet Intermediaries' Liability

|                                                                                                                                                  |     |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| <i>Արմեն Հայկյանց, Տարիել Բարսեղյան</i> – Քաղաքացիական հարաբերության թույլ կողմի ինստիտուտի հայեցակարգային հիմքերը և հատկանիշները.....           | 154 |
| <i>Армен Айкянц, Тариел Барсегян</i> – Концептуальные основы и характеристика института слабой стороны в гражданских правоотношениях             |     |
| <i>Armen Haykyants, Taniel Barseghyan</i> – Conceptual Foundations and Characteristics of the Institution of the Weaker Party in Civil Relations |     |

**ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ГРАЖДАНСКОЕ СУДОПРОИЗВОДСТВО  
CIVIL PROCEDURE**

|                                                                                                                          |     |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| <i>Վարդուշ Եսայան</i> – Հաշտարարության (մեդիացիա) ընդհանուր իրավական բնութագիրը.....                                     | 171 |
| <i>Вардущ Есаян</i> – Общая правовая характеристика медиации                                                             |     |
| <i>Vardush Yesayan</i> – General Legal Characteristics of Mediation                                                      |     |
| <i>Մանե Կարապետյան</i> – Աշխատանքային պայմանագրի լուծումը փորձաշրջանի անբավարար արդյունքների հիմքով.....                 | 184 |
| <i>Мане Карапетян</i> – Расторжение трудового договора в связи с неудовлетворительными результатами испытательного срока |     |
| <i>Mane Karapetyan</i> – Termination of Employment Contract Based on Unsatisfactory Results of the Probationary Period   |     |

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՁԵՎԵՐԸ

ՍԵՐԳԵՅ ՔՈՉԱՐՅԱՆ 

*Երևանի պետական համալսարան*

Իրավունքի համակարգումն ընդհանուր հատկանիշներով օժտված իրավական ակտերի միավորմանն ուղղված մշտական իրավաբանական գործունեություն է, որի նպատակներն են գործող իրավադրույթների կատարելագործումը, հակասական կարգավորումների, բացերի, հնացած դրույթների վերացումը և իրավական նյութից օգտվելու հարմարավետության ապահովումը:

Սույն աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվել են իրավական ակտերի համակարգման ձևերի տարբերություններն ու առանձնահատկությունները, վերլուծվել են դրանց տեսական և գործնական իմաստները, մեր իրավական համակարգում առկա ձևերի կիրառման արդյունավետությունը, ինչպես նաև հիմնավորվել է կոնսոլիդացիայի օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը: Կատարվել է նաև մասնագիտական գրականության մեջ առկա համակարգման ձևերի խմբավորում:

**Բանալի բառեր** – *համակարգման ձև, կոդիֆիկացիա, իրավական ակտերի հաշվառում, կոնսոլիդացիա, ինկորպորացիա, օրենսդրություն, հակասություն, իրավական համակարգ, կրկնություն, նորմատիվ զանգված*

### Ներածություն

Իրավական ակտերի բազմազանության հաղթահարման, գործող կարգավորումների միջև բացերի, հակասությունների, դրանցում կրկնությունների վերացման խնդիրը արդիական է եղել բոլոր ժամանակներում: Հասարակական հարաբերությունների արագ զարգացման պայմաններում պահանջվում է իրավական կարգադրագրերի պարբերաբար թարմացում, ինչը հանգեցնում է նաև իրավաստեղծ գործունեության ընդլայնմանը և իրավասու սուբյեկտներ-

\* **Սերգեյ Քոչարյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ

**Сергей Кочарян** – кандидат юридических наук, доцент кафедры теории и истории государства и права ЕГУ

**Sergey Kocharyan** – Candidate of Legal Sciences, Associate Professor at YSU Chair of Theory and History of State and Law

Էլ. փոստ՝ [s.kocharyan@ysu.am](mailto:s.kocharyan@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0002-0493-2425>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 28.10.2025

Գրախոսվել է՝ 21.11.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

րի կողմից ընդունվող իրավական ակտերի բազմազանությանը: Նման իրավիճակում անխուսափելի է դառնում իրավական կարգադրագրերի կրկնությունների, հակասությունների, անճշտությունների, ինչպես նաև հնացած դրույթների առկայությունը: Այսպիսի երևույթները հաղթահարելու լավագույն միջոց է իրավական ակտերի համակարգումը, որի անհրաժեշտությունն առաջանում է իրավունքի բոլոր ճյուղերում:

Վերոգրյալով պայմանավորված՝ համակարգման տարբեր ձևերի տեսական իմաստների ուսումնասիրությունը և դրանց կիրառման՝ գործնականում առկա խնդիրների բացահայտումը առավել քան հրատապ են:

### **Համակարգման հիմնական ձևերի առանձնահատկությունները**

Իրավունքի համակարգումն ընդհանուր հատկանիշներով օժտված իրավական ակտերի միավորմանն ուղղված մշտական իրավաբանական գործունեություն է, որի նպատակներն են գործող իրավադրույթների կատարելագործումը, հակասական կարգավորումների, բացերի, հնացած դրույթների վերացումը և իրավական նյութից օգտվելու հարմարավետության ապահովումը: Պետք է համաձայնվել Դ. Ա. Աբդիևայի արտահայտած այն տեսակետի հետ, որ համակարգման հիմնական պատճառը պայմանավորված է իրավունքի համակարգվածությունը պահպանելու անհրաժեշտությամբ, որի նշանակությունը ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման մարտահրավերների պայմաններում մեծանում է իրավունքի բոլոր ճյուղերում<sup>1</sup>:

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն իրավական ակտերի համակարգման բազմաթիվ բնորոշումներ: Այդ բազմազանության մեջ կողմնորոշելու համար դրանք դասակարգվում են երկու խմբի՝ ծավալուն և սահմանափակ: Ծավալուն մոտեցումներում համակարգումը դիտարկվում է որպես իրավական ակտերի միավորման միջոցով դրանց կանոնակարգմանն ուղղված գործունեություն<sup>2</sup>: Միևնույն ժամանակ, հիմնախնդրին անդրադարձած հեղինակների մեծ մասը կարծում է, որ համակարգման պետք է ենթարկվեն միայն օրենսդրական կամ նորմատիվ իրավական ակտերը<sup>3</sup>: Այսպիսի մոտեցումները համարվում են սահմանափակ:

<sup>1</sup> Տե՛ս **Абдиева Д. А.** Виды систематизации законодательства в условиях современной динамики права // Образование и право. – 2023. – № 6, էջ 73-77, DOI 10.24412/2076-1503-2023-6-73-77:

<sup>2</sup> Տե՛ս **Карташов В. Н.** Теория правовой системы общества. В 2 т. Т. 1. – Ярославль: ЯрГУ, 2005, էջ 423, **Кашанина Т. В.** Юридическая техника: учебник. – М.: Эксмо, 2007, էջ 307, **Томин В. А.** Юридическая техника: учебное пособие. СПб., 2015, էջ 67:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ՝ **Пиголкин А. С.** Систематизация законодательства / в учебнике Теория государства и права, под ред. А. С. Пиголкина. – М.: Юрист-Издат, 2006, էջ 438, **Мухаев Р. Т.** Теория государства и права: учебник. – 2-е изд., перераб. и доп. – М.: ЮНИТИ-ДАНА, 2005, էջ 375, **Протасов В. Н.** Теория государства и права: учебное пособие для вузов – 5-е изд., перераб. и доп. – М.: Издательство Юрайт, 2020, էջ 91, **Алексеев С. С.** Общая теория права: учебник. – 2-е изд., перераб. и доп. – М.: Проспект, 2009, էջ 469, **Лазарев В. В., Липень С. В.** Теория государства и права: учебник для вузов. – 5-е изд., испр. и доп. – М.: Издательство Юрайт, 2020, էջ 291:

Իրավունքի տեսության մեջ առանձնացվում են համակարգման հետևյալ ձևերը՝ կողիֆիկացիա, կոնսոլիդացիա, ինկորպորացիա և հաշվառում, սակայն ոչ բոլոր հեղինակներն են ընդունում բոլորի կարևորությունը: Ս. Ս. Ալեքսենը համարում է, որ ձևերը համակարգման նպատակներին հասնելու միջոցներ են, իսկ դրանց վերաբերելի են միայն կողիֆիկացիան և ինկորպորացիան: Ըստ հեղինակի՝ բացի այս երկու հիմնական միջոցներից, գոյություն ունեն իրավունքին համակարգվածություն հաղորդելու այլ եղանակներ, մասնավորապես՝ ընդլայնված ակտեր ստեղծելը, տեղեկատվական աշխատանքները և այլն<sup>4</sup>: Մեր կարծիքով՝ այդքան էլ ճիշտ չէ անտեսել համակարգման որոշ ձևերի կարևորությունը, քանի որ ժամանակակից տեխնոլոգիաների արագ զարգացման դարաշրջանում փոխվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտները, միաժամանակ զգալիորեն ընդլայնվում է իրավական կարգավորման ոլորտը, և արդյունքում աճում է կարգավորիչ իրավական զանգվածը: Իսկ համակարգման ձևերից յուրաքանչյուրն ուղղված է որոշակի պահանջմունքների բավարարմանը, հետևաբար՝ իրավական ակտերի միավորում պահանջող իրավիճակում դրանցից որևէ մեկի ընտրությունը ցանկացած կոնկրետ դեպքում կախված է ցանկալի արդյունքի կամ նպատակին հասնելու անհրաժեշտությունից: Այսպիսի պայմաններում պետք է ոչ թե կրճատել համակարգման միջոցները, այլ մշակել, գիտականորեն հիմնավորել և առաջարկել նոր հնարավորություններ:

Վ. Ա. Տոմինը վստահաբար նշում է, որ հաշվառումը շատ արդյունավետ իրավաբանական գործունեություն է և որպես համակարգման տեսակ՝ ներառում է իրավական ակտերի հավաքագրումը, պահպանումը, գրանցումը, որոշակի կարգով դասավորվածությունը և հսկողությունը՝ դրանք արագ որոնելու և գործածելու համար: Հեղինակն արդարացիորեն նկատում է, որ հաշվառումը զգալի նշանակություն ունի ինչպես իրավաիրացման, իրավակիրառ, իրավաստեղծ գործընթացներում, այնպես էլ իրավադաստիարակչական աշխատանքներում: Բացի այդ, ունենալով նաև ինքնուրույն նշանակություն, այն կողիֆիկացիայի, կոնսոլիդացիայի և ինկորպորացիայի բաղկացուցիչ մաս է, դրանց սկզբնական փուլը<sup>5</sup>:

Հաշվառման ենթակա են օրենքները, նախագահի նորմատիվ որոշումները, կառավարության որոշումները, գործադիր իշխանության այլ կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը, դատարանի որոշումները, միջազգային պայմանագրերը և այլն<sup>6</sup>:

<sup>4</sup> St' u **Алексеев С. С.** Общая теория права: учебник. – 2-е изд., перераб. и доп. – М.: Проспект, 2009, էջ 471:

<sup>5</sup> St' u **Томин В. А.** Юридическая техника: учебное пособие. СПб., 2015, էջ 74:

<sup>6</sup> St' u **Миронов В. О., Зин Н. В.** Систематизация законодательства: понятие и виды. Право и государство: теория и практика, 2019, № 7(175), էջ 48-50:

Առանձնացվում են հաշվառման հետևյալ տեսակները՝ մատյանային, քարտային, ավտոմատացված և գործող ակտերի տեքստերի նկատմամբ հսկողությունը<sup>7</sup>: Դրանք իրագործվում են տարբեր սկզբունքային չափանիշներով, որոնցից առավել տարածված են ժամանակագրականը, այբբենականը և առարկայականը: Ավտոմատացված հաշվառումն իրագործվում է համակարգչային տեխնիկայի կիրառման հիման վրա, և պետք է համաձայնվել Ս. Վ. Բոշնոյի այն տեսակետի հետ, որ տեխնոլոգիական զարգացման ժամանակակից պայմաններում այն առավել գերադասելի է դառնում<sup>8</sup>:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն ամրագրում է հաշվառում իրականացնելու որոշակի կարգավորումներ: Մասնավորապես, ըստ 26-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմինը պարտավոր է սահմանված կարգով իրականացնել իր կողմից ընդունված իրավական ակտերի ներքին հաշվառում և պահպանում ընդունող մարմնի սահմանած կարգով: Ինչպես նկատում է Գ. Դանիելյանը, էլեկտրոնային եղանակով նորմատիվ իրավական ակտերի պահպանման ներկայիս հնարավորությունների պարագայում նպատակահարմար է նախատեսել դրանց պահպանությունը նաև հիշյալ եղանակով<sup>9</sup>: Այսօր, թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, էլեկտրոնային հաշվառումը մեծ պահանջարկ է ստանում: Իրավական ակտերի բազմազանության և դրանց՝ որոշակի չափանիշներով կանոնակարգվածության լիարժեքության ապահովումն անհրաժեշտ է ինչպես օրենսդրության հետագա մշակման, այնպես էլ իրավական նորմերի արդյունավետ վերլուծության ու կիրառման համար: Հաշվառման այս տեսակը թույլ է տալիս թարմացնել գործող իրավական ակտերում պարունակող տեղեկատվությունը, ապահովել դրանց արագ ու հարմար մուտքը և կրճատել որոնման վրա ծախսվող անհրաժեշտ ժամանակը: Նման համակարգի ստեղծումը պահանջում է համալիր աշխատանք բոլոր իրավական ակտերը հավաքագրելու, վերլուծելու և դասակարգելու համար, ինչը բարդ գործընթաց է: Հետևաբար՝ մասնագիտական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ հաշվառումը համարվում է համակարգման ամենապարզ ձևը<sup>10</sup>, մեր կարծիքով, այդքան էլ համոզիչ չէ:

<sup>7</sup> Տե՛ս **Ящук Т. Ф.** Систематизация российского законодательства в советский период: монография. – Омск: Изд-во Ом. гос. ун-та, 2021, էջ 77-78, Проблемы общей теории права и государства / Под общ. ред. В. С. Нерсесянца. – М.: Норма, 2004, էջ 350-351:

<sup>8</sup> Տե՛ս **Бощно С. В.** Учёт нормативных правовых актов / Право и современные государства, 5/2018, 58-64 էջեր, DOI: <http://dx.doi.org/10.14420/ru.2018.5.6>:

<sup>9</sup> Տե՛ս **Դանիելյան Գ.** Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. ուսումնական ձեռնարկ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ. 2021, էջ 208:

<sup>10</sup> Տե՛ս, օրինակ՝ Теория государства и права: Учебник / Под ред. Р. А. Ромашова. – СПб.: Издательство Р. Асланова «Юридический центр Пресс», 2005, էջ 272:

Ըստ Տ. Վ. Կաշանինայի՝ ինկորպորացիան որոշակի չափանիշներով իրավական ակտերի միավորումն է միասնական ժողովածուներում՝ առանց բովանդակության և ձևի որևէ փոփոխության<sup>11</sup>: Որպես համակարգման ինքնուրույն ձև՝ այն ունի որոշակի առանձնահատկություններ: Ինկորպորացիա իրականացնող մարմինն իրավասու չէ վերացնել, փոփոխել գործող իրավակարգավորումները կամ սահմանել նորերը:

Ըստ ինկորպորացիա իրականացնող սուբյեկտների և դրա իրավական հետևանքների՝ մասնագիտական գրականության մեջ առանձնացնում են համակարգման այս ձևի պաշտոնական և ոչ պաշտոնական տեսակները<sup>12</sup>: Ըստ Ս. Ս. Ալեքսենի՝ պաշտոնական ինկորպորացիան իրականացվում է իրավասու պետական հաստատությունների կողմից այն իրավաստեղծ մարմինների հանձնարարությամբ և վերահսկողությամբ, որոնք վերջում համապատասխան կարգով հաստատում են ժողովածուն, իսկ ոչ պաշտոնականը՝ տարբեր կազմակերպությունների կամ առանձին անձանց կողմից իրենց նախաձեռնությամբ՝ առանց իրավաստեղծ մարմնի հատուկ հանձնարարության և վերահսկողության<sup>13</sup>: Ոչ պաշտոնական ինկորպորացիայի արդյունքում ստեղծված ժողովածուները կամ հավաքածուները չեն պարունակում պաշտոնական տեղեկատվություն, և իրավական ակտերի մշակման կամ կիրառման ժամանակ չի թույլատրվում հղում կատարել դրանց:

Համակարգման այս ձևի տեսակների շարքում որոշ հեղինակներ առանձնացնում են նաև կիսապաշտոնական ինկորպորացիան, որը, նրանց կարծիքով, իրականացվում է լիազորված գերատեսչությունների կողմից իրավաստեղծ մարմնի հանձնարարությամբ, բայց ոչ վերահսկողությամբ և արդյունքների հաստատմամբ: Ըստ այս հեղինակների՝ այսպիսի գործընթացի արդյունքում ստեղծված ակտի բովանդակությունը չունի պաշտոնական բնույթ<sup>14</sup>: Ակնհայտ է, որ հետևանքների առումով համակարգման այս եղանակը նույնանում է ոչ պաշտոնական ինկորպորացիայի հետ: Հետևաբար, եթե որպես դասակարգման հիմք վերցնենք իրավական հետևանքները, ապա կարելի է առանձնացնել ինկորպորացիայի պաշտոնական և ոչ պաշտոնական, իսկ ըստ սուբյեկտների՝ պաշտոնական, կիսապաշտոնական ու ոչ պաշտոնական տեսակները:

<sup>11</sup> Տե՛ս **Капанина Т. В.** Юридическая техника: учебник. – М.: Эксмо, 2007, էջ 328:

<sup>12</sup> Տե՛ս **Мухаев Р. Т.** Теория государства и права: учебник. – 2-е изд., перераб. и доп. – М.: ЮНИТИ-ДАНА, 2005, էջ 376:

<sup>13</sup> Տե՛ս **Алексеев С. С.** Общая теория права: учебник. – 2-е изд., перераб. и доп. – М.: Проспект, 2009, էջեր 475, 480:

<sup>14</sup> Տե՛ս, օրինակ՝ **Абдиева Д. А.** Систематизация законодательства в условиях перехода к новому технологическому укладу: дис. ... канд. юрид. наук: 5.1.1. Теоретико-исторические правовые науки / Абдиева Даткайым Акылбековна. – М., 2024, էջ 81, **Карнаухова Е. В.** Понятие инкорпорации локальных нормативных правовых актов. Юридическая наука и правоохранительная практика, № 3 (6), 2008, 4-14 էջեր, <https://cyberleninka.ru/article/n/ponyatie-inkorporatsii-lokalnyh-normativnyh-pravovyh-aktov/viewer> (մուտք՝ 26.09.2025):

Հայաստանի Հանրապետությունում ինկորպորացիան համարվում է համակարգման տարածված ձև և հասկացվում է որպես որոշակի մակարդակի ակտերի լրիվ կամ մասնակի միավորում: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասն ամրագրում է, որ պաշտոնական ինկորպորացիայի կարգը սահմանվում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի հրամանով:

Կոդիֆիկացիան համարվում է համակարգման ամենաբարդ ձևը: Իրավագիտության մեջ այն հասկացվում է որպես նոր, համախմբված, համակարգված նորմատիվ իրավական ակտ ստեղծելուն ուղղված՝ պետության իրավաստեղծ մարմինների գործունեություն, որն իրականացվում է գործող օրենսդրության խորը և բազմակողմանի մշակման ու դրանում նոր էական փոփոխությունների ներդրման միջոցով: Համակարգման այս ձևի հիմնական առանձնահատկությունն իրավունքի ճյուղերին կամ ինստիտուտներին վերաբերող կոտակված նորմատիվ նյութի ներքին մշակման միջոցով նոր իրավական ակտի ստեղծումն է, ինչից բխում է կոդիֆիկացիայի խնդիրը՝ հնարավորինս համարժեք արտացոլել սոցիալական շահերը, իրավաբանորեն ձևակերպել և ամրապնդել ամենահիմնարար ու կայուն հասարակական հարաբերությունները և համապատասխան իրավական հիմք ստեղծել հետագա սոցիալական վերափոխումների համար<sup>15</sup>:

Առանձնացվում են կոդիֆիկացիայի հետևյալ երկու բնութագրիչ գծերը՝ հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ, ըստ էության, որոշակի փոփոխությունների ներդրում և դրա արդյունքում մեկ համախմբված ակտի ստեղծում մի քանիսի փոխարեն<sup>16</sup>: Այդպիսի ակտը սովորաբար անվանում են օրենսգիրք: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դա օրենք է, որը միավորում է իրավունքի ամբողջ ճյուղի կամ դրա առանձին մասի՝ համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր կամ հիմնական նորմերը: Պ. Յու. Գորդիենկոն կոդիֆիկացված այդպիսի խոշոր նորմատիվ իրավական ակտի առկայությունը համարում է իրավունքի ինքնուրույն ճյուղի առանձնացման չափանիշներից մեկը<sup>17</sup>:

Ֆրանսիայում «կոդիֆիկացիա» եզրույթն ունի մի փոքր այլ նշանակություն և հասկացվում է նեղ ու լայն իմաստներով<sup>18</sup>: Նեղ իմաստով ըմբռնումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում համակարգման այս

<sup>15</sup> Տե՛ս Юридическая техника: учебник / под ред. В. М. Баранова. – Москва: Проспект, 2021, էջ 621:

<sup>16</sup> Տե՛ս **Москалев С. О., Акиева П. Х.** Систематизация законодательства: понятие и виды // Либерально-демократические ценности, 2021, № 4, <https://liberal-journal.ru/PDF/01UNLD421.pdf> (մուտք՝ 19.09.2025):

<sup>17</sup> Տե՛ս **Гордиенко П. Ю.** Сущность и юридическая природа систематизации права // Вестн. Волгogr. гос. ун-та. Сер. 5, Юриспруд, 2012, № 2 (17), էջ 247-256, <https://j.jvolsu.com/index.php/ru/component/attachments/download/263> (մուտք՝ 26.09.2025):

<sup>18</sup> Տե՛ս **Ashuraxunova Sh. T.** Systematization of legislation: theoretical legal analysis based on foreign experience Central Asian Journal of education and innovation, Volume 3, Issue 5, May 2024, էջ 196-202, [doi.org/10.5281/zenodo.11261090](https://doi.org/10.5281/zenodo.11261090):

ձևի իրագործման բովանդակությանը: Լայն իմաստով կոդիֆիկացիան հասկացվում է որպես որոշակի չափանիշներով, առանց որևէ վերանայման նմանատիպ հասարակական հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի միավորում մեկ փաստաթղթում, ինչը, մեր կարծիքով, նույնանում է ինկորպորացիայի հետ:

Կոնսոլիդացիան՝ որպես համակարգման ձև, հասկացվում է նորմատիվ ակտերի միավորմանն ուղղված այնպիսի գործընթաց, որի արդյունքում դրանք կորցնում են իրենց իրավաբանական ուժը, և փոխարենն ուժի մեջ է մտնում նոր ստեղծված ակտ<sup>19</sup>:

Ժամանակի ընթացքում կուտակվում է նույն կարգավորման առարկան ունեցող այնպիսի նորմատիվ իրավական ակտերի զգալի քանակ, որոնց դրույթները հաճախ կրկնվում են, իսկ երբեմն պարունակում են ակնհայտ անհամապատասխանություններ և հակասություններ: Նմանատիպ երևույթները վերացնելու համար անհրաժեշտություն է առաջանում համախմբելու դրանք մեկ միասնական ակտում: Այս խնդիրը լուծելու միջոցներից մեկը կոնսոլիդացիան է, որի նպատակն է վերացնել նորմատիվ ակտերի բազմազանությունը և օրենսդրական կառուցվածքում ստեղծել խոշոր, համանման հասարակական հարաբերություններ կարգավորող այնպիսի ակտ<sup>20</sup>, որում ներառվող փաստաթղթերը կտեղադրվեն առանձին գլուխների, հոդվածների և մասերի տեսքով<sup>21</sup>:

Կատարված ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ համակարգման որոշակի ձևերի օբյեկտ<sup>22</sup> կարող են հանդիսանալ ոչ բոլոր իրավական ակտերը: Այս հիմքով կարելի է իրականացնել դրանց խմբավորում և առանձնացնել համակարգման այնպիսի ձևեր, որոնց օբյեկտ են միայն նորմատիվ ակտերը (կոդիֆիկացիան և կոնսոլիդացիան), և այնպիսիները, որոնց օբյեկտ կարող են լինել ընդհանրապես իրավական ակտերը (հաշվառումը և ինկորպորացիան):

<sup>19</sup> Տե՛ս **Арзамасов Ю. Г., Певцова Е. А.** Роль цифровизации в систематизации юридической терминологии // Вестник Московского государственного областного университета. Серия: Юриспруденция. 2022 / № 4, էջ 24-34, DOI: 10.18384/2310-6794-2022-4-24-34:

<sup>20</sup> Տե՛ս **Москалев С. О., Акиева П. Х.** նշվ. աշխ.:

<sup>21</sup> Տե՛ս **Реутов В. П., Ваньков А. В.** К вопросу о консолидации как форме систематизации законодательства // Право и современные государства, 2013, № 3, էջ 16-20:

<sup>22</sup> Համակարգման օբյեկտի և առարկայի տարբերակման հիմնախնդրին անդրադարձած հեղինակները չունեն միասնական տեսակետ դրանց հասկացման վերաբերյալ: Ըստ Տ. Վ. Կաշանինայի խորքային մոտեցման դեպքում հնարավոր է բաժանել «օբյեկտ» և «առարկա» հասկացությունները: Նա առաջարկում է օբյեկտ համարել նորմատիվ, իրավակիրառ, մեկնաբանական (օրինակ՝ բարձրագույն դատարանի որոշումները) և ընդհանրապես այն ակտերը, որոնք ենթակա են համակարգման, իսկ առարկա՝ այդ ակտերի առանձին բաժինները (մասեր, կետեր և այլն), իրավական կարգադրագրերը, դրույթները: Տե՛ս **Кашанина Т. В.** Юридическая техника: учебник. - М.: Эксмо, 2007, էջ 308-309:

### **Կոնստիդացիայի անհրաժեշտությունը մեր իրավական համակարգում**

Դ. Ա. Արդիևան նշում է, որ կոնստիդացիան իրավաստեղծ գործունեության յուրահատուկ տեսակ է, որի իրագործման ընթացքում նոր դրույթներ չեն ներմուծվում, և արդյունքում չի փոխվում իրավական կարգավորման բովանդակությունը: Նախորդ փաստաթղթերի բոլոր դրույթները դասավորվում են տրամաբանական հաջորդականությամբ, և այդպես ձևավորվում է ապագա ակտի ընդհանուր կառուցվածքը: Կատարվում են նաև խմբագրական բնույթի վերանայումներ, այդ թվում՝ տերմինների նույն նշանակությամբ կիրառման ապահովում և հակասությունների ու կրկնությունների վերացում: Դրան հասնելու համար նմանատիպ բովանդակություն ունեցող նորմերը միավորվում են մեկ կետի կամ հոդվածի մեջ, միաժամանակ արդիականացվում է տերմինաբանությունը: Այսպիսի աշխատանքի արդյունքը կոնստիդացված ակտն է, որը պետք է համապատասխանի բոլոր անհրաժեշտ պահանջներին<sup>23</sup>:

Կոնստիդացված օրենսդրական ակտեր ընդունելու պրակտիկան լայն տարածում ունի Անգլիայում, ինչը պայմանավորված է նաև այդ իրավական համակարգում կոդիֆիկացիայի բացակայությամբ: Կոնստիդացնող օրինագծերը ստատուտային օրենսդրությունը պարզեցնելու նպատակով հնարավորություն են ընձեռում մի քանի գործող օրենքներ միավորել մեկում:

Իրավունքի աղբյուրների բազմազանության և օրենսդրական ակտերի թվի արագ աճի պայմաններում դրանք համակարգման ենթարկելու խնդիրը հատկապես հրատապ դարձավ 20-րդ դարում, որի երկրորդ կեսին անգլիական իրավունքի կանոնակարգման հիմնական ձև դարձած կոնստիդացիայի կիրառման բուռն գործընթացն այդ իրավական համակարգում ընդհանուր առմամբ հանգեցրեց զգալի փոփոխությունների: Համակարգման այս ձևի հարմարավետությունն անգլիացիները բացատրում են նրանով, որ կոնստիդացվող ակտերը խորհրդարանում անցնում են պարզեցված օրենսդրական ընթացակարգով, որը չի բացառում առանձին փոփոխությունների և բարելավումների հնարավորությունը<sup>24</sup>:

Մոլդովայի Հանրապետությունում կոնստիդացիայի շրջանակներում օրենսդիրը հնարավորություն է ընձեռում լրացնել առկա բացերը: Մասնավորապես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 61-րդ հոդվածն ամրագրում է, որ այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լրացնել նորմատիվ ակտերի բացերը, որոշակի հասարակական հարաբերությունների իրավական կարգա-

<sup>23</sup> St' u, օրինակ՝ **Абдиева Д. А.** Систематизация законодательства в условиях перехода к новому технологическому укладу: дис. ... канд. юрид. наук: 5.1.1. Теоретико-исторические правовые науки / Абдиева Даткайым Акылбековна. – М., 2024, էջ 84:

<sup>24</sup> St' u История государства и права зарубежных стран: Учебник для вузов: В 2 ч. Ч. 2 / Под общ. ред. О. А. Жидкова и Н. А. Крашенинниковой. – 2-е изд., стер. – М.: Издательство НОРМА, 2003, էջ 551-552:

վորումը կատարելագործել նորմատիվ ակտերում հիմնարար փոփոխություններ մտցնելով կամ կրճատել նույն ոլորտում կուտակված իրավական նորմերի բազմազանությունը, մշակվում է կոնսուլիդացված ակտի նախագիծ:

Նկատելի է, որ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական մակարդակով չկա որևէ ամրագրում կոնսուլիդացիայի վերաբերյալ, սակայն այս ձևը ներդնելը, կարծում ենք, շատ արդյունավետ կարող է լինել մեր իրավական համակարգի համար: Այսօր թվային տեխնոլոգիաների և հասարակական կյանքի տարբեր ոլորտների արագ զարգացման պայմաններում գրեթե բոլոր իրավական համակարգերում, այդ թվում՝ մեր հանրապետությունում, նկատվում է իրավական կարգավորումների զգալի աճ: Միաժամանակ, ավելանում է նորմատիվ նյութը, և առաջանում է այդ բազմազանությունը հաղթահարելու անհրաժեշտություն: Այսպիսի խնդիրները լուծելու համար գործնականում նպատակահարմար է որպես համակարգման ձև կիրառել կոնսուլիդացիան, որը հնարավորություն կտա, նույն ոլորտը կարգավորող մի քանի օրենքներ կամ այլ նորմատիվ ակտեր մեկ միասնական փաստաթղթում միավորելու միջոցով, կրճատել դրանց քանակը, արդիականացնել տերմինաբանությունը, վերացնել առկա հակասություններն ու կրկնությունները: Արդյունքում կստանանք մեկ միասնական, համախմբված նորմատիվ ակտ, որը կունենա նույն իրավաբանական ուժը, ինչ նախորդները: Կոնսուլիդացիայի գործընթացում կարող են լրացվել նաև տվյալ ոլորտում առկա օրենսդրական բացերը: Համակարգման այս ձևը կարելի է կիրառել նաև, երբ կարիք չկա իրականացնել կոդիֆիկացիա:

Մեր հանրապետությունում կոնսուլիդացիայի ենթակա օրինակ կարող է լինել կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված օրենսդրությունը, որը իրավունքի որևէ ճյուղի առանձին մաս չէ, սակայն ընդգրկում է տարբեր ոլորտների կարգավորումների լայն շրջանակ: Նման համախմբման արդյունքում կկրճատվի գործող կարգավորիչ զանգվածի ծավալը, միաժամանակ կշտկվեն հակասություններն ու համընկնումները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի ամրագրումներից բխում է, որ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն ընդունող մարմնի կամ նրա իրավահաջորդի կողմից նույն տեսակի և բնույթի ակտ ընդունելու միջոցով, իսկ համատեղ ընդունված նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններն ու լրացումները կատարվում են այդ ակտն ընդունած մարմինների կամ դրանց իրավահաջորդների համատեղ ընդունած նորմատիվ իրավական ակտով: Բացառություն են կազմում միայն օրենսգրքերը, որոնցում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել օրենքով: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ընդունող մարմինը պարտավոր է հրապարակել նաև ակտում փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո դրա ինկորպորացված տարբերակը:

Հասկանալի է, որ գործող նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում նախատեսող փաստաթղթերն իրենց ազդեցությունն են ունենում իրավական կարգավորման վրա և որոշակի տեմպ են հաղորդում գործող օրենսդրությանը, սակայն դրանք, ըստ էության, ենթակա են ներառման իրենց կողմից փոփոխվող ակտում: Այս գործողության ավարտից հետո փոփոխություն կամ լրացում նախատեսող ակտն այլևս չի ունենում ինքնուրույն կարգավորիչ նշանակություն: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածին համապատասխան՝ իրավական ակտերի միավորման այսպիսի գործընթացը մեր հանրապետությունում ընդունված է անվանել պաշտոնական ինկորպորացիա, ինչը սխալ մոտեցում է, քանի որ, մեր կարծիքով, համապատասխանում է կոնսոլիդացիայի տեսական կառույցին: Օրինակ՝ Մոլդովայի Հանրապետության նույն օրենքի 2-րդ հոդվածն ամրագրում է, որ նորմատիվ ակտի կոնսոլիդացված էլեկտրոնային տեքստն իրավական ակտերի պետական ռեգիստրում հրապարակված նույն ակտի էլեկտրոնային պաշտոնական տարբերակն է, որը կազմվում է այդ ակտի հիմնական ու դրանում փոփոխություններ նախատեսող նորմատիվ ակտերի բովանդակության հիման վրա և ներառում է կատարված բոլոր փոփոխությունները:

### Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքի արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ իրավական կարգավորման ոլորտի ընդլայնման և դրա արդյունքում իրավական զանգվածի աճի ներկայիս պայմաններում առավել անհրաժեշտ է դառնում համակարգման իրականացումը: Ոչ բոլոր իրավագետների կողմից է ընդգծվում իրավունքի տեսության մեջ գոյություն ունեցող համակարգման հիմնական բոլոր ձևերի կարևորությունը, որն այդքան էլ ճիշտ մոտեցում չէ, քանի որ յուրաքանչյուր դեպքում դրանցից որևէ մեկի ընտրությունը կախված է իրավական ակտերի միավորում պահանջող կոնկրետ իրավիճակի նկատմամբ դրա կիրառման արդյունավետությունից:

Ըստ օբյեկտի՝ համակարգման ձևերը բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբին են դասվում կոդիֆիկացիան և կոնսոլիդացիան, որոնց օբյեկտ են միայն նորմատիվ ակտերը, իսկ երկրորդին՝ հաշվառումը և ինկորպորացիան, որոնց օբյեկտ կարող են դառնալ ընդանրապես իրավական ակտերը:

Ներպետական օրենսդրությամբ կոնսոլիդացիայի՝ որպես համակարգման ձևի ամրագրումը և դրա գործնական կիրառումը արդյունավետ միջոց կարող են լինել իրավական ակտերի բազմազանությունը հաղթահարելու, դրանց միջև առկա հակասությունները, բացերը վերացնելու, կրկնությունները բացառելու, տերմիններն արդիականացնելու անհրաժեշտության տեսանկյունից: Այսօր շատ արդիական է դրա իրագործումը կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված նորմատիվ ակտերի նկատմամբ, ինչը կնպաստի համապատասխան ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման արդյունավետությանը, ինչ-

պես նաև դրանից օգտվելու հարմարավետությանը: Բացի այդ, կոնսոլիդացիան նպատակահարմար է նաև այն դեպքերում, երբ հնարավոր չէ իրականացնել կողիֆիկացիա:

Նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում նախատեսող փաստաթղթերի միավորման գործընթացն իրենց կողմից փոփոխվող ակտում, որը մեր իրավական համակարգում արտահայտվում է «պաշտոնական ինկորպորացիա» եզրույթով, նույնանում է կոնսոլիդացիայի տեսական ըմբռմանը:

**СЕРГЕЙ КОЧАРЯН – *Формы систематизации правовых актов.*** – Систематизация права – это постоянная юридическая деятельность, направленная на унификацию правовых актов, имеющих общие признаки, целями которой являются совершенствование действующих правовых норм, устранение противоречивых норм, пробелов, устаревших положений, обеспечение удобства пользования правовым материалом.

В рамках данной работы изучены различия и особенности форм систематизации правовых актов, проанализировано их теоретическое и практическое значение, эффективность применения существующих в нашей правовой системе форм, также была обоснована необходимость законодательного закрепления консолидации. В результате исследования также была осуществлена группировка форм систематизации, существующих в профессиональной литературе.

**Ключевые слова:** *форма систематизации, кодификация, учёт правовых актов, консолидация, инкорпорация, законодательство, противоречие, правовая система, повторение, нормативный массив.*

**SERGEY KOCHARYAN – *Forms of Systematization of Legal Acts.*** – The systematization of law is a permanent legal activity aimed at unifying legal acts with common features, the goals of which are to improve existing legal provisions, eliminate contradictory regulations, gaps, outdated provisions, and ensure the convenience of using legal material.

Within the framework of this work, the differences and peculiarities of the forms of consolidation of legal acts have been studied, their theoretical and practical meanings have been analyzed, the effectiveness of the application of the forms existing in our legal system has been analyzed, and the need for legislative consolidation has been substantiated. As a result of the study, a grouping of systematization forms available in professional literature was also performed.

**Key words:** *form of systematization, codification, accounting of legal acts, consolidation, incorporation, legislation, contradiction, legal system, repetition, normative mass.*

## References

- Abdieva D. A. Sistemizatsiya zakonodatelstva v usloviyax perexoda k novomu texnologicheskomu ukladu: dis. ... kand. yurid. nauk: 5.1.1. Teoretiko-istoricheskie pravovie nauki / Abdieva Datkayim Akilbekovna. – Moskva, 2024, p. 192.
- Abdieva D. A. Vidi sistemizatsii zakonodatelstva v usloviyax sovremennoy dinamiki prava // *Obrazovanie i pravo.* – 2023. – № 6, s. 73-77, DOI 10.24412/2076-1503-2023-6-73-77.
- Alekseev S. S. Obshaya teoriya prava: uchebnik. – 2-e izd., pererb. i dop. – M.: Prospekt, 2009, s. 576.
- Arzamasov Yu. G., Pevcova E. A. Rol cifrovizatsii v sistemizatsii yuridicheskoy terminologii // *Vestnik Moskovskogo gosudarstvennogo oblostonogo universiteta. Seriya: Yurisprudenciya.* 2022 / № 4, s. 24-34, DOI: 10.18384/2310-6794-2022-4-24-34.

- Ashuraxunova Sh. T. Systematization of legislation: theoretical legal analysis based on foreign experience. Central Asian Journal of Education and Innovation, Volume 3, Issue 5, May 2024, p. 196–202, doi.org/10.5281/zenodo.11261090.
- Boshno S. V. Uchoť normativnix pravovix aktov / Pravo i sovremennie gosudarstva 5/2018, s. 58-64, DOI: <http://dx.doi.org/10.14420/ru.2018.5.6>.
- Danielyan G. Iravastegts gortsuneutyun ev iravabanakan texnika. – Usumnakan dzernark. – Er. “Tigran Mets” hrat. 2021, 255 ej.
- Gordienko P. Yu. Sushchnost i yuridicheskaya priroda sistematizacii prava // Vestn. Volgogr. gos. un-ta. Ser. 5, Yurisprud. 2012. № 2 (17), s. 247-256, <https://j.jvolsu.com/index.php/ru/component/attachments/download/263> (accessed on 26.09.2025).
- Istoriya gosudarstva i prava zarubejnih stran: Uchebnik dlya vuzov: V 2 ch. Ch. 2 / Pod obsh. red. O. A. Jidkova i N. A. Krashennikovoy. – 2-e izd., ster. – M.: Izdatelstvo NORMA, 2003, p. 720.
- Karnauxova E. V. Ponyatie inkorporacii lokalnix normativnix pravovix aktov. Yuridicheskaya nauka i pravooxranitelnaya praktika. № 3 (6), 2008, s. 4-14, <https://cyberleninka.ru/article/n/ponyatie-inkorporatsii-lokalnyh-normativnyh-pravovyh-aktov/viewer> (accessed on 26.09.2025).
- Kartashov V. N. Teoriya pravovoy sistemi obshestva. V 2 t. T. 1. – Yaroslavl: YarGU, 2005, p. 547.
- Kashanina T. V. Yuridicheskaya texnika: uchebnik. – M.: Eksmo, 2007, p. 512.
- Lazarev V. V., Lipen S. V. Teoriya gosudarstva i prava: uchebnik dlya vuzov. – 5-e izd., ispr. i dop. – Moskva: Izdatelstvo Yurayt, 2020, s. 521.
- Mironov V. O., Zin N. V. Sistematizaciya zakonodatelstva: ponyatie i vidi. Pravo i gosudarstvo: teoriya i praktika. 2019. № 7(175), s. 48-50, <https://cyberleninka.ru/article/n/sistematizatsiya-zakonodatelstva-ponyatie-i-vidy/viewer> (accessed on 26.09.2025).
- Moskalev S. O., Akieva P. X. Sistematizaciya zakonodatelstva: ponyatie i vidi // Liberalno-demokraticheskie cennosti, 2021 №4, <https://liberal-journal.ru/PDF/01UNLD421.pdf> (accessed on 19.09.2025).
- Muxaev R. T. Teoriya gosudarstva i prava: uchebnik. – 2-e izd., pererab. i dop. – M.: YUNITI-DANA, 2005, p. 543.
- Problemi obshey teorii prava i gosudarstva / Pod obsh. red. V. S. Nersesyanca. – M.: Norma, 2004, s. 832.
- Protasov V. N. Teoriya gosudarstva i prava: uchebnoe posobie dlya vuzov - 5-e izd., pererab. i dop. – M.: Izdatelstvo Yurayt, 2020, p. 192.
- Retuov V. P., Vankov A. V. K voprosu o konsolidacii kak forme sistematizacii zakonodatelstva // Pravo i sovremennie gosudarstva. 2013. № 3, s. 16-20.
- Teoriya gosudarstva i prava: Uchebnik / pod red. A. S. Pigolkina. – M.: Yurist-Izdat, 2006, p. 613.
- Teoriya gosudarstva i prava: Uchebnik / Pod red. R. A. Romashova. – SPB.: Izdatelstvo R. Aslanova “Yuridicheskij centr Press”, 2005, s. 630.
- Tomin V. A. Yuridicheskaya texnika: uchebnoe posobie. – Sankt-Peterburg, 2015, p. 84.
- Yashchuk T. F. Sistematizaciya rossiyskogo zakonodatelstva v sovetskiy period: monografiya.-Omsk: Izd-vo Om. gos. un-ta, 2021, s. 414.
- Yuridicheskaya texnika: uchebnik / pod red. V. M. Baranova. – Moskva: Prospekt, 2021, s. 648.

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ<sup>1</sup>, ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ<sup>2</sup>

*Գավառի պետական համալսարան*

Հոդվածը նվիրված է քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի իրացման հիմնախնդիրներին: 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ընդունվեց ժողովրդաիշխանության ուղղակի կամ անմիջական իրականացման նոր ինստիտուտ, որի կիրառման հետ կապված՝ առկա են օրենսդրական ու կազմակերպական լուրջ խնդիրներ և անկատարություններ: Հոդվածում **համեմատախրավական վերլուծության մեթոդով** հետազոտվում են ՀՀ-ում և այլ պետություններում քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի առանձնահատկությունները: **Հոդվածի նպատակն է վերլուծել ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների կողմից քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու հիմնահարցերը, իսկ խնդիրն է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների օրինակով բացահայտել քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության կարևորությունը և իրացման բարդությունները: Հոդվածի տեսական հիմքն են կազմում թեմային առնչվող գիտական աշխատանքները, իսկ նորմատիվ իրավական հիմքը՝ ՀՀ և այլ պետությունների սահմանադրությունները, համապատասխան օրենսդրական ակտերը: Ուսումնասիրության արդյունքում առաջարկվում է վերանայել օրենսդրական նախաձեռնության իրավունքն իրացնող քաղաքացիների թվաքանակը, նույն հարցի վերաբերյալ հանրաքվե անցկացնելու և ընդհանրապես հանրաքվեի պահանջի համար քաղաքացիների նույնացման ստորագրությունների**

<sup>1</sup> **Հրանուշ Հակոբյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և Գավառի պետական համալսարանի դասախոս

**Грануш Акобян** – доктор юридических наук, профессор, преподаватель Академии государственного управления РА и Гаварского государственного университета

**Hranush Hakobyan** – Doctor of Law, Professor, Lecturer at Gavar State University and Public Administration Academy of the Republic of Armenia

Էլ. փոստ՝ [hranush.hranti@gmail.com](mailto:hranush.hranti@gmail.com) ORCID ID: <https://orcid.org/0000-0001-9769-742X>

<sup>2</sup> **Ռուզաննա Հակոբյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, Գավառի պետական համալսարանի ռեկտոր

**Рузанна Акобян** – доктор юридических наук, доцент, ректор Гаварского государственного университета

**Ruzanna Hakobyan** – Doctor of Law, Associate Professor, Rector of Gavar State University

Էլ. փոստ՝ [ruzanna.hakobyan@mail.ru](mailto:ruzanna.hakobyan@mail.ru) ORCID ID: <https://orcid.org/0000-0003-0053-7134>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 21.06.2025

Գրախոսվել է՝ 27.11.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

անհրաժեշտ թվի և այլ հարցեր: **Հոդվածն արդիական է և գիտական նորույթ է պարունակում՝** կապված ՀՀ-ում սահմանադրական փոփոխությունների առաջարկությունների հետ, թե ինչպես հստակեցնել և բարելավել ուղղակի ժողովրդաիշխանության ամրապնդմանը միտված քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի նորմատիվ իրավական հիմքերը:

**Բանալի բառեր** – Մահմանադրություն, ժողովրդավարություն, քաղաքացիական նախաձեռնություն, Ազգային ժողով, հանրաքվե

## Ներածություն

Զարգացման ժողովրդավարական ուղին որդեգրած պետություններում իշխանության աղբյուր է ճանաչվում ժողովուրդը, որն իր իշխանությունն իրականացնում է հանրաքվեների, ազատ ընտրությունների, Մահմանադրությամբ ամրագրված պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով: Անմիջական և ներկայացուցչական ժողովրդաիշխանության կառուցակարգերն ամրագրված են Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 2-րդ՝ անփոփոխելի հոդվածում: Ժողովրդական կամ առավել հաճախ օգտագործվող քաղաքացիական օրենսդրական նախաձեռնությունը անմիջական ժողովրդավարության կառուցակարգ է, որը քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում ուղղակի օրինաստեղծ գործունեության միջոցով ունենալ վճռական ազդեցություն հանրային հիմնախնդիրների լուծման գործում:

Իրավունքի տեսությունը և պետականագիտությունը կարևորում են իրավաստեղծումը տարբեր սուբյեկտների կողմից<sup>1</sup> և առաջին հերթին՝ ժողովրդի անմիջական իրավաստեղծ գործունեությունը<sup>2</sup>, հանրաքվեի միջոցով:

Հատկանշական է, որ Հին Հունաստանում և Հին Հռոմում քաղաքացիները կարող էին միայն քննարկել Ժողովրդական ժողովին ներկայացված նախագծերը, բայց ոչ նախաձեռնել դրանք: Առաջին անգամ ժողովրդական օրինաստեղծ նախաձեռնության ինստիտուտը նախատեսվել է ԱՄՆ-ի օրենսդրությամբ. 1715 թվականին Մասաչուսեթսի նահանգի Մահմանադրությամբ ամրագրվել է տեղական մակարդակում ժողովրդական օրինաստեղծ նախաձեռնության իրավունքը<sup>3</sup>:

<sup>1</sup> См. у Теория государства и права, под ред. Н.И. Магузова, А. В. Малько, М., 1997, էջ 368-371; Козлова Е.И., Кутафин О.Е. Конституционное право России, М., 1995, էջ 385-402; Баглай М.В., Габричидзе Б.Н. Конституционное право Российской Федерации, М., 1996, էջ 380-385:

<sup>2</sup> См. у Thomas E. Cronin. Direct Democracy: The Politics of Initiative, Referendum, and Recall, First published by Harvard University Press, 1989; Ասլիյան Ն. Ա., Մաֆարյան Գ. Հ., Հակոբյան Զ. Հ. Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր, Եր., 2001, էջ 175:

<sup>3</sup> См. у Зиммерман Дж., Прямая демократия в Соединённых Штатах Америки: опыт и проблемы // Вестник МГУ, Серия «Право», 1991, № 5, էջ 52-53; Constitution of the United States <https://www.senate.gov/about/origins-foundations/senate-and-constitution/constitution.htm>

«Ժողովրդական նախաձեռնություն» հասկացությունն ավելի ընդգրկուն է, քան քաղաքացիական օրենսդրական նախաձեռնությունը: Ընդհանուր առմամբ, նախաձեռնությունը կարող է լինել մի խումբ մարդկանց կողմից իշխանություններին ներկայացվող դիմումների, բողոքների, առաջարկությունների, հանրագրերի ձևով, որոնք սահմանված կարգով կարող են քննարկվել հանրային իշխանության իրավասու մարմնի կողմից: Սակայն, պետք է առանձնացնել ժողովրդի կողմից ներկայացվող «օրենքի նախագիծ», «օրենսդրական նախաձեռնություն» հասկացությունները, դրանց քննարկման և ընդունման ընթացակարգերը: Դա նշանակում է, որ օրենսդրությամբ որոշակի քանակությամբ ընտրողներ հանդիսանում են օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ և իրավունք ունեն ներկայացնելու օրենքի նախագիծ: Եվրոպայում առաջին անգամ նման իրավունք նախատեսվել է Շվեյցարիայի Վաադտ կանտոնում 1845 թ., երբ քաղաքացիները ստացել են օրինագծեր առաջարկելու իրավունք: 1863 թ. Բազելում սահմանվել է ժողովրդական օրենսդրական նախաձեռնության իրավունքը, իսկ 1869 թ. նմանատիպ դրույթներ ամրագրվել են Ցյուրիխի կանտոնում: Ժողովրդի օրենսդրական նախաձեռնությունն ազգային մակարդակով ամրագրվել է Շվեյցարիայի Սահմանադրությամբ<sup>4</sup>, իսկ 1990 թ. սկզբին Գերմանիայում հասարակական կամ քաղաքացիական օրենսդրական նախաձեռնությունները՝ որպես ինստիտուտ, ընդունվել են և՛ համայնքների, և՛ հողերի մակարդակներում<sup>5</sup>:

Արևելյան Եվրոպայի երկրներում համեմատաբար նոր է քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության (այսուհետ՝ Նախաձեռնություն) ինստիտուտը, որի շնորհիվ որոշակի թվով քաղաքացիներ կարող են օրենքի նախագիծ ներկայացնել պառլամենտին: Պառլամենտը, որպես կանոն, կարող է ցանկացած որոշում կայացնել՝ համաձայնել և ընդունել նախագիծը, փոփոխել կամ մերժել այն: Սրանով նախաձեռնությունը տարբերվում է հանրաքվեից, որի որոշումը պարտադիր բնույթ ունի<sup>6</sup>: Նախագիծը չընդունելու դեպքում սահմանված կարգով համապատասխան թվով քաղաքացիների ստորագրության առկայությամբ այդ խնդրի վերաբերյալ կարող է անցկացվել հանրաքվե: Նախաձեռնությունը, լինելով հանրային իշխանության իրականացմանը քաղաքացիների անմիջական մասնակցության ձև, նոր օրենքի նախագիծ առաջարկելու, գործող օրենքները փոփոխելու կամ ուժը կորցնելու մասին օրենքի նախագիծ ներկայացնելու միջոցով հնարավորություն է ընձեռում մարդկանց մասնակցելու պետության կառավարմանը, կարգավորելու կարևոր հասարակական

<sup>4</sup> Տե՛ս **Руденко В. Н.** Институт народной правотворческой инициативы, М., 2001, էջ 303 <https://ifp.uran.ru/files/publ/eshegodnik/2001/16.pdf>

<sup>5</sup> Տե՛ս Конституционное право зарубежных стран. Под ред. М. В. Баглая, Ю. И. Лейбо, Л. М. Энтина, М.: Норма, 2004:

<sup>6</sup> Տե՛ս Гражданская законодательная инициатива как форма осуществления населением государственной власти <http://canonlex.com/grazhdanskaya-zakonodatelnaya-initsiativa-kak-forma-osushchestvleniya-naseleniem-gosudarstvennoj-vlasti.html>

հարաբերություններ: Օրենսդրական նախաձեռնության ինստիտուտներ գոյություն ունեն Շվեյցարիայում, Ավստրիայում<sup>7</sup>, Իտալիայում, Իսպանիայում, Սլովենիայում<sup>8</sup>, Բրազիլիայում, ինչպես նաև ԽՍՀՄ փլուզման արդյունքում ձևավորված նորանկախ պետություններում՝ Բելառուսում, Վրաստանում, Ղրղզստանում, Լատվիայում, Լիտվայում<sup>9</sup> և այլ երկրներում: Լեհաստանի Մահմանադրության 118-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտները, այդ թվում՝ նախատեսված է Սեյմի ընտրության իրավունք ունեցող 100.000-ից ոչ պակաս քաղաքացիների խումբը<sup>10</sup>: Իտալիայում օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն պառլամենտականները, կառավարությունը, մարզային և մունիցիպալ մարմինները, աշխատանքի և էկոնոմիկայի ազգային խորհուրդը, 50 հազար ընտրող: Իսպանիայում նման իրավունքով օժտված են կառավարությունը, 25 և ավելի պատգամավոր, 500 հազարից ավելի ընտրող: Չինաստանում ևս շատ լայն է օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցողների շրջանակը<sup>11</sup>:

Լիսաբոնի պայմանագրով քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը՝ որոշակի առանձնահատկություններով, ներդրվեց նաև Եվրոպական միությունում: Այստեղ, սակայն, քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված նախագծի ճակատագիրը որոշում է Եվրոպական հանձնաժողովը, որը կարող է հավանության արժանացնել այն կամ մերժել<sup>12</sup>: Ինչպես նշում է Ա. Ս. Սերգեևան, Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը նախատեսում է քաղաքացիական տարբեր նախաձեռնությունների որոշակի ցանկ, որոնց շարքին կարելի է դասել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը, հանրագրերը, քաղաքացիների դիմումները, նրանց մասնակցությունը հավաքներին, երթերին, նորմատիվ իրավական ակտերի նախագծերի պաշտոնական քննարկմանը զանգվածային լրատվական միջոցներով և այլն<sup>13</sup>:

### Հետազոտության արդյունքներ

Մինչև 1995 թ. ՀՀ Մահմանադրության ընդունումը Հայաստանում մեծ էր օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների թիվը: Ըստ «ՀՀ Գե-

<sup>7</sup> Տե՛ս Ավստրիայի Մահմանադրություն, հոդված 41 <https://www.constituteproject.org/#/>

<sup>8</sup> Տե՛ս Սլովենիայի Մահմանադրություն, հոդված 88 <https://legalns.com/download/books/cons/slovenia.pdf>

<sup>9</sup> Տե՛ս Լատվիայի Մահմանադրություն, հոդված 65 <https://www.constituteproject.org/#/>, Բելառուսի Մահմանադրություն, հոդված 99 <https://www.constituteproject.org/#/>

<sup>10</sup> Տե՛ս Լեհաստանի Մահմանադրություն, հոդված 118 <https://legalns.com/download/books/cons/poland.pdf>

<sup>11</sup> Տե՛ս **Алебастрова И.А.** Конституционное право зарубежных стран. Схемы и комментарии. М., 2002:

<sup>12</sup> Տե՛ս **Հովսեփյան Հ.** Օրենսդրական նախաձեռնության փուլը Եվրոպական միության օրենսդրական գործընթացում // Հանրային կառավարում, № 2, Եր., 2009, էջեր 123-124:

<sup>13</sup> Տե՛ս **Сергеева А. А.** Об отдельных проблемах реализации общественных инициатив граждан // Конституционное и муниципальное право, 2015, № 8, էջ 71-74:

րագույն Ըստ «ՀՀ Գերագույն խորհրդի մասին» օրենքի 8-րդ հոդվածի՝ 10 սուբյեկտ ունեին օրենսդրական նախաձեռնության իրավունք, իսկ Սահմանադրության ընդունումից հետո նման իրավունք վերապահվեց պատգամավորին և Կառավարությանը<sup>14</sup>։ Իսկ 2015 թ. փոփոխված ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն ոչ միայն պատգամավորը, Ազգային ժողովի խմբակցությունը և Կառավարությունը, այլև ընտրական իրավունք ունեցող առնվազն հիստոն հազար քաղաքացի կարող է քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին սահմանված կարգով օրենքի նախագիծ առաջարկել։ Մյուս կողմից, Սահմանադրության 202-րդ հոդվածի<sup>15</sup> առաջին մասում սահմանվեց, որ Սահմանադրության և դրա 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 16-րդ գլուխներում և ևս 15 հոդվածներում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով, որը նախաձեռնելու իրավունք ունեն պատգամավորների մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի։ Այսինքն՝ քաղաքացիների բավականին մեծ խումբ դրսևորում է իր կամքը հիմնական օրենքի փոփոխության առումով՝ դրանով իսկ ակտիվ ներգործություն ունենալով պետության կառավարման և սահմանադրական ինստիտուտների վրա։ Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը կարող է փոփոխություններ կատարել Սահմանադրության որոշակի հոդվածներում, որոնց վերաբերյալ, ի թիվս այլ սուբյեկտների, ընտրական իրավունք ունեցող հարյուր հիստոն հազար քաղաքացի ևս իրավունք ունի ներկայացնել Նախաձեռնություն։ Հիմնական օրենքի 53-րդ հոդվածով<sup>16</sup> էլ առաջին անգամ իրավունք վերապահվեց յուրաքանչյուր անձի անհատապես կամ այլոց հետ պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց ներկայացնել հանրագիր և ողջամիտ ժամկետում ստանալ պատշաճ պատասխան։ Մյուս կողմից՝ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքը<sup>17</sup> փոփոխվեց 2018 թվականին, որը հնարավորություն էր ընձեռում բնակչությանը՝ դիմել առաջարկություններով, դիմումներով, բողոքներ ներկայացնել, և համապատասխան իրավասու մարմինները պարտավոր էին օրենքով սահմանված կարգով պատասխանելու քաղաքացիներին, վերացնելու արձանագրված խախտումները։ Այնուհետև ընդունվեց «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը<sup>18</sup>։

<sup>14</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995), Եր., 1995, էջ 190։

<sup>15</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եր., 2015 թ. փոփոխություններով։

<sup>16</sup> Տե՛ս «Հանրագրերի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2018.01.17/4(1362)՝ ընդունված 2017 թվականի դեկտեմբերի 21-ին // <https://www.arlis.am/documentview.aspx?docid=119042>

<sup>17</sup> Տե՛ս «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 1999.12.27/31(97), ընդունվել է 1999 թվականի նոյեմբերի 24-ին, ուժը կորցրել է 2018 թվականի հունվարի 27-ին <https://www.arlis.am/documentview.aspx?docid=647>

<sup>18</sup> Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք / ՀՀՊՏ 2004.03.31/18(317), հոդված 13, ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75264>

Այլ երկրների օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, քաղաքացիները կարող են դիմել պետական և տեղական իշխանության մարմիններին երկու ձևով. առաջին՝ ներկայացնել առաջարկություններ, որոնք կարող են արտացոլվել օրենքներում, երկրորդ՝ սահմանված կարգով հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ և պահանջել՝ նախագիծը քննարկելու պաշտամենտում: Մերժելու դեպքում՝ համապատասխան ստորագրություններ հավաքելուց հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով նախագիծը դրվում է հանրաքվեի: Կան պետություններ, օրինակ՝ Իտալիան, Լեհաստանը, որոնց օրենսդրությունը պահանջում է Նախաձեռնությունը ձևակերպել իրավական ակտի պահանջներին համապատասխան, իսկ մի շարք երկրներում՝ Ռուսաստանում, Լիխտենշտեյնում, Մալթայում և այլուր, այն ներկայացվում է ընդհանուր առաջարկի տեսքով<sup>19</sup>: Ընդհանուր առմամբ, Նախաձեռնությունն ընդունելով որպես ժողովրդաիշխանության կարևոր կառուցակարգ՝ այդուամենայնիվ կան գիտական վեճեր Նախաձեռնության իրավունքի իրացման շուրջ: Նույնիսկ զարգացած ժողովրդավարական պետություններում այս հարցի վերաբերյալ կան և՛ կողմ, և՛ դեմ փաստարկներ: Գիտնականների մի մասը գտնում է, որ Նախաձեռնությունը պետական գործերի կառավարմանը քաղաքացիների մասնակցության անկախ, ինքնուրույն ձև է և ժողովրդավարության նորագույն ինստիտուտ, ինչի հետ լիովին համամիտ ենք: Համաձայն ենք նաև Վ. Ն. Ռուդենկոյի այն տեսակետին, որ «ժողովրդի օրինաստեղծ նախաձեռնությունը կարելի է որակել որպես պետության օրենսդրությունը լրացնող օրինաստեղծման հատուկ ձև: Գործառության այն առումով ժողովրդի նախաձեռնությունը կարող է լրացնել սոցիալական հարաբերությունների իրավական կարգավորման բացերը կամ հանդես գալ որպես այլընտրանք պետության (ՏԻՄ-ի) օրինաստեղծ գործունեությանը»<sup>20</sup>: Մյուս կողմից էլ, «Եթե ներկայացուցչական համակարգի կայացման սկզբնական շրջանում խորհրդարանական ինստիտուտները ծառայում էին որպես ժողովրդավարության պարզեցման գործիք, ապա ներկայումս անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտները կատարում են հակառակ դերը. անհրաժեշտ դեպքերում նրանք խոչընդոտ են հասարակությունից ներկայացուցչական ինստիտուտների անջատման համար»<sup>21</sup>: Նախաձեռնությունը Մահմանադրությամբ ամրագրված անմիջական ժողովրդավարության մյուս ինստիտուտների հետ կարող է նպաստել ժողովրդաիշխանության ամրապնդմանը:

<sup>19</sup> Տե՛ս **Խալաթյան Ա.** Ժողովրդավարության կառուցակարգերի սահմանադրական խնդիրները և դրանց բարեփոխման ուղիները, Եր., 2021 <https://www.aravot.am/2021/07/28/1206853/>

<sup>20</sup> **Руденко В. Н.** Институт народной правотворческой инициативы в зарубежных государствах, 2001, с. 306 <https://ifp.uran.ru/files/publ/eshegodnik/2001/16.pdf>

<sup>21</sup> **Кривошеева Т. А.** Народная инициатива как форма правотворчества: правовые проблемы законодательного закрепления // Российское законодательство в современных условиях. Материалы VI ежегодной Всероссийской научно-практической конференции, Брянск, Группа компаний "Десяточка", 2008, с. 213.

Ժամանակակից հասարակությունում ժողովրդական նախաձեռնությունը կարող է լինել այն գործիքներից մեկը, որը թույլ կտա հաղթահարել հնարավոր խզվածքը քաղաքացիների և իշխանության միջև՝ օրենսդրությամբ առավել համակողմանիորեն արտացոլելով հանրային իրական պահանջները<sup>22</sup>: Կարծում ենք, որ քաղաքացիները պետք է իրավունք ունենան ներկայացնելու օրենսդրական նախաձեռնություններ՝ օրենքի նախագծի համար սահմանված պահանջներին համապատասխան, որոնք օրենսդիր մարմինը պարտավոր է առանց խոչընդոտների քննարկել, իսկ պատգամավորներն էլ ամեն կերպ պետք է աջակցեն նախաձեռնության ընդունմանը՝ հաշվի առնելով, որ դրա նախաձեռնողն իրենց հազարավոր ընտրողներն են:

Գիտնականների այլ խումբ էլ գտնում է, որ Նախաձեռնությունն ածանցվում է պետական իշխանության իրականացմանը ժողովրդի մասնակցությունից: Այսպես, ըստ Լ. Ա. Նուդնենկոյի՝ ընդհանուր առմամբ քաղաքացիների օրինաստեղծ նախաձեռնության իրավունքը կարելի է համարել ածանցյալ պետական գործերի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքից՝ միջնորդություն ներկայացնելով կարգավորող իրավական ակտ ընդունելու, նախկինում ընդունվածը չեղարկելու կամ փոփոխելու անհրաժեշտության մասին<sup>23</sup>: Վ. Վ. Գրիբը ևս գտնում է, որ «օրինաստեղծ նախաձեռնության ինստիտուտը մի տեսակ ածանցյալ է իշխանություններին դիմելու քաղաքացիների իրավունքից, որը նախատեսված է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությամբ: Սահմանադրական իրավունքում բողոքարկման իրավունքի բովանդակությունը, ի լրումն հիմնական բաղադրիչի՝ իշխանությանը դիմելու կարողության, բնութագրվում է հատուկ քաղաքական բաղադրիչով՝ բնակչության՝ պետության գործերի կառավարմանը մասնակցելու կարողությամբ: Այս առումով քաղաքացիներն իրավունք ունեն դիմումներ ուղարկել պետական մարմիններին հատուկ թեմայով՝ պետության մեջ քաղաքական, սոցիալ-տնտեսական բարեփոխումներ իրականացնելու, գործող օրենսդրության փոփոխման և լրացման, կոնկրետ օրենքների չեղարկման կամ ընդունման վերաբերյալ»<sup>24</sup>: Կարծում ենք, որ Վ. Գրիբը Նախաձեռնության և հանրագրի կամ առաջարկության մեջ հավասարման նշան է դնում, որը, մեր կարծիքով, ճիշտ չէ: Մյուս կողմից, քննադատական կարծիք ունեցող գիտնականները գտնում են, որ Նախաձեռնությունը՝

ա) խառնաշփոթ է առաջացնում, կրքեր բորբոքում, պառակտում հասարակությունը, ատելություն սերմանում,

<sup>22</sup> Տե՛ս **Բաղայան Ս.** Ժողովրդական նախաձեռնության՝ որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի կայացման արդի հիմնահարցերը, Եր. 2019, էջ 12:

<sup>23</sup> Տե՛ս **Нудненко Л. А.** Институты непосредственной демократии в системе местного самоуправления России, М.: ИНИОН РАН, 2000, էջ 34:

<sup>24</sup> **Гриб В. В.,** Законотворческая (правотворческая) инициатива как форма влияния институтов гражданского общества на органы государственной власти // Конституционное и муниципальное право, № 12, 2010, с. 9.

բ) խաթարում է օրինագծերի քննարկման սահուն ընթացքը և ազդում պառլամենտում փոխզիջումների գործընթացի վրա,

գ) քաղաքացիների մեծամասնությունը տեղյակ չէ, չունի իրավական անհրաժեշտ գիտելիքներ, չի ցանկանում ժամանակ ծախսել այդ հարցերի մանրամասն ուսումնասիրության վրա,

դ) Նախաձեռնությունը կունենա արդյունք, և կարող են ընդունվել օրենքներ միայն այն դեպքում, եթե դրանք նախաձեռնվում, մշակվում, ուղղորդվում և ֆինանսավորվում են քաղաքական խմբերի, լոբբիստական կառույցների կողմից:

Իհարկե, էական է այն հանգամանքը, թե ինչ խմբի կամ խմբերի կողմից է ներկայացվում Նախաձեռնությունը, քանի որ դրա մշակման և քննարկումների կազմակերպման համար անհրաժեշտ են հմուտ մասնագետներ, ֆինանսական ներդրումներ: Պակաս կարևոր չէ կազմակերպչական աշխատանքների, հատկապես քարոզչության հստակ կազմակերպումը: Արդյունքների վրա լուրջ ազդեցություն կարող են ունենալ սոցիալական ցանցերը, լրատվամիջոցները: Նախաձեռնության հեղինակների հաջողության գրավականը պայմանավորված է նրանով, թե որքանով է հարցը հուզում հասարակությանը, ինչպես են Նախաձեռնության էությունն ու բովանդակությունը լուսաբանվում, մանրամասն ներկայացվում ժողովրդին: Ուսումնասիրելով ներկա իրավիճակը՝ կարծում ենք, որ Նախաձեռնությունը չպետք է դառնա սովորական օրենսդրական գործընթաց: Համաձայն ենք Ջ. Ջիմերմանի այն կարծիքին, որ «Նախաձեռնողական ընթացակարգը պետք է լինի ընտրողների «պահուստային» լիազորություն, որն օգտագործվում է միայն այն դեպքում, երբ պարզվում է, որ օրենսդիր մարմինը ներկայացուցչական չէ և չի ցանկանում արձագանքել քաղաքացիների կարիքներին»<sup>25</sup>: Այս առումով ժամանակակից հասարակության մեջ ժողովրդական նախաձեռնությունը ծառայում է որպես իշխանությունից քաղաքացիների քաղաքական օտարումը հաղթահարելու գործիքներից մեկը: Եթե ներկայացուցչական համակարգի ձևավորման արշալույսին խորհրդարանական ինստիտուտները ծառայում էին որպես ժողովրդավարությունը խթանելու գործիք, ապա ներկայումս ուղիղ դեմոկրատիայի ինստիտուտները ճիշտ հակառակ դերն են կատարում. անհրաժեշտության դեպքում խոչընդոտում են ներկայացուցչական վերափոխումը<sup>26</sup>:

Նախաձեռնության էությունը լավագույնս բացահայտում է Ս. Վաժնովը, ըստ որի՝

- նշված ինստիտուտը կարգավորող ակտերը պետք է հատուկ պահանջներ սահմանեն նման սուբյեկտների համար.

- նախաձեռնությունն օրենքի նախագիծ է, արդեն գոյություն ունեցող օրենքի փոփոխության նախագիծ կամ օրենքն ընդունելու, փոփոխելու կամ ուժը

<sup>25</sup> Зиммерман Дж., Прямая демократия в Соединённых Штатах Америки: опыт и проблемы. 2005, с. 53.

<sup>26</sup> Տե՛ս Շայո Ա., Самоограничение власти: Краткий курс конституционализма, М., 2001, էջ 57:

կորցրած ճանաչելու առաջարկ: Խորհրդարանում քննարկվելու համար նախաձեռնությունները պետք է աջակցություն ստանան որոշակի թվով քաղաքացիների կողմից:

- իրավասու մարմինը պարտավոր է բաց քննարկել նախաձեռնությունը՝ պայմանով, որ նախաձեռնողները պահպանեն կարգավորող իրավական ակտերով սահմանված բոլոր պայմանները:

- նախաձեռնությունները քննարկվում են իրավասու մարմնի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, օրինաստեղծ գործընթացի համար նախատեսված համապատասխան կանոններով:

- իրավասու մարմնի կողմից քննարկման ավարտին պետք է կայացվի հիմնավորված որոշում և ներկայացվի նախաձեռնողների ուշադրությանը<sup>27</sup>:

Տեղին է Ա. Թադևոսյանի այն դիտարկումը, որ «ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունն իրենից ենթադրում է ժողովրդի (որոշակի քանակի քաղաքացիների) նորմատիվ իրավական ակտով ամրագրված հնարավորությունն իրականացնելու իրավական նշանակություն ունեցող այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են նորմատիվ իրավական ակտի ընդունմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը և ենթակա են պարտադիր քննարկման հանրային իշխանության իրավասու մարմնի կողմից»<sup>28</sup>:

Ակնհայտ է, որ գործող իշխանության համար ոչ ցանկալի իրավակարգավորումներ նախատեսող Նախաձեռնությունները հիմնականում մերժվում են: Հակառակ դեպքում օրենսդիր մարմինն առանց խոչընդոտներ հարուցելու կարող էր պառլամենտում խնդրին ընթացք տալ:

Նախաձեռնությունը պետք է բավարարի Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի համար սահմանված պահանջները՝ հակառակ դեպքում այն քննարկման առարկա չի դառնա: Ինչպես նշում է Վ. Ե. Չիրկինը, «կազմել օրինագիծ և առաջարկել այն (օրինակ՝ փոստով ուղարկել խորհրդարան) կարող է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, բայց խորհրդարանն ամեննին պարտավոր չէ քննարկել նման տեքստը: Նա պարտավոր է քննարկել միայն այն օրինագծերը, որոնք ներկայացրել են այն մարմինները և անձինք, որոնց Սահմանադրությունը (այլ օրենքը) վերապահել է օրենսդրական նախաձեռնության իրավունք»<sup>29</sup>: Իսկ Ա. Ա. Դվորակը<sup>30</sup>, Վ. Վ. Գրիբը<sup>31</sup> և այլք Նա-

<sup>27</sup> Տե՛ս **Важнов С. С.**, Институт правотворческой инициативы граждан в системе народовластия в Российской Федерации. Диссертация кандидата юридических наук: 12.00.02, Саратов, 2007, էջ 173:

<sup>28</sup> **Թադևոսյան Ա.**, «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություն» հասկացությունը, Էությունն ու բովանդակությունը // Հանրային կառավարում, № 1, 2022, էջ 84:

<sup>29</sup> **Чиркин В. Е.**, Законодательная власть. М., 2010, с. 276.

<sup>30</sup> Տե՛ս **Дворак А. А.**, Реализация конституционного права граждан на обращение в Российской Федерации, Диссертация кандидата юридических наук, М., 2003:

<sup>31</sup> Տե՛ս **Гриб В. В.**, Законодотворческая (правотворческая) инициатива как форма влияния институтов гражданского общества на органы государственной власти // Конституционное и муниципальное право, 2010, № 12:

խաձեռնություն են համարում քաղաքացիների դիմումները, առաջարկությունները: Մենք գտնում ենք, որ դրանք միմյանցից խիստ տարբեր իրավաքաղաքական ինստիտուտներ են: Խնդիրն այն է, որ դիմումներով և առաջարկություններով կարող են դիմել.

ա) մեկ կամ մի քանի քաղաքացի,

բ) նրանք կարող են նույնիսկ ընտրելու իրավունք չունենալ, լինեն 16 տարեկան, օտարերկրյա քաղաքացի, փախստական,

գ) դիմումների, առաջարկությունների բովանդակությանը, ձևակերպումներին օրենսդրությունը պարտադիր պահանջ չի ներկայացնում, իսկ Նախաձեռնությունը պետք է բավարարի օրենսդրությամբ սահմանված պահանջները,

դ) չի բացառվում, որ դիմումները կարող են մնալ պատգամավորի, պետական պաշտոնյայի գործցում, և ընթացք չտրվի անգամ շատ կարևոր բովանդակություն ունեցող փաստաթղթերին,

ե) դիմողը կարող է ստանալ շատ կարճ պատասխան, որ «Ձեր դիմումը ուղարկված է իրավասու մարմնին» կամ «Ձեր դիմումում բարձրացված հարցն ընդունված է ի գիտություն» և այլն:

Փաստարկները կարելի է շարունակել և, չհամաձայնվելով որոշ գիտնականների այն պնդման հետ, որ այս երկու ինստիտուտները սերտ կապված են, նշենք, որ Նախաձեռնությունը.

ա) սահմանադրական ինստիտուտ է, և հստակ սահմանված թվով քաղաքացիների խումբն է հանդիսանում օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ: Դիմում կարող է ներկայացնել մեկ քաղաքացի, իսկ Նախաձեռնության ներկայացման համար պահանջվում է ընտրական իրավունք ունեցող առնվազն 50 հազար քաղաքացու համաձայնություն, որը վավերացվում է ստորագրության միջոցով,

բ) Նախաձեռնությունը պետք է համապատասխանի օրենսդրական նախաձեռնության համար սահմանված պահանջներին, լինի մասնագիտական խմբի կողմից մշակված և հանրության դատին ներկայացված փաստաթուղթ՝ օրենքի նախագիծ,

գ) դրա իրականացման համար նախատեսված են որոշակի օրենսդրական գործընթացներ,

դ) գործող ընթացակարգի համաձայն՝ այն նախ ներկայացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որտեղ ստորագրությունները ստուգվում են, որի արդյունքում կա՛մ մերժվում է Նախաձեռնությունը, և գործընթացը կասեցվում է, կա՛մ հաստատվելուց հետո միայն նախաձեռնող խումբը, քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը իրավունք ունեն այն ներկայացնել Ազգային ժողովի քննարկմանը:

### Եզրակացություններ և առաջարկություններ

Այսպիսով, ՀՀ-ում գործող իրավակարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրագրերի, դիմումների, առաջարկությունների և Նախաձեռնությունների նախագծերի մշակման, ձևակերպման և լիազոր մարմիններին ներկայացման կառուցակարգերը միմյանցից էապես տարբերվում են, և իրավաբանորեն դրանք «սերտորեն» կապված չեն:

Հայաստանում Նախաձեռնությունը մոտ 10 տարվա «կյանք» ունի, և արդեն երկու անգամ ժողովուրդը փորձ է արել օգտվել այդ ինստիտուտից:

Մեր կարծիքով, ՀՀ Սահմանադրությամբ Նախաձեռնությունն իրականացնելու համար ամրագրված նորմերը խիստ բարդ են, դժվար կիրառելի և չեն նպաստում ժողովրդաշխատության զարգացմանը: Այսպես.

1. Սահմանադրությամբ ամրագրված է, որ ընտրական իրավունք ունեցող առնվազն հիստու հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք: Սահմանադրությամբ կարծեք առաջընթաց է գրանցվել ժողովրդավարական սկզբունքների կենսագործման, անմիջական ժողովրդաշխատության իրականացման առումով: Սակայն, երբ փորձում ենք վերլուծել ընթացակարգերը, ապա պարզվում է, որ հիստու հազար թիվը, երեք միլիոնից պակաս բնակչություն ունեցող պետության դեպքում, շատ մեծ է: Որքան ջանք, ֆինանսներ, քարոզչական ինչպիսի աշխատանք, ռեսուրսներ են անհրաժեշտ երկու ամսում այդքան քաղաքացու գործընթացի մեջ ներգրավելու և սահմանված թվով ստորագրություններ հավաքելու համար: Այլ երկներում, օրինակ՝ Մակեդոնիայում<sup>32</sup>, երկու միլիոն բնակչության դեպքում նախատեսված է այս իրավունքի իրացման իրավունք առնվազն 10 հազար քաղաքացու, իսկ Ալբանիայում<sup>33</sup>՝ 3,5 միլիոն բնակչության պարագայում՝ 20 հազար քաղաքացու համար: Իտալիայում ևս նախատեսված է 50 հազար քաղաքացի<sup>34</sup>, սակայն բնակչության թիվն այնտեղ անցնում է 62 միլիոնը:

Ընտրական իրավունք ունեցող 50 հազար քաղաքացուն որպես Նախաձեռնության ինստիտուտի սուբյեկտ դիտարկելը համարում ենք վերանայման ենթակա և առաջարկում սահմանադրական փոփոխություններով այն սահմանել որպես առնվազն 10 հազար քաղաքացու կոլեկտիվ իրավունք, եթե ցանկանում ենք ձևից անցում կատարել բովանդակությանը: Չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ երկրում հասարակական իրավագիտակցության և իրավական մշակույթի պակաս կա:

2. Նախաձեռնությունը կարող է նույնիսկ Ազգային ժողովի քննարկման անարկա չդառնալ՝ մեծամասնության կամքով չներառվելով Ազգային ժողովի օ-

<sup>32</sup> Տե՛ս Մակեդոնիայի Սահմանադրություն, հոդված 7:

<sup>33</sup> Տե՛ս Ալբանիայի Սահմանադրություն, հոդված 81:

<sup>34</sup> Տե՛ս Իտալիայի Սահմանադրություն, հոդված 71:

րակարգում: Խնդիրն այն է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ)<sup>35</sup> համաձայն՝ Նախաձեռնությունը Ազգային ժողովի օրակարգ ներառվում և քննարկվում է օրենքի նախագծի քննարկման ընդհանուր կարգի համաձայն: Այսինքն՝ Նախաձեռնությունը դրվում է շրջանառության մեջ, և՛ Կառավարությունը, և՛ գլխադասային հանձնաժողովը քննարկելուց հետո տալիս են գրավոր եզրակացություն:

Մինչև երկրորդ ընթերցումը ևս ներկայացվում են գրավոր առաջարկություններ պատգամավորների և Կառավարության կողմից: Սակայն Ազգային ժողովի մեծամասնությունն առանց դժվարության կարող է արգելափակել Նախաձեռնության հետագա քննարկումները: Այսպես՝

ա) եթե գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը բացասական է, ապա Նախաձեռնությունը քվեարկության միջոցով է մտնում օրակարգ: Եվ մեծամասնությունը կարող է դեմ քվեարկել, եթե այն մեծամասնության, Կառավարության համար մերժելի փաստաթուղթ է՝ հաշվի չառնելով, որ Նախաձեռնությունը քաղաքացիների մեծաթիվ խմբի իրավունքն է: Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ Նախաձեռնությունները դուրսին կերպով չեն հարթում իրենց ճանապարհը: Օրինակ՝ Ավստրիայում կառավարության համար անընդունելի նախաձեռնությունները հեշտությամբ մերժվում են խորհրդարանում կառավարական մեծամասնության կողմից և կարող են նույնիսկ ընդհանրապես չդիտարկվել վերջինիս կողմից: Փաստորեն, ժողովրդի օրենսդրական նախաձեռնությունը վերաժվում է ժողովրդավարության անարդյունավետ, չաշխատող ինստիտուտի<sup>36</sup>,

բ) կարծում ենք, որ օրենսդիր մարմինը պարտավոր է Նախաձեռնությունն առաջնահերթ կերպով անարգել ներառել օրակարգ և քննարկել: Կանոնակարգի 38-րդ հոդվածը նվիրված է հերթական նստաշրջանի օրակարգի ձևավորմանը, և հոդվածի 3-րդ մասում՝ որպես «պարտադիր քննարկման ենթակա հարցեր» նախատեսված է 19 հարց, որոնք ենթակա են քննարկման՝ անկախ որևէ անձի ցանկությունից: Կարծում ենք, որ հազարավոր քաղաքացու կողմից ներկայացված Նախագծի ճակատագիրը չպետք է կախված լինի մեծամասնության կամքից, ուստի առաջարկում ենք Մահմանադրությամբ ամրագրված Նախաձեռնությունը անպայման դարձնել Ազգային ժողովի քննարկման առարկա՝ այն ներառելով Կանոնակարգի 38-րդ հոդվածի 3-րդ մասում: Որպես կանոն, այլ պետություններում ներկայացուցչական մարմինը պարտավոր է քննարկել Նախաձեռնությունը, սակայն ընդունման հարցը դարձյալ պայմանավորվում է պատգամավորների մեծամասնության կամքով,

<sup>35</sup> Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, ընդունվել է 2016 թ. դեկտեմբերի 16-ին:

<sup>36</sup> Տե՛ս **Васильева Т. А., Попов Н. Ю.**, Вступительная статья // Италия. Конституция и законодательные акты, М., 1988, էջ 22:

3. Ազգային ժողովում Նախաձեռնությունը քննարկելու և մերժելու դեպքում դրա հետագա ընթացքը կարգավորող նորմերի պահանջների իրականացումը ևս շատ բարդ է: Կանոնակարգի 76-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է. «Եթե Ազգային ժողովը մերժում է Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա նախագիծը կարող է Սահմանադրությամբ և «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դրվել հանրաքվեի»: Իսկ «Հանրաքվեի մասին» օրենքով նախաձեռնողները 60 օրվա ընթացքում պետք է կարողանան ընտրական իրավունք ունեցող ևս 300.000 քաղաքացու ստորագրություն հավաքել, և միայն այս դեպքում լիազոր ներկայացուցիչը կարող է դիմել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ ստորագրությունների վավերականությունը հաստատելու համար: Թվում է, թե օրենսդրորեն կարգավորված է քաղաքացիների նախաձեռնության հետագա ընթացքը: Սակայն, տրամաբանական չէ, որ և՛ Նախաձեռնության (50 հազար քաղաքացու ստորագրության) համար, և՛ 300 հազար ստորագրությամբ Նախաձեռնությանը միանալու համար սահմանված է 60 օր:

Կարծում ենք.

ա) 60 օրը լուրջ խոչընդոտ է՝ այդքան կարճ ժամկետում Նախաձեռնության էությունը, բովանդակությունը քաղաքացիներին հասու դարձնելու համար: Ընդհանրապես նախընտրական քարոզչության, հանրաքվեին «Այո» կամ «Ոչ» քվեարկելու համար ՀՀ օրենսդրությունը նախատեսում է մոտ 30 օր, որպեսզի ընտրողներին ներկայացվեն կուսակցությունների, պատգամավորների ծրագրերը, բացատրվի հանրաքվեի իմաստը: Հետևաբար, ըստ գործող կարգի՝ մնում է 30 օր այդքան ստորագրություն հավաքելու համար: Ակնհայտ է, որ օրերի թիվը պետք է կրկնապատկել՝ դարձնելով 120 օր, հատկապես, եթե հաշվի առնենք, որ պահանջվում է ստորագրությունների թվի ավելացում վեց անգամով,

բ) 300 հազար թիվը խիստ ուռճացված է: Համաձայն Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությունը ընդունելու կամ փոփոխելու իրավունք ունեն նաև ընտրական իրավունք ունեցող 200 հազար քաղաքացի: Այսինքն, հիմնական օրենքի վերաբերյալ անհրաժեշտ է 200 հազար քաղաքացու համաձայնություն, իսկ որևէ օրենքի փոփոխության վերաբերյալ նախագիծը հանրաքվեի դնելու համար պահանջվում է 350 հազար քաղաքացու ստորագրություն: Անհամաչափ և ոչ իրավաչափ պահանջ է ներկայացված Սահմանադրության մեջ: Եթե հարցը դրվում է հանրաքվեի, ապա նույն թվով քաղաքացիների պահանջ պետք է ներկայացվի: Առաջարկում ենք Նախաձեռնությունը հանրաքվեի դնելու համար հավաքված 50 հազար ստորագրությանը միանան ևս 150 հազարը, և հանրաքվեի անցկացման համար քաղաքացիների ստորագրությունների համար նախատեսված թիվը նույնացվի:

4. Անընդունելի ենք համարում նաև այն օրենսդրական կարգավորումները, որ քաղաքացիների հսկայական խմբի (350 հազար անձի) կողմից ներկայացված օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու համար դարձյալ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների երկու երրորդի համաձայնության դեպքում միայն նախագիծը պետք է դրվի հանրաքվեի:

Նախ՝ Ազգային ժողովը արդեն մերժել է Նախաձեռնությունը կա՛մ օրակարգ չմտցնելով, կա՛մ քննարկումների արդյունքում, հետևաբար՝ Ազգային ժողովի մասնակցությունը այս դեպքում միայն արգելափակելու է խնդրի հետագա ընթացքը: Երկրորդ՝ Նախաձեռնության սահմանադրականության հարցը, օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանումը և այլ խնդիրներ ՀՀ Սահմանադրությամբ, «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված կարգով մինչև հանրաքվեի կազմակերպումը, Նախաձեռնությունը լիազոր ներկայացուցիչի կողմից Սահմանադրական դատարան ներկայացնելուց հետո քննարկվում են Սահմանադրական դատարանի կողմից, և ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետին համաձայն՝ որոշում է դրա համապատասխանությունը Սահմանադրությանը: Սակայն, **Սահմանադրության 206-րդ հոդվածով սահմանված է, որ** «Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին որոշումն ընդունվելուց, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը նշանակում է հանրաքվե»:

Գտնում ենք, որ սահմանադրական փոփոխություններ իրականացնելիս պետք է քննարկման առարկա դառնա այն հարցը, որ ՄԴ-ի որոշումից հետո այլևս Ազգային ժողովը չպետք է միջամտի այդ հարցին, և 206-րդ հոդվածից պետք է հանել հետևյալ բառակապակցությունը՝ «ինչպես նաև Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունվելուց հետո»։ Նման փոփոխության դեպքում Սահմանադրական դատարանի դրական որոշումը բավարար հիմք կհանդիսանա, որ Հանրապետության նախագահը նշանակի հանրաքվե: Գրեթե համանման կարգավորում է ամրագրված Լատվիայի Հանրապետության Սահմանադրության 78-րդ հոդվածում, որի համաձայն՝ ընտրողներն իրավունք ունեն պետության Նախագահին ներկայացնել Սահմանադրության փոփոխությունների ամբողջական մշակված նախագիծ կամ օրենքի նախագիծ, որը Նախագահը ներկայացնում է Սեյմին: Եթե Սեյմը նախագիծն առանց էական փոփոխության չընդունի, ապա այն կներկայացվի ժողովրդի քվեարկությանը<sup>37</sup>:

<sup>37</sup> St u Konstitucija Latvijas Republikas // Конституции государств Центральной и Восточной Европы. М., 1997, էջ 135–145:

Հետևաբար, ըստ մեզ՝ այս ինստիտուտի իրականացման համար օրենսդրորեն նախատեսված բոլոր կառուցակարգերը և ընթացակարգերը պետք է պարզեցվեն.

1. քաղաքացիների առնվազն 50 հազար ստորագրության փոխարեն առաջարկում ենք նախատեսել 10 հազար ստորագրություն,

2. հանրաքվեի դնելու համար հավաքված ստորագրություններին պետք է ավելանա ոչ թե 300 հազար, այլ 150 հազար ստորագրություն, 3. Հանրապետության նախագահի կողմից հանրաքվեի նշանակման համար բավարար հիմք կարող է ծառայել Սահմանադրական դատարանի դրական որոշումը օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ՝ առանց Ազգային ժողովի որոշման:

Նախաձեռնության՝ որպես քաղաքացիների կոլեկտիվ իրավունքի իրականացման նախապատրաստումը, բնակչության շրջանում ստորագրությունների հավաքումը, հանրային քննարկումները, հանրաքվեների կազմակերպումը նպաստում են՝

ա) հասարակության իրավական գիտակցության բարձրացմանը և իրավական մշակույթի զարգացմանը,

բ) հատկապես ակտիվանում են պառլամենտ չանցած քաղաքական ուժերը, որոնք փորձում են այդ եղանակով իրենց ծրագրերի հիմնական սկզբունքներին օրենքի ուժ տալ և ակտիվություն առաջացնել հասարակական-քաղաքական կյանքում,

գ) Նախաձեռնության շնորհիվ ժողովուրդը ոչ միայն իրականացնում է ժողովրդաիշխանություն, այլև հասարակական կարևոր հարաբերությունների, հիմնախնդիրների վրա հրավիրում է պետական իշխանության մարմինների ուշադրությունը, նրանց փոխանցում իր մտահոգությունները, որոնց անհրաժեշտ է հնարավորինս կարճ ժամկետներում լուծումներ տալ,

դ) Նախաձեռնության մերժման դեպքում մեծանում է Նախաձեռնությունը հանրաքվեի միջոցով ընդունելու հավանականությունը, դրանով իսկ մեծ լեգիտիմություն հաղորդելով Նախաձեռնությանը:

Այսպիսով, ուղղակի ժողովրդավարության ինստիտուտները նպաստում են օրենսդրության ստեղծմանը և կատարելագործմանը՝ դառնալով կարևոր գործիք պետական կառավարմանը մասնակցելու, որոշակի հասարակական հարբերություններ կարգավորելու, իշխանության մարմինների սահմանադրական պատասխանատվությունը բարձրացնելու, «իշխանությունը պատկանում է ժողովրդին» սահմանադրական սկզբունքը կյանքի կոչելու համար:

**ГРАНУШ АКОБЯН, РУЗАННА АКОБЯН – Об основных проблемах реализации института гражданской законодательной инициативы.** – Статья посвящена основным проблемам реализации института гражданской законодательной инициативы. В результате конституционных изменений 2015 года в Республике Армения был принят новый институт прямой или непосредственной демократии, применение которого имеет серьезные законодательные и организационные проблемы и несовершенства. В статье методом

сравнительно-правового анализа исследуются особенности института гражданской законодательной инициативы в Республике Армения. Целью статьи является анализ вопросов внесения законопроекта гражданами, имеющими избирательное право, в порядке гражданской инициативы, а задачей является выявление значимости института гражданской законодательной инициативы и трудностей её реализации на примере Республики Армения и других стран. Теоретической основой статьи являются научные труды по теме, а нормативно-правовой основой — Конституции Республики Армения и других государств, соответствующие законодательные акты. В результате исследования предлагается рассмотреть численность граждан, реализующих право законодательной инициативы, количество подписей, необходимых для идентификации граждан для проведения референдума по одному и тому же вопросу и для проведения референдума в целом, и другие вопросы.

Актуальность статьи обусловлена необходимостью модернизации правового регулирования института гражданской инициативы. Научная новизна исследования заключается в разработке предложений по внесению изменений в Конституцию Республики Армения, по уточнению и совершенствованию нормативно-правовых основ института гражданской инициативы с целью укрепления механизмов прямой демократии.

**Ключевые слова:** Конституция, демократия, гражданская инициатива, Национальное Собрание, референдум.

**HRANUSH HAKOBYAN, RUZANNA HAKOBYAN – On The Main Issues of Implementing the Institute of Citizens' Legislative Initiative.**— The article is devoted to the issues of implementing the institute of citizens' legislative initiative. As a result of the constitutional amendments of 2015, a new institute of direct or immediate implementation of democratic power was adopted in the Republic of Armenia, the implementation of which is fraught with serious legislative and organizational problems and imperfections. The article examines the peculiarities of the institution of citizens' legislative initiative in the Republic of Armenia and other countries using the method of comparative legal analysis.

The aim of the article is to analyze the key issues of proposing a draft law by citizens with the right to vote through a civil initiative, and the objective is to reveal the importance of citizens' legislative initiative and the difficulties of its implementation using the example of the Republic of Armenia and other states. The theoretical basis of the article is scientific works related to the topic, and the normative legal basis is the constitutions of the Republic of Armenia and other states, as well as relevant legislative acts. As a result of the study, it is proposed to review the number of citizens exercising the right of legislative initiative, the number of signatures required to identify citizens for holding a referendum on the same issue and for demanding a referendum in general, and other issues. The article is topical and contains scientific novelty related to the proposals for constitutional amendments in the Republic of Armenia on how to clarify and improve the normative legal foundations of the institution of civic initiative aimed at strengthening direct democratic power.

**Key words:** Constitution, democracy, civic initiative, National Assembly, referendum.

## References

- Hayastani Hanrapetutyun Sahmanadrutyun, 2015t. popoxutyunnerov, Erevan, 2015.  
 «Azgayin jogovi kanonakarg» HH sahmanadrakan orenq // <https://www.arlis.am/hy/acts/110824>  
 Hayastani Hanrapetutyun gorcox orenqneri jogovacu (1990-1995), Erevan, 1995, ej 190:]  
 «Hanragreri masin» HH orenq, HHPT, 2018.01.17/4(1362) // <https://www.arlis.am/documentview.aspx?docid=119042>  
 «Qaxaqacineri arajarkutyunnery, dimumnery ev boxoqnery qnnarkelu kargi masin» HH orenq, HHPT, 1999.12.27/31(97) // <https://www.arlis.am/documentview.aspx?docid=647>

- Varchararutyan himunqneri ev varchakan varuyti masin» HH orenq // HHPT, 2004.03.31/18(317), // <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75264>
- Avstriayi Sahmanadrutyun // <https://www.constituteproject.org/#/>
- Belarusi Sahmanadrutyun // <https://www.constituteproject.org/#/>
- Latviayi Sahmanadrutyun // <https://www.constituteproject.org/#/>
- Lehastani Sahmanadrutyun // <https://legalns.com/download/books/cons/poland.pdf>
- Sloveniayi Sahmanadrutyun // <https://legalns.com/download/books/cons/slovenia.pdf>
- Konstitucija Latvijas Pespybliki // Konstitucii gosydarctv Centralnoj i Vostochnoj Evropi. M., 1997.
- Constitution of the United States //
- Konstitution of the Unajted States // <https://www.senate.gov/about/origins-foundations/senate-and-constitution/constitution.htm>
- Apiyan N. A., Safaryan G. H., Hakobyan J. H., Petutyen ev iravunqi tesutyen himnaharcer, Erevan, 2001.
- Badalyan S., Joxovrdakan naxazernutyen` vorpes anmijakan joxovrdavarutyen instituti kayacman ardi himnaharcery, Erevan, 2019.
- Tadevosyan A., «Joxovrdakan iravastexc naxazernutyen» haskacutyuny, eutyunn u bovandakutyuny // Hanrayin karavarum, № 1, 2022.
- Xalatyan A., Joxovrdavarutyen karucakarger i sahmanadrakan xndirneri ev dranc barepoxman uxinery, Erevan, 2021 // <https://www.aravot.am/2021/07/28/1206853/>
- Hovsepyan H., Orensdrakan naxazernutyen puly Evropakan miutyen orensdrakan gorcyntacum // Hanrayin karavarum, № 2, Erevan, 2009.
- Alebastrova I. A., Konstitucionnoe pravo zarubejnix stran. Cxemi i kommentarii, M., 2002.
- Baglay M. V., Gabrichidze B. H., Konstitucionnoe pravo Possijskoj Fedepacii, M., 1996.
- Vajnov C. C., Institut pravotvorcheskoj iniciativi grajdan v sisteme napodovlastija v Possijskoj Federacii: Dissertacija kandidata juridicheskix nauk: 12.00.02, Saratov, 2007.
- Vasileva T. A., Popov H. Ju., Vstupitelnaja statja // Italija. Konstitucija i zakonodatelnie akti, M., 1998, s. 22.
- Grazhdanskaya zakonodatelnaya iniciativa kak forma osushchestvleniya naseleniem gosudarstvennoj vlasti // <http://canonlex.com/grazhdanskaya-zakonodatelnaya-initsiativa-kak-forma-osushchestvleniya-naseleniem-gosudarstvennoj-vlasti.html>
- Grib V. V., Zakonotvorcheskaja (pravotvorcheskaja) iniciativa kak forma vlijaniya institutov grajdanskogo obshchestva na organi gosudarstvennoj vlasti // Konstitucionnoe i municipalnoe pravo, № 12, 2010.
- Dvorak A. A., Pealizacija konstitucionnogo prava grajdan na obrashchenie v Poccijskoj Federacii, Dissertacija kandidata juridicheskix nauk, M., 2003.
- Zimmerman Dj., Prjamaja demokratija v Soedinjonnix Shtatax Ameriki: opit i problemi // Vestnik MGU, Serija «Pravo», 1991, № 5.
- Koslova E. I., Kutafin O. E., Konstitucionnoe pravo Possii, M., 1995.
- Konstitucionnoe pravo zarubejnix stran, Pod red. M. V. Baglaja, Ju. I. Lejbo, L. M. Entina, M.:Horma, 2004.
- Krivosheeva T. A., Harodnaja iniciativa kak forma pravotvorchestva: pravovie problemi zakonodatelnogo zakreplenija // Poccijckoe zakonodatelstvo v covremennix uclovijax. Materiali VI ejegodnoj Vserossijskoj nauchno-prakticheskoy konferencii, Brjansk, Gruppa kompanij "Desjatochka", 2008.
- Hudnenko L. A., Instituti neposredstvennoj demokratii v sisteme mestnogo samoupravlenija Poccii, M.: INION PAN, 2000.
- Rudenko V. H., Institut narodnoj pravotvorcheskoj iniciativi, M., 2001 // <https://ifp.uran.ru/files/publ/eshegodnik/2001/16.pdf>
- Sergeeva A. A., Ob otdelnix problemax realizacii obshchestvennix iniciativ grajdan // Konstitucionnoe i municipalnoe pravo, 2015, N 8.
- Teorija gosudarctva i prava, Pod red. N. I. Matusova, A. V. Malko, M., 1997.
- Chirkin V. E., Sakonodatelnaja vlast, M., 2010; Shajo A., Samoogranichenie vlasti: Kratkij kurs konstitucionalisma, M., 2001.
- Thomas E. Gronin, Direkt Demokraci: The Politkc of Initiative, Referendum, and Recall, First published bai Harvard Juniversiti Press, 1989.

## ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՊԱՏԻՃՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ<sup>10</sup>, ԱՆԱՀԻՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ<sup>10</sup>  
*Երևանի պետական համալսարան*

Գիտական հոդվածի շրջանակներում վերլուծության են ենթարկվել ազատության սահմանափակում պատժատեսակի իրավական բնույթը բացահայտող ասպեկտները. դրանցից առաջինն ուղղված է այն հարցի պարզաբանմանը, թե ազատության սահմանափակումը պետք է դիտարկվի որպես պատիժ, թե՞ քրեաիրավական ներգործության այլ միջոց, իսկ մյուս հարցադրման շրջանակներում փորձ է արվել բացահայտել տվյալ պատժատեսակի իրավական բնույթը՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի լույսի ներքո: Միաժամանակ, վեր են հանվել ազատության սահմանափակման հասկացությունը և դրա կիրառման ժամանակ տեղ գտնող սահմանափակումների վերաբերյալ որոշակի օրենսդրական խնդիրներ: Արդյունքում՝ վերլուծության ենթարկելով պատժի և անվտանգության միջոցների խնդիրները, ինչպես նաև ազատության սահմանափակման ներդրման գաղափարական հիմքերը՝ հանգել ենք այն հետևության, որ ազատության սահմանափակումն իրավաչափորեն դասվում է պատիժների շարքին: Միաժամանակ, եզրակացրել ենք, որ Եվրոպական կոնվենցիայի լույսի ներքո ազատության սահմանափակում պատժատեսակը կարող է գերակշիռ դեպքերում դասվել անձի անձնական ազատությունը չսահմանափակող միջոցների շարքին, սակայն որոշ դեպքերում հնարավոր չէ անտեսել տվյալ պատժատեսակի հիբրիդային բնույթը:

**Բանալի բառեր** – *ազատության սահմանափակում, քրեաիրավական ներգործության միջոցներ, պատժի նպատակներ, անձնական ազատություն, ազատ տեղաշարժվելու իրավունք, անազատության հետ կապված պատիժ, անվտանգության միջոցներ, պատժատեսակի իրավական բնույթ*

\* **Աննա Մարգարյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ

**Анна Маргарян** – доктор юридических наук, профессор, заведующая кафедрой уголовного права ЕГУ

**Anna Margaryan** – Doctor of Legal Sciences, Professor, Head of YSU Chair of Criminal Law

Էլ. փոստ՝ [annamargaryan@ysu.am](mailto:annamargaryan@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0003-4533-6467>

\*\* **Անահիտ Առաքելյան** – ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, դասախոս, փաստաբան

**Анаит Аракелян** – преподаватель, аспирант кафедры уголовного права ЕГУ, адвокат

**Anahit Arakelyan** – PhD Student at YSU Chair of Criminal Law, lecturer, attorney at law

Էլ. փոստ՝ [anahit.arakelyan@ysu.am](mailto:anahit.arakelyan@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0009-0004-2190-8541>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.10.2025

Գրախոսվել է՝ 25.11.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

### Ներածություն

Ժամանակակից քրեական իրավունքի արդիական խնդիրներից է պատժի համակարգում այնպիսի օրենսդրական լուծումների մշակումը, որը մի կողմից հանցագործություններին հակազդելու գործունե միջոցներ կառաջարկի, մյուս կողմից կդառնա ազատագրկման արդյունավետ այլընտրանք: Ազատագրկմանն այլընտրանք հանդիսացող միջոցների շարքում ուշադրության է արժանի ՀՀ գործող քրեական օրենսգրքում տեղ գտած՝ ազատության սահմանափակում պատժատեսակը: Ընդ որում՝ տարբեր պետությունների օրենսդրությամբ այն տարբեր կերպ է հանդես գալիս. մի դեպքում՝ որպես պատժատեսակ, մյուսներում՝ որպես քրեաիրավական ներգործության միջոց:

Աշխատանքի նպատակն է ազատության սահմանափակման հասկացության և կիրառվող սահմանափակումների բացահայտման լույսի ներքո համապարփակ հետազոտման ենթարկել պատժատեսակի իրավական բնույթին առնչվող էական հարցերը, իսկ այդ նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

1. բացահայտել ազատության սահմանափակման էությունը սահմանվող պարտականությունների և դրանց պարտադիր լինելու համատեքստում,

2. վեր հանել պատիժների և քրեաիրավական ներգործության միջոցների, հատկապես անվտանգության միջոցների առջև դրված խնդիրները՝ ազատության սահմանափակման իրավական բնույթը բացահայտելու նպատակով,

3. տարբերակել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով սահմանված անձնական ազատության և ազատ տեղաշարժի իրավունքը և դրա լույսի ներքո քննարկել սույն պատժատեսակի իրավական բնույթը:

Հոդվածում, պայմանավորված հետազոտման նպատակներով և խնդիրներով, կիրառվել են ընդհանուր և հատուկ մեթոդներ, մասնավորապես՝ անալիզ, սինթեզ, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլն:

### Ազատության սահմանափակում պատժատեսակի նկարագիրը

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է ազատության սահմանափակման օրենսդրական հասկացությունը, որի համաձայն՝ *«Ազատության սահմանափակումը դատապարտյալին առանց ուսումնառությունից կամ աշխատանքից կտրելու տնային պայմաններում հսկողության տակ պահելն է»:*

Օրենսդրական այս սահմանումը հնարավորություն է տալիս արձանագրելու, որ ազատության սահմանափակումն իր հիմնական ներգործությունն իրականացնում է դատապարտյալին տնային պայմաններում հսկողության տակ պահելու եղանակով: Մինչդեռ այս համատեքստում հարց է առաջանում, արդյո՞ք տվյալ պատժատեսակը ենթադրում է ընդհանուր անազատություն՝ բացառությունների նախատեսմամբ, թե՞ ազատության պայմաններում դատապարտյալի նկատմամբ որոշակի արգելքների կիրառում:

Քննարկվող հարցի պարզաբանումը պահանջում է ազատության սահմանափակման հասկացության և դրա ընթացքում նախատեսվող պարտականությունների (արգելքների) համակարգային վերլուծություն: Այսինքն՝ այս պատժատեսակի իրավական բնույթի մասին պատկերացումները հստակեցվում են այն արգելքների ուսումնասիրությամբ, որոնք նախատեսվում են տվյալ պատժատեսակը նշանակելիս:

Հետևաբար՝ պատահական չէ, որ ազատության սահմանափակման էությունը որոշ դեպքերում մասնագիտական գրականության մեջ բացահայտվում է հենց սահմանվող պարտականությունների լույսի ներքո: Մասնավորապես՝ որոշ հեղինակներ ազատության սահմանափակումը բնորոշում են «դատարանի կողմից նշանակված պարտականությունների և արգելքների սահմանում, որը դատապարտյալը պետք է պահպանի և ի կատար ածի դրանց գործողության ողջ ժամանակահատվածում՝ քրեակատարողական մարմնի պարտադիր վերահսկողության ներքո»<sup>1</sup>:

Այսպես՝ Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ ազատության սահմանափակում նշանակելով՝ դատապարտյալին արգելվում է հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի կատարումը.

- *այցելել տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ,*
- *կազմակերպել, մասնակցել կամ այցելել որոշակի միջոցառումների,*
- *առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության փոխել բնակության վայրը,*
- *որոշակի ժամերի բացակայել տնից:*

Պարտականությունների այս ծավալի պայմաններում ազատության սահմանափակում պատժատեսակի իրավական բնույթի մասին պատկերացումները ամբողջանում են: Արդյունքում՝ սույն պատժատեսակի բովանդակությունը ոչ թե ազատությունից զրկելն է, որն ուղեկցվում է որոշակի բացառություններով, այլ ազատության պայմաններում որոշակի սահմանափակումներ նախատեսելը:

Հետևաբար՝ կարելի է եզրակացնել, որ ազատության սահմանափակում պատժատեսակի մոդելում ներդրված է ընդհանուր թույլատրելիության հայեցակարգը, որում նախատեսված են բացառություններ՝ արգելման եղանակով:

Այսինքն՝ ազատության սահմանափակում պատժատեսակի նշանակման պարագայում անձը գտնվում է ազատության մեջ, որն ուղեկցվում է որոշակի սահմանափակումներով: Ընդ որում՝ հենց այդ սահմանափակումների նպատակն ու անձի իրավունքների նկատմամբ ներգործության աստիճանն է, որ հնարավորություն է տալիս պարզաբանելու տվյալ ինստիտուտի իրավական վիճակը պատիժների համակարգում:

<sup>1</sup> Տե՛ս <https://fundamental-research.ru/ru/article/view?id=35588> (20.10.2025):

### **Ազատության սահմանափակման առջև դրված նպատակների համատեքստում դրա իրավական բնույթը**

Ազատության սահմանափակումը ՀՀ քրեական օրենսգրքում հիմնական պատժի տեսակ է և պատժի համակարգում իր խստությամբ նախորդում է կարճաժամկետ ազատազրկմանը: Այսինքն՝ ՀՀ իրավական համակարգում տվյալ ինստիտուտը ներդրման պահից ի վեր պատիժների շարքին է դասվել:

Միաժամանակ, տվյալ ինստիտուտի շուրջ ծավալված քննարկումների արդյունքում որոշ հեղինակներ եկել են այն եզրահանգման, որ ազատության սահմանափակումն իրավական բնույթով հավասարեցված չէ պատժին, փոխարենը՝ առավելապես կարող է դասվել քրեաիրավական ներգործության միջոցների, ինչպես օրինակ՝ անվտանգության միջոցների շարքին<sup>2</sup>:

Ընդ որում՝ տվյալ ինստիտուտը քրեաիրավական ներգործության միջոցների շարքին է դասվում ոչ միայն տեսական, այլ որոշ դեպքերում նաև օրենսդրական մակարդակներում, մասնավորապես՝ Շվեյցարիայի քրեական օրենսգիրքը որոշակի ժամերի բնակության վայրից բացակայելու արգելքը դասում է քրեաիրավական ներգործության այլ միջոցների շարքին<sup>3</sup>:

Պատասխանելու համար այն հարցին, թե ազատության սահմանափակումը դասվում է առավելապես պատիժների, թե քրեաիրավական ներգործության այլ միջոցների շարքին, նախ հարկ է պարզել պատիժների և քրեաիրավական ներգործության այլ միջոցների տարբերությունը և այդ համատեքստում պարզաբանել քննարկվող ինստիտուտների առջև դրված խնդիրներն ու նպատակները:

ՀՀ քրեական օրենսգիրքը քրեաիրավական միջոցների շարքում տարբերակում է պատիժներ և քրեաիրավական ներգործության միջոցներ: Օրենսգրքի 55-րդ հոդվածում բացահայտված է պատժի հասկացությունը, որի համաձայն՝ *«Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից սույն օրենսգրքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ»*:

Միննույն ժամանակ, սակայն, քրեական օրենսգիրքը չի պարզաբանում «քրեաիրավական ներգործության միջոց» եզրույթը, փոխարենը թվարկում է դրանց տարատեսակները, ինչպես օրինակ՝ անվտանգության միջոցները, իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող միջոցները և այլն:

<sup>2</sup> St' u Новикова Е. А. Правовая природа ограничения свободы // Актуальные проблемы российского права. 2014, № 8 (45), август, էջ 1699-1703:

<sup>3</sup> St' u Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածը ([https://www.fedlex.admin.ch/eli/cc/54/757\\_781\\_799/en](https://www.fedlex.admin.ch/eli/cc/54/757_781_799/en)) (20.10.2025):

Մասնագիտական գրականությամբ ևս այս եզրույթի էությունը ամբողջ ծավալով բացահայտված չէ: Օրինակ՝ Ն. Վ. Շեդրինը քրեաիրավական ներգործության միջոցների ներքո տարբերակում է պատիժները, խրախուսական բնույթի, վերականգնողական և պաշտպանության (անվտանգության) միջոցները<sup>4</sup>: Այսինքն՝ հեղինակը քրեաիրավական ներգործության միջոցների ներքո դիտարկում է նաև պատիժը:

Ս. Ի. Կուրգանովը գտնում է, որ քրեաիրավական բնույթի միջոցները կարելի է բնորոշել որպես քրեական օրենսգրքով նախատեսված միջոցներ, որոնք կիրառելի են հանցանք կատարած անձի նկատմամբ<sup>5</sup>: Սակայն գտնում ենք, որ այս սահմանումը չափազանց նեղ է և ընդգրկում է միայն հանցանքների կապակցությամբ կիրառվող միջոցներն այն պայմաններում, երբ ՀՀ օրենսդրական կարգավորումների իմաստով քրեական օրենքով նախատեսված արարքի համար ևս կարող է ներգործության միջոց նշանակվել:

Կ. Ն. Կարպովն առաջարկում է «քրեաիրավական բնույթի այլ միջոցներ» հասկացության ներքո համատեղել քրեաիրավական ներգործության բոլոր միջոցները, որոնք պատիժ չեն համարվում, միևնույն ժամանակ, սակայն, անձի վրա դնում են կոնկրետ իրավական սահմանափակումներ, կատարման ենթակա գործողություններ կամ որոշակի պարտականություններ<sup>6</sup>:

Վերը նշված մեկնաբանությունն առավել բնութագրական է ՀՀ քրեական օրենսդրությանը, ուստի դրա շրջանակներում գտնում ենք, որ առավել ճիշտ կլինի *քրեաիրավական ներգործության միջոցներ համարել պատիժ չհանդիսացող, սակայն հարկադրանքի տարր պարունակող քրեաիրավական մնացյալ բոլոր միջոցները, որոնք նշանակվում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարման կապակցությամբ և նախատեսում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար որոշակի սահմանափակումներ և պարտականություններ*:

Ընդ որում՝ պատիժների և ներգործության միջոցների միջև տարբերակումը ոչ միան տեսական է, այլև նպատակային: Մասնավորապես՝ եթե պատիժը նպատակ է հետապնդում վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները, քրեաիրավական ներգործության միջոցների, հատկապես անվտանգության միջոցների նպատակը շատ ավելի սահմանափակ է:

Տեսաբանների պնդմամբ՝ առաջին և առանցքային տարբերությունը պատժիչ տարրի բացակայությունն է, այսինքն՝ վերջին հաշվով պատիժը ենթադրում է իր առջև դրված նպատակների իրագործում՝ անձին պատժելու եղանակով,

<sup>4</sup> St' u **Шедрин Н.В.** О «многоколейности» российского уголовного права // Системность в уголовном праве: мат. II рос. конгр. уголовного права (Москва, 31 мая - 1 июня 2007 г.). М., 2007, էջ 540:

<sup>5</sup> St' u **Курганов С.И.** Меры уголовно-правового характера // Уголовное право. 2007, № 2, էջ 59:

<sup>6</sup> St' u **Карпов К.Н.** Иные меры уголовно-правового характера: система, виды. М., 2012, էջ 25:

մինչդեռ անվտանգության միջոցները առավելապես անվտանգային բնույթ են կրում:

Ուստի այս համատեքստում է, որ հեղինակների մի մասը գտնում է, որ ազատության սահմանափակումը կորցնում է իր պատժիչ հատկությունը՝ լիովին չիրագործելով իր առջև դրված նպատակները: Ազատության սահմանափակում պատժատեսակի նպատակը միտված է ոչ թե դատապարտյալի ուղղմանը՝ առանց հասարակությունից մեկուսացնելու, այլ դատապարտյալին վերահսկողության ներքո պահելուն<sup>7</sup>:

Չկիսելով վերոգրյալ դիրքորոշումը՝ կարծում ենք, որ քննարկվող խնդրին համապարփակ պատասխանելու համար պետք է ելնել ազատության սահմանափակում պատժատեսակի ներդրման նպատակներից: Բանն այն է, որ տվյալ պատժատեսակը ներդրվել է որպես ազատությունից անձին զրկելու այլընտրանք, ինչը վկայում է այն մասին, որ վերջինը պետք է լինի շատ ավելի մեղմ, քան ազատազրկումը և անազատության հետ կապված ցանկացած պատժատեսակ: Հենց այդ համատեքստում վերոգրյալ պատժատեսակի կիրառումը թույլատրելի է համարվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար:

Ընդ որում՝ Լեհաստանի քրեական օրենսգրքում ազատության սահմանափակում պատժատեսակի փոփոխություններ կատարելու հիմնավորումներում արձանագրվել է հետևյալը. «Խստացնելով ազատության սահմանափակման պատժի պայմանները<sup>8</sup>՝ պետք է նվազեցնել պատիժը պայմանականորեն չկիրառելու արդյունքում փորձաշրջանի սահմանման գրավչությունը: **Տուգանքների հետ մեկտեղ՝ ազատության սահմանափակումը պետք է դառնա հիմնական պատիժ այն իրավախախտումների դեպքում, որոնց սոցիալական վտանգավորությունն առանձնապես մեծ չէ (...)**»<sup>9</sup>:

**Երկրորդ**, թեև անվտանգության միջոցներից հատկապես որոշակի վայրեր այցելելու արգելքը նմանություն ունի ազատության սահմանափակում պատժատեսակի նշանակմամբ կիրառվող սահմանափակումներին, այնուամենայնիվ դրանց միջև էական տարբերությունն այն է, որ եթե ազատության սահմանափակումը կարող է նշանակվել ինքնուրույնաբար, ապա քննարկվող անվտանգության միջոցը կարող է նշանակվել պատժի հետ զուգակցված, երբ նշանակված պատիժն անձի ուղղման նպատակն ամբողջ ծավալով չի իրագործում (խոսքը վերաբերելի չէ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման դեպքերին):

<sup>7</sup> Տե՛ս Новикова Е.А. նշվ. աշխ., էջ 1699-1703:

<sup>8</sup> Թեև հեղինակներն օգտագործում են «խստացնել» տերմինը, այնուամենայնիվ Լեհաստանում գործող ազատության սահմանափակում պատժատեսակի մոդելը 2015 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում նմանվել է ՀՀ-ում գործող մոդելին՝ սահմանված պարտականությունների մասով:

<sup>9</sup> Տե՛ս Statement of reasons behind the government bill amending the Criminal Code and some other acts. Parliamentary Document № 2393, էջ 9:

Մասնավորապես՝ ինչպես նախկին քրեական օրենսդրությամբ, այնպես էլ գործող կարգավորումներով պատիժը, ի տարբերություն քրեաիրավական այլ միջոցների (այդ թվում՝ նաև՝ անվտանգության միջոցների), կարող է նշանակվել միայն քրեական օրենքով նախատեսված հանցանքների կապակցությամբ, այսինքն՝ անձի նկատմամբ պատժի կիրառման հիմքը վերջինիս կողմից հանցավոր արարքի կատարումն է: Փոխարենը անվտանգության միջոցները առավելապես ֆակուլտատիվ բնույթ են կրում և ուղեկցվում են պատժի պարտադիր նշանակմամբ, ինչից ենթադրվում է, որ դրանք ինքնուրույնաբար չեն կարող գործել, մինչդեռ ազատության սահմանափակումը շատ ավելի ինտենսիվ է այն իմաստով, որ վերջինի հիմնական նպատակն անձին օրվա որոշակի ժամանակահատված տնային պայմաններում պահելն է, որն իր բնույթով բացառիկ է քրեաիրավական միջոցների շարքում, ավելին՝ իր խստությամբ զիջում է կարճաժամկետ ազատազրկմանը:

**Երրորդ**՝ պատիժն առաջացնում է այնպիսի իրավական հետևանք, ինչպիսին է դատվաճությունը, որն իր հերթին մի շարք սահմանափակումներ կարող է առաջացնել դատապարտյալի հետագա իրավական գործընթացների կապակցությամբ, մինչդեռ անվտանգության միջոցները նման հնարավորությամբ օժտված չեն:

**Չորրորդ**՝ միայն այն հանգամանք, որը ազատության սահմանափակումը հետապնդում է նաև անվտանգության ապահովման նպատակ, չի կարող բացառել վերջինի ինքնուրույն պատժատեսակ հանդիսանալու գաղափարը, քանի որ, վերջին հաշվով, բոլոր պատժատեսակները պետք է որոշակի անվտանգային տարր պարունակեն:

Այլ խոսքով՝ հաշվի առնելով, որ ազատության սահմանափակումը դիտարկվում է ազատազրկման այլընտրանք՝ պարզ է, որ այն պետք է ոչ այնքան պատժիչ, որքան վերասոցիալականացմանն ուղղված տարրեր պարունակի: Միաժամանակ, սակայն, վկայակոչվածը չի բացառում տվյալ ինստիտուտի պատժի նպատակներն իրագործելու հնարավորությունը, մասնավորապես՝ անվտանգային գործառույթն իրացնելով՝ սույն պատժատեսակն ունակ է կանխել նոր հանցանքների կատարումը և վերասոցիալականացնել հանցանք կատարած անձին: Ինչ վերաբերում է սոցիալական արդարության վերականգմանը, ապա բարոյափոխոփայական առումով սոցիալական արդարությունը կարող է չվերականգնվել նաև ազատազրկում պատժատեսակի նշանակմամբ, մինչդեռ իրավական տեսանկյունից արդարացի պատժի նշանակումն ինքնին բավարար է սոցիալական արդարության վերականգման համար:

Ընդ որում՝ 2021 թվականի փոփոխությունների արդյունքում քրեական օրենսդրությունը ընդհանուր առմամբ զարգացել է այլընտրանքային մի շարք միջոցների ներդրմամբ՝ իրավակիրառողին ազատազրկում նշանակելուց հնարավորինս հետ պահելու տրամաբանությամբ: Այսինքն՝ ազատության սահմանափակում պատժատեսակի ներդրման գաղափարական հիմքն անձի

գործողությունների ինտենսիվ սահմանափակման միջոցով հնարավոր այն խնդիրների իրագործումն է, որն այլ պայմաններում (քննարկվող պատժատեսակի բացակայության դեպքում) կարող էր ի կատար ածվել բացառապես անազատության հետ կապված պատժատեսակների նշանակմամբ:

Այլ կերպ՝ վերականգնողական արդարադատությունը, ի թիվս այլնի, ենթադրում է այնպիսի պատժատեսակների ներդրում, որը պատժիչ գործառույթի նվազագույն կիրառմամբ ունակ է իրագործելու իր առջև դրված նպատակները, որպիսի պայմաններում պետք է խրախուսելի համարել պատիժների համակարգում անվտանգային ու վերասոցիալականացման տարրերի բարձրացումը և պատժիչ դերի որոշակի նվազեցումը:

Հետևաբար՝ կատարված վերլուծության լույսի ներքո, մեր ընկալմամբ, հեղինակների կողմից վկայակոչված հանգամանքները չեն բացառում ազատության սահմանափակման դասակարգումը պատիժների համակարգին:

### **Ազատության սահմանափակում պատժատեսակի իրավական բնույթը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի լույսի ներքո**

Ազատության սահմանափակում պատժատեսակի էության և իրավական բնույթի ամբողջական բացահայտումը պահանջում է քննարկման առարկա դարձնել նաև այն հարցը, թե տվյալ պատժատեսակն անձի ո՞ր իրավունքներն է սահմանափակում՝ անձնական ազատության<sup>10</sup>, թե՞ ազատ տեղաշարժի:

Օրենսդրական մակարդակում թվում է, թե այս խնդիրը լուծված է այնքանով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանվում է այն պատժատեսակների ցանկը, որոնք օրենսդրի հաստատմամբ հավասարեցված են ազատությունից զրկելուն. դրանք են՝ կարճաժամկետ ազատազրկումը, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը և ցմահ ազատազրկումը, որպիսի պայմաններում ազատության սահմանափակումը, ըստ էության, դասվել է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների շարքին, ավելին՝ ինչպես արդեն իսկ արձանագրվել է, այն քրեական իրավունքի տեսաբանների շրջանում ընդունված է համարել որպես ազատազրկման այլընտրանք<sup>10</sup>:

Նման մոտեցումը միանշանակ կարող է ընդունելի համարվել պարտականությունների որոշակի խմբի դեպքում, ինչպես օրինակ՝ առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության բնակության վայրը փոխելը կամ տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ այցելելը կամ որոշակի միջոցառումներ կազմակերպելը, մասնակցելը կամ այցելելը՝ նկատի ունենալով, որ այս բնույթի սահմանափակումները միջպետական մակարդակով ընդունված են համարել որպես տեղաշարժի ազատության նկատմամբ միջամտություն:

<sup>10</sup> Տե՛ս Новикова Е.А. նշվ. աշխ., էջ 1699-1703:

Այս դատողությունները բխում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի կապակցությամբ ընդունված 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) ձևավորած նախադեպային պրակտիկայից:

Մասնավորապես՝ քննարկվող հոդվածը և դրա կապակցությամբ ձևավորված նախադեպային դիրքորոշումները կարգավորում են անձի տեղաշարժման ազատությունը և դրա նկատմամբ միջամտության ձևերը: Այսպես՝ Եվրոպական դատարանը Schmid ընդդեմ Austria-ի գործով տեղաշարժման ազատության նկատմամբ միջամտություն է դիտարկել բնակության վայրի ցանկացած փոփոխության մասին զեկուցելու պահանջը<sup>11</sup>: Տեղաշարժի ազատության նկատմամբ միջամտություն է համարվել նաև հետևյալ դեպքը՝ բնակության վայրի սահմանումը, այսինքն՝ որոշում, որը պահանջում է բնակվել որոշակի տարածքում կամ վարչական շրջանում (համայնքում) և չլքել այն առանց հատուկ թույլտվության<sup>12</sup>: Nagy ընդդեմ Hungary-ի գործով դատարանն արձանագրել է բնակության հասցեի փոփոխության արգելքը որպես ազատ տեղաշարժման իրավունքի նկատմամբ միջամտություն<sup>13</sup>:

Միջամտության այլ ձևեր են համարվել ոստիկանության կողմից հատուկ հսկողությունը, ներառյալ նշյալ միջոցառումները և դրանց հետ կապված այլ սահմանափակումներ (չայցելել փաբեր, գիշերային ակումբներ, զվարճանքի սրահներ կամ հասարակաց տներ, չհաճախել հանրային հավաքների, չշփվել դատվածություն ունեցող կամ այն անձանց հետ, որոնց նկատմամբ կիրառվում են կանխարգելիչ միջոցառումներ)<sup>14</sup>:

Եվրոպական դատարանի ձևավորած այս մոդելը հնարավորություն է տալիս արձանագրելու, որ առնվազն մեր կողմից քննարկվող սահմանափակումների կիրառման պայմաններում գործ ունենք ոչ թե ազատությունից զրկման, այլ տեղաշարժման ազատության սահմանափակման դեպքերի հետ, հետևաբար՝ նախատեսված պարտականությունների սահմանման դեպքում կիրառվող պատժատեսակը կարող է իրավաչափորեն դիտվել որպես ազատազրկման այլընտրանք:

Առավել խնդրահարույց է տնից որոշակի ժամեր բացակայելու արգելքը, որը օրենսդրական կարգավորումների համաձայն՝ չի կարող պակաս լինել օրական 8 և չի կարող ավելի լինել օրական 12 ժամից<sup>15</sup>:

<sup>11</sup> Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-74578> (20.10.2025):

<sup>12</sup> Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-84328>: (20.10.2025):

<sup>13</sup> Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-24035>: (20.10.2025):

<sup>14</sup> Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-171804> 84-89 կետեր,

<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-98341> 43-44 կետեր, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-128146> 22-23 կետեր (20.10.2025):

<sup>15</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 4-րդ մասը:

Ընդ որում՝ մինչ այս պարտականության իրավական բնույթին և դրանից բխող իրավունքների միջամտության տեսակին անդրադառնալը պարզաբանման կարիք ունի այն, թե տվյալ արգելքը, ամեն դեպքում, պետք է կիրառվի ազատության սահմանափակում պատժատեսակի նշանակման դեպքում, թե՛ այն երկրնորերի բնույթ է կրում:

Պատժի այս տեսակի ներդրմամբ իրավական վեճ է առաջացել այն հարցի շուրջ, թե արդյոք ազատության սահմանափակում պատժատեսակի նշանակումն անպայմանորեն պետք է ուղեկցվի տնային պայմաններում գտնվելու պարտականության նախատեսման հետ, թե՛ ոչ:

Մասնավորեցնելով ասվածը՝ պետք է նկատել, որ քննարկվող հոդվածի 1-ին մասը, ինչպես արդեն իսկ նշվել է, ազատության սահմանափակումը բնորոշում է որպես *տնային պայմաններում դատապարտյալին հսկողության տակ պահելու միջոց*, ինչից կարելի է եզրահանգել է, որ այս պատժատեսակի նշանակմամբ իրավակիրառողն անխուսափելիորեն կանգնելու է որոշակի ժամեր տնից բացակայելու արգելքի կիրառման առջև:

Մինչդեռ որոշակի անհատականություն կարող է առաջացնել նույն հոդվածի 2-րդ մասը: Մասնավորապես՝ պատժատեսակի նշանակումը պայմանավորելով որոշակի պարտականություններից մեկի կամ մի քանիսի սահմանման հետ՝ օրենսդիրը դրանք նկարագրում է երկրնորերի եղանակով և միմյանցից անջատում «կամ» շաղկապով՝ միաժամանակ չմասնավորեցնելով այնպիսի մի պարտականություն, որի կիրառումը պարտադիր է, իսկ Օրենսգրքի 64-րդ հոդվածի 4-րդ մասը կարգավորում է միայն որոշակի ժամեր տնից բացակայելու արգելքի սահմանները:

Արդյունքում՝ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի անջատ մեկնաբանման պարագայում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ մի կողմից ազատության սահմանափակում պատժատեսակի էությունից բխում է դատապարտյալին որոշակի ժամանակային միջոցում տնային արգելանքի տակ պահելը, մյուս կողմից՝ դա ի կատար ածելու համար նախատեսված պարտականությունը կարող է կամընտրական բնույթ կրել:

Գտնում ենք, որ քննարկվող նորմին հարկ է տալ համակարգային մեկնաբանություն՝ չկտրվելով ինչպես ազատության սահմանափակման հասկացությունից, այնպես էլ տվյալ պատժատեսակի ներդրման նպատակներից:

Պատիժների համակարգում ազատության սահմանափակումն իր հիմնական ներգործությունն իրականացնում է դատապարտյալին տնային պայմաններում հսկողության տակ պահելու եղանակով: Այսինքն՝ Օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից արդեն իսկ բխում է, որ ազատության սահմանափակումն իրագործվում է որոշակի ժամեր տնից բացակայելու արգելքի պարտադիր կիրառմամբ, հակառակ դեպքում՝ օրենսդրական ձևակերպումից բխող այս պահանջն ունակ չի լինի իրավական հետևանքներ առաջացնել:

Ավելին՝ ազատության սահմանափակումը, դիտարկվելով որպես ազատագրկման այլընտրանք և նախատեսելով պատժի կրման համեմատաբար մեղմ պայմաններ, պատժիչ տարր է ձեռք բերել քննարկվող պարտականության ուժով՝ նկատի ունենալով այն, որ տնային պայմաններում դատապարտյալին հսկողության տակ պահելու պահանջի բացառումն այս ինստիտուտը հավասարեցնում է քրեաիրավական ներգործության այլ միջոցների: Այլ խոսքով՝ հենց այս արգելքն է, որն ամբողջացնում է ազատության սահմանափակման էությունը և պատժիչ բնույթ հաղորդում դրան: Պատժատեսակի նշանակմանը զուգահեռ՝ նախատեսվող մյուս պարտականությունները առանձին-առանձին պատժիչ գործառույթը չեն իրականացնում, ինչով պայմանավորված՝ դրանց մի մասը (մասնավորապես՝ որոշակի վայրեր այցելելու արգելքը) արդարացիորեն նախատեսվել է անվտանգության միջոցների շարքում և կիրառվում է միայն հիմնական պատժին զուգահեռ: Հետևաբար՝ այդ պարտականությունները ինքնուրույնաբար չեն կարող պատժի նպատակներն իրագործել:

Արդյունքում՝ ազատության սահմանափակում պատժատեսակի նշանակմամբ կիրառման ենթակա արգելքները պետք է մեկնաբանել պատժատեսակին տրված օրենսդրական հասկացության և նախատեսվող պարտականությունների համադրման եղանակով՝ որպես պարտադիր պայման արգելելով դատապարտյալին որոշակի ժամեր բացակայել տնից: Միաժամանակ, տարբերակումներից խուսափելու նպատակով՝ առավել նպատակահարմար կլինի հոդվածի 2-րդ մասի որոշ ձևակերպումներ հստակեցնել:

Քննարկվող մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով որոշակի ժամեր տնից բացակայելու արգելքի և անձի իրավունքների նկատմամբ միջամտության տեսակին՝ հարկ է փաստել, որ, ի տարբերություն վերը քննարկված այլ պարտականությունների, հիշյալ սահմանափակումը կարող է երկակի բնույթ ունենալ:

Այլ կերպ ասած՝ վերոնշյալ սահմանափակումը առաջին հայացքից կարող է ռոնտագել անձնական ազատության նկատմամբ, քանի որ փաստացի որոշակի ժամկետով անձին պահում է անազատության մեջ:

Ուստի Կոնվենցիայի լույսի ներքո տվյալ արգելքի և հետևաբար նաև՝ ազատության սահմանափակման իրավական բնույթի վերաբերյալ դատողություններ կատարելու համար հարկ է պարզաբանել հետևյալ հարցը. *որոշակի ժամկետով բնակության վայրից բացակայելու արգելքն իրավական բնույթով հավասարեցված է ազատությունից զրկելու և, թե՛ տեղաշարժի ազատության սահմանափակմանը:*

Ինչպես հայտնի է, Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված՝ ազատության իրավունքի նկատմամբ ցանկացած միջամտություն հանգեցնում է նաև տեղաշարժի ազատության սահմանափակման, այլ խոսքով՝ ազատության իրավունքը, ավելի լայն երևույթ լինելով, ընդգրկում է նաև տեղաշարժի ազատությունը (Կոնվենցիայի 4-րդ արձանագրության 2-րդ հոդված):

Միաժամանակ, տարբերակելու համար, թե կոնկրետ իրավիճակում անձի որ իրավունքներն են սահմանափակվում, Եվրոպական դատարանը սահմանել է որոշակի չափանիշներ, մասնավորապես՝ որպես գնահատման ելակետ է դիտարկվել դիմումատուի կոնկրետ իրավական վիճակը. «Պետք է հաշվի առնել մի շարք չափանիշներ, ինչպիսիք են՝ տվյալ սահմանափակման տեսակը, տևողությունը, հետևանքները և եղանակը: Ավելին, երբ մի քանի միջոցների մասին է խոսքը, դրանք պետք է վերլուծվեն «կուտակային և համակցված»։ Համապատասխան օբյեկտիվ գործոնները, որոնք պետք է հաշվի առնել, ներառում են տարածքի չափը և բնութագրերը, որտեղ սահմանափակված է անձի տեղաշարժը, այդ տարածքից հեռանալու հնարավորությունը, վերահսկողության աստիճանը և անձի շարժերի, մեկուսացման աստիճանի և սոցիալական շփումների հասանելիության նկատմամբ վերահսկողությունը»<sup>16</sup>:

Այս առումով հարկ ենք համարում համեմատական անցկացնել տնային կալանք խափանման միջոցի և ազատության սահմանափակում պատժատեսակի միջև: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն՝ **«Տնային կալանքը մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում է, որի ընթացքում նա պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքը:**

Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1) ունենալ նամակագրություն, հեռախոսային խոսակցություններ, օգտվել հաղորդակցության այլ ձևերից, այդ թվում՝ փոստային առաքանուց.

2) շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց»:

Նույնիսկ տնային կալանքին տրված սահմանման մեջ տվյալ խափանման միջոցը բնութագրվում է որպես *մեղադրյալի անձնական ազատության սահմանափակում*: Ընդ որում՝ ի տարբերություն ազատության սահմանափակում պատժատեսակի շրջանակներում կիրառվող որոշակի ժամեր տնից բացակայելու արգելքի, տնային կալանքը ենթադրում է մեղադրյալի շուրջօրյա արգելանքի տակ գտնվել: Այսինքն՝ քննարկվող խափանման միջոցի շրջանակներում մեղադրյալը շարունակում է մնալ ազատությունից զրկված՝ համեմատաբար մեղմ պայմանների նախատեսմամբ:

Հենց այս համատեքստում է, որ Եվրոպական դատարանը տնային կալանքը հավասարեցրել է ազատությունից զրկման: Մասնավորապես՝ Buzadji ընդդեմ the Republic of Moldova-ի գործով արձանագրվել է, որ թեև տնային կալանքը ենթադրում է ավելի նվազ սահմանափակումներ և տառապանքի կամ

<sup>16</sup> St' u <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-171804>, <https://hudoc.echr.coe.int/eng?i=002-13982> 153-րդ կետ (20.10.2025):

անհարմարության ավելի ցածր աստիճան կալանավորի համար, քան **սովորական կալանքի պայմաններում, այնուամենայնիվ դրանք երկուսն էլ ազատության սահմանափակում են ենթադրում**<sup>17</sup>:

Ստացվում է, որ տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցը, որն անձին տնային պայմաններում հսկողության տակ պահելու մեխանիզմ է, հավասարեցված է կալանքին և համարվում է ազատությունից զրկել: Ընդ որում՝ այն ազատության սահմանափակմամբ նշանակվող պարտականություններից շատ ավելի խիստ և ինտենսիվ է: Թեև տնային կալանքի ընթացքում վարույթն իրականացնող մարմնի թույլատվությամբ մեղադրյալը կարող է ստանալ որոշակի վայրեր այցելելու հնարավորություն (ըստ անհրաժեշտության), այնուամենայնիվ այն բացառություն է կանոնից և ոչ թե հակառակը՝ ինչպես քննարկվող պատժատեսակի դեպքում է:

Նման պայմաններում, կարծում ենք, ազատության սահմանափակում պատժատեսակի իրավական բնույթը բացահայտելու նպատակով ավելի նպատակահարմար է համեմատականներ անցկացնել վարչական հսկողություն խափանման միջոցի հետ, որը տվյալ պատժատեսակի նմանությամբ, դրա կիրառմանը զուգահեռ, նախատեսում է օրվա որոշակի ժամերի՝ ոչ ավելի, քան 12 ժամը, բնակության տարածքը լքելու արգելք: Ընդ որում՝ վարչական հսկողությանը զուգահեռ՝ սահմանման ենթակա մնացյալ արգելքները ևս նմանություն ունեն ազատության սահմանափակում պատժատեսակի հետ<sup>18</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածով կարգավորվող այս խափանման միջոցը օրենսդիրը բնութագրել է **որպես մեղադրյալի տեղաշարժման և գործողությունների ազատության սահմանափակում**: Այսինքն՝ խափանման միջոցների իրավական բնույթը կարգավորելիս օրենսդիրը վարչական հսկողության կիրառմամբ նախատեսել է սահմանափակել բացառապես մեղադրյալի ազատ տեղաշարժման իրավունքը՝ չնայած այն բանին, որ դրա կիրառման շրջանակներում հնարավոր է համարել օրվա որոշակի ժամանակահատված բնակության վայրը չլքելու պարտականության նախատեսում:

<sup>17</sup> Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-164928> (20.10.2025):

<sup>18</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի համաձայն՝ «*Վարչական հսկողությունը մեղադրյալի տեղաշարժման և գործողությունների ազատության սահմանափակումն է, որի պայմաններում նա պարտավոր է ոչ հաճախ, քան շաբաթը երեք անգամ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված վայրի իրավասու մարմնում:*

*Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝*

*1) առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության փոխել մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը՝ համայնքը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանը.*

*2) այցելել որոշման մեջ նշված որոշակի վայրեր.*

*3) հաղորդակցվել որոշակի անձանց հետ.*

*4) օրվա որոշակի ժամերի լքել իր բնակության տարածքը, սակայն ոչ ավելի, քան 12 ժամը (...):*

Այս համատեքստում միանշանակ եզրահանգումներ կատարելու համար հարկ ենք համարում դիտարկել տեղաշարժման ազատության սահմանափակման կապակցությամբ ձևավորված միջազգային պրակտիկան: Այսպես՝ Trichonis ընդդեմ Lithuania-ի գործով՝ տնային կալանքի փոխարինումը ավելի մեղմ ռեժիմի, որը թույլ էր տալիս դիմումատուին այցելել իր աշխատավայրը և միաժամանակ պարտավորեցնում էր տանը մնալ երեկոյան 19:00-ից մինչ առավոտյան 7:00-ը, ինչպես նաև՝ հանգստյան օրերին<sup>19</sup>, կամ Dedu ընդդեմ Romania-ի գործով (2024 թ.), երբ դիմումատուին պարտավորեցվել էր իր օրվա մի մասն անցկացնել աշխատավայրում, իսկ մյուս կեսն ու գիշերային ժամանակը՝ տանը մնալ<sup>20</sup>, **չէր դիտարկվել որպես ազատությունից զրկում:**

Timofeyev and Postupkin ընդդեմ Russia-ի գործով՝ գիշերային ժամերին (22:00-ից մինչ 6:00-ն) տնից դուրս գալու արգելքը, բացառությամբ ծայրահեղ դեպքերի, հավասարազոր է համարվել տեղաշարժի ազատության նկատմամբ միջամտության<sup>21</sup>:

Հետաքրքրություն է ներկայացնում J.R. and Others ընդդեմ Greece-ի գործը. դատարանը մասնավորապես արձանագրել է, որ ապաստան հայցողները գտնվել են ազատությունից զրկված վիճակում փախստականների ընդունման, նույնականացման և գրանցման կենտրոնում մնալու առաջին ամսվա ընթացքում: Այնուամենայնիվ, երբ **հաստատությունը դարձել է կիսաբաց, և հայցվորներին օրվա ընթացքում թույլատրվել է դուրս գալ տարածքից**, դատարանը գտել է, որ այս իրավիճակում նրանք ոչ թե զրկվել են ազատությունից, այլ ենթարկվել են տեղաշարժի սահմանափակման<sup>22</sup>:

Քննարկվող գործերի համադրումը հնարավորություն է տալիս կատարելու մի եզրահանգում, որ երբ անձին տրվում է կոնկրետ վայրը լքելու ինքնավարություն և սոցիալական միջավայրն ու շփումները սեփական կամքով ղեկավարելու ազատություն, անկախ այն բանից՝ վերջինը պարտավոր է որոշակի ժամանակամիջոց գտնվել «արգելանքի» տակ, թե ոչ, միևնույնն է՝ վկայակոչված սահմանափակումը դեռևս չի հավասարեցվում ազատությունից զրկելուն:

Պարզեցնելով ասվածը՝ կարելի է արձանագրել, որ գերակշիռ դեպքերում, երբ անձի «ազատությունը» սահմանափակվում է օրվա մեջ միայն որոշակի ժամային ընթացքով, որը վերջինին էապես չի զրկում ազատ տնօրինել իր առօրյան, ապա բարդ է խոսել ազատությունից զրկման դեպքերի մասին, որպիսի դատողությունը հաստատում է քրեական օրենսգրքում տվյալ պատժատեսակի դասակարգումը՝ որպես ազատությունից զրկելու հետ չկապվածի:

<sup>19</sup> St' u <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-68774> (20.10.2025):

<sup>20</sup> St' u <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-233720> 77-81 կետեր (20.10.2025):

<sup>21</sup> St' u "Guide on Article 2 of Protocol No. 4 to the European Convention on Human Rights" updated on 31 August 2024. Timofeyev and Postupkin v. Russia, 2021, p 17:

<sup>22</sup> St' u <https://hudoc.echr.coe.int/eng?i=002-11960> 86-րդ կետ (20.10.2025):

Դրան գուցահեռ՝ պետք է նկատել, որ խոսքը գերակշիռ դեպքերի մասին է, սակայն՝ ոչ բոլոր, մասնավորապես, որոշ առանձնահատուկ հանգամանքներում տեղաշարժի ազատության սահմանափակումը կարող է այնքան «լուրջ» լինել, որ հավասարագոր լինի ազատությունից զրկման: 5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ ազատությունից զրկելու և 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածի շրջանակում տեղաշարժի ազատության սահմանափակման միջև տարբերությունը ոչ թե սահմանափակման բնույթի և բովանդակության, այլ աստիճանի կամ ինտենսիվության մեջ է:

Guzzardi ընդդեմ Italy-ի գործով՝ առանձնահատուկ նշանակություն էր տվել հետևյալ գործոններին. հատուկ հսկողության տևողությունը (տասնվեց ամիս), տարածքի, որտեղ սահմանափակված է եղել դիմումատուն, չափազանց փոքր լինելը (2,5 քառ. կմ չափապատաստ տարածք կղզում, որի ինը տասներորդը զբաղեցրել է բանտը), գրեթե մշտական հսկողությունը և սոցիալական շփումների բացակայությունը, բացի նրա մերձավոր ընտանիքի, նույն միջոցին ենթարկված «բնակիչների» և վերահսկող անձնակազմի<sup>23</sup>:

Ստացվում է, որ տվյալ գործով թեև դիմումատուն տարածքը լքելու և սոցիալական շփումներ ունենալու որոշ, աննշան ինքնավարություն ունեցել է, սակայն ընդհանուր հսկողության ինտենսիվությունը և կրման պայմաններն այն աստիճան խիստ են եղել, որ հավասարեցված են եղել ազատությունից զրկման:

Արդյունքում՝ կարելի է եզրակացնել, որ ազատության սահմանափակումը կարող է պայմանականորեն դասվել ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակների շարքին, քանի որ գերակշիռ դեպքերում այն սահմանափակում է դատապարտյալի տեղաշարժման ազատությունը, մինչդեռ չպետք է անտեսել նրա երկակի բնույթը, որը հնարավորություն է տալիս որոշակի առանձնահատուկ դեպքերում այն հավասարեցնելու ազատությունից զրկման:

Այլ խոսքով՝ կոնվենցիոն կարգավորումների լույսի ներքո բացահայտելով տվյալ ինստիտուտի իրավական բնույթը՝ կարելի է եզրակացնել, որ ազատության սահմանափակումը քրեական պատիժների համակարգում յուրահատուկ, հիբրիդային բնույթ ունեցող պատժատեսակ է, որը, օրենսդրորեն չդասվելով ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակների շարքին, տեսականորեն որոշակի արգելքների և դրանց խիստ ինտենսիվության բացառիկ դեպքում կարող է ազատության իրավունքի նկատմամբ միջամտության հանգեցնել:

Հետևաբար՝ քրեական օրենսգրքում քննարկվող պատժատեսակի դասակարգումը թեև ընդունելի է, սակայն, ի տարբերություն պատժի այլ տեսակների, կարող է փոփոխության ենթարկվել կոնկրետ հանգամանքների ազդեցության ներքո:

<sup>23</sup> Տե՛ս [https://hudoc.echr.coe.int/fre?i=001-57498\\_92-95](https://hudoc.echr.coe.int/fre?i=001-57498_92-95)-րդ կետեր (20.10.2025):

### Եզրակացություն

Ամփոփելով վերլուծությունը՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի անջատ մեկնաբանման դեպքում կարող է տպավորություն առաջանալ, որ մի կողմից՝ ազատության սահմանափակման էությունից բխում է դատապարտյալին որոշակի ժամանակային միջոցում տնային արգելանքի տակ պահելը, մյուս կողմից դա ի կատար ածելու համար նախատեսված պարտականությունը կամ ընտրական բնույթ է կրում: Առաջացած խնդիրը պարզաբանելու համար քննարկվող նորմին հարկ է տալ համակարգային մեկնաբանություն՝ չկտրվելով ինչպես ազատության սահմանափակման հասկացությունից, այնպես էլ տվյալ պատժատեսակի ներդրման նպատակներից: Դրա հետ մեկտեղ՝ չպետք է անտեսվի ազատության սահմանափակման պատժիչ բնույթը, որը կարող է իրագործվել միայն որոշակի ժամեր տնից բացակայելու արգելքի կիրառմամբ: Հետևաբար՝ գտնում ենք, որ ազատության սահմանափակում պատժատեսակի նշանակումը պետք է պարտադիր ուղեկցվի դատապարտյալին որոշակի ժամեր տնից բացակայելու արգելքով:

2. Ազատության սահմանափակում պատժատեսակի ներդրման գաղափարական հիմքը անձի գործողությունների ինտենսիվ սահմանափակման միջոցով հնարավոր այն խնդիրների իրագործումն է, որն այլ պայմաններում (քննարկվող պատժատեսակի բացակայության դեպքում) կարող էր ի կատար ածվել բացառապես անազատության հետ կապված պատժատեսակների նշանակմամբ, հետևաբար՝ վերականգնողական արդարադատության շրջանակներում ընդունելի է այնպիսի պատժատեսակների նախատեսումը, որոնք պատժիչ գործառույթի նվազագույն կիրառմամբ ունակ են իրագործելու իրենց առջև դրված նպատակները, ինչը, սակայն, չի ենթադրում, որ համանման միջոցները (քննարկվող իրավիճակում ազատության սահմանափակումը) չեն կարող պատիժների համակարգին դասվել:

3. Կոնվենցիոն կարգավորումների լույսի ներքո գնահատական տալով քննարկվող պատժատեսակի իրավական բնույթին՝ կարելի է եզրակացնել, որ ազատության սահմանափակումը պատիժների համակարգում յուրահատուկ, հիբրիդային բնույթ ունեցող պատժատեսակ է, որը, օրենսդրորեն չդասվելով ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակների շարքին, տեսականորեն որոշակի արգելքների և դրանց խիստ ինտենսիվության բացառիկ դեպքում կարող է ազատության իրավունքի նկատմամբ միջամտության հանգեցնել: Ուստի քրեական օրենսգրքում քննարկվող պատժատեսակի դասակարգումը ընդունելի համարելով՝ գտնում ենք, որ այն կարող է փոփոխության ենթարկվել կոնկրետ հանգամանքների ազդեցության ներքո:

**АННА МАРГАРЯН, АНАИТ АРАКЕЛЯН – Ограничение свободы в системе наказаний.** – В рамках научной статьи были проанализированы два аспекта, раскрывающие правовую природу вида наказания, ограничивающего свободу, первый из которых был направлен на отнесение ограничения свободы к наказаниям или средствам уголовно-правового воздействия, а в рамках следующего вопроса была предпринята попытка раскрыть правовую природу данного вида наказания в свете Конвенции о защите прав и основных свобод человека.

В то же время, было выявлено понятие ограничение свободы и подняты некоторые законодательные проблемы, касающиеся применяемых ограничений. В результате, анализ задач, стоящих перед наказанием и мерами безопасности, а также идеологических основ введения ограничения свободы, привел к выводу, что ограничение свободы относится к видам наказания. В то же время было установлено, что в свете Европейской конвенции ограничение свободы в подавляющем большинстве можно классифицировать как меру, не ограничивающую личную свободу, но в некоторых случаях невозможно игнорировать гибридный характер этого вида наказания.

**Ключевые слова:** *ограничение свободы, средства уголовно-правового воздействия, цели наказания, личная свобода, право на свободу передвижения, наказание, связанное с лишением свободы, меры безопасности, правовая природа наказания.*

**ANNA MARGARYAN, ANAHIT ARAKELYAN – Restriction of Liberty within the System of Punishments.** – Within the framework of the present article, two core aspects pertaining to the legal nature of the punishment known as restriction of liberty have been subjected to analysis. The first aspect focuses on the classification of this measure, aiming to determine whether it should be considered a form of punishment or a distinct instrument of criminal-legal influence. The second line of inquiry seeks to examine the legal essence of this type of punishment in light of the European Convention on Protection of Human Rights and Fundamental Freedoms. Simultaneously, the study raises the issue concerning the definition of the term "restriction of liberty" and highlights certain legislative challenges associated with the application of such restrictive measures.

As a result of the analysis - encompassing the aims attributed to both punishments and security measures, as well as the ideological foundations underlying the implementation of liberty-restricting sanctions - it is concluded that restriction of liberty may be legitimately classified as a form of punishment under criminal law. At the same time, we concluded that, within the context of the European Convention, the restriction of liberty as a punishment, in most cases, may be considered as a measure that does not amount to a deprivation of personal liberty; nevertheless, in certain cases, it is impossible to deny the hybrid nature of this type of punishment.

**Key words:** *Restriction of liberty, criminal-legal influence measures, aims of punishment, personal liberty, right to freedom of movement, punishment related to deprivation of liberty, security measures, punishment's legal nature.*

## References

- “Guide on Article 2 of Protocol No. 4 to the European Convention on Human Rights” updated on 31 August 2024. Timofeyev and Postupkin v. Russia, 2021, p. 17.
- Hayastani Hanrapetowt'yan qreakan datavarowt'yan o'rensgirq (30.06.2021), Mias. kayq 2021.07.26-2021.08.08 P.H 28.07.2021:
- Hayastani Hanrapetowt'yan qreakan o'rensgirq., (05.05.2021), Mias. kayq 2021.05.17-2021.05.30 P.H 27.05.2021:
- <https://fundamental-research.ru/ru/article/view?id=35588> (20.10.2025):
- <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-164928> (20.10.2025):

[https://hudoc.echr.coe.int/eng?i=001-171804\\_84-89](https://hudoc.echr.coe.int/eng?i=001-171804_84-89) կետեր, [https://hudoc.echr.coe.int/eng?i=001-98341\\_43-44](https://hudoc.echr.coe.int/eng?i=001-98341_43-44) կետեր, [https://hudoc.echr.coe.int/eng?i=001-128146\\_22-23](https://hudoc.echr.coe.int/eng?i=001-128146_22-23) կետեր (20.10.2025):  
[https://hudoc.echr.coe.int/eng?i=001-233720\\_77-81](https://hudoc.echr.coe.int/eng?i=001-233720_77-81) կետեր (20.10.2025):  
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-24035> (20.10.2025):  
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-68774> (20.10.2025):  
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-74578> (20.10.2025):  
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-84328> (20.10.2025):  
[https://hudoc.echr.coe.int/eng?i=002-11960\\_86-րդ](https://hudoc.echr.coe.int/eng?i=002-11960_86-րդ) կետ (20.10.2025):  
<https://hudoc.echr.coe.int/fre?i=001-171804>, [https://hudoc.echr.coe.int/eng?i=002-13982\\_153-րդ](https://hudoc.echr.coe.int/eng?i=002-13982_153-րդ) կետ (20.10.2025):  
[https://hudoc.echr.coe.int/fre?i=001-57498\\_92-95-րդ](https://hudoc.echr.coe.int/fre?i=001-57498_92-95-րդ) կետեր (20.10.2025):  
 Karpov K.N. Inye mery ugodovno-pravovogo haraktera: sistema, vidy. M., 2012. էջ 25:  
 Kurganov S.I. Mery ugodovno-pravovogo haraktera // Ugodovnoe pravo. 2007. # 2. էջ 59:  
 Novikova E.A. “Pravovaja priroda ogranichenija svobody” - Aktual'nye problemy rossijskogo prava. 2014. # 8 (45) avgust էջ 1699-1703:  
 Shhedrin N.V. O “mnogokolejnosti” rossijskogo ugodovnogo prava // Sistemnost' v ugodovnom prave: mat.II ross. kongr. ugodovnogo prava (Moskva, 31 maja — 1 ijunja 2007 g.). M., 2007. էջ 540:  
 Shveciariayi qreakan  
 o'rensqir- [https://www.fedlex.admin.ch/eli/cc/54/757\\_781\\_799/en](https://www.fedlex.admin.ch/eli/cc/54/757_781_799/en) (20.10.2025):  
 Statement of reasons behind the government bill amending the Criminal Code and some other acts. Parliamentary Document No. 2393, p. 9.

## ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԶԵՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՍՈՂ ՆՈՐՄԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ<sup>1</sup>, ՎԻՐԱԲ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ<sup>2</sup>

*Երևանի պետական համալսարան*

Ապօրինի շրջանառության մեջ գտնվող զենքի հանձնումը խրախուսող նորմերն էական նշանակություն ունեն ինչպես հանցագործությունների կանխման, այնպես էլ անձանց դրական վարքագծի խթանման տեսանկյունից:

Այս առումով ուշադրության է արժանի 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի ձևակերպումը, որն էապես տարբերվում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված նորմի բովանդակությունից:

Սույն հոդվածի նպատակը հիշյալ նորմում տեղի ունեցած բովանդակային փոփոխությունների հետազոտումն է:

Դրված նպատակին հասնելու համար հոդվածում համեմատական վերլուծության են ենթարկվել նախկին և գործող քրեական օրենսգրքերով նախատեսված խրախուսական նորմերը և դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև վեր են հանվել այն հիմնահարցերը և խնդիրները, որոնք կարող են ծագել իրավակիրառ գործունեության ընթացքում:

Հետազոտության առարկան դիտարկվել է գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր (համագիտական) և հատուկ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են դոգմատիկ, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության և իրավական մոդելավորման մեթոդները:

\* **Սերգեյ Առաքելյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր

**Сергей Аракелян** – доктор юридических наук, ректор академии юстиции РА, профессор кафедры уголовного права ЕГУ

**Sergey Arakelyan** – Doctor of Legal Sciences, Rector of the Academy of Justice of the RA, Professor at YSU Chair of Criminal Law

Էլ. փոստ՝ [sarakelyan@ysu.am](mailto:sarakelyan@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0003-0509-7633>

\*\* **Վիրաբ Համբարձումյան** – ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս

**Вираз Амбарцумян** – преподаватель кафедры уголовного права ЕГУ

**Virab Hambardzumyan** – Lecturer at YSU Chair of Criminal Law

Էլ. փոստ՝ [virab.hambardzumyan@ysu.am](mailto:virab.hambardzumyan@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0009-0007-2662-1592>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 17.06.2025

Գրախոսվել է՝ 03.11.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

Հոդվածում իրականացված հետազոտության արդյունքում կատարվել են մի շարք եզրակացություններ, որոնց հիման վրա ներկայացվել են խրախուսական նորմի կատարելագործմանն ուղղված հիմնավորված առաջարկություններ:

**Բանալի բառեր** – *զենքի ապօրինի շրջանառություն, խրախուսական նորմ, դրական վարքագծի խթանում, քրեական օրենսգիրք, կամուվին հանձնում, օբյեկտիվ իրադրություն, խրախուսական նորմի կատարելագործում*

## Ներածություն

Հանցավորության բացասական միտումներից մեկը հանցագործությունների կատարումն է հրազենի, ռազմամթերքի, պայթյունցիկ նյութերի կամ պայթեցման սարքերի (այսուհետ նաև՝ զենք) գործադրմամբ: Պետք է ընդունել, որ շատ դեպքերում նման իրավիճակը պայմանավորված է նշված առարկաների ապօրինի շրջանառությամբ:

Այս պայմաններում շատ գիտնականներ զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող իրավանորմերը համարում են «կրկնակի կանխարգելիչ» դրույթներ, որոնք հնարավորություն են տալիս կանխելու ինչպես զենքի ապօրինի շրջանառության հետ կապված, այնպես էլ դրանց գործադրմամբ այլ հանցանքների կատարումը<sup>1</sup>: Ընդ որում, հարկ է նշել, որ կրկնակի կանխարգելիչ դեր ունեն ոչ միայն զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերը, այլ նաև այն դրույթները, որոնք սահմանում են այդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատման հիմքերն ու պայմանները: Ըստ էության, խոսքը տվյալ դեպքում ապօրինի շրջանառության մեջ գտնվող զենքի հանձնումը խրախուսող նորմերի մասին է, որոնք էական նշանակություն ունեն անձանց դրական վարքագծի խթանման տեսանկյունից<sup>2</sup>: Դրանք քրեորեն հետապնդելի արարք կատարած անձին առաջարկում են դրսևորել սոցիալական նշանակություն ունեցող որոշակի դրական վարքագիծ՝ վերջինիս արարքը խթանելով խրախուսանքով:

Այս առումով ուշադրության է արժանի 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Գործող քրեական օրենսգիրք) 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի ձևակերպումը, որն էապես տարբերվում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի<sup>3</sup> (այսուհետ նաև՝ Նախկին քրեական օրենսգիրք) 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված նորմի բովանդակությունից: Մասնավորապես, եթե նախկին իրավակարգավորումների պայմաններում անձն ա-

<sup>1</sup> Տե՛ս **Невский С.А.** Борьба с незаконным оборотом оружия. М., 2003, էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս **Антонов А.Г., Калугин А.Г.** Проблемы применения норм о деятельном раскаянии. Практическое пособие. - Красноярск, 2002, էջ 18 -19:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 18.04.2003, ուժի մեջ է մտել 01.08.2003, ՀՕ-528-Ն: Ուժը կորցրել է 01.07.2022 թ.:

զատվում էր քրեական պատասխանատվությունից Նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները կամովին հանձնելու դեպքում, ապա առկա իրավակարգավորումներով անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե Գործող քրեական օրենսգրքի 334-րդ կամ 335-րդ հոդվածներում նշված առարկաները հանձնի մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը: Հարկ է ընդգծել, որ զենքի հանձնումը խրախուսող նմանօրինակ իրավակարգավորման գոյությունը նորույթ է ՀՀ քրեական օրենսդրությունում, ինչով էլ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել քննարկման առարկա դարձնել հիշյալ նորմում տեղի ունեցած բովանդակային փոփոխությունները: Այս առումով նախկին և նոր իրավակարգավորումների համեմատական (կոմպարատիվիստիկ) վերլուծությունը կարող է հստակություն և որոշակիություն հաղորդել կատարված փոփոխությունների բնույթին, բացահայտել դրանց նպատակը, ինչպես նաև վեր հանել այն հիմնահարցերը և խնդիրները, որոնք կարող են ծագել իրավակիրառ գործունեության ընթացքում:

### **Նախկին քրեական օրենսգրքով նախատեսված խրախուսական նորմի վերաբերյալ**

Նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը՝*

*(...)*

*5. Մույն հոդվածում նշված առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում»:*

Վճռաբեկ դատարանը, Հուսիկ Բաղդասարյանի գործով որոշման շրջանակներում անդրադառնալով Նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի կիրառման առանձնահատկություններին, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները, այսինքն՝ անձի ընդունած այդ որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված ընտրության արդյունք: Բացահայտման իրական սպառնալիքի առկայությունը և դրանից դրդված հանձնումը չեն կարող համարվել կամովին: Այն դեպքերում, երբ իշխանությունները տեղյակ են կոնկրետ անձի մոտ նշված առարկաների առկա-

յության մասին և առաջարկում են հանձնել դրանք, հանձնումը կամովին համարվել չի կարող: Այս պայմաններում դա կարող է դիտվել միայն որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք»<sup>4</sup>:

Վերահաստատելով և զարգացնելով Հուսիկ Բաղդասարյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի գործով որոշմամբ արձանագրել է. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված խրախուսական նորմը նպատակ ունի ապօրինի պահվող զենքի և նորմում թվարկված մյուս առարկաների կամավոր հանձնումը խրախուսելու եղանակով դադարեցնելու ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարումը և այդպիսով կանխելու հետագայում դրանց հնարավոր գործադրմամբ անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված կամ այլ հանցագործությունները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված արարքների հանրային վտանգավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանով նախատեսված առարկաները հանցավոր նպատակով օգտագործելու իրական հնարավորություն է ստեղծվում, ինչը վտանգ է առաջացնում մարդկանց կյանքի և առողջության համար: Քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը հոդվածում նշված առարկաների անօրինական շրջանառությունից մարդու և հասարակության անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հետևաբար հոդվածում նշված առարկաների հանձնման դեպքում ապահովվում է տվյալ հանցագործության օբյեկտի պահպանությունը, իսկ հանձնման կամավորության դեպքում՝ վերանում հանցանք կատարած անձի հանրային վտանգավորությունը:

(...)

Քննարկվող հոդվածում նշված առարկաների հանձնումը կարող է համարվել կամովին, եթե անձը, գիտակցելով դրանք ապօրինի պահելը շարունակելու իրական հնարավորությունը, այդուհանդերձ, հանձնում է քննարկվող առարկաները կամ հայտնում դրանց գտնվելու վայրի մասին: Քննարկվող առարկաներն ապօրինի պահելու իրական հնարավորություն անձը կարող է ունենալ, եթե, օրինակ, վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէ զենքի գոյության մասին, կամ բացակայում են դրա բացահայտման օբյեկտիվ հնարավորության մասին վկայող հանգամանքները, և անձը ողջամտորեն գիտակցում է դա: Հետևաբար ապօրինի պահվող զենքի գործադրմամբ հանրորեն վտանգավոր այս կամ այն արարքը կատարելուց հետո զենքը հանձնած անձը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով չի կարող ազատ-

<sup>4</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հուսիկ Բաղդասարյանի գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/01/08 որոշման 20-րդ կետը:

վել քրեական պատասխանատվությունից, քանի որ զենքի գործադրման փաստը վարույթն իրականացնող մարմիններին հաստատապես հայտնի լինելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառումը չի բխի քննարկման առարկա խրախուսական նորմը նախատեսելու քրեական քաղաքականության նպատակներից: Մինչույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ապօրինի զենքով հանրորեն վտանգավոր այս կամ այն արարքը կատարելուց հետո անձի կողմից զենքը հանձնելը կարող է գնահատվել որպես անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք և հաշվի առնվել պատիժ նշանակելիս(...)»<sup>5</sup>:

Այսպիսով, նախկին իրավակարգավորումների պայմաններում խրախուսական նորմի կիրառման տեսանկյունից էական նշանակություն ունեւր զենքը կամավորաբար հանձնելու վերաբերյալ հանցանք կատարած անձի սուբյեկտիվ ընկալումը (այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիքի բացակայությունը գիտակցելը): Մասնավորապես, զենքի հանձնումը կարող էր համարվել կամովին, եթե անձը, գիտակցելով դրանք ապօրինի պահելը շարունակելու իրական հնարավորությունը, իրավասու մարմիններին հանձնում էր այն կամ հայտնում դրա գտնվելու վայրի մասին: Ընդ որում, հիշյալ խրախուսական նորմի կիրառման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորած իրավական դիրքորոշման համաձայն՝ ապօրինի պահվող զենքի գործադրումը հանրորեն վտանգավոր արարք կատարելուց հետո զենքը հանձնած անձը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով չէր կարող այլևս ազատվել քրեական պատասխանատվությունից:

Այս առումով հարկ է արձանագրել, որ դատական պրակտիկայում հիշյալ նորմի նման մեկնաբանությունը չէր բխում քննարկման առարկա հանդիսացող խրախուսական նորմը նախատեսելու քրեական քաղաքականության նպատակներից: Բանն այն է, որ խրախուսական նորմի նման մեկնաբանության պայմաններում կարող էր ստեղծվել մի իրավիճակ, երբ ապօրինի զենքի գործադրումը հանցանք կատարելուց հետո անձը այլևս չէր ունենա սոցիալական նշանակություն ունեցող դրական վարքագիծ դրսևորելու՝ զենքը հանձնելու մոտիվացիա և այն կարող էր թաքցնել կամ նետել որևէ վայրում: Տվյալ դեպքում, եթե իրավապահ մարմինների՝ նշված զենքը հայտնաբերելու ուղղությամբ իրականացվող որոնողական գործողությունները չհանգեցնեին դրական արդյունքի, ապա այն շարունակելու էր մնալ անօրինական շրջանառության մեջ՝ ստեղծելով վտանգ հասարակական անվտանգության, անձանց կյանքի, առողջության, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների բնականոն գործունեության համար:

<sup>5</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՆԴ/0011/01/14 որոշման 34-րդ կետը:

### **Գործող քրեական օրենսգրքով նախատեսված խրախուսական նորմի վերաբերյալ**

Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Ապօրինի կերպով հրազեն (բացառությամբ քաղաքացիական ողորկափող հրազենի, դրա փամփուշտների կամ դրա բաղկացուցիչ մասերի), դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտ, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ կրելը՝*

*(...)*

*4. Սույն հոդվածում կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածում նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը հանձնաձև անձն ազատվում է սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»:*

Ինչպես նկատում ենք, Գործող քրեական օրենսգրքով նախատեսված խրախուսական նորմի կիրառման տեսանկյունից օրենսդիրն այսուհետ արժևորում է օբյեկտիվ իրականությունում տեղի ունեցող հանգամանքները (իրավասու մարմինների կողմից նշված առարկաների գտնվելու վայրի մասին իմանալը), և այլևս էական նշանակություն չունի զենքը կամավորաբար հանձնելու վերաբերյալ հանցանք կատարած անձի սուբյեկտիվ ընկալումը (այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիքի բացակայությունը գիտակցելը): Այլ կերպ՝ նոր իրավակարգավորմամբ շեշտվում է իրադրության արտաքին կողմը, առանց անդրադառնալու դրա նկատմամբ առկա ներքին հոգեբանական գործընթացներին: Նման պայմաններում, կիրառելով նյութական նորմի տեքստային մեկնաբանման կանոնը, այլևս էական նշանակություն չունի նաև զենքի գործադրմամբ որևէ արարք կատարած լինելու փաստը, եթե զենքը հանձնելու պահին իրավասու մարմինները դրա գտնվելու վայրի մասին դեռևս տեղեկություն չունեն:

Դրան զուգահեռ՝ իրավասու մարմինների կողմից նշված առարկաների գտնվելու վայրի մասին իմանալուց հետո, հանցանք կատարած անձի կողմից դրանք նույնիսկ կամովին հանձնելու պարագայում, վերջինս չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից քննարկվող խրախուսական նորմի ուժով:

Մինևույն ժամանակ, հիշյալ իրավակարգավորման վերլուծությունից բխում է, որ իրավասու մարմինների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ և 335-րդ հոդվածներում **նշված առարկաների գտնվելու վայրի մասին իմանալը ենթադրում է որոշակի փաստական տվյալների կամ տեղեկությունների վրա հիմնված հետևություն այն մասին, թե կոնկրետ որ բնակարանում, շենքում, շինությունում կամ այլ տեղանքում են պահվում նշված առարկաները:**

Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավանորմի բովանդակային նման ձևակերպումը դժվար է համարել հաջողված, քանի որ դրա գործնական կիրառման ընթացքում իրավապահ մարմինները հաճախ կարող են հայտնվել քննարկվող խրախուսական նորմի կիրառման վերաբերյալ նախկինում ձևավորված պրակտիկային տրամաբանորեն հակառակ ծայրահեղության մեջ: Բանն այն է, որ քրեական վարույթով նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը շատ հաճախ այս կամ այն քննչական գործողությունն իրականացնելիս ոչ թե հստակ տեղեկացված է լինում (օրինակ՝ տեղեկություն ունի, որ անձը բնակարանում ապօրինի կերպով պահում է զենք), այլ օբյեկտիվ իրականությունում տեղի ունեցած որոշակի իրադարձություններով պայմանավորված (օրինակ՝ զենքի գործադրմամբ հանցանքի կատարումից հետո)՝ հիմնավոր ենթադրություն է կատարում զենքի գտնվելու վայրի մասին և դա հայտնաբերելու ակնկալիքով<sup>6</sup> ձեռնարկում է օրենսդրությամբ նախատեսված գործողություններ. զննում է կատարում դեպքի վայր հանդիսացող բնակարանում, դատարանի որոշման հիման վրա խուզարկություն է կատարում ենթադրյալ հանցանք կատարած անձի բնակարանում (նրան պատկանող կամ նրա տիրապետման ներքո գտնվող շինությունում կամ տեղանքում) և այլն: Խրախուսական նորմի գործող ձևակերպման պայմաններում՝ նշված դեպքերում զենքը հանձնած անձինք պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից, քանի որ նրանք ապօրինի պահվող զենքերը հանձնում են իրավասու մարմիններին՝ մինչև նրանց կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը: Օրինակ, վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրյալի բնակարանում զենք հայտնաբերելու նպատակով իրականացվող խուզարկության ընթացքում կամ այն սկսելուց անմիջապես առաջ վերջինս հայտնում է, որ իր ննջասենյակի պահարանում ապօրինի կերպով պահում է հրազեն և այն ցանկանում է հանձնել վարույթն իրականացնող մարմնին:

Բացի այդ, քննարկվող խրախուսական նորմի կիրառման տեսանկյունից գործնականում անարդար իրավիճակ կարող է ստեղծվել նաև հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով անձին ձերբակալելիս<sup>7</sup>, որի պարտադիր բաղադրիչ է ձերբակալմանն

<sup>6</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝ ապացուցողական գործողություն կատարելու մասին քննիչի միջնորդությունը պարունակում է նաև տեղեկատվություն միջնորդվող ապացուցողական գործողությունից ակնկալվող արդյունքի վերաբերյալ:

<sup>7</sup> Թեև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով անձնական խուզարկությունը որպես քննչական գործողություն, կարող է կատարել միայն տվյալ վարույթով իրավասու քննիչը, այնուհանդերձ համապատասխան քննչական գործողությունը քննիչի կողմից կատարելու օբյեկտիվ անհնարինությամբ պայմանավորված՝ այս կանոնից օրենսդիրը նախատեսել է բացառություն անձին ազատությունից փաստացի զրկելու պահին անձնական խուզարկությունը կատարում է հետաքննիչը (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 42):

ուղեկցող անձնական խուզարկությունը: Օրինակ, անձը ոստիկանության ծառայողի կողմից փողոցում ձերբակալվում է խուլիգանություն կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, և մինչ վերջինս կիրականացնի ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկություն, ձերբակալվածը հայտնում է, որ իր ծոցագրպանում առկա է ապօրինի կերպով կրվող հրազեն, և ցանկանում է ներկայացնել այն:

Հարկ է արձանագրել, որ վերը նկարագրված իրավիճակներում խրախուսական նորմի կիրառմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հիմնավորված չէ և չի համապատասխանում խրախուսական նորմերի բուն էությանը և նպատակին: Միննույն ժամանակ, դա չի բխում Գործող քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածով ամրագրված արդարության սկզբունքից, ըստ որի՝ *«Հանցանք կատարած անձին (...) քրեական պատասխանատվությունից (...) ազատելը պետք է լինի արդարացի՝ ապահովելով ինչպես կիրառվող օրենսդրության, այնպես էլ պետական հակազդեցության համաչափությունը կատարված հանցանքին, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը:(...)»*:

Կարծում ենք՝ այս առումով առավել հաջողված կարելի է համարել Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում տեղ գտած ձևակերպումը քննարկվող խրախուսական նորմի վերաբերյալ: Մասնավորապես, ՌԴ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի ծանոթագրություններում ամրագրված է. *«Սույն հոդվածով նախատեսված առարկաներն ինքնակամ հանձնած անձն ազատվում սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 222.1-րդ, 222.2-րդ, 223-րդ և 223.1-րդ հոդվածներով նախատեսված առարկաների հանձնումը չի կարող համարվել ինքնակամ, եթե դրանք առգրավվել են անձի ձերբակալման, ինչպես նաև այդ առարկաները հայտնաբերելու նպատակով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների կամ քննչական գործողությունների կատարման ընթացքում»*<sup>8</sup>:

Այսպիսով, նշված խրախուսական նորմի կիրառման համար էական նշանակություն ունի զենքն ինքնակամ (կամավորաբար) հանձնելու վերաբերյալ հանցանք կատարած անձի սուբյեկտիվ ընկալումը: Այնուհանդերձ, քննարկվող նորմի կարգավորման տեսանկյունից մեզ համար առավել ուշագրավ է այն, որ ՌԴ քրեական օրենսդրությամբ զենքի հանձնումը չի համարվում կամավորաբար կատարված, երբ դա տեղի է ունենում հանցանք կատարած անձի ձերբակալման, ինչպես նաև դա հայտնաբերելու նպատակով իրականացվող

<sup>8</sup> Ст'я "Уголовный кодекс Российской Федерации" от 13.06.1996, № 63-ФЗ (ред. от 21.04.2025) (с изм. и доп., вступ. в силу с 02.05.2025): Հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_10699/d4f142f9078e44b70b71fc6a653a76f572bf1ae2/](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/d4f142f9078e44b70b71fc6a653a76f572bf1ae2/) (վերջին մուտք՝ 22.05.2025 թ.):

օպերատիվ-հետախուզական միջոցառումների կամ քննչական գործողությունների կատարման ընթացքում:

Կարծում ենք՝ հիշյալ իրավակարգավորման օրինակով անհրաժեշտ է բովանդակային առումով վերաձևակերպել Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը՝ բացառելով խրախուսական նորմի կիրառմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելն այն դեպքում, երբ զենքի հանձնումը տեղի է ունենում անձի ձեռքակալման կամ դա հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունների կատարման ընթացքում<sup>9</sup>: Միևնույն ժամանակ, դրա բովանդակությունը սահմանելիս հնարավոր տարբերակումներից խուսափելու նպատակով<sup>10</sup> անհրաժեշտ է հստակեցնել, որ ձեռքակալման դեպքում զենքը հանձնած անձը խրախուսող նորմի ուժով չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, երբ հանձնում է ապօրինի կերպով կրվող (հագուստի մեջ, նրա մոտ գտնվող իրերում կամ նրա մարմնի վրա գտնվող), այլ ոչ թե պահվող զենքը: Բանն այն է, որ անձի ձեռքակալման ընթացքում վերջինս կարող է իրավասու մարմնին հայտնել, որ մեքենայի բեռնախցիկում, բնակարանում կամ այլ տեղանքում ապօրինի կերպով պահում է զենք, և պատրաստ է այն ներկայացնել իրավասու մարմնին: Տվյալ իրավիճակում զենքի հանձնումը պետք է հիմք հանդիսանա խրախուսական նորմի կիրառմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար: Ասվածը բխում է նաև անձնական խուզարկության՝ ՀՀ քրեադատավարական օրենսգրքի 237-րդ հոդվածով տրված սահմանումից<sup>11</sup>, որի բովանդակությունն են կազմում անձի հագուստի մեջ, նրա մոտ գտնվող իրերում կամ նրա մարմնի վրա առկա ենթադրյալ հանցագործությանն առնչվող առարկաները, նյութերը կամ փաստաթղթերը հայտնաբերելու նպատակով իրականացվող որոնողական գործողությունները:

Բացի այդ, կարծում ենք՝ պետք է ամրագրել, որ զենքի հանձնումը չի կարող հիմք հանդիսանալ անձին խրախուսական նորմի կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատելու համար ոչ միայն անձի ձեռքակալման կամ դա հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողության կատարման ընթացքում, այլ նաև՝ դրանից անմիջապես առաջ, երբ տեղում

<sup>9</sup> Քանի որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների բնույթով պայմանավորված՝ դրանց կատարման ընթացքում նման իրավիճակ դժվար է պատկերացնել, ուստի հարկ չենք համարում օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման ընթացքում զենքի հանձնման դեպքում բացառել խրախուսական նորմի կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը:

<sup>10</sup> ՌԴ քրեական օրենսգրքով նախատեսված խրախուսական նորմի տառացի մեկնաբանությունից բխում է, որ զենքի հանձնումը չի կարող համարվել ինքնակամ, երբ դա տեղի է ունենում անձի ձեռքակալման ընթացքում՝ անկախ զենքի գտնվելու վայրից:

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 30.06.2022 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., ՀՕ-306-Ն: Գործում է:

նախապատրաստվում է տվյալ գործողությունների կատարումը: Օրինակ, խուզարկություն կատարելուց առաջ քննիչը պարտավոր է խուզարկության օբյեկտի օրինական տիրապետողին կամ նրա ներկայացուցչին ստորագրությամբ հանձնել խուզարկությունը թույլատրելու մասին դատարանի որոշման պատճենը<sup>12</sup>: Տվյալ իրավիճակում հնարավոր են դեպքեր, երբ անձը, ծանոթանալով նշված որոշմանը, մինչ վարույթն իրականացնող մարմնի կողմից բուն ապացուցողական գործողությունն սկսելը «իր կամքով» վերջինիս հանձնի բնակարանում ապօրինի կերպով պահվող զենքը: Մեր կարծիքով՝ նշված իրավիճակները ևս հիմք չեն կարող հանդիսանալ խրախուսական նորմի կիրառմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար: Նման պայմաններում հանձնումը կարող է հաշվի առնվել որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք:

Միաժամանակ, հարկ ենք համարում հատուկ ընդգծել, որ այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինն ավարտում է զենքը հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունը (օրինակ, խուզարկության դեպքում՝ խուզարկության արձանագրության պատճենն ստորագրությամբ հանձնվում է խուզարկության օբյեկտի օրինական տիրապետողին կամ նրա ներկայացուցչին, որի ներկայությամբ կատարվել է խուզարկությունը), ապա դրանից հետո անձի կողմից զենքի հանձնումը բոլոր դեպքերում պետք է հիմք հանդիսանա քննարկվող խրախուսական նորմի ուժով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի վերլուծության համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև Գործող քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածում նախատեսված խրախուսական նորմի բովանդակությանը:

Գործող քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք պատրաստելը, դրանք ձևափոխելը կամ նորոգելը՝*

*(...)*

*4. Սույն հոդվածում նշված առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»:*

Այսպիսով, ի տարբերություն Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված խրախուսական նորմի՝ ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք պատրաստելու, դրանք ձևափոխելու կամ նորոգելու դեպքում,

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 4-րդ մասը:

խրախուսական նորմի կիրառման տեսանկյունից դեռևս նախկինի պես օրենսդրորեն արժևորվում է զենքը կամավորաբար հանձնելու վերաբերյալ հանցանք կատարած անձի սուբյեկտիվ ընկալումը: Այս առումով հարկ է փաստել, որ քրեական օրենսդրությամբ նախատեսված՝ զենքի հանձնումը խրախուսող նորմերում նման տարբերակված մոտեցման համար հնարավոր չէ գտնել որևէ ողջամիտ հիմնավորում, ուստի անհրաժեշտ է ապահովել քննարկվող իրավակարգավորումների միասնականությունը:

Ամփոփելով առաջարկում ենք Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Սույն հոդվածում, սույն օրենսգրքի 334-րդ կամ 336-րդ հոդվածներում նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը հանձնած անձն ազատվում է սույն հոդվածով, սույն օրենսգրքի 334-րդ կամ **336-րդ** հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, **բացառությամբ այն դեպքերի, երբ անձն այդ առարկաները հանձնել է ձեռքակալումից անմիջապես առաջ կամ դրա ընթացքում՝ հագուստի միջից, իր մոտ գտնվող իրերից կամ մարմնի վրայից, ինչպես նաև դրանք հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունների կատարումից անմիջապես առաջ կամ դրա ընթացքում:** Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»:

Հիշյալ խրախուսական նորմի գործնական կիրառումը պետք է հիմնվի հետևյալ մեկնաբանության վրա՝

➤ Խրախուսական նորմի ուժով անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից, եթե զենքը հանձնելու պահին իրավասու մարմինները դրա գտնվելու վայրի մասին դեռևս տեղեկություն չունեն:

➤ Նշված կանոնից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ.

- Անձը Գործող քրեական օրենսգրքի 334-րդ, 335-րդ կամ 336-րդ հոդվածներում նշված առարկաները հանձնել է ձեռքակալումից անմիջապես առաջ կամ դրա ընթացքում՝ հագուստի միջից, իր մոտ գտնվող իրերից կամ մարմնի վրայից: Ընդ որում, տվյալ դեպքում էական չէ, թե ինչ բնույթի հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով է իրականացվում ձեռքակալումը:

- Անձն այդ առարկաները հանձնել է դրանք հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունների կատարումից անմիջապես առաջ կամ դրա ընթացքում:

➤ Գործող քրեական օրենսգրքի 334-րդ, 335-րդ կամ 336-րդ հոդվածներում նշված առարկաների գտնվելու վայրի մասին **իմանալը ենթադրում է իրավասու մարմինների կողմից որոշակի փաստական տվյալների կամ տեղեկությո-**

յունների վրա հիմնված հետևություն այն մասին, թե կոնկրետ որ բնակարանում, շենքում, շինությունում կամ այլ տեղանքում են պահվում նշված առարկաները:

➤ Հնարավոր կամայականություններից խուսափելու նպատակով Գործող քրեական օրենսգրքի 334-րդ, 335-րդ կամ 336-րդ հոդվածներում նշված առարկաների գտնվելու վայրի մասին իրավասու մարմինների տեղեկացվածության աղբյուր կարող են հանդես գալ, որպես կանոն, քրեական վարույթի նյութերում առկա և որոշակի վայրում այդ առարկաների գտնվելու մասին տեղեկություններ պարունակող ապացույցները: Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներին, անհրաժեշտ է նշել, որ դրանք որոշ դեպքերում անփոխարինելի և եզակի տվյալներ կարող են պարունակել որոշակի վայրում նշված առարկաների գտնվելու վերաբերյալ, հետևաբար օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներն անտեսելն անթույլատրելի է: Միևնույն ժամանակ, օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկություններով (մասնավորապես՝ գործունեության գաղտնի մեթոդների և միջոցների կիրառումը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահությունը) պայմանավորված՝ մի շարք դեպքերում հնարավոր չէ գնահատել օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալները: Հետևաբար՝ բոլոր այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը հնարավոր է գնահատման ենթարկել, այն ևս կարող է հանդես գալ որպես նշված առարկաների գտնվելու վայրի մասին իրավասու մարմինների տեղեկացվածության ինքնուրույն աղբյուր:

➤ Միևնույն ժամանակ, նշված առարկաների գտնվելու վայրի մասին իմանալը չի ենթադրում, որ իրավասու մարմինները պետք է ամենայն մանրամասնությամբ և կոնկրետությամբ տեղեկացված լինեն, թե որոնվող առարկաները բնակարանի, շենքի, շինության կամ այլ տեղանքի որ մասում են գտնվում՝ ննջասենյակում, խոհանոցում, ավտոտնակում, մեքենայի բեռնասղցիկում կամ այլ վայրում:

➤ Այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինն ավարտում է զենքը հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունը, ապա դրանից հետո անձի կողմից զենքի հանձնումը բոլոր դեպքերում պետք է հիմք հանդիսանա քննարկվող խրախուսական նորմի ուժով վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

### Եզրակացություն

Սույն աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքում կատարել ենք մի շարք եզրակացություններ, որոնցից հիմնականները հանգում են հետևյալին:

1. Գործող քրեական օրենսգրքով նախատեսված խրախուսական նորմի կիրառման տեսանկյունից՝ օրենսդիրն այսուհետ արժևորում է օբյեկտիվ իրականությունում տեղի ունեցող հանգամանքները (իրավասու մարմինների կողմից նշված առարկաների գտնվելու վայրի մասին իմանալը), և այլևս էական նշանակություն չունի զենքը կամավորաբար հանձնելու վերաբերյալ հանցանք կատարած անձի սուբյեկտիվ ընկալումը (այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիքի բացակայությունը գիտակցելը):

2. Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավանորմի ձևակերպումը դժվար է համարել հաջողված, ուստի անհրաժեշտ է բովանդակային առումով վերաձևակերպել այն՝ բացառելով խրախուսական նորմի կիրառմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելն այն դեպքում, երբ զենքի հանձնումը տեղի է ունենում անձի ձեռքակալման կամ դա հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունների կատարման ընթացքում: Միննույն ժամանակ, դրա բովանդակությունը սահմանելիս հնարավոր տարբերակալումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է հստակեցնել, որ ձեռքակալման դեպքում զենքը հանձնած անձը խրախուսող նորմի ուժով չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, երբ հանձնում է ապօրինի կերպով կրվող (հագուստի մեջ, նրա մոտ գտնվող իրերում կամ նրա մարմնի վրա գտնվող), այլ ոչ թե պահվող զենքը:

Բացի այդ, անհրաժեշտ է ամրագրել, որ զենքի հանձնումը չի կարող հիմք հանդիսանալ անձին խրախուսական նորմի կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատելու համար ոչ միայն անձի ձեռքակալման կամ դա հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողության կատարման ընթացքում, այլ նաև՝ դրանից անմիջապես առաջ, երբ տեղում նախապատրաստվում է տվյալ գործողությունների կատարումը:

3. Ի տարբերություն Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված խրախուսական նորմի՝ ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք պատրաստելու, դրանք ձևափոխելու կամ նորոգելու դեպքում, խրախուսական նորմի կիրառման տեսանկյունից դեռևս նախկինի պես օրենսդրորեն արժևորվում է զենքը կամավորաբար հանձնելու վերաբերյալ հանցանք կատարած անձի սուբյեկտիվ ընկալումը: Այս առումով հարկ է փաստել, որ քրեական օրենսդրությամբ նախատեսված՝ զենքի հանձնումը խրախուսող նորմերում նման տարբերակված մոտեցման համար հնարավոր չէ գտնել որևէ ողջամիտ հիմնավորում, ուստի անհրաժեշտ է ապահովել քննարկվող իրավակարգավորումների միասնականությունը:

**СЕРГЕЙ АРАКЕЛЯН, ВИРАБ АМБАРИЦУМЯН** – *Некоторые уголовно-правовые вопросы норм, поощряющих сдачу оружия, находящегося в незаконном обороте.* – Правовые нормы, поощряющие добровольную сдачу незаконно находящегося в обороте

оружия или боеприпасов, играют важную роль как в предупреждении преступлений, так и в стимулировании правомерного поведения граждан. В этом контексте особенно важно проанализировать изменения, внесённые в последние годы в уголовное законодательство Республики Армения.

Часть 4 статьи 335 нового Уголовного кодекса Республики Армения, принятого 5 мая 2021 года, содержит поощрительную норму, касающуюся добровольной сдачи незаконно находящегося в обороте оружия, которая существенно отличается по содержанию от соответствующей нормы, закреплённой в части 5 статьи 235 Уголовного кодекса, принятого 18 апреля 2003 года.

Целью настоящей статьи является исследование сущностных изменений, произошедших в указанных правовых нормах, и оценка их влияния на уголовную политику и правоприменительную практику.

Для достижения поставленной цели в статье проведён сравнительный анализ поощрительных норм, предусмотренных прежним и действующим Уголовным кодексом, а также особенностей их применения, с одновременным выявлением ключевых проблем и вопросов, которые могут возникнуть в процессе правоприменительной деятельности.

Исследование проводилось с использованием как общих (междисциплинарных), так и специальных методов научного познания, таких как догматический, сравнительно-правовой, логический анализ и метод правового моделирования.

В результате исследования, проведенного в статье, были сделаны ряд выводов, на основе которых представлены обоснованные предложения, направленные на совершенствование поощрительной нормы.

**Ключевые слова:** *незаконный оборот оружия, норма поощрения, поощрение позитивного поведения, Уголовный кодекс, добровольная сдача, объективная ситуация, совершенствование нормы поощрения.*

**SERGEY ARAKELYAN, VIRAB HAMBARDZUMYAN – *Criminal Law Issues of Norms Encouraging the Surrender of Weapons in Illicit Trafficking.*** – Legal norms encouraging the surrender of weapons in illicit trafficking play an important role both in crime prevention and in promoting lawful behavior among citizens. In this context, it is especially important to analyze the changes introduced in recent years to the criminal legislation of the Republic of Armenia.

Part 4 of Article 335 of the new Criminal Code of the Republic of Armenia, adopted on May 5, 2021, contains an incentive provision regarding the voluntary surrender of illegally circulating weapons, which substantially differs in content from the corresponding provision enshrined in Part 5 of Article 235 of the Criminal Code adopted on April 18, 2003.

The purpose of this article is to examine the substantive changes that have occurred in these legal provisions and to assess their impact on criminal policy and law enforcement practice.

In order to achieve the stated objective, the article conducts a comparative analysis of the incentive norms provided in both the former and current criminal codes, as well as the peculiarities of their application, while also identifying key issues and challenges that may arise in the course of law enforcement practice.

The study was carried out using both general (interdisciplinary) and specialized methods of scientific inquiry, such as dogmatic, comparative legal, and logical analysis, as well as the method of legal modeling.

As a result of the research conducted in the article, a number of conclusions were drawn, based on which well-founded proposals aimed at improving the incentive norm were presented.

**Key words:** *illegal arms trafficking, the norm of encouragement, encouragement of positive behavior, Criminal Code, voluntary surrender, objective situation, improvement of the norm of encouragement.*

**References**

- Antonov A.G., Kalugin A.G. Problemy primeneniia norm o deiatel'nom raskanii. Prakticheskoe posobie. Krasnoiarsk, 2002.
- HH qreakan datavarut'yan orengsirq, yndunvel e' 30.06.2022t', ojhi mej e' mtel 01.07.2022t', HO-306-N. Gorts'um e'.
- HH qreakan orengsirq, yndunvel e' 18.04.2003t', ojhi mej e' mtel 01.08.2003t', HO-528-N: Ojhy korts'rel e' 01.07.2022t'.
- HH qreakan orengsirq. Yndunvel e' 05.05.2021t', ojhi mej e' mtel 01.07.2022t', HO-199-N. Gorts'um e'.
- Nevskii S.A. Bor'ba s nezakonnym oborotom oruzhiia. M., 2003.
- Vch'rabek datarani`Hrant Harutyunyani yev Beglar Hovhannisiani gorts'ov 2015 t'vakani dektemberi 18-i tiv EAND/0011/01/14 oroshmum.
- Vch'rabek datarani`Husik Baghdasaryani gorts'ov 2008 t'vakani noyemberi 28-i tiv AVD2/0059/01/08 oroshmum.
- "Ugolovnyi kodeks Rossiiskoi Federatsii" ot 13.06.1996 N 63-FZ (red. ot 21.04.2025) (s izm. i dop., vstup. v silu s 02.05.2025). Hasaneli e' hetevyal hghmamb:  
[https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_10699/d4f142f9078e44b70b71fc6a653a76f572bf1ae2/](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/d4f142f9078e44b70b71fc6a653a76f572bf1ae2/) (verjin mutq: 22.05.2025t').

## ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ<sup>1</sup>

*Երևանի պետական համալսարան*

Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին առնչվող մի շարք հիմնահարցեր բազմիցս քննարկվել են տարբեր տեսական աղբյուրներում և մեկնաբանություններում, սակայն դրանցից շատերի կապակցությամբ տեսության մեջ և իրավակիրառ պրակտիկայում միասնական մոտեցումը բացակայում է: Քննարկելով տեսակետն առ այն, որ (...) *հանցագործությունից երկար ժամանակ անցնելու հետևանքով զգալիորեն դժվարանում է վարույթը, իրենց ուժը կորցնում են ապացույցները, վկաների և տուժողների հիշողությունում տեղեկատվությունը խեղաթուրվում կամ մոռացվում է* (...), հարկ է նկատել, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում՝ արհեստական բանականության, տեսանկարահանման միջոցների, մեթոդների, ապացույցների հայտնաբերման և ամրագրման նոր համակարգերի և մեխանիզմների զարգացմանը զուգընթաց՝ վերոնշյալ մոտեցումը չի դիմանում որևէ քննադատության, քանի որ հանցանքի կատարման ապացույցները կարող են պահպանվել շատ երկար ժամանակահատվածի ընթացքում, ինչը կնպաստի վարույթի արդյունավետ իրականացմանը: Նույն հանցանքի կատարման պարագայում անձանցից մեկը կարող է կրել երկարատև ազատազրկում, վերականգնել տուժածին պատճառված վնասը, անցնել բազմաթիվ վերականգնողական ծրագրեր, իսկ մյուսն ուղղակի որոշակի ժամկետի ընթացքում «ոչինչ չանել» և ազատվել քրեական պատասխանատվությունից:

Արձանագրվել է, որ այս ինստիտուտի որոշ դրսևորումներ ոչ այլ ինչ են, քան «դատախազական արդարադատության» մասնավոր դրսևորումներ, որպիսի պայմաններում անհրաժեշտ է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ, համաձայն որոնց՝ ցանկացած քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում պետք է կայացվի (հաստատվի) դատարանի կողմից:

<sup>1</sup> **Տիգրան Սիմոնյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ

**Тигран Симонян** – кандидат юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ

**Tigran Simonyan** – Candidate of Legal Sciences, Associate Professor at YSU Chair of Criminal Law

Էլ. փոստ՝ [tsimonyan@ysu.am](mailto:tsimonyan@ysu.am), [tvsimonyan@gmail.com](mailto:tvsimonyan@gmail.com) ORCID ID:<https://orcid.org/0000-0001-8481-5706>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 11.09.2025

Գրախոսվել է՝ 26.11.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

Հեղինակը եզրակացրել է, որ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտն արդիական չէ և քրեական օրենսդրության զարգացմանը և լրամշակմանը զուգընթաց այս հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը պետք է բացառել:

Նշվել է նաև, որ հատկապես խնդրահարույց է 83-րդ հոդվածի 7-րդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ (...) *Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից:* (...): Քննարկվող իրավակարգավորումն անհիմն է, և, հեղինակի կարծիքով, այն պետք է հանվի նշված հոդվածի շարադրանքից, քանի որ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու պահից վաղեմության ժամկետն այլևս չի հաշվարկվում, հետևաբար՝ դրա վերսկսման վերաբերյալ դրույթն անառարկայական և անհիմն է:

**Բանալի բառեր** – քրեական պատասխանատվությունից ազատել, վաղեմության ժամկետ, վաղեմության ժամկետն անցնել, վաղեմության ժամկետը լրանալ, վաղեմության ժամկետի ընդհատում, վաղեմության ժամկետի կասեցում, վերսկսում ապացույցների կորուստ, քրեական պատասխանատվության ենթարկելու աննպատակահարմարություն

Քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին առնչվող մի շարք հիմնահարցեր բազմիցս քննարկվել են տարբեր տեսական աղբյուրներում և մեկնաբանություններում, սակայն դրանցից շատերի կապակցությամբ տեսության մեջ և իրավակիրառ պրակտիկայում միասնական մոտեցումը բացակայում է: Հատկապես խնդրահարույց են ՀՀ նոր քրեական օրենսգրքով նախատեսված որոշ իրավակարգավորումներ՝ կապված վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի հետ, որոնք գործնականում ոչ միանշանակ են ընկալվում, ինչն անհրաժեշտություն է առաջացնում դրանք առավել մանրամասն և հանգամանալից ուսումնասիրելու և վերլուծելու: Հիշյալ վիճահարույց կարգավորումները վերաբերելի են ինչպես վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի բուն էությանը, այնպես էլ վաղեմության ժամկետի ընթացքին, դրա կասեցմանը և ընդհատմանը: Ընդհանուր առմամբ հարկ է նկատել, որ ՀՀ նոր քրեական օրենսդրությամբ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու իրավակարգավորումները արմատական փոփոխությունների են ենթարկվել: Հիմնվելով ընդհանուր համատեսական մոտեցումների վրա՝ դրանք շարադրվել են նորովի, ինչով պայմանավորված էլ անհրաժեշտություն է ծագել անդրադառնալու դրանց առանձնահատկություններին:

Հայրենական քրեաիրավական տեսության մեջ նշվում է, որ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության իրավական հիմնավորում է

համարվում այն, որ օրենքով նախատեսված ժամկետներն անցնելուց հետո կատարված կոնկրետ հանցանքը և այն կատարող անձը կորցնում են իրենց վտանգավորությունը, ինչը և անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է ծառայում: Ինչքան շուտ հետևի պատիժը հանցագործության համար, այնքան այն ավելի արդյունավետ կլինի և կծառայի պատժի նպատակներին: Իսկ եթե անցնում է որոշակի ժամանակահատված, և անձը չի պատժվում, իսկ նրա կատարած արարքը շարունակում է որպես հանցագործություն դիտարկվել, ապա անձի նկատմամբ պատիժ նշանակելը դառնում է անիմաստ, և պատիժը չի ծառայում իր նպատակներին: Բացի այդ, եթե իրավապահ մարմիններն օբյեկտիվ պատճառներով չեն կարողացել թարմ հետքերով բացահայտել հանցագործությունը, ապա նրանք շատ հաճախ զրկվում են նախկինում կատարված հանցանքները բացահայտելու հնարավորությունից<sup>1</sup>:

ՀՀ իրավական դոկտրինում արտահայտված այդ մոտեցմանը համանման դիրքորոշում արտահայտվում է նաև արտասահմանյան տեսական աղբյուրներում: Այսպես՝ նշվում է, որ սահմանված վաղեմության ժամկետների նպատակն է պաշտպանել ենթադրյալ մեղադրյալներին անարդար դատական հետապնդումից, քանի որ որոշակի ժամանակահատված անցնելուց հետո տեղի ունեցած դեպքերի հետ կապված համապատասխան ապացույցները կարող են կորսվել կամ անհասանելի դառնալ, իսկ վկաների հիշողությունները՝ աղավաղվել, թուլանալ<sup>2</sup>:

Կ. Ս. Շիրոկովը նշում է, որ օրենքով սահմանված վաղեմության ժամկետի լրանալուն զուգընթաց՝ քրեական հետապնդման առարկա հանցագործության հասարակական վտանգավորությունը նվազում է<sup>3</sup>:

Խ. Դ. Ալիկպերովը նշում է. «Այս ինստիտուտի նպատակները չեն կարող դիտարկվել որպես հանցագործի նկատմամբ պետության կողմից ցուցաբերվող ողորմություն կամ զիջում: Պարզապես հանցագործությունից երկար ժամանակ անցնելու հետևանքով զգալիորեն դժվարանում է վարույթը, իրենց ուժը կորցնում են ապացույցները, վկաների և տուժողների հիշողությունում տեղեկատվությունը խեղաթյուրվում կամ մոռացվում է: Արդյունքում, դատարանի կողմից այդ կատեգորիայի գործերի օբյեկտիվ քննությունը և հանցագործության իրական պատկերի վերականգնումը հաճախ դառնում են դժվարին, երբեմն նույնիսկ՝ անհնար»<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) / Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2011, էջ 477:

<sup>2</sup> <https://www.investopedia.com/terms/s/statute-of-limitations.asp> (հասանելի է՝ 14. 04. 2025):

դրությամբ:

<sup>3</sup> Տե՛ս **Շիրոков К. С.** Проблемы истечения сроков давности в уголовном праве России // Мировой судья. 2006, № 9:

<sup>4</sup> **Аликперов Х.** Освобождение от уголовной ответственности в связи с истечением сроков давности // Законность. 1999, № 8, с. 13.

Համանման դիրքորոշում է արտահայտում նաև Ա. Վ. Նաումովը. «Ընդհանուր և հատուկ կանխարգելման խնդիրների իրականացումը պահանջում է պատժի ժամանակին նշանակում և կատարում: Քրեական պատասխանատվության ուշացած ենթարկելը և դատավճռի ուշացած կատարումը պատշաճ դաստիարակչական և հանրային-կանխարգելիչ ազդեցություն չեն ունենում և, հետևաբար, աննպատակահարմար են: Մինչ այդ մեղավորը կարող է ուղղվել, դադարել լինել հանրության համար վտանգավոր և, այդպիսով, այլևս կարիք չի ունենա պատժի ազդեցության: Հանցավոր արարք կատարելուց երկար ժամանակ անցելուց հետո երբեմն առաջանում են նաև ապացուցողական գործընթացի անհաղթահարելի խոչընդոտներ (կորսվում են հանցագործության նյութական հետքերը, վկաները մոռանում են կարևոր հանգամանքներ և այլն), որոնք խոչընդոտներ են ստեղծում գործի հաջող քննության համար»<sup>5</sup>:

Վ. Վ. Մալցևը, հակադրվելով նշված տեսակետներին, եզրակացնում է. «Ընդհակառակը, հենց «հանցագործի նկատմամբ ողորմությամբ», «զիջումով», «այս ինստիտուտի հումանիստական սկզբունքով» են պայմանավորված այս տեսակի ազատման բովանդակությունն ու նպատակները: Ակնհայտ է, որ «հանցագործությունից երկար ժամանակ անցնելու հետևանքով վարույթը դժվարանում է», սակայն նման գործոնները երկրորդական են, այլ ոչ թե հիմնական, որոնք կազմում են այդ նորմի սոցիալական հիմքը»<sup>6</sup>:

Վ. Ս. Սավելևան նույնպես կարծում է, որ վաղեմության նորմերը հիմնված են հումանիստական գաղափարի վրա: Վերջինիս մոտեցումը հետևյալն է. «Առաջին հերթին՝ քրեական պատասխանատվության սպառնալիքը չի կարող մշտապես կախված լինել մարդու վրա, իսկ երկրորդ՝ որոշակի ժամկետի լրանալուց հետո պատասխանատվության ենթարկելը վերածվում է անհիմն վրեժի, ինչը կորցնում է իր իմաստը ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ կանխարգելման տեսանկյունից»<sup>7</sup>:

Հանցագործություն կատարելուց զգալի ժամանակ անց քրեական պատասխանատվության ենթարկելու աննպատակահարմարությունը բացատրվում է նաև նրանով, որ քրեական գործի ուշացած հարուցումը դժվարացնում է դրա քննությունը և ճիշտ լուծումը: Այս ամենը ևս որոշում է քրեական օրենսդրության մեջ քրեական պատասխանատվության ժամկետանցության ինստիտուտի գոյության անհրաժեշտությունը:

Յու. Մ. Տկաչևսկին չի համաձայնում այն հեղինակների հետ, ովքեր կարծում են, որ վաղեմության ժամկետի լրանալը կախված է հանցագործության հանրային վտանգավորության պահպանումից կամ կորստից: Ըստ նրա՝

<sup>5</sup> Комментарий к уголовному кодексу Российской Федерации. Под ред. А.В. Наумова. М., 1996, с. 331.

<sup>6</sup> Мальцев В. Освобождение от уголовной ответственности в связи с истечением сроков давности // Уголовное право. 2006, № 1.

<sup>7</sup> Савельева В. С. Освобождение от уголовной ответственности // Уголовное право Российской Федерации. Общая часть. М., 1996, с. 435-436.

«Հանցագործության վտանգավորությունը կարող է փոխվել իրադրության կամ որոշակի պայմանների փոփոխության հետևանքով, բայց ոչ վաղեմության ժամկետը լրանալու արդյունքում: Հանցագործության վտանգավորությունը գնահատվում է այն պահին, երբ այն կատարվել է, և պարզապես ժամանակի հոսքը, առանց իրավիճակի փոփոխության, չի ազդում այդ գնահատականի վրա:...Վաղեմության ինստիտուտը հիմնված է հանցանք կատարած անձի հանրային վտանգավորության վերացման կամ էական նվազման վրա»<sup>8</sup>:

Ի մի բերելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ տեսության մեջ արտահայտված նշված մոտեցումները, իմ կարծիքով, մասամբ կորցրել են իրենց այժմեականությունը և որոշակի իմաստով ռեակցիոն, հետադիմական են: Այսպես՝ քննարկելով տեսակետն առ այն, որ (...) *հանցագործությունից երկար ժամանակ անցնելու հետևանքով զգալիորեն դժվարանում է վարույթը, իրենց ուժը կորցնում են ապացույցները, վկաների և տուժողների հիշողությունում տեղեկատվությունը խեղաթյուրվում կամ մոռացվում է* (...), հարկ է նկատել, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում՝ արհեստական բանականության, տեսանկարահանման միջոցների, մեթոդների, ապացույցների հայտնաբերման և ամրագրման նոր համակարգերի և մեխանիզմների, օպերատիվ-հետախուզական գործունեության, հետքաբանության, կենսաբանության զարգացմանը զուգընթաց՝ վերոնշյալ մոտեցումը չի դիմանում որևէ քննադատության, և անկախ վկանների հիշողության կորստից կամ աղավաղումներից՝ հանցանքի կատարման ապացույցները կարող են պահպանվել շատ երկար ժամանակ, ինչը կնպաստի վարույթի արդյունավետ իրականացմանը:

Համաձայն եմ Յու. Մ. Տկաչևսկու այն մոտեցմանը, որ հանցագործության վտանգավորությունը կարող է փոխվել իրադրության կամ որոշակի պայմանների, հասարակական հարաբերությունների փոփոխության, դրանց տրանսֆորմացիայի հետևանքով, բայց ոչ վաղեմության ժամկետը լրանալու արդյունքում: Հանցագործության վտանգավորությունը գնահատվում է այն պահին, երբ այն կատարվել է, և պարզապես ժամանակի հոսքը, առանց իրավիճակի փոփոխության, չի ազդում այդ գնահատականի վրա: Ինչ վերաբերում է այն տեսակետին, որ վաղեմության ինստիտուտը հիմնված է հանցանք կատարած անձի հանրային վտանգավորության վերացման կամ էական նվազման վրա, ապա նշված պնդման հետ ևս դժվար է համաձայնել, քանի որ, իմ կարծիքով, այն չի բխում արդարության գաղափարից: Իմ մոտեցմամբ՝ թե՛ հանցանք կատարած անձի և թե՛ կատարված հանցանքի վտանգավորությունը ժամանակի ընթացքում չի կարող ինքնաբերաբար չեզոքանալ, նվազել կամ վերանալ: Ավելին, դա չի բխում նաև պատժի նպատակներից և վերականգնողական արդարադատության հայեցակարգից: Թեև երկարատև ժամանակահատվածի

<sup>8</sup> Ткачевский Ю. М. Освобождение от уголовной ответственности // Курс уголовного права. Т. 2: Общая часть. М., 2002, с. 192.

ընթացքում նոր հանցանք չկատարելը կարող է վկայել անձի որոշակիորեն վերասոցիալականացման մասին, սակայն սոցիալական արդարության վերականգման նպատակը մնում է չիրագործված: Նույն հանցանքի կատարման պարագայում՝ անձանցից մեկը կարող է կրել երկարատև ազատազրկում, վերականգնել տուժածին պատճառված վնասը, անցնել բազամաթիվ վերականգնողական ծրագրեր, իսկ մյուսն ուղղակի որոշակի ժամկետի ընթացքում «ոչինչ չանել» և ազատվել քրեական պատասխանատվությունից:

Բացի վերոշարադրյալից՝ պետք է նշեմ նաև, որ որոշակի նկատառումներ են առկա քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի, դրա առանձին տեսակների կապակցությամբ ընդհանրապես և քննարկվող ինստիտուտի առումով՝ մասնավորապես: Խնդիրն այն է, որ այս ինստիտուտները ոչ այլ ինչ են, քան այսպես կոչված «դատախազական արդարադատության» մասնավոր դրսևորումներ:

Ա. Վ. Ենդոլցևան իրավացիորեն նշում է, որ քրեական պատասխանատվությունից ազատումը պետք է հնարավոր չլինի մինչև դատարանի կողմից որոշում կայացնելը և անձի կողմից հանցագործության կատարման փաստացի ճանաչումը, քանի որ հակառակ դեպքում, ըստ նրա, առաջանում է իրավիճակ, երբ անձը ազատվում է այն բանից, ինչը դեռ հիմնավորված և հաստատված չէ<sup>9</sup>: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 17-ը սահմանում է.

«1. Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: 2. Չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը (...): Նշվածից ուղղակիորեն բխում է, որ քրեական պատասխանատվությունից ազատման պահին պետք է ապացուցված լինի կոնկրետ անձի մեղավորությունը, ինչը վերջնականապես կարող է հաստատվել բացառապես դատարանի դատավճռով: Հետևաբար՝ ինչպե՞ս կարող է անձն ազատվել քրեական պատասխանատվությունից, երբ դեռ հաստատված չէ վերջինիս կողմից հանցանքի կատարումը: Ստեղծվում է մի անհեթեթ իրավիճակ, երբ, առանց ուժի մեջ մտած դատական ակտի, առերևույթ հանցանք կատարած անձի և պետության միջև քրեաիրավական հարաբերությունները դադարում են, ինչն անընդունելի է: Անհրաժեշտ է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ, և ամրագրել, որ ցանկացած քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում պետք է կայացվի (հաստատվի) դատարանի կողմից, այլապես ՀՀ Սահմանադրության հոդված 162-ով նշված դրույթն առ այն, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են

<sup>9</sup> См. у **Ендольцева А.В.** Освобождение от уголовного преследования: от теоретических рассуждений к de lege ferenda // Вестник Московского университета МВД России. 2016, № 6, էջ 57:

միայն դատարանները Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, պարզապես չի իրագործվի<sup>10</sup>:

**Կարծում եմ՝ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտն արդիական չէ, և քրեական օրենսդրության զարգացմանը և լրամշակմանը զուգընթաց՝ այս հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը պետք է բացառել: Նշվածը հիմնավորվում է նաև մի շարք հանցատեսակների կապակցությամբ վաղեմության ժամկետների կիրառման արգելքով (հոդված 83, 8-10 կետեր), որը սահմանված է և՛ ներպետական, և՛ միջազգային-իրավական կարգավորումներով:**

Այնուամենայնիվ, գործող քրեական օրենսգրքով վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելը նախատեսված է որպես քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն տեսակ, որպիսի պայմաններում անհրաժեշտ է քննարկել այս ինստիտուտին վերաբերող մի շարք վիճահարույց հիմնախնդիրներ: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 83-ով նախատեսված վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելուն առնչվող հիմնախնդիրների (ինչպես օրինակ՝ տևող, շարունակվող, չավարտված հանցագործության կամ հանցակցությամբ կատարվող հանցանքների վաղեմության ժամկետների հաշվարկ և այլն) համապարփակ քննարկումը դուրս է սույն գիտական հոդվածի ծավալներից, և դրանց անդրադարձ կարող է կատարվել լայնածավալ հետազոտության շրջանակներում, սակայն, ինչպես վերն արդեն նշվել է, մի շարք վիճահարույց հարցերի քննարկումը ժամանակի հրամայական է:

Քրեական օրենսգրքի հոդված 83-ի առաջին մասի համաձայն՝ «Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

- 1) 5 տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում.
- 2) 10 տարի՝ միջին ծանրության հանցանքի դեպքում.
- 3) 15 տարի՝ ծանր հանցանքի դեպքում.
- 4) 20 տարի՝ առանձնապես ծանր հանցանքի դեպքում»:

Նախկին իրավակարգավորման համեմատ՝ սահմանվել են վաղեմության ավելի երկար ժամկետներ: Այսպես՝ նախկին քրեական օրենսգրքի հոդված 75-ի առաջին մասը նախատեսում էր վաղեմության հետևյալ ժամկետները՝

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից,

<sup>10</sup> Քանի որ նշված փոփոխությունները, իմ կարծիքով, պետք է վերաբերելի լինեն ոչ միայն վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին, այլև պետք է կրեն համապարփակ բնույթ, դրանց հստակ բնորոշումը և օրենսդրական սահմանումը դուրս է սույն գիտական հոդվածի շրջանակներից:

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից,

3) տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից,

4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

Ոչ մեծ ծանրության հանցանքների պարագայում վաղեմության ժամկետն ավելացվել է 3 տարով, մյուս խմբի հանցանքների պարագայում՝ դրանք ավելացվել են 5 տարով: Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ավելի երկար ժամկետների սահմանումը, իմ դիտանկյունից, արդարացված է սույն հոդվածի շրջանակներում արտահայտված մոտեցումների լույսի ներքո: Իհարկե վերահաստատում եմ դիրքորոշումս առ այն, որ այս հետադիմական ինստիտուտը չպետք է նախատեսվի քրեական օրենսդրությամբ, սակայն դրա առկայության պարագայում՝ անհրաժեշտ են ավելի երկար ժամկետներ:

Քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից մինչև անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելը»: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 75-ի երկրորդ մասի համաձայն՝ «Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը»: Նոր իրավակարգավորումն էապես տարբերվում է նախկինից: Հաճախ գործի քննության համար վատնվում էին ահռելի մարդկային և նյութական ռեսուրսներ, տարիների ընթացքում քննվում էր գործը, իսկ դատարանի՝ խորհրդակցական սենյակ հեռանալուց կամ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց մի քանի օր առաջ անցնում էին վաղեմության ժամկետները: Նոր իրավակարգավորումը միտված է լուծելու նշված խնդիրը, քանի որ դատական գործերի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով հետաձգումների հետևանքով հանցանք կատարած բազմաթիվ անձինք ազատվում էին քրեական պատասխանատվությունից քննարկվող հիմքով: Նոր իրավակարգավորման պարագայում՝ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու պահից սկսած՝ վաղեմության ժամկետի հոսքն ավարտվում է, այսինքն՝ **վաղեմության ժամկետի հաշվարկը դադարում է**, ինչը հնարավորություն կընձեռնի իրականացնելու արդյունավետ արդարադատություն:

Նոր քրեական օրենսգրքով ամրագրված իրավակարգավորումների վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ պայմանականորեն սահմանվել են վաղեմության ժամկետի ընթացքի երեք հիմնական ռեժիմներ՝

1) վաղեմության ժամկետի ընթացքի **բնականոն հոսք**, որն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու պահից սկսած **դադարում է**,

2) վաղեմության ժամկետի ընթացքի **կասեցում**,

3) վաղեմության ժամկետի ընթացքի **ընդհատում**:

Վաղեմության ժամկետի ընթացքի բնականոն հոսքը վերաբերելի է այն իրավիճակներին, երբ առերևույթ հանցանք կատարած անձը հայտնի չէ: Այս կարգավորումը վերաբերելի է նաև այն իրավիճակներին, երբ թեև առերևույթ հանցանք կատարած անձի մասին վարույթն իրականացնող մարմինն ունի որոշակի տեղեկատվություն, սակայն առկա ապացույցները և այլ փաստական հանգամանքները բավարար չեն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար: Օրինակ՝ առկա է առերևույթ սպանության դեպք՝ հրազենային վնասվածքներով, սակայն հայտնի չէ, թե ով է հասցրել նշված վնասվածքները, կամ առկա են որոշակի օպերատիվ տվյալներ հնարավոր հանցանք կատարած անձի վերաբերյալ, սակայն չկան բավարար փաստական տվյալներ նշված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և վերջինիս մեղադրյալի կարգավիճակ տալու համար: Քննարկվող կարգավորումը վերաբերելի է նաև այն անձանց, որոնց նկատմամբ **իրականացվում է փաստացի քրեական հետապնդում**: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 97-ը սահմանում է ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման սահմանափակումները: Նշված հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը որպես օրենքի էական խախտմամբ ստացված տվյալների տեսակ նշում է այն տվյալները, որոնք ձեռք են բերվել քննչական գործողության կատարման ընթացքում մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, որի նկատմամբ **փաստացի իրականացվել է քրեական հետապնդում** առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու: Այսինքն՝ քրեական դատավարության օրենսդրությունը առերևույթ ընդունում է, որ հնարավոր է անձի նկատմամբ ոչ իրավաչափորեն իրականացվի քրեական հետապնդում՝ չտալով նրան մեղադրյալի կարգավիճակ: Այս պարագայում վաղեմության ժամկետի բնականոն հոսքը շարունակվում է:

Քրեական օրենսգրքը (հոդված 83) նախատեսում է վաղեմության խախտման երկու եղանակ՝

- 1) վաղեմության ընթացքի ընդհատում,
- 2) վաղեմության ընթացքի կասեցում:

Քրեական օրենսգրքի հոդված 83-ի 6-րդ մասի համաձայն՝ «Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է նոր հանցանք: Այդ դեպքում յուրաքանչյուր հանցագործության համար վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքն ավարտվելու պահից»: Վաղեմության ժամկետի բնականոն հոսքին առնչվող կարգավորումներն ընդհանուր առմամբ վերաբերելի են նաև վաղեմության ժամկետի ընդհատմանը, այսինքն՝ այս պարագայում ևս անձը հայտնի չէ կամ հայտնի է, սակայն նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում առկա չէ, վերջինիս մեղադրանք առաջադրված չէ: Եթե նշված անձը կատարում է նոր հանցանք, ապա վաղեմության ժամկետի հոսքը կատարած նախորդ հանցանքի համար ընդհատվում է և սկսվում է նոր հանցանքն ավարտվելու պահից: Ընդ որում՝ հաշվարկը սկսվում է նորից: Օրինակ՝ անձը

կատարել է առանձնապես ծանր հանցանք, որի պարագայում վաղեմության ժամկետը 20 տարի է: 19 տարի անց վերջինս կատարում է միջին ծանրության հանցանք, որի վաղեմության ժամկետը 10 տարի է: Միջին ծանրության հանցանքի վաղեմության ժամկետը սկսում է հոսել այն ավարտվելուց հետո, այդ նույն պահից ընդհատվում է առանձնապես ծանր հանցանքի վաղեմության ժամկետի հաշվարկը, որը սկսում է հոսել նորից, այսինքն՝ ևս 20 տարի:

Նոր հանցանք կատարելու հետևանքով վաղեմության ժամկետների ընդհատումը նախատեսված է արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ: Այսպես, ըստ Ավստրիայի ՔՕ 58-րդ հոդվածի (2) մասի, «եթե քրեական հետապնդման ժամկետների ընթացքում անձը նորից կատարում է պատժի սպառնալիքով արգելված արարք, ապա վաղեմության ժամկետը չի սկսվում, մինչև չլրանա նաև նոր հանցագործության համար քրեական հետապնդման ժամկետը»<sup>11</sup>: Վաղեմության ժամկետի ընդհատում նախատեսվում է նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ՔՕ-ի համաձայն (89-րդ հոդվածի 2-րդ մաս)<sup>12</sup>: Նախկին ԽՍՀՄ որոշ պետություններ նույնպես պահպանել են նոր հանցանք կատարելու դեպքում վաղեմության ժամկետի ընդհատման ինստիտուտը (Ուկրաինայի ՔՕ 49-րդ հոդվածի 3-րդ մաս, Բելառուսի Հանրապետության ՔՕ 83-րդ հոդվածի 3-րդ մաս, Մոլդովայի Հանրապետության ՔՕ 60-րդ հոդվածի (4) մաս, Լատվիայի Հանրապետության ՔՕ 56-րդ հոդվածի (3) մաս, Լիտվայի Հանրապետության ՔՕ 49-րդ հոդվածի (4) մաս, Էստոնիայի Հանրապետության ՔՕ 53-րդ հոդվածի (2) մաս, Ուզբեկստանի Հանրապետության ՔՕ 64-րդ հոդվածի 4-րդ մաս): Մինչև ժամանակ, մի շարք երկրների քրեական օրենսգրքերում նոր հանցանք կատարելու դեպքում վաղեմության ժամկետների ընդհատում չի նախատեսվել (Գերմանիայի ՔՕ, Իսպանիայի ՔՕ, Դանիայի ՔՕ և այլն)<sup>13</sup>:

Կարծում են՝ նոր հանցանքի կատարման պարագայում վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման ինստիտուտը հիմնավորված է, քանի որ հանցանք կատարած անձի հանրային բարձր վտանգավորության պահպանման պարագայում՝ նրա նկատմամբ պետության կողմից դրսևորվող ներողամիտ վերաբերմունքն առարկայազուրկ է: Այս դեպքում խոսք չի կարող լինել վերջինիս կողմից շարունակաբար իրավահպատակ վարքագիծ դրսևորելու մասին, ինչը կարող էր հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ:

Վաղեմության ժամկետի խախտման հաջորդ եղանակը դրա կասեցումն է: Քրեական օրենսգրքի հոդված 83-ի 7-րդ մասի համաձայն՝ «Վաղեմության

<sup>11</sup> Հասանելի է <https://ihl-databases.icrc.org/en/national-practice/penal-code-1974-0> հղումով՝ 19. 05. 2025 դրությամբ:

<sup>12</sup> <https://crimescience.ru/wp-content/uploads/2020/05/Уголовный-Кодекс-КНР-2-e-издание-2021.pdf> (Հասանելի է՝ 20. 05. 2025):

<sup>13</sup> <https://cyberleninka.ru/article/n/problemy-osvobozhdeniya-ot-ugolovnoy-otvetstvennosti-v-svyazi-s-istecheniem-srokov-davnosti> (Հասանելի է՝ 20. 05. 2025):

Ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքն ավարտվելու օրվանից անցել է 15 տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտվելու օրվանից՝ 25 տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ»:

Նշված իրավակարգավորումը բավականին խնդրահարույց է և ենթակա է օրենսդրական լրամշակման: Տեսությունը և դատական պրակտիկան հակասական են այն հարցում, թե ինչ պետք է հասկանալ քննությունից խուսափել ասելով: Քրեաիրավական դոկտրինում նույնպես այս հարցի մեկնաբանության մեջ միասնականություն չկա: Այս խնդիրը լուծելիս հաշվի են առնվում երկու գործոններ՝

- 1) հանցանք կատարած անձի դատավարական կարգավիճակը,
- 2) անձի ո՞ր արարքները պետք է համարել քննությունից խուսափել:

Այսպես, Ս. Յու. Պոդոսյանը կարծում է, որ անկախ նրանից, թե հանցանք կատարած անձը հայտնի է, թե ոչ, նրա այն գործողությունները, որոնք հատուկ ուղղված են քննությունից խուսափելուն (հասցեի, ազգանվան փոփոխում, քննությունը շեղող տարբեր տեսակի հանգամանքների ստեղծում և այլն), պետք է գնահատվեն որպես խուսափում՝ կասեցնելով վաղեմության ժամկետի հոսքը<sup>14</sup>: Համանման կարծիք է հայտնել Վ. Վ. Սվերչկովը, ով կարծում է, որ ցանկացած գործողություն, որը կապված է «հանցագործության հետքերը թաքցնելու, հանրային միջավայրում հաջող դիմակավորման, կատարված հանցանքի կապակցությամբ «լրության ուխտի» պահպանման հետ»<sup>15</sup>, պետք է գնահատվի որպես խուսափում, որը կասեցնում է ժամկետի հոսքը:

Այս տեսակետը խնդրահարույց է թվում, քանի որ եթե անձին չեն փնտրում, հայտարարված չէ հետախուզում, ապա ինչից կամ ումից է խուսափում նշված անձը: Գրեթե յուրաքանչյուր հանցանք կատարած անձ միջոցներ է ձեռնարկում՝ միտված թաքնվելուն, իր բացահայտմանը խոչընդոտելուն, որպիսի պարագայում, ըստ նշված տեսակետի, պետք է համարվի քննությունից թաքնվող, ինչն անտրամաբանական է: Մյուս հեղինակները գտնում են, որ խուսափում կարող են գնահատվել միայն այն գործողությունները, որոնք կատարվել են հանցագործություն կատարած անձի՝ իրավապահ մարմիններ և դատարան հրավիրվելու իրավաբանական պարտավորությունն առաջանալուց հետո, իսկ նման պարտավորություն առաջանում է միայն մեղադրյալի համար<sup>16</sup>: Ա.

<sup>14</sup> Ст. 11 Уголовное право. Общая часть. М., 2008, էջ 605:

<sup>15</sup> Свечков В. В. Освобождение от уголовной ответственности в связи с истечением сроков давности // Журнал российского права. 2000, № 2, с. 89.

<sup>16</sup> Ст. 11 Алишеров Х. Освобождение от уголовной ответственности в связи с истечением сроков давности // Законность. 1999, № 8, էջ 13:

Տարբազանը նույնպես կարծում է, որ հանցագործություն կատարած անձի կողմից իրավապահ մարմիններ կամ դատարան ներկայանալու իրավաբանական պարտավորությունն առաջանում է, երբ այդ անձը ներգրավվում է որպես մեղադրյալ, ինչն ամրագրվում է համապատասխան որոշմամբ<sup>17</sup>:

Պետք է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումներն ամրագրել են վերոգրյալ տեսական մոտեցումը, որի համատեքստում՝ քննությունից խուսափող կարող է հանդիսանալ միայն այն անձը, ում նկատմամբ առկա է քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում, վերջինիս առաջադրված է մեղադրանք: Եթե անձը հայտնի չէ, կամ նրա նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու, ապա նշված պարագայում վաղեմության ժամկետը բնականոն հոսում է, այն չի կարող կասեցվել քննարկվող հիմքով: Հարկ է կրկին ընդգծել, որ այս իրավակարգավորումը վերաբերելի է այն իրավիճակներին, երբ հանցանք կատարած անձը հայտնի է, և նրա նկատմամբ առկա է քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում: Վերջինիս կողմից քննությունից խուսափելու դեպքում վաղեմության ժամկետը կասեցվում է, ընդ որում նա չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքն ավարտվելու օրվանից անցել է 15 տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտվելու օրվանից՝ 25 տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ: **Հարկ է նշել, որ այս պարագայում առկա է որոշակի խնդիր, քանի որ կասեցվում է արդեն իսկ բնականոն հոսքը դադարեցված վաղեմության ժամկետը, և գուտ լեզվատրամաբանական իմաստով կարող են առաջանալ անհարթություններ, սակայն պետք է նկատել, որ վաղեմության ժամկետի կասեցումը նոր իրավակարգավորմամբ հենց վերաբերում է այն իրավիճակներին, երբ վաղեմության ժամկետի բնականոն հոսքը դադարեցվել է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու պահից, որից հետո անձը խուսափում է քննությունից:** Այս դեպքում օրենսդիրը որոշակի ներողամտություն է դրսևորում հանցանք կատարած և քննությունից խուսափող անձի նկատմամբ, սակայն սահմանելով ավելի երկար (խիստ) վաղեմության կասեցման ժամկետներ, որպիսի պարագայում, եթե անձը նշված ժամկետների ընթացքում չի կատարում նոր հանցանք, դրանց ավարտից հետո վերջինս ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Այս առումով հատկապես խնդրահարույց է 83-րդ հոդվածի 7-րդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ (...) **Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղադրանքով նրա ներկայանալու պահից:** (...): Նշված իրավակարգավորումն անհիմն է, և, իմ կարծիքով, այն պետք է հանվի

<sup>17</sup> St' u **Тарбараев А.** Что считать уклонением от следствия и суда, приостанавливающим течение срока давности, предусмотренного ст. 78 УК РФ? // Уголовное право. 2008, № 4: Доступ из СПС «КосультантПлюс».

նշված հոդվածի շարադրանքից, քանի որ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու պահից վաղեմության ժամկետն այլևս չի հաշվարկվում, այն դադարեցվում է, հետևաբար՝ դրա վերսկսման վերաբերյալ դրույթն անառարկայական է: Ինչ վերաբերում է այս համատեքստում վաղեմության ժամկետի կասեցման նպատակահարմարությանը, ապա, ինչպես նշվեց, սա վերաբերելի է այն իրավիճակներին, երբ անձի նկատմամբ հարուցվում է քրեական հետապնդում, և վերջինս խուսափում է քննությունից, իսկ վաղեմության ժամկետի կասեցումն այս պարագայում հնարավորություն է ընձեռում անձին ազատվելու քրեական պատասխանատվությունից օրենքով նախատեսված ավելի երկար ժամկետներն անցնելուց հետո:

**ТИГРАН СИМОНЯН – *Некоторые вопросы института освобождения от уголовной ответственности в связи с истечением сроков давности.*** – Институт освобождения от уголовной ответственности в связи с истечением сроков давности неоднократно обсуждался в различных теоретических источниках и комментариях, однако в отношении многих связанных с ним вопросов в теории и правоприменительной практике отсутствует единый подход.

Рассматривая точку зрения о том, что *«из-за длительного времени, прошедшего после совершения преступления, существенно затрудняется расследование, доказательства теряют силу, информация в памяти свидетелей и потерпевших искажается или забывается»*, следует отметить, что с развитием современных информационных технологий, включая искусственный интеллект, средства видеозаписи, новые системы и механизмы обнаружения и фиксации доказательств, данный подход не выдерживает никакой критики. Доказательства совершения преступления могут сохраняться в течение очень длительного времени, что способствует эффективному ведению уголовного процесса.

В случае совершения одного и того же преступления один человек может понести длительное лишение свободы, возместить причиненный ущерб, пройти множество реабилитационных программ, а другой — просто *«ничего не делать»* в течение определенного срока и избежать уголовной ответственности.

Было отмечено, что некоторые проявления этого института являются ничем иным, как частными случаями *«прокурорского правосудия»*, в условиях которых необходимо внести соответствующие законодательные изменения, предусматривающие, что любое решение об освобождении от уголовной ответственности должно приниматься (утверждаться) судом.

Автор пришел к выводу, что институт освобождения от уголовной ответственности в связи с истечением сроков давности утратил актуальность, и в процессе развития и совершенствования уголовного законодательства возможность освобождения лица от ответственности по этому основанию должна быть исключена.

Также было указано, что особенно проблемной является часть 7 статьи 83, согласно которой *«в этом случае течение давности возобновляется с момента задержания лица или его явки с повинной»*. Данное правовое регулирование необоснованно, и, по мнению автора, должно быть исключено из текста указанной статьи, поскольку с момента вынесения решения о возбуждении уголовного преследования срок давности больше не исчисляется, следовательно, положение о его возобновлении несостоятельно.

**Ключевые слова:** освобождение от уголовной ответственности, срок исковой давности, пропуск срока исковой давности, истечение срока исковой давности, перерыв течения

*срока исковой давности, приостановление течения срока исковой давности, возобновление утраты доказательств, нецелесообразность привлечения к уголовной ответственности.*

**TIGRAN SIMONYAN – Some Issues Concerning the Institute of Exemption from Criminal Liability Due to the Expiration of the Limitation Period.**— The institution of exemption from criminal liability due to the expiration of the statute of limitations has been repeatedly discussed in various theoretical sources and commentaries. However, regarding many related issues, there is no unified approach in either legal theory or judicial practice.

When examining the viewpoint that *"due to the long time elapsed after the commission of a crime, the investigation becomes significantly more difficult, evidence loses its validity, and information in the memory of witnesses and victims becomes distorted or forgotten,"* it should be noted that with the advancement of modern information technologies—including artificial intelligence, video recording tools, new systems, and mechanisms for detecting and preserving evidence—this approach cannot withstand any criticism. Evidence of a crime can now be preserved for a very long time, which facilitates the effective conduct of legal proceedings.

In cases involving the same crime, one individual may face long-term imprisonment, compensate for damages, and undergo numerous rehabilitation programs, while another may simply *"do nothing"* for a certain period and avoid criminal liability altogether.

It has been noted that some manifestations of this institution are nothing more than instances of *"prosecutorial justice,"* under which it is necessary to implement corresponding legislative amendments requiring that any decision to exempt a person from criminal liability must be made (approved) by a court.

The author concluded that the institution of exemption from criminal liability due to the expiration of the statute of limitations is outdated. As criminal legislation evolves and improves, the possibility of exempting individuals from liability on these grounds should be eliminated.

Additionally, it was pointed out that particularly problematic is Part 7 of Article 83, which states that *"in this case, the statute of limitations resumes from the moment the person is detained or voluntarily surrenders."* This legal provision is unjustified and, in the author's opinion, should be removed from the text of the said article. Since the statute of limitations ceases to run once a decision to initiate criminal prosecution is made, the provision on its resumption is untenable.

**Key words:** *release from criminal liability, statute of limitations, statute of limitations passing, statute of limitations expiration, interruption of statute of limitations, suspension of statute of limitations, resumption of loss of evidence, inexpediency of criminal liability.*

## References

- Hayastani Hanrapetut'yan qreakan iravunk': Endhanur mas (vets'erord hratakut'yown — p'vokhchanowt'yownnerov ev lrac'ownnerov) / S. Arakelyan, A. Gabuzian, H. Khach'ikyan ev urishk'.— Er.: EPH hrat., 2011, ej 477.
- Alikperov X. Osvobozhdenie ot ugovnoyi otvetstvennosti v svyazi s istecheniem srokov davnosti // Zakonnost'. 1999, № 8, s. 13.
- Endol'tseva A.V. Osvobozhdenie ot ugovnogo presledovaniia: ot teoreticheskikh rassuzhdenii k de lege ferenda // Vestnik Moskovskogo universiteta MVD Rossii. 2016, № 6, s. 57.
- Kommentarii k Ugovnomu kodeksu Rossiiskoi Federatsii. Pod red. A.V. Naumova. M., 1996, s. 331.
- Mal'tsev V. Osvobozhdenie ot ugovnoi otvetstvennosti v svyazi s istecheniem srokov davnosti // Ugolovnoe pravo. 2006, № 1.
- Savel'eva V.S. Osvobozhdenie ot ugovnoi otvetstvennosti // Ugolovnoe pravo Rossiiskoi Federatsii. Obshchaia chast'. M., 1996, s. 435–436.
- Sverchkov V.V. Osvobozhdenie ot ugovnoi otvetstvennosti v svyazi s istecheniem srokov davnosti // Zhurnal rossiiskogo prava. 2000, № 2, s. 89.

Tarbagayev A. Chto schitat' ukloneniem ot sledstviia i suda, priiostanavlivaiushchim techenie sroka davnosti, predusmotrennogo st. 78 UK RF? // Uголовное право. 2008, № 4: Dostup iz SPS "Konsul'tantPlius".

Tkachevskii Iu.M. Osvobozhdenie ot uголовnoi otvetstvennosti // Kurs uголовного права. Т. 2: Obshchaia chast'. М., 2002, s. 192.

Uголовное право. Obshchaia chast'. М., 2008, s. 605.

Shirokov K.S. Problemy istecheniia srokov davnosti v uголовnom prave Rossii // Mirovoi sud'ia. 2006, № 9.

<https://crimescience.ru/wp-content/uploads/2020/05/Уголовный-Кодекс-КНП-2-е-издание-2021.pdf>

<https://cyberleninka.ru/article/n/problem-y-osvobozhdeniya-ot-ugolovnoy-otvetstvennosti-v-svyazi-s-istecheniem-srokov-davnosti>

<https://ihl-databases.icrc.org/en/national-practice/penal-code-1974-0>

<https://www.investopedia.com/terms/s/statute-of-limitations.asp>

## ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՄԱՆ «ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ»

ԳԵՎՈՐԳ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ 

*Երևանի պետական համալսարան*

Հռովաձը նվիրված է քրեական հետապնդման՝ որպես քրեադատավարական երևույթի էությանը: Դրանում հեղինակը նախ ներկայացնում է «քրեական հետապնդում» օրենսդրական հասկացության ձևավորման պատմությունն ու դրա վրա նշանակալի ազդեցություն ունեցած տեսական բանավեճերը, ապա քննարկման առարկա է դարձնում քրեական հետապնդման՝ որպես ինքնուրույն դատավարական գործառույթի գոյության հարցը:

Մասնավորապես, քրեադատավարական գործառույթի հիմնական հատկանիշների համատեքստում վերլուծելով քրեական հետապնդման բովանդակությանը վերագրվող դատավարական գործողությունները՝ հեղինակը փաստում է, որ դրանք իրականում կազմում են դատավարական գործունեության այլ ուղղությունների բովանդակությունը, հետևաբար՝ քրեական հետապնդումն ինքնուրույն գործունեություն, դրա տեսակ կամ ուղղություն չէ: Այնուհետև, հարցը դիտարկելով արդար դատաքննության իրավունքի համատեքստում և փաստելով, որ հանրային քրեադատավարական գործունեությունն իրականացվում է օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու նպատակով և առանց մեղադրական ուղղվածության՝ հեղինակը նաև բացառում է, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատելն ու նրա քրեական պատասխանատվությունն ապահովելը կարող են վարույթի որևէ մասնակցի առաքելություն լինել:

Վերլուծության արդյունքում հեղինակը հանգում է հետևության, որ քրեական հետապնդումը ոչ թե դատավարական գործառույթ է, այլ քննության, դրա կազմակերպման և դրա նկատմամբ հսկողության գործառույթների իրացման արդյունքում ձևավորված դատավարական հարաբերությունների վիճակ, որն արտահայտում է քրեական վարույթին առերևույթ հանցանք կատարած անձի մասնակցությունը: Հեղինակի պնդմամբ, քրեական հետապնդումն ի հայտ է գալիս այն հարուցելու մասին որոշում կայացնելու պահից և ոչ թե իրականացվում է, այլ շարունակում է գոյութ-

\* **Գևորգ Բաղդասարյան** – իրավագիտության թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական

**Геворг Багдасарян** – кандидат юридических наук, преподаватель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, государственный советник юстиции третьего класса

**Gevorg Baghdasaryan** – Candidate of Legal Sciences, Lecturer at YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, State Councilor of Justice of the Third Class

Էլ. փոստ՝ [baghdasaryangevorg001@gmail.com](mailto:baghdasaryangevorg001@gmail.com) ORCID ID: <https://orcid.org/0000-0002-6407-6253>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 11.07.2025

Գրախոսվել է՝ 26.11.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

յուն ունենալ հարուցված լինելու և դադարեցված չլինելու ուժով՝ անկախ այդ ընթացքում անձի մեղքն ապացուցելուն ուղղված որևէ գործողություն կատարելուց կամ չկատարելուց, շարունակում է առկա լինել ընդհուպ այն դեպքում, երբ կատարվում են մեղադրյալի մեղավորությունը հերքելուն ուղղված գործողություններ:

**Բանալի բառեր** – *քրեական հետապնդում, մեղադրանք, գործառույթ, նախաքննություն, հսկողություն, քննիչ, դատախազ, գործունեության ուղղություն*

## 1. Ներածություն

«Քրեական հետապնդում» քրեադատավարական հասկացությունն իմաստավորում է քրեական վարույթին առերևույթ հանցանք կատարած անձի մասնակցությունը՝ նրա կողմից հանցանք կատարելու մասին վկայող տվյալների առկայությունն ու այդ փաստի պաշտոնական դատավարական ամրագրումը: Դրանից բխում է, որ քրեական հետապնդումը, որպես դատավարական երևույթ, արտահայտում է առերևույթ հանցանք կատարած անձի և պետության միջև ծագող քրեաիրավական հարաբերությունների դատավարական կողմը: Քրեական հետապնդումն այս տեսանկյունից քրեադատավարական գործունեության առանցքն է, դրա իմաստն այնքանով, որքանով քրեական վարույթը, մեծ հաշվով, իրականացվում է առերևույթ հանցանք կատարած անձի քրեական հետապնդմանը հասնելու նպատակով, իսկ հասնելուց հետո՝ դրա շուրջ:

Թեև, վերոգրյալով պայմանավորված, քրեական հետապնդումը միշտ գտնվել է տեսաբանների ուշադրության կենտրոնում, բայց մինչ օրս այդ երևույթի էության վերաբերյալ միասնական մոտեցում չկա: Բանն այն է, որ քրեական հետապնդումը բազմաշերտ և բարդ, քրեադատավարական գործունեության գրեթե բոլոր բաղադրիչների հետ փոխկապակցված երևույթ է, որի տարբեր ասպեկտները դրա տարբեր ընկալումների տեղիք իրականում տալիս են: Այդ երևույթի էության և բովանդակության ճշգրիտ բացահայտումը, սակայն, ոչ միայն տեսական, այլ նաև առանցքային գործնական նշանակություն ունի: Թեև կարող է թվալ, թե «ինչ է քրեական հետապնդումը» հարցի պատասխանը պետք է հետաքրքրի ավելի շատ տեսաբաններին, բայց դրա էության ճիշտ ընկալումից է կախված այնպիսի զուտ գործնական հարցերի ճիշտ լուծումը, ինչպիսին, օրինակ, փաստացի քրեական հետապնդումն է: Ավելին, քրեադատավարական հարաբերություններում առանցքային դեր ունեցող այդ դատավարական երևույթի տարբեր ասպեկտները նաև որոշիչ տիպաբանական նշանակություն ունեն քրեական վարույթի համար:

## 2. Քրեական հետապնդման նորմատիվ և տեսական ընկալումները

### 2.1. «Քրեական հետապնդում» օրենսդրական հասկացությունը:

#### *Պատմական ակնարկ*

Քրեական հետապնդման առաջին նորմատիվ հիշատակությունը 1864 թ. «Քրեական դատավարության կանոնադրության» մեջ էր, որն այդ հասկացությո-

յունն օգտագործում էր միայն մեկ անգամ՝ դրա և բազմիցս կիրառվող «դատական հետապնդում», «քրեական հայց հարուցել», «հետապնդում իրականացնել» եզրույթների ներքո նկատի ունենալով առերևույթ հանցանք կատարած անձին դատի տալը: Դասական իմաստով չհամապատասխանելով հանդերձ քրեական հետապնդման ժամանակակից ընկալմանը՝ այդ հասկացության այդպիսի գործածությունն արտահայտում էր դրա գլխավոր՝ անձին պաշտոնապես մեղադրելու բաղադրիչը՝ ընդգծելով քրեական հետապնդման անձնավորված բնույթը: Ի. Յա. Ֆոյնիցկին այս կապակցությամբ գրում էր. «Գործող օրենսդրության իմաստով քրեական հետապնդում հարուցելը բաղկացած է երկու դատավարական ակտերից՝ մեղադրանքը դատարան ներկայացնելը և դատարանի կողմից այն ընդունելը: Դատախազի կողմից իրավասու դատարան ներկայացված և իրավական պահանջներին բավարարող ցանկացած մեղադրանք վերջինիս կողմից պետք է ընդունվի՝ դրա արդյունքում դատարան ներգրավելով տվյալ անձին որպես մեղադրյալ: Քրեական հետապնդում հարուցելը չի կարելի նույնացնել դատական կարգով վարույթ սկսելու հետ, քանի որ գործ սկսելը դատական, իսկ քրեական հետապնդում հարուցելը՝ մեղադրական ակտ է: Երբեմն դատական կարգով գործ կարող է սկսվել նաև մեղադրանքի բացակայությամբ, օրինակ՝ հրդեհի պատճառը պարզելու համար»<sup>1</sup>:

ԽՍՀՄ 1923 թ. քրեադատավարական օրենսդրության մեջ «քրեական հետապնդում» հասկացության գործածությունը շատ ավելի մոտ էր դրա ժամանակակից ընկալումներին և՛ իմաստային, և՛ եզրութաբանական տեսանկյունից: Միաժամանակ, օրենսգրքի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ևս քննարկվող հասկացության հիմնավորված և հետևողական գործածությամբ աչքի չէր ընկնում: Օրինակ, 9-րդ հոդվածում սահմանելով, որ «դատախազությունը պարտավոր է դատական և քննչական մարմինների առջ քրեական հետապնդում հարուցել պատժի ենթակա ցանկացած հանցագործության դեպքում» կամ «Քրեական գործով վարույթ հարուցելը վերտառությամբ» գլխում ներառված 93-րդ հոդվածում սահմանելով, որ «գրավոր հաղորդումները պետք է ստորագրված լինեն դրա հեղինակի կողմից, իսկ անանուն հաղորդումները քրեական հետապնդում հարուցելու հիմք կարող են հանդիսանալ միայն հետաքննության մարմնի կողմից նախնական գաղտնի ստուգումից հետո», նշված օրենսգիրքը քրեական հետապնդումը նույնացնում էր քրեական վարույթի հետ:

1961 թ. ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդհանրապես չէր հիշատակում «քրեական հետապնդում» հասկացությունը և առերևույթ հանցանք կատարած անձի և պետության միջև քրեադատավարական հարաբերությունների ծագումն իմաստավորում էր «որպես մեղադրյալ քրեական պատասխանատվության կանչել» եզրույթով, իսկ մեղադրյալի դատավարական կարգավիճակի դադարումը կապում էր քրեական գործի վարույթն այդ անձի

<sup>1</sup> Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. В 2 т. Т. 2. СПб., 1996, с. 10.

վերաբերյալ մասով կարճելու հետ: Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները ևս 1961 թ. քրեադատավարական օրենքով սահմանված էին որպես քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ, բայց հարցի կոնկրետ իրավակարգավորումներից ակնհայտ էր, որ դրանք վերաբերում էին անձի նկատմամբ քրեական հետապնդմանը:

1998 թ. քրեական դատավարության օրենսգիրքը խորացրեց քրեական հետապնդման ոչ միաթեք ընկալման խնդիրը՝ չապահովելով կիրառվող «քրեական հետապնդում», «քրեական հետապնդման հարուցում», «քրեական հետապնդում իրականացնել» փոխկապակցված հասկացությունների իմաստային համապատասխանությունը: Օրենսգիրքը «քրեական հետապնդում» հասկացության ներքո նկատի ունեւր «այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը»: Նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 18-րդ կետը քրեական հետապնդման հարուցում էր համարում քրեական հետապնդման մարմնի որոշումն անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին: Թեև Օրենսգիրքն առանձին չէր սահմանել «քրեական հետապնդում իրականացնել» եզրույթը, բայց դրա կիրառությունից ակնհայտ էր, որ այն նույնացվում է «քրեական հետապնդում» հասկացության հետ, որը փաստորեն իմաստավորում էր հենց որոշակի դատավարական գործընթաց, գործունեություն:

Այսպիսի կարգավորմամբ նշված օրենսգիրքը մի կողմից քրեական հետապնդում հարուցելը հնարավոր էր համարել միայն կոնկրետ անձի նկատմամբ՝ մյուս կողմից քրեական հետապնդում, դրա իրականացում համարելով նաև հանցանք կատարած անձին բացահայտելու նպատակով, այսինքն՝ ակնհայտորեն նախքան նրան բացահայտելը կատարվող դատավարական գործողությունները, ինչից ստացվում էր, որ քրեական հետապնդումն իրականացվում էր նաև դեռևս հարուցված չլինելու պայմաններում:

## **2.2. «Քրեական հետապնդում» հասկացության շուրջ տեսական բանավեճերը**

Քրեական հետապնդման՝ որպես գործունեության տեսակի կամ ուղղության ընկալումն ընդունված էր նաև տեսության մեջ: Մ. Ս. Ստրոգովիչը, քրեական հետապնդումը նույնացնելով մեղադրանքի գործառույթի հետ, այն բնորոշում էր որպես «մեղադրական գործունեություն, դատավարական գործողությո-

յունների համակցություն, որն ուղղված է որպես մեղադրյալ ներգրավված անձին հանցանք կատարելու մեջ մերկացնելուն և նրա նկատմամբ պատժի կիրառումն ապահովելուն»<sup>2</sup>:

«Քրեական հետապնդում» հասկացությունն անցել է զարգացման բավականին երկար ու բարդ ճանապարհ, շարունակել ընկալվել որպես գործունեություն, դիտվել որպես քրեադատավարական գործառույթ, իսկ տարբեր հեղինակների կողմից առաջարկված դրա բնորոշումներում առկա տարբերությունները հիմնականում պայմանավորված են եղել այդ երևույթի տարբեր ապեկտների, դրա առանձին վիճահարույց հարցերի վերաբերյալ տարբեր մոտեցումներով: Ընդ որում, թեև ինչպես այդ հիմնահարցերն ինքնին, այնպես էլ դրանց վերաբերյալ առանձին տեսակետները բավականին զրավիչ են քննարկման և, ինչու չէ, քննադատության համար, բայց դրանք ներկայացնում ենք այնքանով, որքանով նշանակություն ունեն սույն հետազոտության նպատակների տեսանկյունից:

Քրեական հետապնդման հետ կապված թերևս առաջին ու միաժամանակ ամենանշանավոր հիմնահարցը, որն իսկապես զգալի նշանակություն է ունեցել քննարկվող երևույթի էությունը բացահայտելու և այդ հասկացության ձևավորման համար, քրեական հետապնդման սկզբի կամ դրա «անձնավորվածության» հարցն է: Հիմնախնդրի վերաբերյալ առաջին մոտեցման հիմնական ներկայացուցիչը Մ. Ա. Չելցովն էր, ով, նախ համոզմունք հայտնելով, որ «քրեական հետապնդում կարող է իրականացվել ոչ միայն արդեն անհատականացված մեղադրյալի, այլ նաև քրեական գործ հարուցելու պահին դեռևս անհայտ անձի նկատմամբ՝ ապագայում նրան պարզելու պայմանով»<sup>3</sup>, ավելի ուշ պնդում էր, որ «քրեական հետապնդում կարող է իրականացվել նաև հանցագործության փաստի առթիվ»<sup>4</sup>: Այս մոտեցումն իր կենսունակությունը պահպանել է մինչև վերջերս՝ ակտիվորեն արտահայտվելով Ջ. Դ. Ենիկենի<sup>5</sup>, Օ. Յա. Բանի<sup>6</sup> և այլոց հետազոտություններում, թեև միշտ ավելի ընդունված է եղել հակառակ մոտեցումը:

Իսկ հակառակ մոտեցումն այն մասին էր, որ քրեական հետապնդում կարող է հարուցվել և իրականացվել միայն կոնկրետ անձի նկատմամբ, և որ առաջին մոտեցումը քրեական հետապնդում հարուցելը նույնացնում է քրեական գործ հարուցելու հետ: Մ. Ա. Ստրոգովիչն այս պնդումը բացատրում էր նրանով, որ «քրեական հետապնդում հասկացությունն ընդգծում է այդ գործու-

<sup>2</sup> Строгович М.С. Курс советского уголовного процесса. В 2 т. Т. 1. М., 1968, с. 190.

<sup>3</sup> Чельцов М.А. Возбуждение уголовного преследования и процессуальное положение следователя // Социалистическая законность. 1937, № 3, с. 28.

<sup>4</sup> Чельцов М.А. Советский уголовный процесс. М., 1951, с. 88-89.

<sup>5</sup> St' u Еникеев З.Д. Актуальные вопросы уголовного преследования в свете судебно-правовой реформы // Правоведение. 1995, № 4-5, էջ 86:

<sup>6</sup> St' u Баев О.Я. Прокурор как субъект уголовного преследования. М., 2006, էջ 31:

նեության մեղադրական բնույթը, իսկ հանցագործություն կատարելու մեջ մեղադրել կարելի է միայն կոնկրետ անձի, ով ունի մեղադրյալի դատավարական կարգավիճակ»<sup>7</sup>: Մի շարք դատավարագետներ էլ, ընդունելով հանդերձ այս մոտեցման հիմքում ընկած գաղափարը, գտնում էին, որ «քրեական հետապնդումը կարող է իրականացվել ոչ միայն մեղադրյալի նկատմամբ ու մեղադրանքի ձևով, այլև կարող է սկսվել ավելի վաղ և իրականացվել անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու, ձեռքարկման, խափանման միջոց ընտրելու, քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացնող հիմքով դադարեցնելու, բժշկական հարկադրանքի վարույթ իրականացնելու ձևով»<sup>8</sup>: Հենց այս համատեքստում վեճերի առարկա էր նաև «քրեական հետապնդում» և «մեղադրանք» հասկացությունների հարաբերակցության և դրա հետ փոխկապակցված՝ քրեական հետապնդումը մեղադրանքի կամ մեղադրական գործառույթ անվանելու հարցը<sup>9</sup>:

Տեսության մեջ միշտ վիճելի է եղել նաև քրեական հետապնդման սուբյեկտների շրջանակի հարցը: Այս կապակցությամբ բազմաթիվ մոտեցումների մեջ սույն հետազոտության նպատակների տեսանկյունից ուշագրավ է քննիչին մեղադրանքի կողմի սուբյեկտների շրջանակից բացառելու և քրեական հետապնդումը նրա միայն լրացուցիչ գործառույթ դիտելու մասին Ա. Թաթոյանի առաջարկությունը<sup>10</sup>:

Քրեական հետապնդման այս և այլ ասպեկտների վերաբերյալ տարբեր մոտեցումների վրա հիմնված ու հետևաբար միմյանցից զգալի տարբերություններ ունեցող, միմյանց հեքքող կամ լրացնող՝ դրա բնորոշումների անվիճելի ընդհանրությունն այն է, որ դրանցում քրեական հետապնդումը դիտվում է որպես *որոշակի սուբյեկտների կողմից որոշակի նպատակով իրականացվող գործունեություն՝ գործառույթ*, ընդ որում՝ դրանում չառանձնացնելով քրեական հետապնդում հարուցելն ու այն իրականացնելը: Որպես այդպիսին՝ քրեական հետապնդումն առավել համապարփակ բնորոշել է Գ. Ս. Ղազինյանը՝ նշելով, որ «քրեական հետապնդումը՝ որպես օրենքով հատուկ լիազորված պաշտոնատար անձանց գործունեություն, որին իրենց իրավասության շրջանակներում մասնակցելու իրավունք ունեն տուժողը և նրա ներկայացուցիչներ

<sup>7</sup> Строгович М.С. Курс советского уголовного процесса. Т. 1. М., 1968, с. 194-195.

<sup>8</sup> Зеленецкий В.С. Функциональная структура прокурорской деятельности. Харьков, 1978, էջ 25-26; Соловьев А.Б. Уголовное преследование и прокурорский надзор в досудебных стадиях судопроизводства// Прокурорская и следственная практика. 1997, № 3, с. 91-92; Кан М.П. Процессуальные функции прокурора в досудебных стадиях уголовного судопроизводства. Дис. ... канд. юрид. наук: Ташкент, 1988, с. 100.

<sup>9</sup> Տե՛ս Կ. Թադջիև Խ.Ս. Прокурорский надзор и ведомственный контроль за расследованием преступлений. Ташкент, 1985, էջ 27:

<sup>10</sup> Տե՛ս Կ. Թաթոյան Ա. Процессуальная функция уголовного преследования и ее соотношение с расследованием дела // Պետություն և իրավունք, 2(72), 2016, էջ 99-101:

րը, ուղղված է կատարված հանցագործության համար պատժի անխուսափելիության ապահովմանը և իրացվում է հանցագործությունը քննելիս կոնկրետ անձի դեմ քրեական գործ հարուցելու, նրա ձերբակալման, նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու, նրան մերկացնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու, կասկածյալների և մեղադրյալների սահմանադրական իրավունքները սահմանափակող դատավարական գործողություններ կատարելու, մեղադրական եզրակացություն կազմելու, արդարադատություն իրականացնելու համար գործը դատարան հանձնելու և դատարանում մեղադրանքը պաշտպանելու ճանապարհով»<sup>11</sup>:

Քրեական հետապնդման էությունը բացարձակապես այլ կերպ էր պատկերացնում Վ. Գ. Դանը, ով այն բնորոշում էր որպես «պետության և մեղադրյալի միջև առաջացող հատուկ հարաբերություն» և պնդում, որ «սովետական քրեական դատավարությունում չեն կարող լինել մեղադրանքի գործառույթի կրողներ, և համապատասխանաբար, գոյություն չի կարող ունենալ մեղադրանքի գործառույթ՝ որպես քրեադատավարական գործունեության որևէ մասնակցի հատուկ դեր և կոչում»: Հեղինակն անհնար էր համարում «դատախազին միայն մեղադրական գործունեություն վերագրելն այն դեպքում, երբ նա ունի քրեական վարություն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության առաքելություն՝ որպես ընդհանուր հսկողության գործառույթի մաս»<sup>12</sup>: Այս մոտեցումը հավանության չարժանացավ ու չգարգացավ, հակառակը՝ ակտիվորեն քննադատվեց քրեական հետապնդման գործառույթի գոյությունը հիմնավորող հեղինակների կողմից<sup>13</sup>: Այդ քննադատությունները, սակայն, մեր համոզմամբ, անարդարացիորեն հաշվի չէին առնում իհարկե ոչ ամբողջությամբ ընդունելի այդ մոտեցման հիմքում ընկած խորը փիլիսոփայությունը, որի որոշակի տարրեր շոշափվում են նաև քննիչին քրեական հետապնդման մարմինների շարքից բացառելու վերաբերյալ մոտեցման հիմքում:

### 3. Քրեական հետապնդման՝ որպես գործառույթի մերժումը

Տեսության մեջ տարածված է այն մոտեցումը, որ քրեական հետապնդման կամ մեղադրանքի գործառույթի առանձնացումը կապված է մինչդատական վարույթի մրցակցայնացման հետ և արտահայտում է այդ փուլում մրցակցության կառուցակարգի առկայությունը, որի բաղադրիչներից մեկը տարանջատված և հակադիր սուբյեկտների վերապահված մեղադրանքի և պաշտպանության գործառույթների առկայությունն է<sup>14</sup>: Բայց քրեական հետապնդման վերաբերյալ հասկապես խորհրդային շրջանի մոտեցումներից տպավորություն է,

<sup>11</sup> Ղազինյան Գ.Ս. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 2001, էջ 280-281:

<sup>12</sup> Даев В.Г. Обвинение в советском уголовном процессе // Правоведение. 1970, № I, с. 78.

<sup>13</sup> Ст'ю Альперт С.А. Обвинение в советском уголовном процессе. Харьков, 1974, էջ 23:

<sup>14</sup> Ст'ю, օրինակ, Татоян А. Процессуальная функция уголовного преследования и ее соотношение с расследованием дела // Պետություն և իրավունք, 2(72), 2016, էջ 95-99:

որ դրա՝ որպես գործառույթի ընկալումն զգալիորեն պայմանավորված էր և այժմ էլ ինտեգրիտն կերպով պայմանավորված է նաև քննիչի և դատախազի՝ քրեական վարույթում հատկապես մեղադրական դերակատարում ունենալու և հանցանքը մեղադրյալի կողմից կատարված լինելու վերաբերյալ մինչդատական համոզմունքի «վերջնականության» մասին պատկերացումներով: Մա, իհարկե, իր հերթին կապված էր խորհրդային քրեական դատավարությունում ընդունված՝ անձին մեղադրյալի կարգավիճակ տալու չափանիշի հետ: «Սոցիալիստական արդարությունը» պահանջում էր անձին հանցանք կատարելու մեջ մեղադրել միայն ծանրակշիռ ապացույցների հիման վրա, որի պայմաններում գուցե կարող էր կանխակալ համոզմունք ձևավորվել այդ մեղադրանքի այն աստիճան ճշմարտացիության մասին, որ դրա ամեն գնով հաստատումն առանձին սուբյեկտների գործառույթ հանդիսանար:

Ըստ էության, այս մոտեցման վրա էր հիմնված 1998 թ. քրեական դատավարության օրենսգիրքը, որը ոչ միայն քրեական հետապնդումը դիտում էր որպես գործունեության ինքնուրույն ուղղություն, այլ նաև առանձնացնում էր այն իրականացնող մարմիններին՝ նրանց շարքը դասելով դատախազին, քննիչին և հետաքննության մարմնին: Ընդ որում, նախկին քրեադատավարական օրենքի կարգավորումները համաչափորեն արտահայտում էին քրեական հետապնդման՝ որպես գործառույթի առանձնացման կապը և՛ մինչդատական վարույթին մրցակցային ձև տալու ձգտման, և՛ դրա՝ որպես հատուկ մեղադրական ուղղվածություն ունեցող գործունեության ավանդական ընկալման հետ:

Գործող քրեական դատավարության օրենսգիրքը, որդեգրած գործառութային տարանջատման հայեցակարգին համապատասխան, սահմանել է վարույթի հանրային մասնակիցների պատասխանատվությունը՝ դատախազին պատասխանատու համարելով *քրեական հետապնդման հարուցման, չհարուցման և դադարեցման* իրավաչափության համար: Օրենսգիրքը, ի տարբերություն նախկինի, *քրեական հետապնդումը որպես գործունեություն* չի ձևակերպել և այն *իրականացնող մարմիններին* չի առանձնացրել, սահմանել է միայն *քրեական հետապնդում հարուցելու* բացատրությունը՝ այն ներկայացնելով ոչ թե որպես գործունեություն, այլ որպես եզակի վարութային ակտ՝ դատախազի կողմից անձի ենթադրյալ հանցավոր արարքը նկարագրող և դրա իրավական գնահատականը պարունակող որոշում կայացնելը կամ ենթադրյալ տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելը: Դրա հետ մեկտեղ՝ քրեական դատավարության օրենսգիրքը պահպանել է քրեական հետապնդման՝ որպես գործունեության ու գործառույթի մասին խոսելու հիմքերը՝ քրեական հետապնդման ձևերին վերաբերող 11-րդ և 12-րդ հոդվածներում սահմանելով, որ քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդումն *իրականացվում է* հանրային կամ մասնավոր կարգով՝ հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից ելնելով:

«Քրեադատավարական գործառույթ» հասկացության վերաբերյալ տեսության մեջ առկա են բազմաթիվ կարծիքներ, որոնք կարելի է խմբավորել երեք

հիմնական մոտեցումներում: Դրանցից առաջինը քննարկվող հասկացությունը ներկայացնում է որպես «դատավարական սուբյեկտի գործունեության ուղղություն, տեսակ»<sup>15</sup>: Երկրորդ մոտեցումը գործառույթի հասկացության մեջ ընդգծում է դատավարական սուբյեկտի դերակատարումն ու այն բնորոշում որպես «քրեական դատավարության սուբյեկտների հատուկ առաքելություն, դեր, որն արտահայտվում է քրեադատավարական գործունեության այս կամ այն կոնկրետ ուղղությունն իրացնելու ընթացքում»<sup>16</sup>: Երրորդ մոտեցումը, որն ըստ էության նախորդ երկուսի համադրությունն է, սահմանում է, որ «գործառույթը դատավարական սուբյեկտի դերով պայմանավորված նրա գործունեության ուղղությունն է»<sup>17</sup>: Փաստորեն, նշված բոլոր երեք մոտեցումներն էլ «քրեադատավարական գործառույթ» հասկացության մեջ շեշտադրում են այն իրացնող սուբյեկտի դատավարական դերն ու այդ դերն արտահայտող նրա գործունեությունը, ինչը ենթադրում է, որ քրեական հետապնդումը որպես քրեադատավարական գործառույթ դիտելու համար նախ պետք է հաստատել, որ այն ինքնուրույն գործունեություն է, և որ այդ գործունեությունը պայմանավորված է այն իրականացնող սուբյեկտի դերով, հանդիսանում է նրա առաքելությունը, քրեական վարույթին նրա մասնակցության իմաստը:

Եվ այսպես, տեսության մեջ ընդունված մոտեցման համաձայն՝ քրեական հետապնդումը՝ որպես գործունեության ուղղություն, ներառում է «կոնկրետ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելը, նրա մեղքը հաստատող ապացույցներ ձեռք բերելուն ուղղված քննչական գործողությունները, նրան կասկածյալի կարգավիճակ տալը, խափանման միջոց կիրառելը, մեղադրանք ներկայացնելը, այն հիմնավորելուն ուղղված քննչական գործողություններ կատարելը, դատարանում մեղադրանքը պաշտպանելը և այլն»<sup>18</sup>: Այն, որ հանրային քրեադատավարական գործունեության ընթացքում կատարվում են հանցագործության բոլոր հանգամանքները պարզելուն ուղղված ապացուցողական գործողություններ, և ձեռք բերված տվյալների հիման վրա կայացվում են հանցանքը կոնկրետ անձի կողմից կատարելու մասին համոզմունքն արտահայտող, նրա իրավական վիճակի վրա էապես ազդող, իրավունքներն ու ազատությունները սահմանափակող վարույթային ակտեր, իրականություն է: Բայց քրեական հետապնդման բովանդակությանը վերագրվող գործողույթ-

<sup>15</sup> **Строгович М.С.** Уголовное преследование в советском уголовном процессе. М., 1951, с. 65, **Ларин А. М.** Расследование по уголовному делу: процессуальные функции. М.: Юридическая литература, 1986, с. 5.

<sup>16</sup> **Элькинд П. С.** Цели и средства их достижения в советском уголовно-процессуальном праве. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1976, с. 46.

<sup>17</sup> Уголовно-процессуальное право Российской Федерации: Учебник / отв. ред. П. А. Лупинская. 2-е изд., перераб. и доп. М.: Норма, 2009, с. 97.

<sup>18</sup> **Халиулин А.Г.** Осуществление функции уголовного преследования прокуратурой России. Кемерово, 1997, էջ 47.

յունների շրջանակից ակնհայտ է, որ դրանք, իրականում, կազմում են դատավարական գործունեության այլ տեսակների՝ նախաքննության, դրա կազմակերպման ու ղեկավարման, դրա նկատմամբ դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության բովանդակությունը: Տարբեր ժամանակների քրեադատավարական օրենսգրքերի ուսումնասիրությունը թույլ չի տալիս առանձնացնել որևէ վարութային ակտ՝ գործողություն կամ որոշում, որը դատավարական գործունեության նշված ուղղությունների բաղադրիչ չէ և կարող է համարվել հենց հատկապես քրեական հետապնդման՝ որպես գործունեության ինքնուրույն տեսակի դրսևորում:

Անհրաժեշտ է նկատել, որ քրեական հետապնդումը որպես գործառույթ դիտարկող դատավարագետները այդ և դրան զուգահեռվող դատավարական այլ գործառույթների բովանդակությունների հարաբերակցությունը չեն հստակեցնում և չեն պարզաբանում, թե որտեղ է ավարտվում կոնկրետ սուբյեկտի քրեական հետապնդման գործառույթը, ու սկսվում մյուսը, օրինակ՝ դատախազի հսկողության կամ քննիչի քննության գործառույթը, քննիչի կամ դատախազի ո՞ր լիազորություններն են պատկանում քրեական հետապնդման, և որո՞նք՝ նրանց մյուս գործառույթների բովանդակությանը:

Այս համատեքստում ընդունելի չենք համարում Մ. Ս. Ստրոգովիչի մոտեցումն այն մասին, որ «նախաքննությունը, առհասարակ, ոչ թե դատավարական գործառույթ է, այլ վարույթի փուլ»<sup>19</sup>: Պնդելով, որ քրեական հետապնդման գործառույթի բովանդակությունն են կազմում «քննչական մարմինների և դատախազության գործողությունները՝ ուղղված մեղադրյալին մերկացնող կամ մեղքը ծանրացնող հանգամանքները հաստատող ապացույցներ հավաքելուն, հարկադրանքի միջոցներ կիրառելը, ինչպես նաև մեղադրանքը և պատժի անհրաժեշտությունը դատարանում հիմնավորելուն ուղղված գործողությունները»<sup>20</sup>, մեծանուն դատավարագետը չէր բացատրում, թե ուրեմն իր որ գործառույթն է իրացնում քննիչը, օրինակ՝ վերացնելով կիրառված հարկադրանքի միջոցը, բավարարելով մեղադրյալի միջնորդությունն ու նրա իսկ հարուցած կասկածների հիման վրա նշանակելով կրկնակի փորձաքննություն կամ կատարելով այս կամ այն քննչական գործողությունը, որի արդյունքում ակնհայտորեն ստացվելու է մեղադրանքը ոչ թե հաստատող, այլ այն հերքող ապացույց, եթե նախաքննությունը գործառույթ չէ<sup>21</sup>:

Նույն կերպ, Ա. Թաթոյանը, մեր համոզմամբ, իրավացիորեն մերժելով քննիչին որպես քրեական հետապնդման մարմին դիտելու մոտեցումը և քննությունը համարելով քննիչի հիմնական, իսկ քրեական հետապնդումը՝

<sup>19</sup> Строгович М.С. Курс советского уголовного процесса. Т. 1. М., 1968, с. 184.

<sup>20</sup> Строгович М.С. Уголовное преследование в советском уголовном процессе. М., 1951, էջ 65.

<sup>21</sup> Այս մոտեցումը, իհարկե, չի հերքում, որ նախաքննությունը մեկ այլ իմաստով քրեական վարույթի փուլ է, որի ընթացքում էլ իրացվում է քննիչի քննության գործառույթը:

լրացուցիչ գործառնությ, դարձյալ չի հստակեցնում այդ սուբյեկտի երկու գործառնութնների սահմանը, չի առանձնացնում, թե քննիչի ո՞ր գործողությունն է կազմում քննության, և ո՞րը՝ քրեական հետապնդման գործառնութի բովանդակությունը:

Իսկ իրականում, քրեական վարույթի ընթացքում կատարվող ապացուցողական գործողություններն ու այլ վարութային ակտերը, անկախ նրանից՝ կատարվում են դրանք հանցանք կատարած անձի ի հայտ գալուց առաջ և նրան ի հայտ բերելու նպատակով, թե դրանից հետո, կազմում են նախաքննության, դրա կազմակերպման, ղեկավարման, դրա նկատմամբ դատախազական հսկողության կամ մեղադրանքի պաշտպանության բովանդակությունը, ինչն ուղղակիորեն նշանակում է, որ քրեական հետապնդումն ինքնուրույն բովանդակություն ունեցող գործունեություն կամ գործունեության ինքնուրույն տեսակ համարվել չի կարող: Քրեական վարությունը չկա դատավարական գործողությունների ու որոշումների համակցություն, որը քրեական հետապնդում իրականացնելն է և միաժամանակ նախաքննությունը, դրա կազմակերպումը, դրա նկատմամբ հսկողությունը կամ մեղադրանքի պաշտպանությունը չէ:

Ինչ վերաբերում է *քրեական հետապնդում հարուցելուն*, որը, ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն, ՀՀ դատախազության բացառիկ լիազորությունն է, ապա այն առերևույթ հանցանք կատարած անձին պաշտոնապես քրեական վարութին ներգրավելն է՝ քրեական հետապնդման գոյության ազդարարումը, որը կատարվում է եզակի վարութային ակտով, չի հանդիսանում գործունեություն, առավել ևս՝ այնպիսի գործունեություն, որի մասին, որպես քրեական հետապնդման գործառնութի, խոսվում է տեսության մեջ՝ դրանում ներառելով մեծ հաշվով վարութի ընթացքի բոլոր վարութային ակտերը: Քրեական հետապնդում հարուցելը, դրա ժամկետների ընթացքն ապահովելն ու այն դադարեցնելը ոչ թե գործունեության առանձին՝ մեղադրյալի մեղքն ապացուցելուն ուղղված գործունեություն են, այլ մեղադրյալի և պետության միջև առաջացած հարաբերությունների պաշտոնական ամրագրումը և դրանց շարունակվող գոյությունը:

**Քրեական հետապնդումը քննության, դրա կազմակերպման, դատախազական հսկողության և մինչդատական վարություն իրացվող այլ գործառնութների իրականացման արդյունքում հասունացած՝ դատավարական հարաբերությունների վիճակ է, որը դրսևորվում է վարություն առերևույթ հանցանք կատարած անձի առկայությամբ՝ նրա դատավարական կարգավիճակով ու դրանից բխող սահմանափակումներով, իրավունքներով և պարտականություններով:** Հարուցվելուց հետո քրեական հետապնդումը ոչ թե իրականացվում է, այլ շարունակվում է գոյություն ունենալ հարուցված լինելու փաստի ուժով, քանի դեռ այն շարունակվող համակողմանի և օբյեկտիվ քննության արդյունքում չի դադարեցվել կամ ավարտվել անձի դատապարտմամբ: Անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացվելուց հետո այն շարունակվում է առկա լինել, գոյություն ունենալ, նույնիսկ եթե այդ

անձի մեղքը հիմնավորելու ուղղությամբ որևէ գործողություն չի կատարվում, նրա նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոց ու դրանից բխող սահմանափակումներ կիրառված չեն, ավելին, նույնիսկ երբ կատարվում են գործողություններ՝ ուղղված մեղադրյալի մեղավորությունը հերքելուն: Հետևաբար, քրեական հետապնդման դիմամիկ դրսևորումը ոչ թե այն իրականացնելն է, այլ գոյություն ունենալը, պահպանվելը՝ հարուցված լինելու և դադարեցված կամ այլ կերպ ավարտված չլինելու ուժով:

Թեև ասվածը բավարար է քրեական հետապնդման գործառույթի գոյությունը հերքելու համար, բայց նկատի ունենալով, որ վերը թվարկված հանրային քրեադատավարական գործառույթների շրջանակներում կատարվող գործողությունները, այդուհանդերձ, արտահայտում են կոնկրետ անձի նկատմամբ քրեական հետապնդման գոյությունը, հարկ ենք համարում հարցը դիտարկել նաև այլ՝ զուտ արժեքաբանական տեսանկյունից:

Այսպես, քրեական հետապնդումը՝ որպես գործառույթ, ենթադրում է, որ ինչ-որ պահից՝ անձին մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալուց կամ քրեական հետապնդման փաստն այլ հնարավոր ձևերով արձանագրվելուց հետո, դատավարական ինչ-որ սուբյեկտ կամ սուբյեկտներ ստանձնում են նրան հետապնդելու առաքելություն, և նրանց գործունեությունը հասցեագրվում է մեղադրյալի քրեական պատասխանատվությանը հասնելուն: Այն որպես գործառույթ դիտելը նշանակում է, որ քրեական վարույթի որոշ հանրային մասնակիցների կոչումն ու դերը մեղադրական գործունեությունն են, ջանքեր գործադրելը՝ ուղղված հենց հանցանք կատարելու մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցելուն ու վարույթը նրա դատապարտմամբ ավարտելուն: Այս մոտեցումը ցայտուն արտահայտված էր Մ. Ս. Ստրոգովիչի վերը մեջբերված բնորոշումներում, որոնցում վերջինս շեշտում էր քրեական հետապնդման գործառույթի մեղադրական էությունը և այն համարում հենց քրեական պատասխանատվության կանչված անձի մեղքն ապացուցելուն ուղղված գործունեություն: Այս մոտեցումներից ստացվում էր կարծես, որ քննիչը պետք է ամեն կերպ անտեսի ու մերժի մեղադրյալի մեղքը հերքող ապացույցները, քանի որ դրանք ձեռք բերելը չի բխում քրեական հետապնդման նրա գործառույթից, իսկ նա այլ, օրինակ՝ քննության գործառույթ չի իրականացնում:

Նման մոտեցումը, ինչ խոսք, միակողմանիություն է վերագրում վարույթի հանրային մասնակիցների դատավարական գործունեությանը, ինչն անհամատեղելի է արդար դատաքննության սկզբունքից բխող արժեքների հետ, որոնք ենթադրում են, որ քրեական վարույթ իրականացնող մարմինները պետք է իրականացնեն կամ ապահովեն համակողմանի, օբյեկտիվ և ամբողջական քննություն՝ ուղղված ոչ միայն հանցանքը մեղադրյալի կողմից կատարված լինելու հանգամանքը հիմնավորելուն, այլ նաև այն հերքող փաստական տվյալներ ձեռք բերելուն: Ընդ որում՝ նույնիսկ քրեական հետապնդումը որպես գործունեություն ձևակերպող 1998 թ. քրեական դատավարության օրենսգիրքը

այն իրականացնող մարմիններին պարտավորեցնում էր ձեռնարկել օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Եվ նման պայմաններում ստացվում է, որ քրեական հետապնդումը որպես գործառույթ դիտարկող մոտեցումը քրեական վարույթ իրականացնող և, բնականաբար, օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում անձին դատավարական կարգավիճակ տվող ու դրանից բխող բացասական հետևանքներ նրա համար առաջացնող, նրա կողմից հանցանքի կատարման փաստը վերջնականապես ստուգող և այդ ընթացքում նրա նկատմամբ սահմանափակումներ կիրառող սուբյեկտին վերագրում է մեղադրական ուղղվածությամբ դատավարական վարքագիծ և համարում, որ տվյալ սուբյեկտի կոչումը անձի համար հենց բացասական դատավարական հետևանքներ առաջացնելն է<sup>22</sup>: Ավելի պարզ՝ քննիչի, դատախազի ու հետաքննության մարմնի՝ ճշմարտությունը բացահայտելուն ուղղված գործունեությունը մեղադրական գործունեություն կամ քրեական հետապնդման գործառույթ է համարվում այն դեպքում, երբ դրա արդյունքում հավասարապես կարող են ստացվել ինչպես մեղադրական, այնպես էլ հակառակ արդյունքներ:

Այս համատեքստում հարց է առաջանում, թե ինչու ուրեմն մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում անձի սահմանադրական իրավունքները սահմանափակող քննչական գործողություններ թույլատրող ու հարկադրանքի միջոցներ կիրառող կամ գործի դատական քննության ընթացքում ակտիվորեն ապացույցներ ձեռք բերելու հնարավորություն ունեցող և, ի վերջո, անձին դատապարտող դատարանը քրեական հետապնդման մարմին, իսկ նրա իրականացրած արդարադատությունը, եթե մի կողմ թողնենք դատարանն ու արդարադատությունն այդպես կոչելու հակասահմանադրականությունը, ինքնին քրեական հետապնդում կամ նաև քրեական հետապնդում չեն կոչվում: Պատասխանը, իհարկե, այն է, որ հավասարապես երկու հնարավոր արդյունք ենթադրող գործունեությունը չի կարող նույնացվել այդ արդյունքներից մեկի հետ ու անվանակոչվել դրանով, ինչը նշանակում է, որ նախաքննության ընթացքում կատարվող քննչական գործողությունների արդյունքում անձի կողմից հանցանք կատարելու մասին տվյալներ ի հայտ

<sup>22</sup> Թեև պնդումներ կարող են լինել, որ քրեական հետապնդումը ոչ թե կոնկրետ անձի վրա սևեռված ու առանց օբյեկտիվ հիմքերի հետապնդումն է, այլ իրականում հանցանք կատարած անձի մեղքը հաստատելուն ուղղված գործունեությունը, բայց և՛ առհասարակ, և՛ հատկապես նկատի ունենալով հանցանք կատարած լինելու մասին մինչդատական համոզմունքի նախնական բնույթը՝ այդ փաստարկը չի կարող հերքել քրեական հետապնդման մեղադրական ուղղվածությունը:

գալը, այդ փաստն արձանագրելն ու համապատասխան հիմքերի առկայությամբ նրա պատշաճ վարքագիծն ապահովելու համար հարկադրանքի միջոց կիրառելը նույնպես բավարար չեն այդ գործունեությանը մեղադրական ուղղվածություն վերագրելու և այն քրեական հետապնդում անվանելու համար:

Հետևաբար, քրեական հետապնդում իրականացնելն իսկապես չի կարող քրեական դատավարությունում որևէ մեկի կոչումն ու առաքելությունը համարվել:

#### 4. Եզրակացություն

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևության, որ քրեական հետապնդումը քրեադատավարական գործառույթ՝ գործունեության ինքնուրույն ուղղություն չէ, իսկ դրա բովանդակությանը վերագրվող գործողությունները վարույթով ապացուցման առարկան կազմող հանգամանքները վեր հանելուն կամ դրա համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն ուղղված գործունեության բաղադրիչներ են, որոնց մեղադրական ուղղվածություն չի կարող վերագրվել, առավել ևս՝ այդպիսի ուղղվածությամբ գործունեությունը չի կարող դիտվել որպես քրեական վարույթում որևէ սուբյեկտի առաքելություն:

Քրեական հետապնդումը քննության, դրա կազմակերպման և դրա նկատմամբ հսկողության գործառույթների իրացման արդյունքում ձևավորված դատավարական հարաբերությունների վիճակ է, որն արտահայտում է քրեական վարույթին առերևույթ հանցանք կատարած անձի մասնակցությունը: Քրեական հետապնդումն ի հայտ է գալիս այն հարուցելու մասին որոշում կայացնելու պահից և ոչ թե իրականացվում է, այլ շարունակում է գոյություն ունենալ հարուցված լինելու և դադարեցված չլինելու ուժով՝ անկախ այդ ընթացքում անձի մեղքն ապացուցելուն կամ նրա քրեական պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելուն ուղղված որևէ գործողություն կատարելուց կամ չկատարելուց, շարունակում է առկա լինել ընդհուպ այն դեպքում, երբ կատարվում են մեղադրյալի մեղավորությունը հերքելուն ուղղված գործողություններ:

**ГЕВОРГ БАГДАСАРЯН – «Функция» уголовного преследования.** – Статья посвящена сущности уголовного преследования как уголовно-процессуального явления. Автор последовательно анализирует историческое развитие законодательной концепции уголовного преследования, а также теоретические дискуссии, оказавшие значительное влияние на её формирование. Далее предметом обсуждения ставится вопрос о существовании уголовного преследования в качестве самостоятельной процессуальной функции.

В частности, анализируя процессуальные действия, отнесенные к содержанию уголовного преследования, в контексте основных характеристик уголовно-процессуальной функции, автор констатирует, что они фактически составляют содержание других направлений процессуальной деятельности, следовательно, уголовное преследование не является самостоятельной деятельностью, ее видом или направлением. Затем, рассматривая данный

вопрос в контексте права на справедливое судебное разбирательство и констатируя, что публичная уголовно-процессуальная деятельность осуществляется с целью установления объективной истины, не имеет обвинительный характер, автор также исключает что установление вины обвиняемого и обеспечение его уголовной ответственности может рассматриваться в качестве миссии какого-либо участника процесса.

В результате проведенного анализа автор приходит к выводу, что уголовное преследование представляет собой не процессуальную функцию, а состояние процессуальных отношений, сформировавшееся в результате расследования, его организации и реализации функций надзора над ним, которое выражает участие лица, совершившего предполагаемое преступления, в уголовном производстве. По утверждению автора, уголовное преследование возникает с момента принятия решения о его возбуждении и не осуществляется как таковое, а продолжает существовать в силу факта возбуждения и отсутствия его прекращения, независимо от того, совершались ли в этот период действия, направленные на доказательство вины лица или нет, и сохраняется даже в случае осуществления действий, направленных на опровержение вины обвиняемого.

**Ключевые слова:** уголовное преследование; обвинение; функция; предварительное расследование; надзор; следователь; прокурор; направление деятельности.

**GEVORG BAGHDASARYAN – The “Function” of Criminal Prosecution.** – The article is devoted to the essence of criminal prosecution as a criminal procedural phenomenon. The author consistently analyzes the historical development of the legislative concept of criminal prosecution, as well as the theoretical debates that have significantly influenced its formation. The discussion then focuses on the question of whether criminal prosecution can be considered as an independent procedural function.

In particular, analyzing the procedural actions attributed to the substance of criminal prosecution in the context of the main characteristics of a criminal procedural function, the author states that these actions in fact constitute elements of other areas of procedural activity. Therefore, criminal prosecution cannot be regarded as an independent activity, its type, or direction. Then, considering this issue within the framework of the right to a fair trial and proceeding from the premise that public criminal procedural activity is aimed at establishing objective truth and does not have an accusatory nature, the author also excludes that establishing the accused's guilt and ensuring their criminal liability may not be viewed as the mission of any participant in the proceedings.

As a result of the analysis, the author concludes that criminal prosecution is not a procedural function, but rather a state of procedural relations formed as a result of the investigation, its organization, and the exercise of supervisory functions over it, which reflects the participation of the person suspected of committing the alleged offense in the criminal proceedings. According to the author, criminal prosecution arises from the moment a decision is made to initiate it and is not carried out as such but continues to exist by virtue of its initiation and the absence of its termination, regardless of whether any actions aimed at proving the person's guilt were taken during that period. Moreover, it persists even when actions are undertaken to refute the accused's guilt.

**Key words:** criminal prosecution, charge, function, preliminary investigation, supervision, investigator, prosecutor, line of activity.

## References

- Ghaziniyan G.S. K'reakan datavarut'yan patmakan ev ardi himnaharcery Hayastanum. Yerevani hamalsarani hratak'chut'yun, Yerevan, 2001.  
 Al'pert S.A. Obvinenie v sovetskom ugodovnom protsesse. Khar'kov, 1974.  
 Baev O.Ya. Prokuror kak sub'ekt ugodovnogo presledovaniya. Moscva, 2006,  
 Daev V.G. “Obvinenie v sovetskom ugodovnom protsesse.” Pravovedenie, 1970, No. 1.

- Enikeev Z.D. “Aktual'nye voprosy ugovnogo presledovaniya v svete sudebno-pravovoi reformy.” Pravovedenie, 1995, No. 4–5.
- Zelenetskii V.S. Funktsional'naya struktura prokurorskoj deyatelnosti. Khar'kov, 1978.
- Kan M.P. Protsessual'nye funktsii prokurora v dosudebnykh stadiyakh ugovnogo sudoproizvodstva. Dis. ... kand. yurid. nauk. Tashkent, 1988.
- Larin A.M. Rassledovanie po ugovnomu delu: protsessual'nye funktsii. Moscow: Yuridicheskaya literatura, 1986.
- Solov'ev A.B. “Ugolovnoe presledovanie i prokurorskii nadzor v dosudebnykh stadiyakh sudoproizvodstva.” Prokurorskaya i sledstvennaya praktika, 1997, No. 3.
- Strogovich M.S. Kurs sovetskogo ugovnogo protsessa. v 2 t., t. 1. M. 1968.
- Strogovich M.S. Ugolovnoe presledovanie v sovetskom ugovnom protsesse. M. 1951.
- Tadzhiev Kh.S. Prokurorskii nadzor i vedomstvennyi kontrol' za rassledovaniem prestuplenii. Tashkent, 1985.
- Tatoyan A. “Protsesual'naya funktsia ugovnogo presledovaniya i ee sootnoshenie s rassledovaniem dela.” Petutyun yev iravunk', 2(72), 2016.
- Ugolovno-protsessual'noe pravo Rossiiskoi Federatsii: Uchebnik. / otv. red. P.A. Lupinskaya. 2-e izd., pererab. i dop. M.: Norma, 2009.
- Khaliulin A.G. Osushchestvlenie funktsii ugovnogo presledovaniya prokuraturoi Rossii. Kemerovo, 1997.
- Chel'tsov M.A. “Vozbuzhdenie ugovnogo presledovaniya i protsessual'noe polozhenie sledovatelya.” Sotsialisticheskaya zakonnost', 1937, No. 3.
- Chel'tsov M.A. Sovetskii ugovlovnyi protsess. M., 1951.
- El'kind P.S. Tseli i sredstva ikh dostizheniya v sovetskom ugovno-protsessual'nom prave. Leningrad: Izd-vo Leningradskogo universiteta, 1976.

## ՀԱՆՐԱՅԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐԹՈՒՐ ԶԱԽՈՅԱՆ՝ 

*Երևանի պետական համալսարան*

Հոդվածը նվիրված է կրիմինալիստիկայի գիտության համակարգի տեսական խնդիրների ուսումնասիրմանը:

Հոդվածում հեղինակը համակողմանի հետազոտել է կրիմինալիստիկայի գիտության համակարգի երրորդ բաժինը, հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկայի պատմական ասպեկտները և ներկա վիճակը, ինչպես նաև հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկայի արդի հիմնահարցերը և զարգացման հեռանկարները:

Այդ նպատակով հեղինակի կողմից ուսումնասիրվել, քննարկվել և վերլուծվել են հարցի վերաբերյալ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան երկրների կրիմինալիստ գիտնականների աշխատություններում տեղ գտած կարծիքներ, տեսակետներ:

Հանրային մեղադրանքի արդյունավետ պաշտպանության համար կրիմինալիստիկական հանձնարարականների մշակման անհրաժեշտությունը ներկայումս, հեղինակի կարծիքով, այլևս վիճելի գիտական խնդիր չէ, քանի որ այն հիմնավորվել է և պայմանավորված է ոչ միայն տեսության, այլ նաև դատական քննության պրակտիկայի կարիքներով:

Հետազոտման արդյունքում հեղինակի կողմից հոդվածում ամփոփ ներկայացվել են հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկայի էությունը և համակարգը:

**Բանալի բառեր** – *կրիմինալիստիկայի համակարգը, քննչական տակտիկա, կրիմինալիստիկական տակտիկա, դատական տակտիկա, հանրային մեղադրանք, մեղադրանքի պաշտպանություն, դատախազ, հանրային մեղադրող*

**\* Արթուր Զախոյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

**Артур Чахоян** – кандидат юридических наук, доцент кафедры уголовно-процессуального права и криминалистики ЕГУ

**Artur Chakhoyan** – Candidate of Legal Sciences, Associate Professor at YSU Chair of Criminal Justice and Criminalistics

Էլ. փոստ՝ [arturchakhoyan@ysu.am](mailto:arturchakhoyan@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0001-5315-946X>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 23.09.2025

Գրախոսվել է՝ 25.10.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

## Ներածություն

Անվիճելի է, որ կրիմինալիստիկայի գիտությունը սկիզբ է առել քրեական դատավարության ակունքներից և նախաքննության ու հետաքննության մարմինների համար ծառայել է որպես հանձնարարականների համակարգ: Կրիմինալիստիկական հանձնարարականներն էլ իրենց հերթին սերտորեն կապված են քրեական դատավարության օրենսդրության հետ և հենվում են քրեական դատավարության գիտության ընդհանուր դրույթների վրա, որոնք վերաբերում են ապացույցներին և ապացուցման գործընթացին, ապացուցման սահմաններին, ապացույցների վերաբերելիությանը, թույլատրելիությանը, դրանց հավաստիության գնահատման սկզբունքներին ու կարգին:

Կրիմինալիստիկայի գիտությունը քրեական դատավարության գիտությունը հարստացնում է իր մշակած տվյալներով և նպաստում քրեական դատավարության իրավունքի գիտության կատարելագործմանը, միևնույն ժամանակ՝ ժամանակակից քրեական արդարադատությունն անհնար է պատկերացնել առանց կրիմինալիստիկայի գիտության առաջարկությունների:

Կրիմինալիստիկական գիտելիքների խորացումը բարերար ազդեցություն է թողնում նրա տեսական և պրակտիկ բաժինների վրա, նպաստում է մեթոդական հանձնարարականների կատարելագործմանը: Միևնույն ժամանակ՝ տեսական և մեթոդական մշակումները, որոնք իրականացվում են կրիմինալիստիկական տեխնիկայում, տակտիկայում և մեթոդիկայում, ակտիվացնում են գիտության ընդհանուր տեսական միտքը, սնում, հարստացնում են այն հեռանկարային մտահղացումներով, որոնք նպաստում են նոր, արդյունավետ հայացքների, չափանիշների, կոնցեպցիաների առաջացմանը<sup>1</sup>:

Կրիմինալիստիկական գիտելիքները մշակվել էին բացառապես հանցագործությունների քննության գործընթացում քննչական գործողություններին բնորոշ նպատակներն ապահովելու համար: Այդ պատճառով էլ կրիմինալիստիկայի գիտությունում տարիներ շարունակ կրիմինալիստիկայի համակարգի երրորդ բաժինը ավանդաբար անվանվել է «քննչական տակտիկա»: Սակայն, ինչպես բոլոր գիտությունները, կրիմինալիստիկան ևս զարգանում է, և բնականաբար, հաշվի առնելով նոր պահանջները, անհրաժեշտություն է առաջացել նշված հարցը քննարկել ժամանակակից պրակտիկ մարտահրավերների համատեքստում: Այս առումով տեղին է նշել պրոֆեսոր Լ. Օհանյանի այն միտքը, որ «զարգացած շատ երկրներում կրիմինալիստիկայի գիտության համակարգը մշակված չէ, որը հանգեցնում է նրա էության անկարգ, չհամակարգված շարադրանքի»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Օհանյան Լ.** Կրիմինալիստիկա, Եր., «Տիգրան Մեծ», 2004, էջ 45-46:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 123:

«Քննչական տակտիկան» ընդհանուր ձևով բնորոշվել է որպես գիտական դրույթների և դրանց հիման վրա մշակված հանձնարարականների ամբողջություն, որոնք միտված են քրեական վարույթի քննության ժամանակ ապացուցման գործընթացի կազմակերպված ու պլանավորված իրականացմանը:

«Տակտիկա» նշանակում է մարտին նախապատրաստվելու և մարտը վարելու արվեստ, մարտը վարելու միջոցների ու եղանակների ամբողջություն, իսկ փոխաբերական իմաստով՝ նպատակին հասնելու համար գործադրվող միջոց, եղանակ<sup>3</sup>:

Մասնագիտական գրականության մեջ տարբեր հեղինակներ քննչական տակտիկան բնորոշել են տարբեր կերպ. մի դեպքում նրան տրվել է շատ նեղ բնորոշում, մեկ այլ դեպքում՝ չարդարացված լայն:

Օրինակ՝ Ա. Ն. Վասիլևը քննչական տակտիկան բնորոշել է որպես *«նպատակին հասնելու գործունեության մեթոդ, որը կիրառվում է քննության ընթացքում ժամանակի և ուժերի նվազագույն գործադրմամբ՝ առավելագույն արդյունք ստանալու համար»*<sup>4</sup>:

Վերլուծելով քննչական գործողությունների տակտիկայի բնորոշման վերաբերյալ տարբեր հեղինակների տեսակետները՝ Ա. Վ. Դուլովը և Պ. Դ. Նեստերենկոն քննչական տակտիկան բնորոշել են որպես *«տակտիկական հնարքների համակարգ, համալիր, այսինքն՝ քննչական գործողությունների կատարման կամ ինքնին քննիչի վարքագծի առավել արդյունավետ և նպատակահարմար միջոցների ամբողջություն»*<sup>5</sup>:

Քննիչին կրիմինալիստիկական տակտիկայի սուբյեկտ համարելը կրիմինալիստիկական գրականությունում երբեք չի վիճարկվել:

Սակայն հետագայում որոշ գիտնականներ կրիմինալիստիկական տակտիկայի սուբյեկտ են դիտել նաև դատարանը: Օրինակ՝ Մ. Ստոյանովսկիի կարծիքով՝ կրիմինալիստիկական տակտիկայի սուբյեկտներ են համարվում քննիչը, պաշտպանը, դատարանը և պետական դատախազը<sup>6</sup>:

Միևնույն ժամանակ, կրիմինալիստիկական տակտիկան՝ որպես կրիմինալիստիկայի գիտության առանձին բաժին, ունի իրեն բնորոշ խնդիրները, որոնք առավել լայն են, ներառում են նաև տակտիկական հնարքների մշակման, դրանց կատարելագործման, համադրման և այլ գործառույթներ:

Ակնհայտ է, որ «քննչական տակտիկա» եզրույթն արտացոլում է կրիմինալիստիկայի երրորդ բաժնի՝ տակտիկայի միայն նեղ բովանդակությունը, քանի

<sup>3</sup> Տե՛ս Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1976, հատոր 2, էջ 1407:

<sup>4</sup> Васильев А.Н., Криминалистика. М., 1971, с. 250.

<sup>5</sup> Дулов А.В., Нестеренко П.Д., Тактика следственных действий, Мн., 1971, с. 5.

<sup>6</sup> Տե՛ս Стояновский М. В., Классификационный подход в криминалистической науке и практике (на примере криминалистической тактики). Дисс. ... канд. юрид. Наук, Воронеж, 2001, էջ 96:

որ տակտիկան կիրառվում է ինչպես նախաքննության, այնպես էլ դատական քննության ընթացքում: Նշենք, որ նման տեսակետներ են արտահայտել նաև հայրենական հետազոտողները, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում կրիմինալիստիկայի հիմնադիր, պրոֆեսոր Լ. Պ. Օհանյանը և հայտնի կրիմինալիստ, ՀՀ վաստակավոր իրավաբան, պրոֆեսոր Վ. Գ. Ենգիբարյանը<sup>7</sup>:

Մեկ այլ դեպքում այս ընդհանուր բնորոշմանն ավելացվում են առանձին տարրեր, ինչպիսիք են, օրինակ՝ դատական քննության փուլը, քննչական կամ դատավարական որոշակի գործողության հնարքը կամ հանցագործության կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների վերհանումը և այլն<sup>8</sup>:

Այս առումով տեղին է հիշատակել դեռևս անցյալ դարի վերջերին Ռ. Ս. Բելկինի՝ կրիմինալիստիկական տակտիկայի հետևյալ բնորոշումը. «...դա գիտական դրույթների համակարգ է և դրա հիման վրա մշակվող առաջարկություններ՝ նախնական և դատական քննության կազմակերպման ու պլանավորման, դատական հետազոտություն իրականացնող անձանց վարքագծի որոշակիացման և ապացույցների հավաքման, հետազոտման, հանցագործության կատարմանը նպաստող պատճառների և պայմանների վերացմանն ուղղված առանձին դատավարական գործողությունների իրականացման հնարքների վերաբերյալ»<sup>9</sup>:

Վ. Ենգիբարյանի կարծիքով՝ կարելի է տարբերակել «քննչական տակտիկա» և «դատական քննության տակտիկա» հասկացությունները, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առարկան և կոչված է կիրառվելու իրավապահ գործունեության համապատասխան ոլորտում՝ միասին կազմելով կրիմինալիստիկական տակտիկայի ուսումնասիրության առարկան<sup>10</sup>:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մասնագիտական գրականության մեջ օգտագործվում է նաև «փաստաբանական գործունեության տակտիկա» հասկացությունը, որը կրիմինալիստիկական տակտիկայի տարրերից է և բնորոշվում է որպես քրեական գործով պաշտպանի կողմից ապացույցների ուսումնասիրման ու օգտագործման, ինչպես նաև պաշտպանյալին արդարացնող, պատասխանատվությունը մեղմացնող և քրեական դատավարության ցանկացած փուլում նրա իրավունքների ու շահերի պահպանումն ապահովող առարկաների, փաստաթղթերի և տվյալների ներկայացման թույլատրելի և ռացիոնալ մեթոդների ու միջոցների (կրիմինալիստիկական տակտիկայի գիտական դրույթների հիման վրա մշակված) համակարգ<sup>11</sup>:

<sup>7</sup> Տե՛ս, օրինակ, Օհանյան Լ. նշվ. աշխ., Ենգիբարյան Վ. Գ. Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա, Եր., 2018:

<sup>8</sup> Տե՛ս **Аверьянова Т.В., Белкин Р.С., Корухов Ю.Г., Российская Е.Р.** Криминалистика: Учебник для вузов. Под. ред. Р. С. Белкина, 2-е изд., перераб. и доп., М., Норма, 2006, էջ 453:

<sup>9</sup> **Белкин Р.С.**, Ленинская теория отражения и методологические проблемы советской криминалистики. М., 1970, с. 71.

<sup>10</sup> Տե՛ս Ենգիբարյան Վ. Գ. նշվ. աշխ., էջ 15:

<sup>11</sup> Տե՛ս **Гранков А.Н.** Понятие и содержание тактики деятельности адвоката-защитника по уголовному делу / Труды Академии управления. Вопросы криминалистики и судебной экспертизы, М., Академия управления МВД России, 2003, էջ 39:

Օ. Յա. Բանը դեռևս 1977 թվականին իր աշխատություններից մեկում արդարացիորեն նշել է, որ տակտիկական հնարքների ու հանձնարարականների կիրառման հնարավորությունը ոչ միայն պետք է դիտարկել քրեական վարույթի նախաքննության փուլում, այլ նաև քրեական գործի դատական քննության ընթացքում<sup>12</sup>:

Ուստի, ընդհանրացնելով և վերլուծելով տեսական գրականությունում հարցի վերաբերյալ տեսակետները, մեր կարծիքով, *կրիմինալիստիկայի գիտության համակարգի երրորդ բաժնի մասին խոսելիս ճիշտ կլինի գերծ մնալ «քննչական տակտիկա» եզրույթն օգտագործելուց, և միանգամայն ընդունելի կլինի օգտագործել «կրիմինալիստիկական տակտիկա», քանի որ այն որպես կրիմինալիստիկայի և այլ գիտությունների մասնագետների կողմից առաջ քաշված տեսական դրույթների, գաղափարների, մեթոդների ու միջոցների, դրանց հիման վրա մշակված հնարքների և հանձնարարականների ամբողջական համակարգ և նվազագույն միջոցների կիրառմամբ առավելագույն արդյունքների հասնելու միջոց, միտված է ոչ միայն արդյունավետ նախաքննության կազմակերպմանն ու քննիչի վարքագծի կատարելագործմանը, այլ նաև դատավարության մյուս մասնակիցների վարքագծի և դատական արդյունավետ քննության կազմակերպմանն ու կատարելագործմանը:*

### Հետազոտություն

Դատարանում քրեական գործով արդյունավետ քննություն իրականացնելու, այն է՝ հնարավորինս կարճ ժամկետներում, նվազագույն ռեսուրսների գործադրմամբ առավելագույն արդյունքների հասնելու գլխավոր նախապայմանը դատական քննության տակտիկայես գրագետ կազմակերպումն է, ինչը հնարավոր չէ առանց կրիմինալիստիկական տակտիկայի դրույթների ամբողջական, գրագետ և փոխկապակցված կիրառման, քանի որ յուրաքանչյուր քրեական գործով օբյեկտիվ ճշմարտության հաստատման, ինչպես նաև ապացուցման պատշաճ գործընթացի ապահովման համար դատարանը և դատավարության կողմերը, քրեադատավարական գործառույթների իրականացումից զատ, ձեռնարկում են նաև կազմակերպական, տեխնիկական և այլ բնույթի բազում գործողություններ՝ պահպանելով դրանց տակտիկական միասնական գիծը:

Հանցագործությունների կատարման դինամիկան, որը հիմնված է անընդհատ փոփոխվող մեթոդների, միջոցների և ձևերի վրա, ինչպես նաև քրեական արդարադատության ընթացակարգերի փոփոխությունները՝ նոր խնդիր են դրել կրիմինալիստիկայի գիտության առջև՝ կապված դատական քննությունում կրիմինալիստիկական գիտելիքների կիրառման հիմնավորման անհրա-

<sup>12</sup> Տե՛ս **Баев О.Я.**, Криминалистическая тактика и уголовно-процессуальный закон, Воронеж, 1977, էջ 8:

ժեշտության հետ, որոնց օգտագործումը կարող է ապահովել քրեական հետապնդման նպատակները, ինչը նշանակում է դատարաններում հանրային մեղադրանքի պաշտպանությանն աջակցելու համար կրիմինալիստիկական գիտելիքները լայնորեն օգտագործելու անխուսափելիությունը հիմնավորելու անհրաժեշտություն:

Ա. Լ. Ցիպկինը դեռևս 1938 թվականին «Կրիմինալիստիկական և դատական քննությունը» հոդվածում գրել էր, որ կրիմինալիստիկական կարևոր է նաև այնտեղ, որտեղ ապացույցների հավաքումը, ստուգումը և գնահատումը տեղի են ունենում դատական միջավայրում, և նույնիսկ այն դեպքում, երբ դրանկատմամբ իրականացվում է վճռաբեկ և վերահսկիչ հսկողություն, այսինքն՝ քրեական գործընթացի ողջ ընթացքում<sup>13</sup>:

Խնդրի վերաբերյալ մեզ հայտնի առաջին հետազոտողները, ովքեր խոսել են դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելիս կրիմինալիստիկայի գիտության մշակած տվյալների օգտագործման անխուսափելիության մասին, եղել են ռուս հայտնի քրեագետներ Լ. Է. Արոցկերը, Ս. Պ. Միտրիչևը, Ի. Ա. Ոզգրին, Գ. Ա. Վորոբյովը, Վ. Կ. Գավլովն<sup>14</sup>:

Սակայն վերջին տասնամյակներում հրատարակված ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան մեզ հայտնի կրիմինալիստիկական դասագրքերը չեն անդրադառնում քրեական գործերով դատական քննության կրիմինալիստիկական խնդիրներին, բայց դատական քննության ընթացքում կրիմինալիստիկայի գիտության մշակած տվյալների օգտագործման հնարավորության բացակայությունը չի նշանակում, որ այդ խնդիրները լուծված են: Մեր կարծիքով, ներկայումս առաջին ատյանի դատարանում հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկայի հարցերը պետք է մանրակրկիտ հետազոտվեն և ուսումնասիրվեն, ընդ որում՝ տարբեր տիպային իրավիճակներում, իսկ հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկայի հայեցակարգի և բովանդակության ճիշտ սահմանումը, որպես դատարանում մեղադրյալի նկատմամբ որակյալ քրեական հետապնդում իրականացնելու համար արդյունավետ կողմնորոշիչ, դատախազի (հանրային մեղադրողի) համար կապահովի համապատասխան հանձնարարականներ:

«Դատական» տակտիկայի վերաբերյալ կրիմինալիստիկայի գիտությանը հայտնի են որոշ սահմանումներ, որոնցից մի քանիսի վերլուծությանը ցանկանում ենք անդրադառնալ՝ հիմնվելով հեղինակների կողմից բացահայտված

<sup>13</sup> См. у **Цыпкин А.Л.**, Судебное следствие и криминалистика // Соц. Законность, №12, 1938:

<sup>14</sup> См. у **Ароцкер Л.Е.**, Использование данных криминалистики в судебном разбирательстве уголовных дел., М., «Юридическая литература», 1964, **Митричев С.П.**, Теоретические основы советской криминалистики, М., 1965, **Возгрин И.А.**, Общие положения методики расследования отдельных видов преступлений, Л., 1976, **Воробьев Г.А.**, Планирование судебного следствия, М., 1978, **Гавло В.К.**, Теоретические проблемы и практик применения методики расследования отдельных видов преступлений /Под. ред. А.Н. Васильева, Томск, 1985:

էական հատկանիշների վրա: Այսպիսով, Լ. Է. Արոցկերը կարծում է, որ «դատական քննության կրիմինալիստիկական տակտիկական դատական քննության անցկացման մեթոդների և հնարքների համակարգ է»<sup>15</sup>, իսկ Գ. Ա. Վորոբյովը դատական քննությունը կապում է «դատարանի և դատավարության մասնակիցների վարքագծի հետ»<sup>16</sup>: Ս. Պ. Սուխովն էլ դատական քննության կրիմինալիստիկական տակտիկական բնորոշում է որպես «քրեական գործերի ավելի արդյունավետ քննության կազմակերպման միջոց»<sup>17</sup>:

Ըստ Վ. Գ. Ուլյանովայի՝ «դատական քննության տակտիկական հիմնված է ինչպես «բոլոր անձանց» վարքագծի վրա, ովքեր իրականացնում են ապացույցների ստուգում, գնահատում և օգտագործում, այնպես էլ՝ նրանց կողմից կատարվող քննչական գործողությունների տակտիկական հնարքների վրա, որոնք օգտագործվել են քրեական գործով ճշմարտությունը պարզելու համար»<sup>18</sup>:

Ս. Լ. Կիսլենկոնի և Վ. Ի. Կոմիսարովի սահմանումը հիմնված է այն մոտեցման վրա, որ դատական քննության տակտիկական՝ որպես կրիմինալիստիկական տակտիկայի առանձին բաժին, կապված է դատական քննության մասնակիցների միջև հարաբերությունների օրինաչափությունների հետ, որոնք քրեական գործընթացում կրիմինալիստիկայի գիտության խնդիրները լուծելու համար ապացույցների հետազոտության և գնահատման բնորոշ իրավիճակներում կրիմինալիստիկական հանձնարարականների նոր համակարգեր են ձևավորում<sup>19</sup>:

Ա. Յու. Կորչագինի կարծիքով՝ դատական տակտիկական «դատական քննության օպտիմալացմանն ուղղված կրիմինալիստիկական գիտական և գործնական առաջարկությունների համակարգ է, քրեական գործով ճշմարտության բացահայտման նպատակով դատական գործողությունների իրականացման արդյունավետ եղանակ»<sup>20</sup>:

Դժվար չէ նկատել, որ բոլոր հեղինակներն իրենց սահմանումների մեջ ընդգծում են մի քանի էական հատկանիշներ՝ կապված սուբյեկտների, տակտիկական հնարքների, մեթոդների և միջոցների, ինչպես նաև դրանց կիրառման հիման վրա ձեռք բերված նպատակների հետ:

Սակայն մեկ այլ հեղինակի կարծիքով էլ դատավորը չի կարող լինել դատական քննության տակտիկայի սուբյեկտ, քանի որ օրենքը նրան վստահել է

<sup>15</sup> Ароцкер Л.Е. նշվ. աշխ., էջ 29:

<sup>16</sup> Воробьев Г.А. Тактика и психологические особенности судебных действий. Краснодар, 1996, էջեր 8–9:

<sup>17</sup> Сухов С.П. Теоретические проблемы криминалистической тактики. Свердловск, 1981, с. 24

<sup>18</sup> Ульянов В.Г. Государственное обвинение в российском уголовном судопроизводстве. М., 2002, с. 109.

<sup>19</sup> См. у Кисленко С.Л. Судебное следствие: состояние и перспективы, М., 2003, էջեր 77–78:

<sup>20</sup> Корчагин А.Ю. Основы тактики и методики судебного разбирательства уголовных дел. Краснодар, 2007, с. 53.

քրեական դատավարական հարաբերությունների մասնակիցներ՝ մեղադրող և պաշտպանական կողմերի միջև առկա քրեական դատավարության վեճի արբիտրի պարտականությունները, և «դատական» տակտիկայի սուբյեկտներ կարող են լինել միայն պրոֆեսիոնալ դատախազն ու պաշտպանը՝ որպես երկու վիճող կողմեր<sup>21</sup>:

Թեև տարբեր երկրների քրեական դատավարության օրենսդրությունների հիման վրա դատական քննության տակտիկայի սահմանումը կրիմինալիստիկական գիտական և գործնական առաջարկությունների կամ դատական քննության անցկացման տեխնիկայի և մեթոդների համակարգի միջոցով բավականաչափ ամբողջական չի թվում, այնուամենայնիվ այս գիտական կատեգորիայի ընդհանուր դրույթների կարևորումը հնարավորություն է տալիս ձևակերպելու հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկայի հատուկ հայեցակարգ և հանրային մեղադրողի համար մշակել առանձին առաջարկություններ, որոնք միտված կլինեն դատարանում նրա գործունեությունը առավել արդյունավետ կազմակերպելուն:

Սակայն առաջին աստիճանի դատարանում «հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկա» հասկացության սահմանումը տալու համար նախ անհրաժեշտ է վերլուծել քրեական գործով դատական վարույթի տակտիկայի ընդհանուր հասկացությունը:

Մեր կարծիքով, քրեական գործերով դատական վարույթի տակտիկան քրեադատավարական օրենսդրության դրույթների և կրիմինալիստիկական հանձնարարականների վրա հիմնված գիտական և գործնական գիտելիքների համակարգ է, որի արդյունավետ օգտագործումը քրեական դատավարության մասնակիցների կողմից առաջին աստիճանի, վերաքննիչ և վճռաբեկ դատավարություններում ապահովում է գործով ճշմարտության հաստատումը:

Այս սահմանումը, կարծում ենք, ընդհանուր է քրեական գործով դատական վարույթի բոլոր փուլերի համար, և դրա բովանդակությունը կարող է վերափոխվել ըստ համապատասխան սուբյեկտի (հանրային մեղադրող, պաշտպան և այլն), դատական վարույթի փուլի նպատակների և խնդիրների, կրիմինալիստիկական իրավիճակի առանձնահատկությունների և դատարանում քննվող քրեական գործի բնույթի:

Հայաստանի Հանրապետության գործող քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է քրեական գործընթացում հանրային մեղադրողի (դատախազի) գործունեության իրավական հիմքերը, դատավարական ձևերը և նրա մասնակցության կարգը ինչպես գործով մինչդատական վարույթի փուլում, այնպես էլ քրեական գործի դատաքննության ընթացքում: Սակայն քրեական դատավարությունը չի կարգավորում դատախազի գործունեության տակտիկական, կազմակերպչական և մեթոդական բնույթի հարցերը: Այսինքն՝

<sup>21</sup> St' u **Комаров И. М.**, Общие положения тактики поддержания государственного обвинения в суде первой инстанции // Научные ведомости, 2010, Выпуск 11, № 2 (73), էջ 122:

քրեադատավարական օրենքը հստակ չի սահմանում, թե ինչպես պետք է գործի հանրային մեղադրողը (դատախազը) որոշակի բնույթի քրեական գործերով (վարույթներով) կամ կոնկրետ գործով, ինչպիսին պետք է լինի նրա գործունեության տեխնոլոգիան, որոշակի դատավարական գործողություններ կատարելու տակտիկան և մեթոդաբանությունը:

Մեր կարծիքով, վերը նշված հարցերով պետք է զբաղվի կրիմինալիստիկայի գիտությունը, որի խնդիրն է համապատասխան հանձնարարականներ մշակել ոչ միայն հանցագործությունների բացահայտման, քննության և կանխարգելման, այլ նաև դատարանում քրեական գործի քննության համար՝ այդ գործընթացում կատարվող գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, մասնավորապես՝ դատավարությանը հանրային մեղադրողի մասնակցության տակտիկայի և մեթոդաբանության վերաբերյալ կրիմինալիստիկական առաջարկությունների մշակում, դատական բարդ իրավիճակներում ապացույցներ ձեռք բերելու և արդյունավետ հետազոտելու հնարքների ներդրում, առանձին կատեգորիաների գործերով մեղադրանքի պաշտպանության առանձնահատկությունների, տակտիկան հնարքների մշակում:

Դատավարության ընթացքում ստեղծագործական, գիտականորեն ճիշտ կազմակերպված աշխատանքը հանրային մեղադրողին հնարավորություն կտա ամենաարագ և արդյունավետ կերպով հասնել առաջադրված նպատակին, այն է՝ ապացուցել մեղադրյալին առաջադրված մեղադրանքի օրինականությունն ու հիմնավորվածությունը և ապահովել դատավճռի կայացմանը, քանի որ, ի տարբերություն նախաքննության, դատական քննության ընթացքում հիմնական աշխատանքը տարվում է ոչ թե տեղեկատվության որոնման ուղղությամբ, այլ ուշադրություն է դարձվում փաստերի վերաբերյալ արդեն իսկ ստացված տեղեկատվության ուսումնասիրությանը, ստուգմանը և գնահատմանը, այլ կերպ ասած՝ հիմնական աշխատանքը ոչ թե որևէ նոր ապացույց փնտրելն է, այլ գործընթացի այս փուլում առկա ապացույցների արդյունավետ և տեղին օգտագործելը:

Ելնելով վերը նշվածից, մեր կարծիքով, հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկան դատարանի կողմից գործով օբյեկտիվ ճշմարտությունը պարզելու և հաստատելու նպատակով հանրային մեղադրողի արդյունավետ գործունեությունն է՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու, դատական նիստին նախապատրաստվելու, քրեական գործով դատաքննության տարբեր փուլերում՝ պայմանավորված կոնկրետ տիպային իրավիճակով, դատավարությանը մասնակցելու տակտիկան է՝ հիմնված գիտագործնական կրիմինալիստիկական գիտելիքների համակարգի և նախաքննության արդյունքների վրա, նպատակ ունենալով «համոզել» դատարանին մեղադրական թեզի օրինականությունը: Իսկ հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկական մեթոդը հանրային մեղադրողի (դատախազի) լավագույն գործելաոճն է, որը, որպես կանոն, քրեական գործընթացում իրականացվում է

«հակառակորդ»՝ պաշտպանական կողմի հակազդեցության պայմաններում՝ մեղադրյալի մեղքը դատական կարգով ճանաչելու և նրա նկատմամբ արդար պատիժ նշանակելու նպատակով:

### Եզրակացություն

Դատարանում հանրային մեղադրողի գործունեության հետ կապված կրիմինալիստիկական հանձնարարականների մշակումը, մեր կարծիքով, դատախազին հնարավորություն կտա ամենաարագ և արդյունավետ կերպով հասնելու առաջադրված նպատակին, այսինքն՝ ապացուցելու մեղադրանքի հիմնավորվածությունը, ուստի կրիմինալիստիկայի գիտության ուսումնասիրության առարկա, անկասկած, պետք է դառնա նաև հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկական, որի համար հիմնական աղբյուրներ կարող են հանդիսանալ կրիմինալիստիկայի և քրեադատավարական իրավունքի ընդհանուր դրույթները, ընդհանրացված պրակտիկական և դրանց հիման վրա մշակված կրիմինալիստիկական հանձնարարականները:

Հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկայի դրույթները թույլ կտան առավելագույնս արագ, բարենպաստ ուղղությամբ և արդյունավետ կերպով լուծել առկա դատական իրավիճակը, դատարանի և հակառակորդ կողմի մոտ հասնել մեղադրյալի մեղավորության վերաբերյալ համոզմունքի ձևավորմանը, իսկ արդյունքում՝ հանրային մեղադրողին հնարավորություն կտան առավելագույնս հաջողությամբ կատարել իրեն «հանձնարարված» առաջադրանքը՝ հասնել օրինական և հիմնավորված մեղադրական դատավճռի կայացմանը:

Ուստի արդիական և անհրաժեշտ է կրիմինալիստիկայի առարկայի ընդլայնումը, դրա համակարգում, որպես «կրիմինալիստիկական տակտիկայի» անբաժան մաս, ավելացնել հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկայի դրույթները, որի շնորհիվ, բացի այն, որ կրիմինալիստիկական՝ որպես գիտություն, կհարստանա, այլ նաև է՛լ ավելի արդյունավետ կբավարարի պրակտիկայի աճող պահանջարկները նաև քրեական գործերի արդյունավետ դատական քննության գործում:

Հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկական, որպես կրիմինալիստիկական և դատական տակտիկայի անբաժանելի մաս, պետք է ունենա իր առարկան և համակարգը, առանց որի այն չի կարող զարգանալ, և առանց որի դրա կարևոր բաղադրիչները կարող են ստվերում մնալ: Բացի այդ, համակարգի կառուցումը հետագայում թույլ կտա պարզել, թե հանրային մեղադրողի գործունեության տակտիկական որ կողմերը դեռևս բավարար չափով չեն ուսումնասիրվել ու զարգացել և ենթակա են ընդհանուր համակարգում ներառման, քանի որ կրիմինալիստիկական տակտիկական բաց համակարգ է, որը անընդհատ զարգանում և ընդլայնվում է:

Դատարանում հանրային մեղադրանքի պաշտպանության ընթացքում հանրային մեղադրողի մասնակցությունը կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի փուլերի, մասնավորապես՝

1. դատաքննության նախապատրաստական փուլ,
2. նախնական դատալսումներին նախապատրաստության և մասնակցության փուլ,
3. հիմնական դատալսումներին նախապատրաստության և մասնակցության փուլ,
4. լրացուցիչ դատալսումներին նախապատրաստության և մասնակցության փուլ,
5. վերաքննության նախապատրաստության և մասնակցության փուլ:

Թվարկված փուլերից յուրաքանչյուրն ունի իր տակտիկական խնդիրները, և յուրաքանչյուրում հանրային մեղադրողի կողմից պետք է մշակվի որոշակի տակտիկա: Օրինակ՝ դատաքննությանը նախապատրաստվելու փուլում էական նշանակություն կարող են ունենալ դրա պլանավորումը, դատական իրավիճակների մասին տեղեկանալը, «անսպասելի» իրավիճակների կանխատեսումը, քննիչի, հետաքննության մարմնի, իսկ որոշակի իրավիճակներում նաև քրեական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազի հետ փոխգործակցությունը, իսկ հիմնական դատալսումներին նախապատրաստվելու փուլում՝ դատական գործողությունների (օրինակ՝ ամբաստանյալի, տուժողի, վկայի, փորձագետի հարցաքննության, փորձաքննության նշանակման, իրեղեն ապացույցների, տարածքի զննման, քննչական փորձարարության և այլ) կատարման տակտիկայի ճիշտ մշակումը:

Դատաքննության ընթացքում կիրառվող տակտիկաները կարող են զգալիորեն տարբերվել, քանի որ այս փուլերից յուրաքանչյուրն ունի իր սեփական խնդիրները և դատավարական կանոնակարգերը: Տակտիկական մոտեցումները կարող են նաև տարբեր լինել՝ կախված դատական վարույթի ձևից:

Հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկայի համակարգը, մեր կարծիքով, պետք է բաղկացած լինի ընդհանուր ու հատուկ մասերից և ունենա հետևյալ բովանդակությունը.

### **Ընդհանուր մաս**

1. Հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկայի էությունը, համակարգը և խնդիրները:

2. Հանրային մեղադրանքի պաշտպանության ընթացքում տրամաբանության, հոգեբանության, աշխատանքի գիտական կազմակերպման և այլ հատուկ գիտությունների տվյալների օգտագործման հնարավորությունները:

3. Հանրային մեղադրանքի պաշտպանության ընթացքում կիրառվող տակտիկական հնարքների, խորամանկությունների, որոշումների համակարգը:

4. Հանրային մեղադրանքի պաշտպանության ընթացքում գիտատեխնիկական միջոցների կիրառման հնարավորությունները:

5. Մինչև քրեական վարույթը իրավասու դատարան հանձնելը քննիչի և հետաքննության մարմնի հետ դատախազի փոխգործակցության մեթոդներն ու եղանակները:

6. Մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական վարույթի նյութերի ուսումնասիրության տակտիկական առանձնահատկությունները:

7. Հանրային մեղադրանքի պաշտպանության պլանավորումը և դատարանում հնարավոր «անսպասելի իրավիճակների» կանխատեսումը:

8. Հանրային մեղադրողի և վարույթի մասնավոր մասնակիցների, վարույթին օժանդակող անձանց փոխգործակցության կազմակերպչական ու տակտիկական հիմքերը:

9. Դատախազական խմբի կողմից հանրային մեղադրանքի պաշտպանության տակտիկական առանձնահատկությունները:

### **Հատուկ մաս**

1. Հարցաքննությունների տակտիկական՝ հարցաքննությունների հոգեբանական հիմունքները, հարցաքննությունների տակտիկական առանձնահատկությունները կոնֆլիկտային իրավիճակներում, վկայի, տուժողի, փորձագետի, մեղադրյալի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները, հարցաքննության տակտիկական:

2. Չնման (տեղանքի, շինությունների, տրանսպորտային միջոցների) և քննման տակտիկական:

3. Փորձարարության տակտիկական:

4. Ճանաչման ներկայացնելու տակտիկական:

5. Փորձաքննության նշանակման, փորձագետի եզրակացության հետազոտման տակտիկական առանձնահատկությունները և դրա գնահատման գիտական չափանիշները:

6. Իրեղեն ապացույցների, ապացուցողական և վարութային այլ գործողության արձանագրության և արտավարութային փաստաթղթերի հետազոտման տակտիկական առանձնահատկությունները:

Նաև հարկ ենք համարում ընդգծել, որ նշված համակարգի յուրաքանչյուր մաս, մեր կարծիքով, կարող է լինել գիտական առանձին հետազոտության առարկա:

**АРТУР ЧАХОЯН – Криминалистические вопросы защиты государственного обвинения.** – Статья посвящена исследованию теоретических вопросов системы криминалистической экспертизы.

В статье автор глубоко исследовал: третий раздел системы криминалистической экспертизы, который на протяжении многих лет традиционно именовался «следственной тактикой», исторические аспекты и современное состояние тактики защиты государственного

обвинения, а также актуальные проблемы и перспективы развития тактики защиты государственного обвинения.

Для этого автором изучены, рассмотрены и проанализированы мнения и точки зрения, содержащиеся в трудах отечественных и зарубежных криминалистов по данному вопросу. Необходимость разработки криминалистической инструкции по эффективной защите публичного обвинения в настоящее время, по мнению автора, не является дискуссионным научным вопросом, поскольку она обоснована и обусловлена не только потребностями теории, но и практикой судебного следствия.

В результате исследования автором в статье кратко изложены сущность и система тактики защиты публичного обвинения.

**Ключевые слова:** *система криминалистики, следственная тактика, криминалистическая тактика, судебная тактика, публичное обвинение, защита обвинения, прокурор, государственный обвинитель.*

**ARTUR CHAKHOYAN – Criminalistic Issues of Public Prosecution Defense.**— The article is devoted to the study of theoretical issues of the system of forensic science.

In the article, the author has deeply investigated the third section of the system of forensic science, which for many years has been traditionally called "investigation tactics", the historical aspects and current state of the tactics of public prosecution defense, as well as the current issues and development prospects of the tactics of public prosecution defense.

For this purpose, the author has studied, discussed and analyzed the opinions and viewpoints contained in the works of both domestic and foreign criminologists-scientists on this issue.

The need to develop forensic instructions for the effective defense of public prosecution is currently, in the author's opinion, no longer a controversial scientific issue, since it has been substantiated and is conditioned not only by the needs of theory, but also by the practice of judicial investigation.

As a result of the research, the author has briefly presented the essence and system of the tactics of public prosecution defense in the article.

**Key words:** *the criminalistics system, investigative tactics, criminalistic tactics, judicial tactics, public accusation, defense of the accusation, prosecutor, public prosecutor.*

## References

- Aghayan E.B., Ardi hayereni bacatrakan bararan, Erevan, 1976, hator 2:  
 Levon Ohanyan, Kriminalistika, «Tigran Mec» hratarakchutyun, Erevan, 2004:  
 Yengibaryan V.G., Arandzin qnnchakan gorcoghutyunneri katarman taktika, Erevan, 2018:  
 Averyanova T.B., Belkin R.S., Korukhov Yu.G., Rossiyskaya E.R., Kriminalistika: Uchebnik Dlya vuzov, Pod. Red. R.S. Belkina, M., Norma, 2006:  
 Arocker L.E., Ispolzovanie dannikh kriminalistiki v sudebnom razbiratelstve ugovovnikh del, M., «Yuridicheskoe literatura», 1964:  
 Baev O.Ya., Kriminalisticheskaya taktika I ygolovno-procesualniy zakon, Voronej, 1977:  
 Vozgarin I.A., Obshie polojeniya metodiki passledovaniya otdelnikh vidov prestupleniy, L., 1976:  
 Vorobev G.A., Planirovanie sudebnogo sledstviya, M., 1978:  
 Borobev G.A., Taktika i psikhologicheskie osobennosti sudebnikh deystviy, Krasnodar, 1996:  
 Gavlo V.K., Teoreticheskii problem I praktika primeneniya metodiki rassledovaniya otdelnikh vidov prestupleniy /Pod. red. A.N. Vasileva, Tomsk, 1985:  
 Grankov A.N., Ponyatie i soderjanie taktiki deyatelnosti advokada-zashitnika po ugovovnomu delu //Trudi Akademii upravleniya. Voprosi kriminalistiki i sudebnoy ekspertizi, M., 2003:

- Dulov A.V., Nesterenko P.D., Taktika Sledstvennikh Deystviy, Mn., 1971:
- Kislenko S.L., Sudebnoe sledstvie: sostoyanie I perspektivi, M., 2003:
- Korchagin A.Yu., Osnovi taktiki I metodiki sudebnogo razbiratelstva ugodovnikh del, Krasnodar, 2007:
- Komarov I.M., Obshie polozheniya taktiki podderjaniya gosudarstvennogo obvineniya v sude pervoy instancii, Nauchnie vedomosti, 2010, Vipusk 11, № 2 (73):
- Mitrichev S.P., Teoreticheskie osnovi sovetskoy kriminalistiki, M., 1965:
- Stoyanovskiy M.V., Klassifikacionniy podkhod v kriminalisticheskoy nauke i praktike (na primere kriminalisticheskoy taktiki) Diss. ... kand. yurid. Nauk, Voronej, 2001:
- Sukhov S.P., Teoreticheskie problem kriminalisticheskoy taktiki, Sverdlovsk, 1981:
- Ulyanov V.G., Gosudarstvennoe obvinenie v possiyskom ugodovnom sudoproizvodstve, M., 2002:

## ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ<sup>ID</sup>, ԵՎԱ ՍԱԴՈՅԱՆ<sup>ID</sup>

*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում քննարկվում են մասնավորապես «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքը և ոլորտը կարգավորող միջազգային փաստաթղթերով ամրագրված կարգավորումները՝ համադրելով պայմանագիրը միակողմանի փոփոխելու և լուծելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգավորումների հետ: Հեղինակները եզրակացնում են, որ զբոսաշրջային պայմանագրի ժամկետային բնույթով պայմանավորված, ինչպես նաև հիմք ընդունելով, որ այն ենթադրում է մեկանգամյա կատարում, այս պայմանագրի դեպքում պայմանագրի միակողմանի փոփոխման և լուծման՝ Օրենսգրքով նախատեսված դատական ընթացակարգի կիրառումը նպատակահարմար չէ: Փոխարենն առաջարկվում է օրենքով հստակ սահմանել պայմանագրի լուծման հիմք հանդիսացող՝ կողմերից յուրաքանչյուրի թույլ տված էական խախտումների շրջանակը, ինչպես նաև հանգամանքների էական փոփոխության առավել տիպական դրսևորումները՝ նախատեսելով այդ հիմքերն ի հայտ գալու դեպքում օրենքի ուժով շահագրգիռ կողմի՝ պայմանագիրը միակողմանի արտադատական կարգով լուծելու իրավունքը և այդ դեպքում՝ կողմերի միջև ծախսերի բաշխման կանոններ, այն է՝ ծառայության արժեքի վերադարձ: Հոդվածում հեղինակները զբոսաշրջային պայմանագրի օրինակով անդրադարձ են կատարում նաև պայմանագիրը միակողմանի լուծելու և դրա կատարումից միակողմանի հրաժարվելու ինստիտուտների հարաբերակցության որոշ հիմնահարցերի:

**՝ Արմեն Հայկյանց** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ

**Армен Айкянц** – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой гражданского права ЕГУ

**Armen Haykyants** – Doctor of Law, Professor, Head of YSU Chair of Civil Law

Էլ. փոստ՝ [ahaykyants@ysu.am](mailto:ahaykyants@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0003-4531-4647>

**՝ Եվա Սադոյան** – ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

**Ева Сагоян** – советник Генерального прокурора Республики Армения, преподаватель кафедры гражданского права ЕГУ

**Yeva Saghoyan** – Advisor to the Prosecutor General of the Republic of Armenia, Lecturer at YSU Chair of Civil Law

Էլ. փոստ՝ [eva.g.saghoyan@gmail.com](mailto:eva.g.saghoyan@gmail.com) ORCID ID: <https://orcid.org/0000-0001-6712-564X>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 08.09.2025

Գրախոսվել է՝ 21.11.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

**Բանալի բառեր** – պայմանագրի փոփոխում, պայմանագրի լուծում, զբոսաշրջային ծառայություններ, դատական կարգ, միակողմանի հրաժարում, հանգամանքների էական փոփոխություն

Քաղաքացիական շրջանառության մասնակիցներն ազատ են փոխադարձ համաձայնությամբ կնքված պայմանագրի պայմանները փոփոխելու և լուծելու հարցում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք<sup>1</sup>, հոդված 466): Սակայն պայմանագիրը փոփոխել և լուծել հնարավոր է նաև առանց կողմերի միջև փոխադարձ համաձայնության՝ նրանցից մեկի միակողմանի կամահայտնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանել է կողմերից մեկի պահանջով պայմանագիրը փոփոխելու և լուծելու հիմքերը ու կարգը: Այսպես, պայմանագիրը կողմերից մեկի պահանջով կարող է փոփոխվել կամ լուծվել **դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված պայմանագրի էական խախտման կապակցությամբ կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում** (466-րդ հոդված, մաս 2-րդ): Շահագրգիռ կողմի պահանջով **դատական կարգով** պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել նաև հանգամանքների էական փոփոխության հիմքով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ չի բխում դրա էությունից (հոդված 467, մաս 1-ին):

Օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում հնարավոր է միակողմանի հրաժարվել պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց, ինչի արդյունքում պայմանագիրը համապատասխանաբար կհամարվի լուծված կամ փոփոխված (Քաղ. օր., հոդված 466, մաս 3):

Պայմանագրից միակողմանի հրաժարվելու հնարավորություն Օրենսգիրքը նախատեսել է նաև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի կողմերի համար (Քաղ. օր., հոդված 780): Սպառողի նախաձեռնությամբ պայմանագիրը միակողմանի լուծելու (հրաժարվելու) հիմքեր է սահմանում նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ ՄԻՊ օրենք)<sup>2</sup>:

Պայմանագրի փոփոխման և լուծման նշված կարգավորումները, ընդհանուր կանոնի համաձայն, պետք է կիրառելի լինեն նաև զբոսաշրջային պայմանագրի նկատմամբ: Սակայն այս պայմանագրի որոշ առանձնահատկություններն իրենց հետքն են թողնում դրա փոփոխման և լուծման վրա, և դրանով էլ պայմանավորված է այդ գործընթացի հատուկ իրավական կարգավորումը:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998, ուժի մեջ՝ մտել 01.01.1999, ՀՀՊՏ 1998.08.10/17(50), այսուհետ նաև՝ Քաղ. օր., Օրենսգիրք:

<sup>2</sup> Տե՛ս «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենք, ՀՕ-197, ընդունվել է 26.06.2001, ուժի մեջ մտել՝ 01.01.2002, ՀՀՊՏ 2001.08.02/25(157), Հոդ. 580, հոդվածներ 26-րդ, 27-րդ, 30-րդ:

«Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքով<sup>3</sup> օրենսդիրը փորձել է սպառողի հետ կնքվող պայմանագրի փոփոխման և լուծման իրավակարգավորումը համահունչ դարձնել եվրոպական չափանիշներին՝ օրենսդրական կարգավորումների հիմքում դնելով «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» Եվրոպական խորհրդի և Խորհրդարանի 2015 թ. նոյեմբերի 25-ի դիրեկտիվի<sup>4</sup> կարգավորումները: ՀՀ օրենսդրական կարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ այդ հարաբերությունները դարձյալ համապարփակ և լիարժեք կարգավորման չեն ենթարկվել, և նախատեսված նորմերն իրենց հերթին նոր հարցեր են առաջ բերում:

Պատվիրատուի (ըստ Օրենքի՝ սպառողի) հետ կնքվող պայմանագրի պայմաններից Օրենքն անդրադարձել է միայն զբոսաշրջային փաթեթի գնի փոփոխությանը: Այսպես, Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ զբոսաշրջային փաթեթի գինը կարող է փոխվել միայն այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված են դրա հիմքերը և պայմանները, որոնք պայմանավորված են վառելիքի կամ այլ էներգակիրների գներից կախված՝ տրանսպորտային ծառայությունների գների, ինչպես նաև հարկերի, տուրքերի, այլ պարտադիր վճարների և տարադրամի փոխարժեքի փոփոխություններով: Անգամ թվարկված հիմքերի առկայության դեպքում զբոսաշրջային փաթեթի գինը չի կարող բարձրացվել առանց սպառողին զբոսաշրջային փաթեթի մեկնարկից առնվազն 21 օր առաջ համապատասխան հաշվարկներով հիմնավորված ծանուցման (հոդված 23, մաս 8):

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ թվարկված հիմքերով զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պայմանագրի գնի միակողմանի փոփոխությունը (եթե նման հնարավորություն նախատեսված է պայմանագրում) հնարավոր է օրենքի ուժով, այսինքն՝ **ոչ դատական կարգով**: Սա, ըստ էության, պայմանագիրը միակողմանիորեն միայն դատական կարգով փոխելու՝ Օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգից բացառություն է: Ընդ որում՝ դա ընդհանուր կանոնից միակ բացառությունը չէ. նման

<sup>3</sup> Տե՛ս «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-4-Ն, ընդունվել է 22.12.2023, ուժի մեջ է մտնել 01.09.2024, սկզբնաղբյուրը՝ միասնական կայք՝ 2024.01.9-2024.01.21, այսուհետ նաև՝ Օրենք: Նկատի ունենալով, որ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «զբոսաշրջային ծառայությունների մատուցում» եզրույթն ամբողջությամբ չի արտացոլում խնդրո առարկա պարտավորության առարկան, որը զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից անմիջականորեն մատուցվող զբոսաշրջային ծառայություններից բացի, ընդգրկում է նաև երրորդ անձանց կողմից զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու գործունեությունը, սույն հոդվածի շրջանակներում քննարկվող պայմանագիրը պայմանականորեն բնորոշվում է «զբոսաշրջային պայմանագիր» եզրույթով:

<sup>4</sup> Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of 25 November 2015 “On package travel and linked travel arrangements”, amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and repealing Council Directive 90/314/EEC (այսուհետ նաև՝ Դիրեկտիվ կամ ԵՄ դիրեկտիվ):

բացառություն Օրենսգիրքը նախատեսել է նաև պայմանագրի ընդհանուր պայմանները (հոդված 443) միակողմանի փոփոխելու դեպքում (ՀՀ քաղ. օր. հոդված 468, մասեր 1.1, 1.2)<sup>5</sup>. կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից պայմանագիրը միակողմանի փոփոխելու կամ լուծելու հնարավորություն է նախատեսված նաև մատակարարման պայմանագրի կողմերի համար (հոդված 538) և այլն:

Հարկ է նշել, որ նույն տրամաբանությունն ինչպես զբոսաշրջային պայմանագրի գնի, այնպես էլ պայմանագրի ոչ էական պայմանների միակողմանի փոփոխության կապակցությամբ արտացոլված է նաև ԵՄ դիրեկտիվում (հոդված 11, մաս 1): Ուշագրավ է, որ եվրոպական օրենսդրի մոտեցումն այլ է զբոսաշրջային պայմանագրի էական պայմանների առնչությամբ. դրանց փոփոխությունը հնարավոր է **միայն կողմերի համաձայնությամբ**: Մասնավորապես՝ էական պայմանների փոփոխության անհրաժեշտության դեպքում Դիրեկտիվը պարտավորեցնում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտին անհապաղ և մատչելի ձևով ճանապարհորդին տեղեկացնել կատարված փոփոխությունների, զբոսաշրջային փաթեթի գնի վրա դրանց ազդեցության, փոփոխություններն ընդունելու ժամկետի, ինչպես նաև այդ ժամկետում առաջարկյին չարձագանքելու դեպքում ներպետական օրենսդրությամբ սահմանված իրավական հետևանքների մասին (հոդված 11, մաս 3):

Զբոսաշրջային ոլորտի կանոնակարգման եվրոպական մոդելն անթույլատրելի է համարում, պայմանագրի գնից բացի, ցանկացած այլ էական պայմանի միակողմանի փոփոխությունը. զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պետք է իրավունք ունենա միակողմանի փոփոխելու պայմանագրի պայմանները, իսկ պատվիրատուն իր հերթին՝ միակողմանի լուծելու այն, եթե փոփոխությունները վերաբերում են պայմանագրի էական պայմաններին, և նա համաձայն չէ դրանց հետ<sup>6</sup>:

Անդրադառնալով քննարկվող պայմանագրի լուծման հիմքերին՝ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, կողմերի համար նախատեսելով պայմանագիրը միակողմանի լուծելու ընդհանուր հիմքեր, առանձին

<sup>5</sup> Օրենսգրքի 468-րդ հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր պայմանները (հոդված 443) միակողմանի կարելի է փոփոխել, եթե դրա հնարավորությունը նախատեսված է կողմերի միջև կնքված պայմանագրի ընդհանուր պայմաններին հղում պարունակող պայմանագրով կամ օրենքով: Նույն հոդվածի 1.2-րդ մասի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր պայմանները միակողմանի փոփոխելու դեպքում դրանք փոփոխող կողմը փոփոխության վերաբերյալ մյուս կողմին տեղեկացնում է կողմերի միջև համաձայնեցված այնպիսի եղանակով, որն ապահովում է կատարված փոփոխություններին մատչելի եղանակով և ամբողջապես ծանոթանալու, դրանք պահպանելու և անփոփոխ կերպով վերարտադրելու հնարավորությունները: Փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է մինչև փոփոխությունն ուժի մեջ մտնելը՝ ողջամիտ ժամկետում, եթե պայմանագրով, օրենքով կամ այլ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ:

<sup>6</sup> St u **Carlos Torres, Javier Melgosa Arcos, Laurence Jegouzo** and others, Collective Commentary about the New Package Travel Directive, ESHTE, 2020, էջ 260:

պայմանագրերի դեպքում մասնավորեցրել է դրանք՝ սահմանելով կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ պայմանագիրը միակողմանի լուծելու (կամ դրանից հրաժարվելու<sup>7</sup>) հատուկ հիմքեր:

«Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքը նույնպես նախատեսել է սպառողի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու առանձին հիմքեր: Այսպես, Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սպառողն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանի լուծելու զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը, եթե սպառողի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտն իրեն փոխանցված գումարը չի փոխանցել այլ զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց:

Օրենքի 23-րդ հոդվածի 9-րդ մասով, որպես սպառողի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու հիմք, նախատեսվել է **զբոսաշրջային փաթեթի գինը 8 տոկոսից ավելի բարձրանալը**: Ընդ որում՝ այս դեպքում սպառողն ազատվում է միակողմանի լուծման համար որևէ տուգանք վճարելու պարտականությունից: Հարկ է նշել, որ գնի էական փոփոխությունը, որպես սպառողի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու պայման նախատեսելը, ոչ միայն համահունչ է Դիրեկտիվի կարգավորումներին, այլև բխում է եվրոպական սպառողական իրավունքի այն կանխադրույթից, որ սպառողին պայմանագիրը լուծելու հնարավորություն չտալն այն դեպքում, երբ պայմանագրի գինը սկզբնականի համեմատ էականորեն բարձրացել է, սպառողի հետ կնքվող պայմանագրի անարդար պայման է<sup>8</sup>:

Միննույն ժամանակ, Դիրեկտիվը ճանապարհորդին իրավունք է տալիս **նախքան ճանապարհորդությունը** պայմանագիրը միակողմանի լուծել նաև այլ դեպքերում, մասնավորապես

1) կազմակերպչի կողմից պայմանագրի էական պայմաններից մեկը փոխելու դեպքում, եթե ճանապարհորդը չի տվել դրանց վերաբերյալ համաձայնություն,

2) կազմակերպչի կողմից ճանապարհորդի այն հատուկ պահանջները չապահովելու դեպքում, որոնց վերաբերյալ նա տվել էր իր համաձայնությունը (հոդված 11, մաս 2),

3) ժամանման վայրում կամ դրա անմիջական մոտակայքում արտակարգ և անխուսափելի հանգամանքներ ի հայտ գալու դեպքում, եթե դրանք զգալիորեն անդրադառնում են զբոսաշրջային փաթեթի մատուցման կամ ճանապարհորդի՝ ժամանման վայր հասնելու վրա (հոդված 12, մաս 2):

<sup>7</sup> Պայմանագիրը միակողմանի լուծելու և դրա կատարումից միակողմանի հրաժարվելու ինստիտուտների հարաբերակցության մասին կխոսվի հաջորդիվ:

<sup>8</sup> Տե՛ս «Սպառողների հետ կնքվող պայմանագրերի անարդար պայմանների մասին» Դիրեկտիվի հավելվածի 1-ին կետը (Council directive 93/13/EEC of 5 April 1993 on unfair terms in consumer contracts).

Ընդ որում՝ ճանապարհորդի կողմից պայմանագիրը թվարկված հիմքերից որևէ մեկով լուծելու դեպքում վերջինս իրավունք ունի պահանջելու **զբոսաշրջային փաթեթի գումարի ամբողջական վերադարձ**՝ առանց լրացուցիչ այլ փոխհատուցման (Դիրեկտիվ, հոդված 12, մաս 2):

Դիրեկտիվը, որպես առանց որևէ վճարի ճանապարհորդի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու, բայց միաժամանակ նաև **վնասների հատուցում** պահանջելու հիմք, նախատեսում է **զբոսաշրջային ծառայությունները ոչ պատշաճ մատուցելը**, եթե դա էականորեն անդրադառնում է զբոսաշրջային փաթեթի մատուցման վրա, և եթե ճանապարհորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում կազմակերպիչը չի վերացրել թերությունները (հոդված 13, մաս 6): Ծառայություններում էական և չվերացվող թերություններ հայտնաբերելու դեպքում սպառողի համար պայմանագիրը լուծելու և վնասի հատուցում պահանջելու իրավունք նախատեսել է նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (հոդված 27, մաս 1):

Ինչ վերաբերում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքին, ապա Օրենքն այդ կապակցությամբ առանձնահատուկ հիմքեր չի նախատեսել, իսկ Դիրեկտիվը նման հնարավորություն նախատեսել է միայն օբյեկտիվ հանգամանքների դեպքում: Մասնավորապես՝ կազմակերպիչը կարող է լուծել պայմանագիրը և վճարել ճանապարհորդի վճարած գումարն ամբողջությամբ, բայց ոչ այլ լրացուցիչ վճարներ, եթե զբոսաշրջիկների քանակը պակաս է նախատեսված նվազագույն քանակից<sup>9</sup>, կամ եթե նա չի կարող մատուցել ծառայություններն անկանխատեսելի և անխուսափելի հանգամանքների հետևանքով և, նախքան ճանապարհորդությունը, այդ մասին անհապաղ տեղեկացրել է ճանապարհորդին (հոդված 12, մաս 3):

Թե՛ պատվիրատուի (սպառողի), թե՛ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու՝ Օրենքով և Դիրեկտիվով նախատեսված հիմքերի ուսումնասիրությունից դժվար չէ նկատել, որ դրանք զբոսաշրջային ծառայությունների մատուցման հարաբերություններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որպես պայմանագրի փոփոխման և լուծման հիմքեր, պայմանագրի էական խախտման կամ հանգամանքների էական փոփոխության առանձին դրսևորումներ են:

Միևնույն ժամանակ, զբոսաշրջային պայմանագրի փոփոխման և լուծման վերաբերյալ վերոշարադրյալ կարգավորումների և քաղաքացիաիրավական

<sup>9</sup> Զբոսաշրջիկների անհրաժեշտ քանակը չապահովվելու դեպքում զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը լուծելու հիմքը, թեև անուղղակիորեն, նախատեսվել է նաև Օրենքով: Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, որպես զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր դրույթ, նախատեսվում է մարդկանց ոչ բավարար քանակի պատճառով փաթեթը չեղյալ հայտարարելու (նկատի ունի լուծելը) մասին:

պայմանագրի փոփոխման ու լուծման՝ Օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգի համադրման արդյունքում ակներև է, որ դրանք նախատեսում են պայմանագրի միակողմանի փոփոխման և լուծման տարբեր ընթացակարգեր:

Մասնավորապես՝ Օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ կողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումը ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ 30-օրյա ժամկետում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պայմանագրի միակողմանի փոփոխման կամ լուծման պահանջով դատարան դիմելու պայմաններին, նշել է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել կողմին պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջ ներկայացնել դատարան միայն հետևյալ դեպքերից հետո՝

- *պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումը ստանալուց,*

*կամ*

- *այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո,*  
*կամ*

- *ժամկետի բացակայության դեպքում՝ առաջարկը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում<sup>10</sup>:*

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ պայմանագրի փոփոխման կամ լուծմանն ուղղված՝ կողմի առաջարկը չընդունելու կամ դրան չարձագանքելու դեպքում վրա հասնող հետևանքը, ընդհանուր կանոնի համաձայն, այդ կողմի պահանջով **դատական կարգով** պայմանագրի փոփոխում կամ լուծում պահանջելն է: Մեր կարծիքով, սակայն, զբոսաշրջային պայմանագրի դեպքում փոփոխման կամ լուծման դատական ընթացակարգն արդարացված չէ ներքոշարադրյալ հիմնավորմամբ:

Այս պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու հիմքերը կարող են ի հայտ գալ ինչպես նախքան ճանապարհորդությունը, այնպես էլ վերջինիս ընթացքում: Այն դեպքում, երբ կողմի թույլ տված էական խախտումը կամ հանգամանքների էական փոփոխությունն առաջացել է նախքան ճանապարհորդությունը, պայմանագիրը լուծելու կապակցությամբ կողմերի միջև համաձայնության բացակայության պարագայում տեսականորեն հնարավոր է դատական կարգով պահանջել պայմանագրի փոփոխում կամ լուծում: Սակայն զբոսաշրջային պայմանագրերը սովորաբար ունեն գործողության կարճ ժամկետ, ընդհուպ՝ մի քանի օր, ընդ որում՝ դրանք կապված են լինում հստակ ամսաթվերի հետ (թռիչք, էքսկուրսիաներ և այլն): Մինչդեռ վեճերի լուծման

<sup>10</sup> Տե՛ս թիվ ԵՇԴ/1103/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.10.2012 թվականի որոշումը:

դատական ընթացակարգն անգամ պարզեցված վարույթների դեպքում կարող է տևել նվազագույնը ամիսներ: Դատական ընթացակարգը ներառում է մի շարք փուլեր, բացառված չէ, որ կարող է բողոքարկվել ընդունված ակտը. նման պայմաններում դատարանի կողմից զբոսաշրջային պայմանագրի փոփոխման կամ լուծման վեճը քննարկելու պահին մեծ է հավանականությունը, որ ճանապարհորդության նախատեսված ժամկետն ավարտված կլինի: Անգամ պայմանագրի ակնհայտ խախտման դեպքում դատական ընթացակարգը չի ապահովում օպերատիվ արձագանք, ինչը կարող է հանգեցնել այն բանին, որ սպառողը գրկվի այլընտրանքային ծառայություն ստանալու հնարավորությունից, կամ առնվազն վերջինիս համար առաջանան լրացուցիչ ծախսեր: Հետևաբար, դատական ակտով կողմերից որևէ մեկին պայմանագրի փոփոխում կամ լուծում պարտավորեցնելն այս դեպքում կարող է ժամանակավրեպ լինել:

Զբոսաշրջային պայմանագիրը դատական կարգով լուծելու մեխանիզմն արդարացված չի թվում նաև այն դեպքում, երբ նույն հիմքերն առաջանան ճանապարհորդությունը սկսելուց հետո, այսինքն՝ երբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտը փաստացի, թեկուզև՝ ոչ պատշաճ, սակայն կատարած կլինի զբոսաշրջային ծառայություններ մատուցելու կամ դրանց մատուցումը կազմակերպելու՝ իր պարտավորությունը, իսկ պատվիրատուն վճարած կլինի դրա դիմաց: Այդ դեպքում պայմանագրի լուծման պահանջ դատարան ներկայացնելն ինքնին առարկայազուրկ է: Թեև պարտավորության ոչ պատշաճ կատարումն իրավական առումով չի դադարեցնում զբոսաշրջային պայմանագիրը, սակայն զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորության դեպքում այն փաստացի դադարում է, քանի որ այս պարտավորության առարկան ծառայության մատուցման մեկանգամյա գործողությունն է, ուստի ճանապարհորդությունը սկսվելու պահից պայմանագրի նպատակն ըստ էության կլինի սպառված, իսկ այն լուծելու պահանջ ներկայացնելն էլ՝ ինքնանպատակ:

Ակնհայտ է, որ նշված իրավիճակում պայմանագրի լուծումը չի կարող վերականգնել շահագրգիռ կողմի խախտված իրավունքները, ուստի այդ իրավունքների դատական պաշտպանությունը պետք է ուղղված լինի ոչ թե փաստացի սպառված իրավահարաբերությունների դադարեցմանը, այլ դրա արդյունքում առաջացած հետևանքների վերացմանը: Հետևաբար՝ այս դեպքում խախտված իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացնել ոչ թե պայմանագրի լուծման, այլ պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու միջոցով:

Ամփոփելով ասվածը՝ գտնում ենք, որ դատական պաշտպանության եղանակը զբոսաշրջային պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում արդյունավետ չէ և չի համապատասխանում այս պայմանագրի բնույթին: Որպես նշված տեսակետի հիմնավորում՝ ավելորդ չէ նաև ասել, որ դատական կարգով պայմանագիրը միակողմանի փոփոխելու կամ լուծելու առնչությամբ ՀՀ

դատական պրակտիկայում առկա սակավաթիվ գործերի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ պայմանագրի լուծման հայցեր քննելիս դատարանները նույնպես դժվարանում են կիրառել Օրենսգրքով նախատեսված կարգավորումները: Այս առումով ուշագրավ են հաջորդիվ ներկայացվող դատական գործի հանգամանքները: Այսպես, *հայցվոր-սպառողը դատարան էր դիմել իր և զբոսաշրջային ընկերության միջև կնքված զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծելու և վնասի հատուցում ստանալու պահանջներով՝ այն հիմնավորմամբ, որ զբոսաշրջային ընկերությունը չի մատուցել պայմանագրով նախատեսված՝ սպառողի ճանապարհորդությունը կազմակերպելու ծառայությունը: Դատարանը հայցը բավարարել էր մասնակի՝ վնասի հատուցման պահանջի մասով, իսկ պայմանագիրը լուծելու պահանջի մասով մերժել էր՝ որպես հիմնավորում նշելով, որ դատարանը հաստատված է համարել պատասխանողի զբոսաշրջային ընկերության կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունը չկատարելու փաստը, ինչի արդյունքում բավարարվում է պատճառված վնասը հատուցելու պահանջը: Իսկ ինչ վերաբերում է պայմանագիրը լուծելու պահանջին, ապա դատարանը գտել էր, որ բացակայում է պայմանագիրը կողմերից մեկի պահանջով դատական կարգով լուծելու հիմքերից որևէ մեկը, որպիսիք են՝ պայմանագրի կողմերից մեկի կողմից դրա էական խախտումը և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքը<sup>11</sup>: Դատարանը, արձանագրելով պարտավորության էական խախտման փաստը, այն չի դիտարկել պայմանագրի լուծման հիմք հանդսացող էական խախտում, ինչը ևս մեկ անգամ վկայում է դատական կարգով պայմանագիրը միակողմանի լուծելու ինստիտուտի գործնական կիրառության խնդիրների մասին:*

Նշվածի համատեքստում ողջամտորեն կարող է հարց բարձրացվել, թե այս պայմանագրի կողմերը, օգտվելով Օրենսգրքի 780-րդ հոդվածով նախատեսված՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու հնարավորությունից, իրավասու չեն արդյոք կոնտրագենտի կողմից էական խախտում թույլ տալու կամ պայմանագրի լուծման՝ Օրենքով կամ Դիրեկտիվով նախատեսված այլ հիմքերի հայտ գալու դեպքում առանց դատարան դիմելու հրաժարվելու պայմանագրի կատարումից: Կարծում ենք՝ պատասխանը բացասական է, քանի որ պայմանագիրը միակողմանիորեն լուծելու և պայմանագրից միակողմանի հրաժարվելու ինստիտուտները չեն կարող նույնացվել: Ավելորդ չէ նշել, որ թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մակարդակում այս ինստիտուտների շփոթը նոր չէ

<sup>11</sup> Տե՛ս թիվ ԵԴ/19374/02/18 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 02.05.2019 թ. վճիռը:

քաղաքացիական իրավունքի գիտության համար: Որոշ հեղինակներ փաստում են, որ այս իրավական ընթացակարգերը բովանդակային առումով միանգամայն տարբեր են<sup>12</sup>:

Թեպետ Օրենսգրքում (տե՛ս, օրինակ՝ հոդված 538-րդ), ինչպես նաև այլ օրենսդրական ակտերում (ՄԻՊ օրենք, հոդվածներ 26, 27) երբեմն «պայմանագրի լուծում» և «պայմանագրից հրաժարում» եզրույթները կիրառվում են որպես հոմանիշներ, այնուամենայնիվ դրանք տարբեր իրավական կատեգորիաներ են ինչպես իրենց կիրառման ընթացակարգով, այնպես էլ առաջացրած հետևանքներով և պետք է տարբերվեն նաև կիրառման հիմքերով: Մասնավորապես՝ եթե պայմանագրի միակողմանի լուծումը, ընդհանուր կանոնի համաձայն, ենթադրում է դատական ընթացակարգ, ապա օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում դրանից հրաժարվելը կարող է կատարվել առանց դատարան դիմելու:

Առավել էական է պարտավորությունը դադարեցնելու այս երկու եղանակների առաջացրած հետևանքների տարբերությունը: Այսպես, Օրենսգիրքը պատվիրատուին թույլ է տալիս հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ **կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով**, իսկ կատարողին՝ **պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով**: Նման հետևանքն արդարացի է թվում այն դեպքում, երբ կողմերից մեկը, **առանց որևէ հատուկ հիմքի**, ուղղակի հրաժարվում է պայմանագրի կատարումից: Այստեղ արդեն պարտավորության դադարման դեպքում առաջացող հետևանքը կարող է դիտարկվել որպես որոշակի «փոխհատուցում»՝ պայմանագրից առանց հիմքի վաղաժամկետ հրաժարվելու համար:

Մեր կարծիքով, նույն հետևանքն իրավաչափ չի լինի այն դեպքում, երբ պայմանագրի միակողմանի լուծման անհրաժեշտությունն առաջանա կոնստրազենտի կողմից էական խախտում թույլ տալու կամ որևէ օբյեկտիվ հանգամանքի հիմքով: Եվ պատահական չէ, որ Օրենսգիրքը պայմանագրի էական խախտման կամ հանգամանքների էական փոփոխության դեպքում նախատեսել է ոչ թե պայմանագրից հրաժարվելու, այլ այն լուծելու ընթացակարգ՝ վրա հասնող այլ հետևանքներով: Մասնավորապես, պայմանագրի լուծման իրավական հետևանքների կապակցությամբ Օրենսգիրքը, որպես ընդհանուր կանոն, նախատեսել է, որ կողմերն իրավունք չունեն պահանջելու վերադարձնել այն, ինչը կատարել են պարտավորությամբ մինչև պայմանագրի փոփոխման կամ լուծման պահը: Մինչև ժամանակ, Օրենսգիրքը նախատեսել է **օրենքով** կամ կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսելու հնարավորություն (հոդված 469, մաս 4):

<sup>12</sup> См. у РЫЖОВ Р. Расторжение договора и односторонний отказ от его исполнения. вопросы соотношения, УДК 347.43, <https://cyberleninka.ru/article/n/rastorzhenie-dogovora-i-odnostoronniy-otkaz-ot-ego-ispolneniya-voprosy-sootnosheniya/viewer>.

Ինչ վերաբերում է կողմերից մեկի կողմից թույլ տված էական խախտման հիմքով պայմանագիրը լուծելուն, ապա Օրենսգիրքը մյուս կողմին թույլ է տալիս այդ դեպքում պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները (հոդված 469, մաս 5):

Ակնհայտ է, որ նկարագրված իրավիճակում, երբ պայմանագրի լուծման հիմքը զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պայմանագրի էական խախտումն է, պատվիրատուն պայմանագրից միակողմանի հրաժարվելու ընթացակարգի կիրառման դեպքում ստիպված կլինի հատուցել ծառայությունը մատուցողի փաստացի ծախսերը, մինչդեռ պայմանագիրը միակողմանի լուծելու՝ Օրենսգրքով նախատեսված ընթացակարգի կիրառման դեպքում նա ոչ միայն նման պարտականություն չի ունենա, այլև կարող է անգամ պահանջել իրեն պատճառած վնասի հատուցում:

Վերոնշյալից ելնելով՝ գտնում ենք, որ պայմանագրից միակողմանի հրաժարվելու ընթացակարգն այս դեպքում պաշտպանության պատշաճ և արդյունավետ մեխանիզմ չէ, ուստի անհրաժեշտ է կիրառել պայմանագիրը միակողմանի լուծելու ընթացակարգը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այս պայմանագրի ժամկետային բնույթը, համապատասխանաբար նաև Օրենքով նախատեսված կոնկրետ հիմքեր ի հայտ գալու դեպքում պայմանագիրը հնարավորինս սեղմ ժամկետում միակողմանի փոփոխելու կամ լուծելու անհրաժեշտությունը, գտնում ենք, որ օրենքի ուժով, արտադատական կարգով այս պայմանագիրը միակողմանի փոփոխելն ու լուծելը միանգամայն իրավաչափ են:

Դրանով հանդերձ՝ որոշակի հարցեր են ծագում պայմանագրի լուծման իրավական հետևանքների կապակցությամբ: Օրենսգիրքը նախատեսել է, որ կողմերն իրավունք չունեն պահանջելու վերադարձնել այն, ինչը կատարել են պարտավորությամբ մինչև պայմանագրի փոփոխման կամ լուծման պահը, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ (հոդված 469, մաս 4), իսկ եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջելու հատուցել պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները (հոդված 469, մաս 5):

Պայմանագրի փոփոխման և լուծման՝ Օրենսգրքի 469-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասով նախատեսված հետևանքների համադրման արդյունքում հարց է ծագում՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից թույլ տված էական խախտման հիմքով պայմանագրի լուծման պահանջ ներկայացնելիս, որպես պատճառված վնաս, պատվիրատուն կարող է արդյոք պահանջել իր կատարածը, որի դիմաց հանդիպական բավարարում չի ստացել կամ ստացել է մասնակի: Այլ կերպ ասած՝ ծառայության դիմաց վճարված գումարը կարող է արդյոք ընդգրկվել էական խախտման արդյունքում պատճառված վնասի կատեգորիայի մեջ և համապատասխանորեն ենթակա լինել վերադարձի:

Իրավաբանական գրականության մեջ ընդունված է տեսակետ, որ պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները պայմանավորված են ոչ այնքան պայմանագրի խախտման փաստով, որքան դրա հարկադրված դադարեցման հետևանքներով: Այսինքն՝ խոսքն այսպես կոչված «երկրորդային բնույթի» վնասների մասին է, որոնք ավելանում են խախտման փաստով պայմանավորված վնասներին<sup>13</sup>: Ա. Կարապետովն անգամ փորձել է թվարկել այդ վնասների հնարավոր շրջանակը. մասնավորապես, դրանք են՝ **առաջին**, լուծվող պայմանագրի գնի և այլ անձի հետ հետագայում կնքվող պայմանագրի գնի տարբերությունը, եթե վերջին պայմանագրի գինը գերազանցել է լուծվող պայմանագրի գինը, **երկրորդ**, լուծված պայմանագրի գնի և նման պայմանագրի սովորական շուկայական գնի տարբերությունը, **երրորդ**, տուժողի բաց թողնված օգուտը, պայմանագրի լուծման հետ կապված ծախսերը<sup>14</sup>: Այսպիսով, Ա. Կարապետովի դիրքորոշումն այն է, որ «պայմանագրի լուծմամբ պատճառված վնաս» կատեգորիան իր մեջ չի ընդգրկում այն, ինչը պայմանագրով կողմերը ստացել են մինչև դրա լուծումը<sup>15</sup>:

Համակարծիք լինելով այս մեկնաբանությանը՝ կարծում ենք, որ այն թույլ է բացատրել Օրենսգրքի 469-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արգելքի և նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավունքի զուգահեռ գոյության հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, օրենսդիրը հնարավոր է համարում պարտավորությամբ մինչև պայմանագրի փոփոխման կամ լուծման պահը կատարվածը վերադարձնելու պահանջ ներկայացնելու արգելքից օրենքով կամ պայմանագրով բացառություն նախատեսել: Ինչպես նկատեցինք, պայմանագրի լուծման որոշ հիմքերի դեպքում նման բացառություն արդեն իսկ նախատեսված է ինչպես Օրենքում, այնպես էլ Դիրեկտիվում. երկու ակտերն էլ նախատեսում են թվարկված հիմքերով պայմանագիրը լուծելու դեպքում զբոսաշրջային փաթեթի արժեքը սպառողին վերադարձնելու պայման, ինչը պայմանագրի լուծման արտադատական ընթացակարգ նախատեսելու դեպքում միանգամայն տեղին է թվում:

<sup>13</sup> St' u Договорное право. Общая часть, Постатейный комментарий к статьям 420-453 Гражданского кодекса Российской Федерации, под ред. А. Карапетова, Второе изд., М., Логос, 2020, էջ 1418:

<sup>14</sup> St' u նույն տեղը:

<sup>15</sup> Այս հետևությունն ուղղակիորեն բխում է ՌԴ քաղաքացիական օրենսգրքից, որը, ամրագրելով կողմերից մեկի կողմից պայմանագրի էական խախտման հիմքով պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու հիմքով մյուս կողմի՝ պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասների հատուցում պահանջելու իրավունքը, միաժամանակ սահմանել է, որ եթե մինչև պայմանագրի փոփոխումը կամ լուծումը կողմերից մեկը, մյուս կողմից ստանալով պարտավորության կատարում, չի կատարել իր պարտավորությունը կամ ոչ ամբողջական է կատարել այն, կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են անհիմն հարստացման հետ կապված կանոնները, եթե պարտավորության էությունից այլ բան չի բխում (ՌԴ քաղաքացիական օրենսգրքի, հոդված 453, մասեր 4, 5):

Այլ խոսքով՝ մինչև պայմանագրի լուծումը միմյանց հանդեպ կատարվածը «վնաս» կատեգորիայից տարանջատելու և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 4-րդ մասով ընձեռված՝ օրենքով այլ կանոն նախատեսելու հնարավորությունն օգտագործելով՝ պայմանագրի լուծման իրավական հետևանքի առնչությամբ հստակ կանոններ նախատեսելը թույլ կտա կողմերին օրենքով նախատեսված հիմքերն ի հայտ գալու ուժով առանց դատարան դիմելու լուծել պայմանագիրը: Իսկ այն դեպքում, երբ կողմերից մեկը պայմանագրի էական խախտման հիմքով կրել է լրացուցիչ վնաս, վերջինս զրկված չէ վնասի հատուցման հայց ներկայացնելու միջոցով ապահովել իր քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով Դիրեկտիվով և Օրենքով ամրագրված՝ պայմանագիրը լուծելու հիմքերին՝ կարծում ենք, որ դրանք անհրաժեշտ է դասակարգել երկու խմբերում՝ պայմանագրի էական խախտման և հանգամանքների էական փոփոխության դրսևորումներով:

Թվարկված հիմքերից զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պայմանագրի էական խախտման դրսևորումներ են՝ *նախքան ճանապարհորդությունը պայմանագրի էական պայմաններից մեկը փոխելը, եթե սպառողը չի տվել դրա վերաբերյալ համաձայնություն, սպառողի այն հատուկ պահանջները չապահովելը, որոնց վերաբերյալ զբոսաշրջային գործունեության սուբյեկտը տվել էր իր համաձայնությունը, վճարած գումարը ժամանակին համապատասխան ծառայություններ մատուցողներին չփոխանցելը, մատուցված ծառայություններում էական թերությունները, եթե պատվիրատուի (սպառողի) կողմից սահմանված ողջամիտ ժամկետում զբոսաշրջային գործունեության սուբյեկտը չի վերացրել դրանք:*

Ինչպես ցանկացած պարտավորության պարագայում, այս դեպքում նույնպես պայմանագրի էական խախտում է նաև պայմանագրային պարտավորությունն առհասարակ չկատարելը<sup>16</sup>:

Այս պարտավորությունում էական պայման է նաև ժամկետը: Գաղտնիք չէ, որ զբոսաշրջային ծառայությունները սպառողը շահագրգռված է դրանք ստանալ հենց իր նախընտրած ժամկետում, և նախանշված ժամկետից անգամ ժամերի շեղումը կարող է հանգեցնել հետաքրքրության կորստի: Հետևաբար, զբոսաշրջային փաթեթում կամ տուրում ընդգրկված ծառայությունների<sup>17</sup> մատուցման ժամկետները խախտելը նույնպես պայմանագրի էական խախտում է:

<sup>16</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ. Գ.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 4-րդ հրատ., Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2014, էջ 511:

<sup>17</sup> Որոշ զբոսաշրջային ծառայությունների, օրինակ՝ փոխադրման ծառայության մատուցման ժամկետները խախտելն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե զբոսաշրջային գործունեության սուբյեկտ(ներ)ի, այլ համապատասխան ծառայություն մատուցողի կողմից թույլ տրվող խախտում, որի համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պատասխանատու չպետք է լինի:

Հարկ է նշել, որ Դիրեկտիվը պայմանագրի էական խախտման տարբեր դրսևորումների հիմքով այն լուծելու հնարավորություն նախատեսում է միայն ճանապարհորդի համար: Չհերքելով ճանապարհորդի՝ որպես սպառողի և քննարկվող իրավահարաբերության թույլ կողմի շահերի առավելագույն պաշտպանության անհրաժեշտությունը՝ կարծում ենք, որ քաղաքացիական իրավահարաբերության կողմերի հավասարության և շահերի հավասարակշռությունն ապահովելու տեսանկյունից չպետք է անտեսել նաև պայմանագրի մյուս կողմի իրավունքների խախտման հնարավորությունը: Հենց այդ տրամաբանությունից էլ ներելով է ՀՀ օրենսդիրը որպես քաղաքացիական պայմանագրի լուծման հիմք նախատեսել պայմանագրի ցանկացած կողմի էական խախտում թույլ տալը:

Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորության շրջանակներում պատվիրատուի հիմնական պարտականությունը ծառայությունների դիմաց ժամանակին վճարելն է: Բացի այդ, արտագնա զբոսաշրջության դեպքում արտասահմանյան երկիր մուտքի արտոնագիր ստանալու, և թե՛ ներքին, թե՛ արտագնա զբոսաշրջության դեպքում համապատասխան ծառայություններ ամրագրելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և հավաստի տվյալներ ներկայացնելը ևս պատվիրատուի կարևոր պարտականություն են:

Ավելին, ՄԻՊ օրենքը որպես ծառայություն մատուցողի կողմից պայմանագրի լուծում և սպառողից վնասների հատուցում պահանջելու հիմք նախատեսում է նաև ծառայություն մատուցողի ժամանակին և հիմնավորված տեղեկացումից հետո ողջամիտ ժամկետում ծառայության մատուցման եղանակի մասին իր ցուցումները սպառողի կողմից չփոխելը կամ մատուցվող ծառայության որակը վատացնող այլ հանգամանքները չվերացնելը (հոդված 34):

Կարծում ենք՝ պատվիրատուի կողմից սպառողին վերաբերող անհրաժեշտ և հավաստի տվյալները և դրանք հավաստող փաստաթղթերը զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից նշված ժամկետում վերջինիս չտրամադրելը կամ թերի տրամադրելը հենց մատուցվող ծառայության որակը վատացնող հանգամանքները չվերացնելու դրսևորում է:

Ինչ վերաբերում է ծառայություն մատուցողի ժամանակին և հիմնավորված տեղեկացումից հետո ողջամիտ ժամկետում ծառայության մատուցման եղանակի մասին պատվիրատուի ցուցումները չփոխելուն, ապա գտնում ենք՝ այս հիմքը ևս կիրառելի է քննարկվող իրավահարաբերության նկատմամբ, մասնավորապես՝ երբ պատվիրատուն, չնայած իր կողմից ընտրված երթուղու կամ զբոսաշրջային ծառայությունների հետ կապված հնարավոր ռիսկերի և անբարենպաստ հետևանքների մասին զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից արված հիմնավոր զգուշացումներին, շարունակում է պնդել իր ցուցումները:

Անդրադառնալով Օրենքով և Դիրեկտիվով նախատեսված՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և սպառողի կողմից պայմանագիրը միակողմանի

լուծելու երկրորդ խումբ հիմքերին, որոնք են՝ զբոսաշրջային փաթեթի գինը սկզբնական գնի համեմատ 8 տոկոսից ավելի բարձրանալը (Օրենք, հոդված 23, մաս 9, Դիրեկտիվ, հոդված 10, մաս 2), ճանապարհորդի ժամանման վայրում կամ դրա անմիջական մոտակայքում արտակարգ և անխուսափելի հանգամանքներ ի հայտ գալը, եթե դրանք զգալիորեն խոչընդոտում են զբոսաշրջային փաթեթի մատուցումը կամ ճանապարհորդի՝ ժամանման վայր հասնելը (Դիրեկտիվ, հոդված 12, մասեր 2-րդ և 3-րդ) և զբոսաշրջիկների քանակը նախատեսված նվազագույն քանակից պակաս լինելը (Օրենք, հոդված 23, մաս 1, կետ 10, Դիրեկտիվ, հոդված 12), ապա դրանց և հանգամանքների էական փոփոխության հիմքով պայմանագիրը փոփոխելու և լուծելու՝ Օրենսգրքով նախատեսված կառուցակարգի հետ համադրումից բխում է, որ դրանք իրենց բնույթով քննարկվող իրավահարաբերություններում հանգամանքների էական փոփոխության մասնավոր դրսևորումներ են:

Ընդ որում՝ այդ հիմքերի բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ ինչպես պայմանագրի էական խախտման, այնպես էլ վերը նշված՝ հանգամանքների էական փոփոխության ի հայտ գալը շահագրգիռ կողմին ինքնին պետք է տա պայմանագիրն օրենքի ուժով, միակողմանիորեն, արտադատական կարգով, մյուս կողմին ծանուցում ուղարկելու միջոցով լուծելու իրավունք՝ հիմք ընդունելով կողմերի միջև ծախսերի բաշխման՝ իմպերատիվ նորմերով սահմանված կանոնները (ծառայության արժեքի վերադարձ):

Քանի որ հնարավոր չէ սպառիչ նախատեսել հանգամանքների էական փոփոխության բոլոր հնարավոր դեպքերը, կարծում ենք, որ նման փոփոխությունների առավել տիպական շրջանակ սահմանելուն զուգահեռ՝ անհրաժեշտ է այդ ցանկը թողնել բաց և հանգամանքների այլ փոփոխությունների էական լինելը գնահատելու իրավասությունը վերապահել դատարանին:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Օրենքը լրացնել նոր՝ 23.1 և 23.2-րդ հոդվածներով՝ հետևյալ բովանդակությամբ՝

**«Հոդված 23.1. Զբոսաշրջային պայմանագիրն էական խախտման հիմքով միակողմանի լուծելը**

1. Զբոսաշրջային պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել, եթե պայմանագրի մյուս կողմը թույլ է տվել պայմանագրի էական խախտում:

2. Զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

1) զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու և/կամ զբոսաշրջային փաթեթում (տուրում) ներառված կամ առանձին զբոսաշրջային ծառայությունները չեն մատուցվել,

2) նախքան ճանապարհորդությունը սկսվելը զբոսաշրջային գործունեության սուբյեկտը միակողմանի փոփոխել է պայմանագրի էական պայմաններից մեկը, և պատվիրատուն չի տվել դրանց վերաբերյալ իր համաձայնությունը,

3) զբոսաշրջային գործունեության սուբյեկտը չի ապահովել պատվիրատուի/սպառողի այն հատուկ պահանջները, որոնց վերաբերյալ նա տվել էր իր համաձայնությունը,

4) խախտվել է զբոսաշրջային փաթեթում (տուրում) ներառված զբոսաշրջային ծառայության մատուցման ժամկետը, բացառությամբ փոխադրման ծառայության ժամկետների խախտման,

5) պատվիրատուի (սպառողի) կողմից զբոսաշրջային փաթեթում (տուրում) ներառված ծառայություններում հայտնաբերվել են այնպիսի թերություններ, որոնք անհնարին են դարձնում ճանապարհորդությունը, կամ ճանապարհորդության ընթացքում մատուցված ծառայություններում առկա են էական թերություններ, որոնք չեն վերացվել սպառողի համար ընդունելի ժամկետում,

6) զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պատվիրատուի կողմից իրեն փոխանցված գումարը սահմանված ժամկետում չի փոխանցել զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց:

3. Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է, եթե՝

1) պայմանագրով նախատեսված ժամկետում պատվիրատուն չի վճարել զբոսաշրջային փաթեթի/ծառայությունների արժեքը,

2) պատվիրատուի տրամադրած տվյալները և/կամ դրանք հավաստող փաստաթղթերը ոչ պիտանի կամ թերի լինելու վերաբերյալ կամ ծառայությունների մատուցման վերաբերյալ պատվիրատուի ցուցումների հետ կապված հնարավոր անբարենպաստ հետևանքների առաջացման մասին զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պատվիրատուին տեղեկացնելու դեպքում վերջինս զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից նշված ժամկետում չի ներկայացրել և/կամ համալրել անհրաժեշտ տվյալները և/կամ փաստաթղթերը կամ չի փոխել ծառայության մատուցման վերաբերյալ ցուցումները:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հիմքերով պայմանագիրը համարվում է լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի լուծման այլ ժամկետ:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով սպառողի կողմից պայմանագիրը լուծելու դեպքում զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է վերադարձնել ծառայության արժեքը:

6. Սույն հոդվածով սահմանված հիմքերով պայմանագիրը լուծելու դեպքում շահագրգիռ կողմն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով<sup>18</sup> պահանջելու հատուցել պայմանագրի լուծմամբ պատճառված վնասները»:

<sup>18</sup> «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 29-րդ հոդվածը ծառայությունը մատուցողի կողմից թույլ տված էական խախտման հիմքով պայմանագրի լուծման հետևանքով պատճառված վնասը հատուցելու համար սահմանել է պահանջի ներկայացման

**«Հոդված 23.2. Հանգամանքների էական փոփոխության հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելը**

1. Ջրոսաշրջային պայմանագիրը շահագրգիռ կողմի պահանջով կարող է միակողմանի լուծվել՝ հանգամանքների էական փոփոխության հիմքով, որոնք են՝

1) Ջրոսաշրջային փաթեթի գինը սկզբնական գնի համեմատ 8 տոկոսից ավելի բարձրանալը,

2) Ջրոսաշրջիկի ժամանման վայրում կամ դրա անմիջական մոտակայքում արտակարգ և անխուսափելի հանգամանքներ ի հայտ գալը, եթե դրանք զգալիորեն խոչընդոտում են Ջրոսաշրջային ծառայությունների մատուցումը կամ Ջրոսաշրջիկի՝ ժամանման վայր հասնելը,

3) Ջրոսաշրջիկների քանակը նախատեսված նվազագույն քանակից պակաս լինելը:

2. Շահագրգիռ կողմի պահանջով դատական կարգով պայմանագիրը կարող է լուծվել նաև հանգամանքների այլ էական փոփոխությունների դեպքում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով պայմանագիրը համարվում է լուծված այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի լուծման այլ ժամկետ:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ<sup>19</sup> կամ 3-րդ կետերով նախատեսված հիմքերով պայմանագիրը լուծելիս պատվիրատուն իրավունք ունի ստանալու ծառայության արժեքը՝ առանց պայմանագիրը վաղաժամկետ լուծելու վճար վճարելու պարտականության»:

Ինչպես նշվեց, Օրենսգիրքը ծառայությունների մատուցման պայմանագրի երկու կողմերին իրավունք է տալիս ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվելու պայմանագրից՝ պատվիրատուի կողմից կատարողի փաստացի ծախսերը, իսկ կատարողի կողմից՝ պատվիրատուի կրած վնասները հատուցելու պայմանով (հոդված 780):

«Ջրոսաշրջության մասին» ՀՀ օրենքն այս կապակցությամբ նախատեսել է հատուկ կարգավորում՝ ամրագրելով առանց որևէ պատճառաբանության

օրվանից 10-օրյա ժամկետ: Իսկ կամավոր չհատուցելու դեպքում նույն օրենքը նախատեսում է դատական կարգով հատուցում պահանջելու իրավունք:

<sup>19</sup> Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ անհաղթահարելի ուժի հետևանքով պարտավորությունը կատարելու անհնարինությունը, այդ թվում՝ գործարարական գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատող պայման է, կարծում ենք՝ արտակարգ և անխուսափելի հանգամանքների հետևանքով ճանապարհորդության անհնարինության հիմքով Ջրոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պայմանագիրը լուծելու դեպքում անհրաժեշտ է նախատեսել Ջրոսաշրջային փաթեթի արժեքը պատվիրատուին (սպառողին) վերադարձնելու այլընտրանքային մեխանիզմ, ինչպիսին է ֆինանսական ապահովման ինստիտուտը:

միակողմանիորեն **միայն սպառողի կողմից** զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացում լուծելու իրավունք, եթե զբոսաշրջային փաթեթի պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ) (հոդված 23, մաս 3):

Այսպիսով, Օրենքն առանց պատճառաբանության պայմանագրից հրաժարվելու հնարավորություն զբոսաշրջային գործունեության սուբյեկտի համար չի նախատեսում: Այս մոտեցումը ողջունվում է նաև արտասահմանյան գրականության մեջ և դատական պրակտիկայում<sup>20</sup>:

Մենք նույնպես համամիտ ենք պայմանագրից հրաժարվելու՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի իրավունքը սահմանափակելու անհրաժեշտությանը՝ այն հիմնավորմամբ, որ զբոսաշրջային պայմանագրի դեպքում հաճախ անգամ վնասների լրիվ հատուցումը համարժեք միջոց չի կարող լինել զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պայմանագրից հրաժարվելու հետևանքների տեսանկյունից: Բանն այն է, որ եթե, օրինակ, զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պայմանագրից հրաժարվելու ցանկություն հայտնի ճանապարհորդության նախօրեին կամ արդեն իսկ այն սկսվելուց հետո, սպառողի համար համապատասխանաբար՝ ճանապարհորդությունը կամ չնախատեսված ժամկետում վերադարձը կազմակերպելու հարցում կառաջանան զգալի խոչընդոտներ, ընդհուպ՝ անհնարինություն:

Այս պայմանագրից հրաժարվելու հաջորդ առանձնահատկությունն այն է, որ օրենսդիրը նախատեսել է սպառողի կողմից պայմանագրից հրաժարվելու դեպքում պայմանագրով վաղաժամկետ լուծման վճար վճարելու պայման նախատեսելու հնարավորություն: Այսպես, Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ զբոսաշրջային փաթեթի պայմանագրով կարող է սահմանվել պայմանագրի վաղաժամկետ լուծման վճար՝ հաշվի առնելով նախքան զբոսաշրջային փաթեթի մեկնարկը պայմանագիրը վաղաժամկետ լուծելու համար նախատեսված ծանուցման ժամկետը, ինչպես նաև ակնկալվող խնայված ծախսերը և այլընտրանքային զբոսաշրջային ծառայություններ մատուցելու դիմաց ստացված եկամուտները: Նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսվել է նաև լուծման վճարի հաշվարկման բանաձև:

Իրավաբանական գրականության մեջ պատվիրատուի կողմից պայմանագրից հրաժարվելու դեպքում լուծման վճար վճարելու իրավաչափության վերաբերյալ տեսակետներն իրարամերժ են: Մասնավորապես, արևմտյան իրավաբանական գրականության մեջ արտահայտվել է տեսակետ, որ այս

<sup>20</sup> Ա. Կուսկովը և Ն. Միրիկն առաջարկում են օրենսդրորեն ամրագրել արգելք հրապարակային պայմանագրերի դեպքում կատարողի կողմից պայմանագրից միակողմանի հրաժարվելու համար (տե՛ս **Сирик Н., Кусков А.** Правовое регулирование туристской деятельности, М., 2018, էջ 89-92): ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի խորհուրդն արձանագրել է, որ հրապարակային զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրով կատարողն իրավունք չունի միակողմանի հրաժարվելու պայմանագրից (տե՛ս Постановление Президиума ВАС РФ от 24.11.2009, N 9548/09):

պայմանը խնդրահարույց է այն առումով, որ տարբեր պատճառներով լուծելով պայմանագիրը և հետ ստանալով վճարված գումարը, կախված լուծման ժամկետից, զբոսաշրջիկը ստիպված կլինի ամբողջ գումարը վերադարձնել որպես փոխհատուցման գումար<sup>21</sup>:

Զբոսաշրջային փաթեթի արժեքից որոշակի տոկոսով կամ ֆիքսված չափով «տուգանք» վճարելու պայմանը քննադատվում է նաև ռուսական իրավաբանական գրականության մեջ՝ այն հիմնավորմամբ, որ այս պայմանը ենթադրում է պայմանագրից հրաժարվելու դեպքում զբոսաշրջիկի պատասխանատվություն, ինչը հակասում է քաղաքացիական օրենսդրությանը, քանի որ պայմանագրի լուծման դեպքում զբոսաշրջիկին զրկում է կատարողի կողմից չօգտագործված դրամական միջոցները հետ ստանալու հնարավորությունից<sup>22</sup>:

Համամիտ չլինելով նշված տեսակետների հետ՝ կարծում ենք՝ սպառողի կողմից պայմանագրից առանց պատճառաբանության միակողմանի հրաժարվելու դեպքում լուծման վճար վճարելու պայմանն<sup>23</sup> անհրաժեշտ է դիտարկել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրից հրաժարվելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ իրավական հետևանքների համատեքստում: Մասնավորապես՝ Օրենսգիրքը պատվիրատուի կողմից պայմանագրից միակողմանի հրաժարվելու դեպքում նախատեսում է ծառայություն մատուցողի կատարած փաստացի ծախսերը հատուցելու պարտականություն (հոդված 780):

Միևնույն ժամանակ, օրենսդիրը չի բացահայտել փաստացի ծախսերի էությունը, ինչը ճանապարհորդություն կազմակերպելու ծառայության պարագայում, որը չի ենթադրում զբոսաշրջային ծառայությունների անձամբ մատուցում, հանգեցրել է պայմանագրից հրաժարվելու դեպքում իրավական հետևանքների անորոշության:

Քննարկվող իրավահարաբերությունների դեպքում փաստացի ծախսերի բովանդակության վերաբերյալ ուշագրավ են Պ. Բարաբանովայի վերլուծությունները: Այսպես, հեղինակը նշում է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի մոտ ծագում է պարտավորությունների երկու խումբ, առաջինը՝ զբոսաշրջիկներին փաթեթում ընդգրկված ծառայությունները մատուցելու պարտականությունն է (մատուցումը կազմակերպելու), երկրորդը՝ իր կոնսորցիաներին ծառայությունների դիմաց վճարումներ փոխանցելն է: Զբոսա-

<sup>21</sup> St' u **Carlos Torres, Javier Melgosa Arcos, Laurence Jegouzo and others.** Collective Commentary about the New Package Travel Directive, ESHTE, 2020, էջեր 289-290:

<sup>22</sup> St' u **Кусков А., Сирик Н.** Оказание туристических услуг, гражданско-правовое регулирование, М. Юстицинформ, 2013, էջեր 90-91:

<sup>23</sup> Այս պայմանը, ըստ էության, եվրոպական պայմանագրային իրավունքում կիրառվող «Ստացիր կամ վճարիր» (take or pay) սկզբունքի դրսևորումն է, որը ենթադրում է պայմանագրից հրաժարվելու դեպքում պատվիրատուի պարտականությունը՝ կատարողին վճարելու որոշակի գումար նույնիսկ այն դեպքում, եթե նա չի օգտվել պատվիրված ծառայություններից:

շրջիկի կողմից պայմանագրից հրաժարվելու դեպքում առաջին պարտավորությունը դադարում է, սակայն երկրորդ խումբ պարտավորությունները շարունակում են պահպանվել: Ավելին, հաճախ վճարված զբոսաշրջային փաթեթի արժեքն արդեն իսկ փոխանցված է լինում կոնստրադենտներին<sup>24</sup>: Այդ գումարները կոնստրադենտներին փոխանցելն ինքնին չի վկայում փաստացի ծախսերի մասին, քանի որ դրանց մի մասը հիմնականում վերադարձվում է. այդպիսով զբոսաշրջային օպերատորի փաստացի ծախսերն ուղղակիորեն կախված են իր կոնստրադենտների հետ կնքված պայմանագրերի պայմաններից<sup>25</sup>:

ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ են այն դեպքերը, երբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտները վկայակոչում են զբոսաշրջային ծառայություններ մատուցողներին այդ ծառայության արժեքը փոխանցելու հիմքով զբոսաշրջիկի կողմից պայմանագրից հրաժարվելու դեպքում վճարված գումարը վերադարձնելու անհնարիությունը, ինչը դատարանների կողմից իրավական տարբեր գնահատականների է արժանանում: Մասնավորապես, մի դեպքում դատարանները բավարարում են ծառայություններ մատուցողներին փոխանցված և վերջիններիս կողմից սահմանված կանոնների համաձայն՝ վերադարձի ոչ ենթակա գումարների արժեքի չափով սպառողին պատճառված վնասը հատուցելու հայցերը<sup>26</sup>, մյուս դեպքերում մերժում են այդպիսիք<sup>27</sup>:

Համամիտ լինելով այն պնդմանը, որ ճանապարհորդությունը կազմակերպելու պարտավորության շրջանակներում զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջային ծառայություններ մատուցողներին

<sup>24</sup> St' u **Барабанова П.** Гражданско-правовое регулирование договорных отношений в сфере туризма в России и Англии. Дисс., М. 2017, էջեր 154-156:

<sup>25</sup> St' u նույն տեղը, էջ 158:

<sup>26</sup> Օրինակ՝ թիվ **ԵԴ/14223/02/18** քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 26.06.2020 թ. վճռով նշել է, որ քանի որ պատասխանող զբոսաշրջային ընկերության կողմից չի ներկայացվել ապացույց առ այն, որ ավիափոխադրողին փոխանցված գումարի մի մասը չվերադարձնելը հետևանք է անհաղթահարելի ուժի և/կամ հայցվորների կողմից ծառայությունների օգտագործման կամ դրանց պահպանման համար սահմանված կանոնները խախտելու, հայցը ենթակա է բավարարման:

<sup>27</sup> Օրինակ՝ թիվ **ԵԱԲԴ/4988/02/16** քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 27.04.2018 թ. վճռով մերժել է զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից ավիափոխադրողին փոխանցված գումարի՝ վերադարձի ոչ ենթակա մասը զբոսաշրջիկին հատուցելու պահանջը: Թիվ **ԵԿԴ/3728/02/16** քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 14.06.2017 թ. վճռով արձանագրել է, որ վիզայի մերժման հիմքով ճանապարհորդությունը չեղարկելու հետևանքով զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է վերադարձնել նախապես վճարված ամբողջ գումարը՝ բացառությամբ անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանության համար վճարված գումարի՝ առանց քննության առարկա դարձնելու գումարների այն մասի վերադարձման հարցը, որոնք արդեն իսկ փոխանցվել էին զբոսաշրջային ծառայություններ մատուցողներին:

փոխանցված գումարի այն մասը, որն ըստ տվյալ ծառայություն մատուցողի կողմից սահմանված կանոնների կամ վերջինիս և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև կնքված պայմանագրի պայմանների պայմանագրից հրաժարվելու դեպքում, կախված հրաժարվելու ժամկետից, ենթակա չէ վերադարձի, պետք է համարել զբոսաշրջային գործունեության սուբյեկտի փաստացի ծախս՝ միաժամանակ կարծում ենք, որ դա հնարավոր է միայն, եթե նախքան պայմանագիր կնքելը սպառողը զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից հստակ տեղեկացվել է պայմանագրից հրաժարվելու դեպքում զբոսաշրջային ծառայություններ մատուցողների կողմից նման վճար սահմանված լինելու, չափի և ըստ հրաժարվելու ժամկետների այդ վճարի չափի մասին, ինչն իր ամրագրումն է գտել նաև պայմանագրում:

**АРМЕН АЙКЯНИЦ, ЕВА САГОЯН – Особенности изменения и расторжения договора об оказании туристических услуг.** – В статье рассматриваются особенности изменения и расторжения договора об оказании туристических услуг. В частности, сопоставляя положения Закона Республики Армения “О туризме” и международных документов, регулирующих данную сферу, с положениями Гражданского кодекса РА, касающимися одностороннего изменения и расторжения договора, автор приходит к выводу, что, учитывая срочный характер данного договора, а также то обстоятельство, что он предполагает однократное исполнение, применение предусмотренной Кодексом судебной процедуры одностороннего изменения и расторжения договора в данном случае нецелесообразно. Вместо этого предлагается законодательно определить перечень существенных нарушений, допускаемых каждой из сторон и служащих основанием для расторжения договора, а также наиболее типичные проявления существенного изменения обстоятельств, предусматривая в случае их наличия право заинтересованной стороны расторгнуть договор в одностороннем внесудебном порядке на основании закона. Одновременно предлагается урегулировать правила распределения расходов между сторонами в таких случаях, в частности возврат стоимости услуги. На примере договора об оказании туристических услуг автор также затрагивает некоторые ключевые вопросы соотношения институтов одностороннего расторжения договора и одностороннего отказа от его исполнения.

**Ключевые слова:** *изменение договора, расторжение договора, туристические услуги, судебный порядок, односторонний отказ, существенное изменение обстоятельств.*

**ARMEN HAYKYANTS, YEVA SAGHOYAN – Specifics of Amending and Terminating the Contract for the Provision of Tourist Services.** – The article discusses the specific features of amending and terminating contracts for the provision of tourism services. In particular, by comparing the regulations enshrined in the Law of the Republic of Armenia “On Tourism” and international documents governing the sector with the provisions of the RA Civil Code regarding unilateral amendment and termination of contracts, the author concludes that, due to the fixed-term nature of such contracts and the fact that they imply one-time execution, applying the judicial procedure for unilateral amendment and termination, as provided by the Civil Code, is not appropriate in this context. Instead, the author proposes to define by law the scope of essential breaches committed by either party that may serve as grounds for termination of the contract, as well as the most typical manifestations of significant changes in circumstances. In the event such grounds arise, it is suggested to grant the interested party the right to unilaterally terminate the contract out of court by operation of law. At the same time, it is proposed to establish rules for the

distribution of expenses between the parties in such cases- in particular, the reimbursement of the cost of the service for organizing the provision of tourism services. Using the example of a contract for the organization of tourism service provision, the author also addresses certain key issues related to the correlation between the institutions of unilateral contract termination and unilateral refusal to perform the contract.

**Key words:** *contract amendment, contract termination, tourism services, judicial procedure, unilateral refusal, significant change of circumstances.*

## References

- «Zbosashrjtjan masin» HH orienk, HO-4-N, yndunvel e 22.12.2023t', ozh-i mej e mtel— 01.09.2024t', skzbnaghbyury — miasnakan kayq 2024.01.09–2024.01.21.
- Hayastani Hanrapetutyan kaghakatsiakan orensgirk, HO-239, yndunvel e 05.05.1998 t', ozh-i mej mtel e — 01.01.1999 t', RHPT 1998.08.10/17(50).
- «Sparoghnneri iravunk'neri pashtpanutyan masin» orenk, HO-197, yndunvel e 26.06.2001 t', ozh-i mej mtel e — 01.01.2002 t', RHPT 2001.08.02/25(157) Hod. 580.
- Council directive 93/13/EEC of 5 April 1993 on unfair terms in consumer contracts.
- Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of 25 November 2015 “On package travel and linked travel arrangements”, amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and repealing Council Directive 90/314/EEC.
- Barseghyan T.K., Hayastani Hanrapetut'yan k'aghak'atsiakan iravunk', arajin mas, 4-rd hrat., «Tigran Mets» hrat., Yerevan, 2014.
- Carlos Torres, Javier Melgosa Arcos, Laurence Jegouzo and others, Collective Commentary about the New Package Travel Directive, ESHTe, 2020.
- Barabanova P., Grazhdansko-pravovoye regulirovaniye dogovornykh otnosheniy v sfere turizma v Rossii i Anglii, Diss., M. 2017.
- Dogovornoye pravo, Obshchaya chast', Postateynny kommentariy k stat'yam 420–453 Grazhdanskogo kodeksa Rossiyskoy Federatsii, pod red. A. Karapetova, Vtoroye izd., M., Logos 2020.
- Kuskov A., Sirik N., Okazaniye turisticheskikh uslug, grazhdansko-pravovoye regulirovaniye, M., Yustitsinform, 2013.
- Ryzhov R., Rastorzheniye dogovora i odnostoronniy otkaz ot yego ispolneniya. Voprosy sootnosheniya, UDK 347.43, <https://cyberleninka.ru/article/n/rastorzhenie-dogovora-i-odnostoronniy-otkaz-ot-ego-ispolneniya-voprosy-sootnosheniya/viewer>.
- Sirik N., Kuskov A., Pravovoye regulirovaniye turistskoy deyatel'nosti, M., 2018.
- Tiv EShD/1103/02/11 kaghakatsiakan gorcov HH vchrabek datarani 19.10.2012 tvakani voroshum.
- Tiv EAQD/4988/02/16 kaghakatsiakan gorcov Yerevan kaghaki @ndhanur iravasutyan datarani 27.04.2018 t'. vchiry.
- Tiv ED/19374/02/18 k'aghak'atsiakan gorcov Yerevan kaghaki @ndhanur iravasutyan datarani 02.05.2019 t'. vchiry.
- Tiv ED/14223/02/18 kaghakatsiakan gorcov Yerevan kaghaki @ndhanur iravasutyan arajin atyani datarani 26.06.2020 t'. vchiry.
- Tiv EKD/3728/02/16 kaghakatsiakan gorcov Yerevan kaghaki Kentron yev Nork-Marash varchakan shrjanneri @ndhanur iravasutyan arajin atyan datarani 14.06.2017 t'. vchiry.
- Postanovleniye Prezidiuma VAS RF ot 24.11.2009, N 9548/09.

## THE SPECIFICS AND DEVELOPMENT TRENDS OF INTERNET INTERMEDIARIES' LIABILITY

ARPINE HOVHANNISYAN\*   
*Yerevan State University*

In recent years, the issue of the **liability regime of internet intermediaries** has become a central topic of discussion within the European legal and policy context. A particularly pressing question has emerged as to whether online platforms should bear legal responsibility in situations where their infrastructure is used to **disseminate insults, defamation, hate speech**, or other forms of content violating fundamental **human rights**.

This issue becomes especially pronounced when individuals whose rights have been infringed address these platforms with formal requests to remove offensive or defamatory material, yet the platforms fail to act.

Such situations raise the question of **two-layered (or dual) liability**, which involves not only the original authors of the unlawful content but also the intermediaries who enable its publication and continued accessibility.

The relevance of this topic increased significantly after 2016, particularly in the context of several presidential elections and the Brexit referendum in the United Kingdom. These developments intensified public debates around the **balance between freedom of expression and regulatory control over the information environment**.

Currently, the European Court of Human Rights has developed an almost consolidated body of **case law**, indicating that **internet intermediaries may be held liable** when they fail to remove defamatory or offensive content from their platforms upon notification.

This debate and its potential regulatory solutions are also highly relevant to the Armenian legal context, particularly in light of ongoing legislative reforms and the provisions of the Constitutional Court of Armenia's **decision of October 1 of the previous year**. These developments are likely to play a decisive role in shaping the future **regulatory framework** for the liability of internet intermediaries in Armenia.

**Key words:** *Internet intermediaries, insult, defamation, responsibility, media, law, publication.*

In the contemporary social order, shaped by a new phase of technological progress, the Internet has long since transcended its original function as a mere technical instrument for the transmission of information. It has evolved into a global platform that facilitates self-expression not only for natural and legal persons, but also for subjects of international law, acting through their highest representatives. In accordance with the

---

\* **Arpine Hovhannisyán** – Candidate of Legal Sciences, Associate Professor at YSU Chair of Civil Law  
**Արփինն Հովհաննիսյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ  
**Арпине Оганнисян** – кандидат юридических наук, доцент кафедры гражданского права ЕГУ  
Email: [arpinehov@gmail.com](mailto:arpinehov@gmail.com), [arpine.hovhannisyanyan@ysu.am](mailto:arpine.hovhannisyanyan@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0002-1363-1958>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 24.10.2025  
Գրախոսվել է՝ 28.10.2025  
Հաստատվել է՝ 28.11.2025  
© The Author(s) 2025

broader dynamics of legal development, this transformation has engendered a distinct category of legal relations, notable both for the intensity of their evolution and for their unprecedented spatial and juridical complexity.

Against this backdrop, the rapid pace of technological advancement exerts a profound influence across multiple branches of law, with particular significance for the regulation of information flows in the digital environment and the delineation of liability for actors engaged in such processes. Within this framework, the legal institution of Internet intermediaries—and the contested question of their liability—assumes heightened importance.

From a juridical standpoint, the issue of intermediary liability lies at the confluence of several foundational legal principles, including the right to freedom of expression, the protection of honor and dignity, and the right to privacy. Comparative legal analysis reveals a diversity of approaches in defining the scope of intermediary liability, establishing preventive and remedial mechanisms, and evaluating the legality of intermediaries' actions.

Accordingly, this article undertakes to examine the contours of a comprehensive definition of Internet intermediaries, to analyze the divergent approaches adopted by legal systems in regulating their liability, to identify the conditions under which intermediaries may be exempted from or held subject to such liability, and to trace emerging trends in the formulation and adaptation of intermediary policies within the evolving digital legal order.

The institution of Internet intermediaries and the issue of their liability is, perhaps, a relatively new form of legal relations in a rapidly developing society. From a theoretical standpoint, there is no comprehensive, universally accepted definition of an “Internet intermediary”; however, various interpretations, classifications, and descriptions exist, some of which will be addressed below. In particular, the Organisation for Economic Co-operation and Development (OECD) defines Internet intermediaries as service and hosting providers, search engines, e-commerce and online payment systems, as well as social web platforms, which serve as key drivers of economic and social development<sup>1</sup>.

According to the EU E-Commerce Directive<sup>2</sup>, an Internet intermediary is considered to be a legal or natural person who provides services for the purpose of receiving and disseminating information among the public. Examples include hosting, web hosting, search engines, online shops, and other websites engaged in the transmission or dissemination of information.

A widely used classification of Internet intermediaries is offered by *Article 19*<sup>3</sup>, which identifies the following types: Internet Service Providers (ISPs), hosting and cable Internet service providers, hosting and storage service providers (Web Hosting Providers), search engines, and social media platforms.

<sup>1</sup> The Economic and Social Role of Internet Intermediaries, page 9, [https://www.oecd.org/en/publications/theeconomic-and-social-role-of-internet-intermediaries\\_5kmh79zszs8vb-en.html#:~:text=Internet%20access%20intermediaries%20and%20hosting,of%20new%20products%20and%20s%20services.28.06.2025](https://www.oecd.org/en/publications/theeconomic-and-social-role-of-internet-intermediaries_5kmh79zszs8vb-en.html#:~:text=Internet%20access%20intermediaries%20and%20hosting,of%20new%20products%20and%20s%20services.28.06.2025).

<sup>2</sup> The Digital Services Act, [https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act\\_en](https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act_en), 28.06.2025.

<sup>3</sup> Dilemma of liability, Article 19(2013) [https://www.article19.org/data/files/Intermediaries\\_ENGLISH.pdf](https://www.article19.org/data/files/Intermediaries_ENGLISH.pdf), p. 6, 28.06.2025.

More comprehensive classification options have also been proposed by Google's *Transparency Reports and Policies*<sup>4</sup> and by the United Nations Conference on Trade and Development (UNCTAD) Reports<sup>5</sup>.

To provide a comprehensive definition of Internet intermediaries, it is first necessary to examine the historical circumstances of the institution's emergence and the debate over their liability, the often conflicting positions adopted over time by major subjects of international law, and the current challenges to the functioning of the institution.

Discussions on the liability of Internet intermediaries began as early as the 1990s, when the Internet started to develop and take shape as a primary means of disseminating information. However, intense political and legal debates became especially active in the second half of the 2010s, entering a new stage during the presidency of Donald Trump in the United States (2016–2020), when the state began to speak more actively about exercising control over online platforms—particularly social media—and about limiting their liability.

On February 8, 1996, in the United States, Section 230 of the Communications Decency Act (CDA) was adopted as part of the Telecommunications Act of 1996. This Section provided broad protection for Internet intermediaries, stating that online platforms are not liable for content posted by users<sup>6</sup>.

A turning point in the debates surrounding the institution of Internet intermediaries and the question of their liability occurred during the presidency of Donald Trump (2016–2020). In particular, Trump regularly criticized Section 230, claiming that social media platforms used this provision to exhibit bias toward certain viewpoints. Therefore, on May 28, 2020, Trump signed an executive order aimed at revising Section 230. The order stated that “Online platforms are engaging in selective censorship that is harming our national discourse,”<sup>7</sup> calling for the limitation of legal protections for Internet intermediaries in cases where they edit user content.

The next phase encompasses the period following Trump's presidency (particularly after the 2020 elections), when social media platforms began blocking Trump's posts or labeling them as “misinformation.” In this context, within the framework of the 2020 executive order, the question arose as to whether these platforms were acting as “passive intermediaries” or as “content editors,” which could serve as a basis for limiting their legal protections under Section 230.

The discussions on the liability of Internet intermediaries, as well as the development and adoption of legislative regulations, were also significantly stimulated by the Brexit referendum (2016). During the referendum period, issues such as election manipulation policies, the spread of fake news, targeted disinformation campaigns, data protection concerns, and obstacles arising from the oversight of information platforms became highly prominent. Consequently, the effectiveness, feasibility, and legality of online

<sup>4</sup> Google Transparency Report, <https://transparencyreport.google.com/> 28.06.2025.

<sup>5</sup> UNCTAD (United Nations Conference on Trade and Development) Reports, <https://unctad.org/>, 28.06.2025.

<sup>6</sup> U.S. Congress. (1996). Section 230 of the Communications Decency Act, February 8, 1996:

<sup>7</sup> Executive Order on Preventing Online Censorship, <https://trumpwhitehouse.archives.gov/presidential-actions/executive-order-preventing-online-censorship/>, 12.08.2025.

platforms—particularly Facebook, Google, and Twitter—acting as “passive intermediaries” were increasingly called into question<sup>8</sup>.

In fact, starting from the period following the Brexit referendum, the international community and major subjects of international law began initiatives aimed at developing relevant regulations for certain aspects of the functioning of Internet intermediary institutions and establishing circumstances that would trigger corresponding liability. In particular, the European Union developed the **Digital Services Act**<sup>9</sup> initiative, which was adopted in 2022, while the United Kingdom prepared the **Online Safety Bill**<sup>10</sup>, which was adopted in 2023.

The UK Parliament also initiated investigations related to digital campaigning and the role of social media platforms. In 2018, it published the report “*Disinformation and ‘fake news’: Final Report*” (UK Parliament, DCMS Committee, 2019), which called for a review of the liability of Internet intermediaries and, accordingly, the establishment of legislative regulation covering aspects such as advertising transparency and accountability for unverified information<sup>11</sup>. The report specifically highlighted the connections between Facebook, Cambridge Analytica, and the Brexit campaign, analyzing the role of social media in public discourse as well as issues related to the spread of disinformation and its consequences. The UK Parliament’s report also paved the way for the EU Digital Services Act<sup>12</sup> initiative (adopted in 2022).

It is also necessary to refer to the **White Paper on Online Harms**<sup>13</sup> published by the UK Government, which later served as the basis for the UK **Online Safety Bill**<sup>14</sup> (adopted in 2023). The White Paper aimed to address issues (“online harms”) such as content involving sexual abuse and exploitation of children, content promoting or encouraging suicide, hate speech and calls for violence, disinformation and misinformation, cyberattacks, cyberbullying, terrorism, and the online sale of illegal goods (e.g., drugs, weapons). It proposed an entirely new liability system, in which the main principles include a platform’s “**duty of care**,” the presence of supervisory and regulatory bodies, transparent policies, and, most importantly, the protection of minors’ rights.

The European Union has also actively defined its position regarding Internet intermediaries. The main provisions on the liability of Internet intermediaries are established in the **E-Commerce Directive** (2000/31/EC)<sup>15</sup> and in the **Digital Services**

<sup>8</sup> Cadwalladr, C. (2018). *The great British Brexit robbery: how our democracy was hijacked*. The Guardian.

<https://www.theguardian.com/technology/2017/may/07/the-great-british-brexit-robbery-hijacked-democracy>, 28.06.2025.

<sup>9</sup> [https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act\\_en](https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act_en), 28.06.2025.

<sup>10</sup> <https://www.gov.uk/government/publications/online-safety-act-explainer/online-safety-act-explainer>, 28.06.2025.

<sup>11</sup> <https://publications.parliament.uk/pa/cm201719/cmselect/cmcomeds/1791/1791.pdf> 28.06.2025.

<sup>12</sup> [https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act\\_en](https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act_en), 28.06.2025.

<sup>13</sup> <https://www.gov.uk/government/consultations/online-harms-white-paper>, 28.06.2025.

<sup>14</sup> <https://www.gov.uk/government/publications/online-safety-act-explainer/online-safety-act-explainer>, 28.06.2025.

<sup>15</sup> Directive 2000/31/EC of the European Parliament and of the Council of 8 June 2000, <https://eurlex.europa.eu/eli/dir/2000/31/oj/eng>, 28.06.2025.

**Act (DSA, 2022)**<sup>16</sup>. The E-Commerce Directive stipulates that intermediaries can be exempt from liability only if they do not know and cannot control illegal content. The DSA adds monitoring requirements, demanding greater transparency and risk assessment, especially for very large platforms. It also includes a mandatory external audit requirement to periodically verify the activities of these platforms, which is an important step to ensure adequate oversight. In practice, the regulations established by the EU impose stricter liability on Internet intermediaries compared to U.S. legal acts.

While in the United States Section 230 creates a clearly differentiated and more permissive model, where online platforms are exempt from liability if they do not engage with content, the situation in the EU is different. The **E-Commerce Directive** (2000/31/EC) defines three main types of Internet intermediaries and specifies the conditions under which each can be exempt from liability.

According to Article 12 of the Directive, if a service provider merely transmits data without altering or selecting its content, it is not liable for the content of that data. Examples of such cases include Internet Service Providers (ISPs).

The Directive also establishes the legal basis for a **“Notice and Take Down”** system, through which rights holders can notify intermediaries of illegal content and request its prompt removal<sup>17</sup>.

The Directive prohibits requiring Internet intermediaries to engage in active monitoring of user-generated content. This provision aims to protect the technical role of platforms and to avoid imposing publisher-like obligations on them (Article 15). In this regard, although the E-Commerce Directive prohibits general monitoring, the DSA requires intermediaries to respond to illegal content posted on their platforms by maintaining regulated **“notice and action” mechanisms**.

The aforementioned regulations are practically reflected in decisions of the **European Court of Human Rights (ECtHR)** and the **Court of Justice of the European Union (CJEU)**, some of which we will discuss below:

For example, in the case of *Glawischnig-Piesczek v. Facebook*, Austrian Parliament member Eva Glawischnig-Piesczek filed a lawsuit against Facebook, requesting the removal and prevention of offensive content on her page. The case began in 2016, when a Facebook user posted a negative comment about Glawischnig-Piesczek containing offensive statements and inaccurate information. In 2019, the CJEU ruled that social networks must be held liable for content they fail to remove if that content violates the law, particularly concerning inappropriate speech or indecency. The Court determined that Facebook, as an intermediary, must comply with the law and is obliged to prevent the dissemination of similar offensive content in the future if it is identified as harmful or inaccurate<sup>18</sup>.

The legal assessment of the institution of Internet intermediaries places a key role on the **ECtHR’s case law**, which over the last decade has significantly developed the

<sup>16</sup> The Digital Services Act, [https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act\\_en](https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act_en), 28.06.2025.

<sup>17</sup> Directive 2000/31/EC of the European Parliament and of the Council of 8 June 2000 on certain legal aspects of information society services, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32000L0031>, 28.06.2025.

<sup>18</sup> <https://globalfreedomofexpression.columbia.edu/cases/glawischnig-piesczek-v-facebook-ireland-limited/>, 28.06.2025.

standards for the liability of online platforms, particularly news portals and blogs. The ECtHR has adopted a multifaceted approach, seeking to balance the right to freedom of expression with the protection of an individual's honor, dignity, and reputation.

The first systematic consideration of the liability of Internet intermediaries was made in the case of *Delfi AS v. Estonia*, which was resolved by the Grand Chamber of the ECtHR in 2015. The case concerned anonymous comments posted by users on an online news portal, which contained hate speech, threats, and insults directed at a commercial organization. Although the website removed the comments only after a written complaint—six weeks later—the domestic courts held the company civilly liable, requiring it to pay damages. The court noted [Lastly, the Court observes that the applicant company has argued that the Court should have due regard for the notice-and-take-down system that it had introduced. If accompanied by effective procedures allowing for rapid response, this system can, in the Court's view, function in many cases as an appropriate tool for balancing the rights and interests of all those involved. However, in cases such as the present one, where third-party user comments are in the form of hate speech and direct threats to the physical integrity of individuals, as understood in the Court's case-law (see paragraph 136 above), the Court considers (...), that the rights and interests of others and of society as a whole may entitle Contracting States to impose liability on Internet news portals, without contravening Article 10 of the Convention, if they fail to take measures to remove clearly unlawful comments without delay, even without notice from the alleged victim or from third parties]<sup>19</sup>.

In the case, the Court applied the following criteria:

1. The intervention was provided for by law and satisfied the requirement of foreseeability.
2. It pursued a legitimate aim, namely the protection of individual rights.
3. It was necessary in a democratic society, taking into account the clearly harmful nature of the comments.

The ECtHR emphasized that if a news portal initially creates technical conditions that allow users to anonymously and unmoderatedly post content containing hate speech, the portal assumes a certain degree of **publisher liability**. In the *Delfi* case, this liability was considered proportionate, also taking into account the company's commercial nature and its wide audience.

The ruling effectively established that freedom of expression yields in cases of hate speech or incitement to violence, and an intermediary cannot rely solely on the “**Notice and Take Down**” mechanism for comments of such content.

In this context, a significant counterbalance was noted in the case of *MTE and Index.hu Zrt v. Hungary* (2016), which is perceived as a corrective to the *Delfi* ruling. This case also dealt with the issue of news portals' liability for comments posted by users. However, unlike *Delfi*, the comments did not contain hate speech or calls for violence; instead, they were considered sharp, evaluative statements directed at companies in the real estate sector.

The Court therefore considered that “the imposition of objective liability on the applicant company for the reproduction of statements made by third parties, irrespective

<sup>19</sup> CASE OF DELFI AS v. ESTONIA, (*Application no. 64569/09*), <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-155105>, 28.06.2025.

of whether the author or publisher acted in good or bad faith and in compliance with journalistic duties and obligations, is difficult to reconcile with the existing case-law according to which the “punishment of a journalist for assisting in the dissemination of statements made by another person in an interview would seriously hamper the contribution of the press to discussion of matters of public interest and should not be envisaged unless there are particularly strong reasons for doing so”<sup>20</sup>.

Notably, the websites had active moderation mechanisms in place, including a “**Notice and Take Down**” procedure, a monitoring team, and a code of conduct for comments. At no point did the injured party submit a request for the comments to be removed.

The ECtHR disagreed with the domestic courts’ position that these measures were insufficient, noting that “*such an approach could create an excessive and impracticable planning burden which would seriously hamper the freedom to impart information on the Internet*”. The Court found that the sanctions applied by the domestic courts did not constitute a necessary intervention in a democratic society.

Therefore, the distinction lies in the fact that if the content involves hate speech and violence, independent intervention by the intermediary is necessary. In cases of merely offensive or sharp comments, the “**Notice and Take Down**” approach is lawful without prior general monitoring.

The ECtHR later further clarified the standards for the liability of Internet intermediaries. In the case of *Pihl v. Sweden* (2017), the Court held that a blogger should not be held liable if they remove the contested content immediately after receiving an appropriate request. The Court also emphasized that the blog did not constitute a news platform, which was an important factor in determining exemption from liability.

The court stated that «In view of the above, and especially the fact that the comment, although offensive, did not amount to hate speech or incitement to violence and was posted on a small blog run by a non-profit association which took it down the day after the applicant’s request and nine days after it had been posted, the Court finds that the domestic courts acted within their margin of appreciation and struck a fair balance between the applicant’s rights under Article 8 and the association’s opposing right to freedom of expression under Article 10”<sup>21</sup>.

Based on this and similar cases, the ECtHR developed an evaluation mechanism consisting of four factors, which is applied when conducting judicial analysis regarding the liability of intermediaries:

1. The content and context of the comments,
2. The potential liability of the comment authors,
3. The measures taken by the intermediary and the conduct of the injured party,
4. The consequences for both the injured party and the intermediary.

By applying these criteria, the ECtHR seeks to avoid a condemnatory approach in cases where the intermediary has acted in good faith and the content clearly does not exceed the limits of freedom of expression.

<sup>20</sup> CASE OF INDEX.HU ZRT v. HUNGARY, (*Application no. 77940/17*), <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-226196>, 28.06.2025.

<sup>21</sup> Case of Rolf Anders Daniel PIHL v. Sweden, *Application no. 74742/14*, <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-172145>, 28.06.2025.

The European Court has also developed interesting case law regarding the monitoring of a user's personal account on a platform. For example, the *Sanchez v. France* case<sup>22</sup> concerns freedom of expression and the justification for its limitation. The applicant, politician Julien Sanchez, was held criminally liable for failing to remove Islamophobic comments made by third parties on his public Facebook page, which he used for pre-election purposes. The Court held that, as an experienced politician and a conscious user of digital platforms, he was obliged to delete in a timely manner any comments expressing hate speech. Although he did not author the comments himself, the Court considered his inaction sufficient to constitute a basis for liability. "In view of the foregoing, on the basis of an assessment in concreto of the specific circumstances of the present case and having regard to the margin of appreciation afforded to the respondent State, the Court finds that the decisions of the domestic courts were based on relevant and sufficient reasons, both as to the liability attributed to the applicant, in his capacity as a politician, for the unlawful comments posted in the run-up to an election on his Facebook "wall" by third parties, who themselves were identified and prosecuted as accomplices, and as to his criminal conviction. The impugned interference can therefore be considered to have been "necessary in a democratic society"<sup>23</sup>.

The Court ruled that the actions of the French authorities—criminal prosecution and fines—did not constitute a disproportionate interference with the right to freedom of expression. Since the speech in question involved hate speech disseminated during the political pre-election period, targeting the Muslim community and specific individuals on the basis of religion, the required diligence and responsibility of Sanchez, as a public figure, had to be higher. Considering the context of the situation and the proportionality of the measures applied, the Court concluded that no violation had occurred.

A different situation concerning treating a personal Facebook page as a platform arose in the *Petrascan v. Romania* case. This case dealt with whether the liability for one's own posts and user comments on Facebook violated the right to freedom of expression. The applicant had criticized a state institution regarding the appointment of a director at another institution, and some user comments were deemed offensive. The Romanian courts required him to remove these comments and pay compensation. The European Court of Human Rights found that this violated Article 10 of the Convention, as it was not foreseeable that the applicant, as an ordinary social media user, would be held responsible for other people's posts. The Court emphasized that the legal basis was not sufficiently clear and that the state interference was disproportionate, as it could have limited the right to free expression online<sup>24</sup>.

A number of countries have specific regulations concerning the institution of internet intermediaries and their liability, which clearly define the limits of such liability. Similar regulations exist in Germany, France, and Russia, which will be discussed in turn below.

Since 2018, Germany has implemented the *Netzwerkdurchsetzungsgesetz* or *NetzDG* (Network Enforcement Act), which obliges social media platforms to remove notifications from German users that contain "spamming" or hate speech (hate speech, defamation, incitement to violence, etc.). The law imposes fines of up to approximately

<sup>22</sup> CASE OF SANCHEZ v. FRANCE (Application no. 45581/15) <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-224928>, 23.07.

<sup>23</sup> Ibid.

<sup>24</sup> Case of Alexandru Pătrașcu v. Romania, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-238635>, 28.07.2025.

50 million euros, depending on the severity of the offense and the platform's attitude and responsiveness. The main purpose of the law is to combat “obviously illegal” content—insults, hate speech, defamation, or calls for violence. The law sets a clear deadline for the removal of illegal content: 24 hours<sup>25</sup>.

According to German law, in addition to the obligation to remove illegal content, platforms are also required to publish a report on complaints within six months after the previous report and/or after the removal of content<sup>26</sup>. Under this law, the first enforcement action took place in July 2019, when the Federal Office of Justice (BfJ) found Facebook in breach of the requirement. The BfJ imposed a €2 million fine for “under-reporting complaints,” as the company failed to include all user reports. In practice, the company had reported only part of the user complaints regarding the removal of illegal content, while other platforms such as YouTube and Twitter had reported significantly higher numbers—specifically, YouTube reported 215,000 cases, Twitter reported 265,000, while Facebook reported only 1,704 cases in the first half of the year<sup>27</sup>.

Perhaps the above-mentioned case is still the only one, but already in 2023 it was reported that an investigation had also been launched against Twitter due to a systemic flaw<sup>28</sup>. In France, the Law of December 22, 2018 “On the Fight Against Information Manipulation” allows electoral candidates or parties, during the three months preceding national elections, to apply to the court to verify whether the disseminated information is manifestly false, deliberately planned, has a massive negative impact, and could undermine the impartiality of the vote or public peace. The judge must make a decision within 48 hours, and, if necessary, require the deletion of the publication or the suspension of access to the website<sup>29</sup>. The law also establishes liability measures — up to one year of imprisonment and a fine of up to €75,000.

The first actual application of the law took place during the 2019 European Parliament elections. Only one case was registered in the Paris High Court. The case concerned a claim filed by Communist MPs Marie-Pierre Vieu and Pierre Ouzoulias regarding a tweet published by Castaner. The court noted that the message distorted actual facts, but it was not recognized as entirely “manifestly false,” and therefore the claim was rejected<sup>30</sup>.

---

<sup>25</sup> Germany implements new internet hate speech crackdown”, <https://www.dw.com/en/germany-implements-new-internet-hate-speech-crackdown/a-41991590?utm> 28.07.2025.

<sup>26</sup> “Germany: Facebook Found in Violation of “Anti-Fake News” Law”, <https://www.loc.gov/item/global-legal-monitor/2019-08-20/germany-facebook-found-in-violation-of-anti-fake-news-law?utm> 28.07.2025.

<sup>27</sup> “Germany fines Facebook over hate speech complaints”, <https://www.dw.com/en/germany-fines-facebook-for-underreporting-hate-speech-complaints/a-49447820?utm> 28.07.2025.

<sup>28</sup> “Germany Threatens Twitter With €50 Million Fine For Failing To Tackle Illegal Content”, <https://www.forbes.com/sites/emmawoollacott/2023/04/05/germany-threatens-twitter-with-50m-fine-for-failing-to-tackle-illegal-content/> 28.07.2025.

<sup>29</sup> The French Law No. 2018-1202 of December 22, 2018, on combating the manipulation of information, <https://www.legifrance.gouv.fr/jorf/id/JORFTEXT000037847559> , 28.07.2025.

<sup>30</sup> “France’s anti-fake news law fails test over interior minister’s false claims”, <https://www.mediapart.fr/en/journal/france/210519/france-s-anti-fake-news-law-fails-test-over-interior-minister-s-false-claims?utm> , 28.07.2025.

In 2018, amendments were made to the Russian Federal Law “On Information, Information Technologies, and the Protection of Information,” allowing the Prosecutor General or his deputy, without a court decision, to demand the removal of internet information if it is deemed unreliable<sup>31</sup>. Under this authority, the Prosecutor’s Office may contact Roskomnadzor (the telecommunications regulatory body), which is obliged to ensure the immediate blocking or removal of such information.

In 2019, new laws No. 31-Փ3 and No. 27-Փ3 were also adopted, expanding this mechanism. They grant Roskomnadzor the authority, without court intervention, to block information deemed unreliable and posing a threat to public order, health, or security.

These laws are applied extensively, especially against opposition and critical information. For example, publications by *Novaya Gazeta*, *Open Media*, and other outlets have been blocked under these legislative amendments without judicial proceedings. Reports by Freedom House and OVD-Info confirm that these regulatory regimes have been actively applied since 2019 — for instance, numerous news websites and bloggers have been blocked over key publications considered “unreliable,” with the matter resolved not through court action but solely via a prosecutorial letter<sup>32</sup>.

In summary, the EU and the US have diametrically opposed approaches to the issue of internet intermediaries’ liability. While the ECtHR holds an online platform responsible for improper content posted on it, US courts — relying on Section 230 regulations — do not consider such situations as violations committed by internet intermediaries.

In light of the foregoing, the following comprehensive definition of internet intermediaries may be proposed.: **Internet intermediaries are natural or legal persons who, by providing an online platform, facilitate the transmission, hosting, or accessibility of content — including services or goods — while possessing certain supervisory rights or obligations over the platform’s content.**

In this context, it is important to note that in January of this year, Meta announced that it was eliminating its fact-checking program, considering it an interference with free speech. According to the International Fact-Checking Network (IFCN)<sup>33</sup>, Meta’s decision to remove third-party fact-checking...

If we turn to the problematic aspects of the issue of internet intermediaries’ liability, we can note that this institution can often serve as a tool for states to indirectly restrict internet users’ right to freedom of expression. Any state with sufficient influence, which can be exercised through significant market control, can, in practice, shape the rules of

---

<sup>31</sup> The Russian Federation Federal Law No. 149-FZ of July 27, 2006, “On Information, Information Technologies, and Information Protection” (as amended), [https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_61798/?utm](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_61798/?utm) , 28.07.2025.

<sup>32</sup> “Internet blocks as a tool of political censorship”, <https://fluent-beyer-954835.appspot.com/en/internet-blocks-tool-political-censorship?utm> , 28.07.2025.

<sup>33</sup> <https://www.poynter.org/fact-checking/2025/meta-ends-fact-checking-community-notes-facebook/>, Meta is ending its third-party fact-checking partnership with US partners. Here’s how that program works, 28.06.2025.

speech for all users worldwide<sup>34</sup>. Under such circumstances, content adverse to the state may be removed, thereby transferring the locus of responsibility from the public to the private sphere. Even where infringements of fundamental constitutional rights are established, their attribution to private internet intermediaries effectively precludes recognition of such infringements as violations of constitutional rights, leaving them without corresponding legal consequences.

This practice has been described as “**laundering state action**”, in which states “launder” or “cleanse” their authority by pressuring or cooperating with platforms to remove speech that governments could not directly prohibit<sup>35</sup>.

The adoption of sufficiently clear and restrictive legal acts on the liability of internet intermediaries often leads to a “risk-averse” policy, which is mainly manifested in the removal of lawful content and the restriction of the rights of bona fide users. Under this policy, in order to avoid liability, internet intermediaries prefer to remove disputed content regardless of whether it actually violates the law.

A vivid example of this is the case of the international human rights initiative **Syrian Archive**. Following a chemical attack in Syria, Syrian Archive uploaded to YouTube documentary videos of human rights violations in Syria—covering chemical attacks and strikes on civilian infrastructure. However, the platform’s automated algorithm, applying counterterrorism rules, removed them.

According to *Wired*, between 2012 and 2018, Syrian Archive uploaded about **1.18 million** videos, of which YouTube removed more than **123,229**<sup>36</sup>.

Under the EU **Digital Services Act (DSA)**, particularly strict obligations are imposed on platforms classified as **Very Large Online Platforms (VLOPs)**—those with more than 45 million monthly users in the EU. These platforms are required not only to respond to illegal content but also to regularly conduct **systematic risk assessments**, which include analyzing the spread of disinformation, societal polarization, manipulative advertising, and other threats. When such risks are identified, platforms must develop and implement **mitigation strategies**, which should include both technical measures and user education, including promoting media literacy<sup>37</sup>.

Considering these obligations and the liability risks, Very Large Online Platforms are reviewing their **policies**. Specifically, on **January 7, 2025**, Mark Zuckerberg announced that Meta would discontinue its third-party fact-checking program in the U.S., replacing it with a “**Community Notes**” system, which relies on contextual notes from users—similar to X’s model. He also stated that “fact-checkers have just been too politically

<sup>34</sup> Keller, D., “Who Do You Sue? State and Platform Hybrid Power over Online Speech.” Hoover Institution, Stanford, 2018, էջ 7, [https://www.hoover.org/sites/default/files/research/docs/who-do-you-sue-state-and-platform-hybrid-power-over-online-speech\\_0.pdf](https://www.hoover.org/sites/default/files/research/docs/who-do-you-sue-state-and-platform-hybrid-power-over-online-speech_0.pdf), 04.05.2025.

<sup>35</sup> Ibid, page 4.

<sup>36</sup> [https://www.wired.com/story/chemical-weapons-in-syria-youtube-algorithm-delete-video/?utm\\_source=chatgpt.com](https://www.wired.com/story/chemical-weapons-in-syria-youtube-algorithm-delete-video/?utm_source=chatgpt.com), YouTube keeps deleting evidence of Syrian chemical weapon attacks, 05.06.2025.

<sup>37</sup> The Digital Services Act, [https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act\\_en](https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act_en), 28.06.2025.

biased and have destroyed more trust than they've created<sup>38</sup>.” Joel Kaplan, Meta’s Global Policy Head, confirmed that the fact-checking program in the U.S. would officially end, and the Community Notes system would gradually appear on **Facebook, Instagram, and Threads**<sup>39</sup>.

The issue of **liability for online intermediaries** is particularly problematic in the context of the rapidly expanding use of **artificial intelligence (AI)**. On many intermediary platforms, the development, deployment, and implementation of algorithms are entrusted to AI systems, which autonomously generate content recommendations based on user data and preferences. In this context, a key legal question arises: should the **intermediary** be held liable for the removal or non-removal of content that is determined solely by AI-generated algorithms, without any human intervention from the platform?

A striking example of this issue is the **Myanmar cases**, where Facebook’s algorithms facilitated the rapid spread of hate speech and disinformation against the Rohingya Muslim population. This algorithmic amplification overshadowed lawful and legitimate content, ultimately contributing to widespread violence. «In 2017, the Rohingya were killed, tortured, raped, and displaced in the thousands as part of the Myanmar security forces’ campaign of ethnic cleansing. In the months and years leading up to the atrocities, Facebook’s algorithms were intensifying a storm of hatred against the Rohingya which contributed to real-world violence,” said Agnès Callamard, Amnesty International’s Secretary General.<sup>40</sup>:

Discussions regarding the **liability of online intermediaries in the context of artificial intelligence (AI)** raise additional challenges, which is why different jurisdictions adopt different approaches on this issue.

From this perspective, it is important to note that **clear regulations exist in the EU through the Artificial Intelligence Act**<sup>41</sup>. The EU AI Act is primarily directed at developers of AI systems and those responsible for their deployment. It requires them to conduct **risk assessments**, ensure **transparency**, and, in some cases, implement **human oversight or evaluation procedures**. While the Act does not directly regulate the liability of online intermediaries, **Article 2, paragraph 5** explicitly references the **Digital Services Act (DSA)**, stating that the AI Act does not override or replace the existing liability rules applicable to online intermediaries.

In the **United States**, there is no uniform federal regulation regarding AI. Some rules exist at the state level, but no comprehensive national framework is in place. However,

<sup>38</sup> Meta to get rid of fact-checkers and recommend more political content, <https://www.theguardian.com/technology/2025/jan/07/meta-facebook-instagram-threads-mark-zuckerberg-remove-fact-checkers-recommend-political-content>, 11.08.2025.

<sup>39</sup> Meta Ends Third-Party Fact-Checking, Adds ‘Community Notes’ System, <https://learningenglish.voanews.com/a/meta-ends-third-party-fact-checking-adds-community-notessystem/7946074.html>, 28.06.2025.

<sup>40</sup> <https://www.amnesty.org/en/latest/news/2022/09/myanmar-facebooks-systems-promoted-violence-against-rohingya-meta-owes-reparations-new-report/>, Myanmar: Facebook’s systems promoted violence against Rohingya; Meta owes reparations – new report, 01.07.2025.

<sup>41</sup> The **EU Artificial Intelligence Act**, REGULATION (EU) 2024/1689 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 13 June 2024 <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32024R1689>, 04.08.2025.

in **July 2025**, the U.S. published an **AI Action Plan**<sup>42</sup>, which outlines directions for AI development and deployment. This document also touches on **freedom of speech limits, content impartiality**, and, to some extent, signals the **scope of responsibilities for online intermediaries**.

Regarding the situation in the Republic of Armenia, **currently there are no regulations** in Armenian legislation concerning either the **institution of online intermediaries** or their **liability**.

Notably, as of **2014**, the draft law titled “**On Amendments and Additions to the Civil Code of the Republic of Armenia**” included provisions on the liability of online intermediaries and the removal of content containing defamation or insults.

According to **Part 2 of Article 1** of the draft law, it was proposed to supplement the Civil Code of Armenia, *inter alia*, with the following articles:

- **Article 9.2.** In cases of defamation or insult, an individual may demand that the owner of a public electronic website remove any comment on the site containing defamation or insult. The owner is obliged to remove the comment **immediately upon receipt of the request, but no later than 12 hours**.

- **Article 9.5.** The relevant media outlet is liable for comments containing insults or defamation posted on its electronic site if it **does not remove the comment immediately, and no later than 12 hours after receiving the request**, or refuses to remove it.

These provisions aimed to establish **clear obligations for online intermediaries** regarding defamatory or insulting content, ensuring the **protection of individuals’ rights**<sup>43</sup>.

In the **justifications of the draft law**, reference is made to the aforementioned **Delfi AS v. Estonia** case from the European Court of Human Rights (ECtHR), emphasizing the importance and relevance of prior cases in **preventing the dissemination of defamatory information** and ensuring the effective protection of **personal and family life and dignity rights**, as safeguarded by the Constitution of Armenia and international conventions.

In practice, the draft law proposed an **operational “Notice and Take Down” mechanism**, specifically by establishing the obligation to remove comments containing insults or defamation **immediately upon receipt of the request, but no later than 12 hours**, which is both effective and precise. Setting a specific time frame for removing illegal content is aimed at preventing arbitrary deletions as well as abuses of the law. A similar approach was adopted in **Germany**, where removal is required within **24 hours**, as discussed earlier.

However, the draft law became the subject of **intense public debate and criticism** in Armenia, and as a result, it was **not adopted**<sup>44</sup>. The OSCE expressed concerns about the draft, mainly criticizing its overly broad scope, vague definitions, and general lack of

<sup>42</sup> AMERICA’S AI ACTION PLAN, JULY 2025, <https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2025/07/Americas-AI-Action-Plan.pdf>, 04.08.2025.

<sup>43</sup> The **Draft Law on Amendments to the Civil Code of the Republic of Armenia** (Պ-456-04.03.2014-ՊԻ-010/0), <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=33026>, 28.07.2025.

<sup>44</sup> “Armenian Bill Threatens Online Anonymity” <https://www.eff.org/deeplinks/2014/04/armenian-bill-threatens-online-anonymity>, 28.07.2025.

clarity<sup>45</sup>. Nevertheless, despite numerous criticisms, **over time**, the logic and principles of the draft law have been reflected in **ECtHR practice**, and in later years, also in decisions of the **Constitutional Court of Armenia** and, soon, in **Armenian legislation**.

More than **10 years after the circulation of the 2014 draft**, on **October 4, 2024**, the **Constitutional Court of Armenia**, in its decision No. ՄԴՈ-1752, emphasized the importance of establishing an obligation to remove information containing defamation. The Court found that **Article 1087.1, part 8, of the Civil Code of Armenia**, to the extent that it does not provide a remedy for a concerned person in cases of defamation published online by a non-journalistic actor—such as the ability to refute, respond to, remove, or otherwise effectively address the defamatory content—**contradicts Article 31 of the Constitution (in conjunction with Article 75) and is therefore invalid**<sup>46</sup>.

In decision No. ՄԴՈ-1752, the Constitutional Court noted that **human dignity, honor, and good reputation** are **supreme constitutional values** that require exceptional protection even in **digital and informational platforms**. The Court concluded that existing legal provisions, in particular **Article 1087.1, part 8, of the Civil Code**, **do not provide effective legal remedies** that would ensure the protection of individual rights when defamation is disseminated not by a journalistic entity, but by an ordinary internet user—for example, via a social media account.

The Court found that in such situations, a person is deprived of the possibility to **legally request a retraction of the publication or to publish their response**, which in turn means that the violation of rights is **not effectively and fully remedied**, and the defamatory content remains accessible online. This **limits the individual's constitutional right to inviolability of honor and good reputation**, guaranteed by **Article 31 of the Constitution**, and demonstrates that the state **fails to fulfill its constitutional obligation** to establish effective organizational and procedural mechanisms, as required under **Article 75 of the Constitution**.

Taking into account the **specific features of online communication**, including a wide audience, rapid dissemination, and low controllability, the Court concluded that the existing normative framework **needs to be revised** to ensure **effective protection of rights violated by defamation**, including on social media platforms. With this, the Constitutional Court **affirmed the inconsistency of the contested legal framework with the Constitution**.

This decision of the Constitutional Court has **served as the basis for new legislative initiatives**, notably the draft laws currently under consideration since **April 30, 2025**, circulated by the **Ministry of Justice of Armenia**, concerning “**Amendments and Additions to the Civil Code**” and “**Amendments and Additions to the Law on Mass Media**”<sup>47</sup>.

<sup>45</sup> “LEGAL ANALYSIS OF DRAFT AMENDMENTS TO THE CIVIL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA” <https://www.osce.org/files/f/documents/9/5/116911.pdf>, 28.07.2025.

<sup>46</sup> **Decision No. ՄԴՈ-1752 dated 04.10.2024** on the issue of compliance of **Article 1087.1, Part 8 of the Civil Code of the Republic of Armenia** with the Constitution [https://www.concourt.am/decision/decisions/670926c7423d9\\_SDV-1752.pdf](https://www.concourt.am/decision/decisions/670926c7423d9_SDV-1752.pdf), 28.07.2025.

<sup>47</sup> Draft laws on “**Amendments and Additions to the Civil Code**” and “**Amendments and Additions to the Law on Mass Media**” of the Republic of Armenia, <https://www.e-draft.am/projects/8612> 28.07.2025.

The draft laws provide for the **possibility to request the removal of offensive content** from publications on an online platform carried out by a person engaged in journalistic activity. Specifically, **Article 1, Clause 1** of the draft establishes that:

“If an insult is contained in a publication on an online platform carried out by a person engaged in journalistic activity, including comments made by users of that platform regarding the journalist, the expression(s) containing the insult must be removed in accordance with the procedure established by the Law of the Republic of Armenia ‘On Mass Media.’”

The draft also foresees the possibility to request **full or partial removal** of a post containing insults published by a person **not engaged in journalistic activity**, if it appears on an online platform (user account), provided that the post itself (not just a comment) contains offensive content.

According to the **additions proposed in Article 2**, the above requirements also **apply to defamatory content**. In particular:

“If defamation is contained in information disseminated by a person engaged in journalistic activity (including publications on an online platform) or in information published by a person not engaged in journalistic activity on an online platform (user account), the individual has the right to publicly refute the facts considered defamatory and/or publish their response via the same medium or online platform, or, if already published online, to partially or fully remove the defamatory information, in accordance with the procedure established by the Law of the Republic of Armenia ‘On Mass Media.’”

In sum, the draft **extends the right to request removal or response** to both insulting and defamatory content, covering publications by both journalists and ordinary users on online platforms.

The draft also introduces **amendments and additions to the Law “On Mass Media.”** Specifically, changes are proposed to **Article 8** of the law, which, in addition to the right to request a refutation or response, now also explicitly provides the **right to request removal** of content. According to the draft:

- The removal request may concern **individual expressions, sentences, or an entire publication**.

- **Requests for refutation and removal cannot be submitted simultaneously:** if a refutation request is fulfilled, the removal request must be rejected; conversely, if a removal request is fulfilled, the corresponding refutation request is rejected.

The draft law also sets **deadlines for submitting requests and for carrying out the obligations to remove or refute content:**

- Requests for refutation or removal may be submitted **within one month** from the date the information was disseminated.

- Persons engaged in journalistic activity must:

- Fulfill a refutation request **within one week** of receiving it.
- Fulfill a removal request **immediately** upon receiving it.

- The person submitting the request must be informed either of the **time when the refutation will be published or the removal carried out**, or, in writing, of the **rejection of the refutation or removal request**.

This framework ensures that both refutation and removal procedures are **timely and regulated**, providing clarity for users and media actors regarding their rights and obligations.

In practice, the draft envisions that, in cases where a refutation request is submitted, the content should be **removed immediately**. This reflects the “Notice and takedown” mechanism. However, the mechanism would operate more effectively if the term “**immediately**” were replaced with a clearly defined timeframe—for example, a **6–12 hour period** to carry out the removal obligation. In legal practice, the vague requirement to act “immediately” can lead to **misunderstandings** and, during implementation, may conflict with the principle of **legal certainty**. Establishing a specific timeframe is justified by the **lifespan of content** on social networks and news platforms, and the need to protect human rights during the most active phase of content circulation.

For Armenia, it is essential to acknowledge the absence of substantive influence over the decision-making processes and policy frameworks of global online intermediaries. Consequently, regulatory mechanisms employed in jurisdictions such as Germany, or at the international level—frequently premised upon established partnerships with such intermediaries or upon robust supervisory architectures—are, in many instances, not directly transferable to the Armenian context. In view of the foregoing, and taking into account the legal principles articulated in *Delfi AS v. Estonia*, *Phil v. Sweden*, and other relevant judgments of the European Court of Human Rights, it may be concluded that, at present, the most practical, realistic, and implementable course of action for Armenia is the formulation of domestic legal regulation harmonized with the “Notice and take down” mechanism. Accordingly, it is recommended to establish a **national-level system** capable of **directly responding to challenges in the media sector**, such as the spread of disinformation, hate speech, and other unlawful content, while simultaneously **preserving the balance between these restrictions and the right to freedom of expression**.

For the **practical implementation of the “Notify and take down” mechanism**, several conditions must be simultaneously met:

**A. The relevant entity must meet internationally recognized standards for online intermediaries.** This particularly concerns the entity having a **certain degree of control or responsibility over the content posted on the platform**. It is important to understand that the concept of an online intermediary applies not only to large social platforms but also to **any actor operating on those platforms with supervisory functions over other users’ posts or comments**, especially regarding their removal. Examples include **administrators of Facebook groups or pages**, and similar roles.

**B. The online intermediary must be notified by the concerned party** that it considers a specific post or comment under its control to be unlawful. In other words, the intermediary must **receive a formal notice regarding the problematic content**.

**C. The online intermediary must make a decision** on whether to remove the content or not, **in accordance with ECtHR standards**.

**D. Once notified, if the intermediary removes the comment, its liability should be excluded.**

This framework ensures a **clear, predictable, and legally compliant process** that balances the protection of individual rights with the intermediary's operational responsibilities.

At the same time, we believe it is worth considering in the future the rationale underlying the French model. Certainly, it has faced severe criticism for disproportionate interference with freedom of speech and lack of balance. However, the underlying logic cannot be dismissed: in electoral processes, where a massive amount of information about candidates and parties circulates within a limited timeframe—undoubtedly including false and defamatory content—it is crucial to have certain countermeasures.

Undoubtedly, such mechanisms must balance the public's right to be informed with the individual's right to protect their honor and dignity. Moreover, defamatory information can, within a limited period, influence voters' political will and expression; therefore, delayed or prolonged legal remedies cannot be considered effective protection. In this context, considering the evolution of legal relations and the effectiveness and practical application of such mechanisms in Armenia's information sphere, the introduction of a **rapid-response model during the pre-election period** could be considered for the Armenian legal system.

Ultimately, it must be underscored that, at the current stage, the institutionalization of online intermediary liability in Armenia transcends the realm of legislative refinement; it constitutes a normative imperative dictated by contemporary realities. The absence of effective oversight over the digital information space engenders significant risks to the protection of the legitimate interests of the state and society, as well as to the integrity and stability of democratic processes.

In the conditions of modern information society, the responsible use of social media cannot be ensured without a precise delineation of the scope of online intermediaries' obligations and liabilities. It is therefore essential to adopt a regulatory model that is optimally suited to Armenia's specific context, one that accounts for the actual leverage exercisable over platforms, the dynamics of social media ecosystems, and the broader trajectory of legal development.

#### **ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – Համացանցային միջնորդների պատասխանատվության առանձնահատկությունները և զարգացման միտումները –**

Վերջին տարիներին եվրոպական տիրույթում առավել ակտիվ է քննարկվում համացանցային միջնորդների պատասխանատվության առանցքային հարցը: Արդիական է դարձել այն խնդիրը, թե արդյոք հարթակները պետք է պատասխանատվություն կրեն այն դեպքերում, երբ իրենց միջոցով տարածվում են վիրավորանք, զրպարտություն, ստեղծության խոսք և մարդու իրավունքները խախտող այլ բովանդակություն: Խնդիրը հատկապես ակնառու է դառնում այն իրավիճակներում, երբ անձինք, որոնց իրավունքները խախտվել են, դիմում են հարթակներին՝ խնդրելով հեռացնել վիրավորական կամ զրպարտչական տեղեկատվությունը, սակայն հարթակները չեն արձագանքում:

Այս պարագայում առաջանում է երկաստիճան պատասխանատվության հարցը: Այն վերաբերում է ոչ միայն վիրավորանք կամ զրպարտություն տարածած անձանց, այլև այն սուբյեկտներին, որոնք հնարավորություն են տվել այդ բովանդակությունը հրապարակելու: Թեման առանձնակի կարևորություն ստացավ 2016 թվականից՝ նախագահական մի քանի ընտրություններից և Մեծ Բրիտանիայում Brexit-ի հանրաքվեից հետո, երբ եվրոպական հանրային դիսկուրսում սրվեց տեղեկատվական միջավայրի

նկատմամբ վերահսկողության և խոսքի ազատության հավասարակշռության հարցը: Ներկայումս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ձևավորել է գրեթե բյուրեղացված պրակտիկա այն տեսակետի շուրջ, որ համացանցային միջնորդները կարող են ենթարկվել պատասխանատվության այն դեպքերում, երբ չեն ձեռնարկում անհրաժեշտ քայլեր իրենց հարթակներում վիրավորական կամ զրպարտչական բովանդակությունը հեռացնելու հարցում: Այս հարցադրումն ու դրա հնարավոր կարգավորումները դիտարկվում են նաև հայաստանյան իրավական իրականության մեջ՝ հաշվի առնելով գործող օրենսդրական զարգացումները և Սահմանադրական դատարանի նախորդ տարվա հոկտեմբերի 1-ի որոշման կարգավորումները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ մեր երկրում համացանցային միջնորդների պատասխանատվության ինստիտուտի ձևավորման հարցում:

**Բանալի բառեր** – *համացանցային միջնորդներ, վիրավորանք, զրպարտություն, մեղիա, իրավունք, հրապարակում, պատասխանատվություն*

**АРПИНЕ ОГАНЕСЯН – Особенности и тенденции развития ответственности интернет-посредников.** – В последние годы в европейском пространстве всё более активно обсуждается ключевой вопрос ответственности интернет-посредников. Актуальной стала проблема, должны ли платформы нести ответственность в случаях, когда посредством их сервисов распространяются оскорбления, клевета, речь ненависти и иные материалы, нарушающие права человека. Особенно остро эта проблема проявляется в ситуациях, когда лица, чьи права были нарушены, обращаются к платформам с просьбой удалить оскорбительную или клеветническую информацию, однако платформы не реагируют.

В таких обстоятельствах возникает вопрос двухступенчатой ответственности: она касается не только лиц, распространивших оскорбление или клевету, но и тех субъектов, которые предоставили возможность публикации такого контента. Тема приобрела особую значимость после ряда президентских выборов и референдума по Brexit в Великобритании с 2016 года, когда в европейском общественном дискурсе обострились вопросы контроля над информационной средой и поддержания баланса со свободой выражения мнения.

В настоящее время Европейский суд по правам человека выработал практически кристаллизованную практику относительно того, что интернет-посредники могут быть привлечены к ответственности в случаях, когда они не предпринимают необходимых шагов по удалению оскорбительного или клеветнического контента на своих платформах. Данная проблематика и возможные механизмы её регулирования рассматриваются и в армянской правовой действительности с учётом действующих законодательных процессов и решения Конституционного суда от 1 октября прошлого года, которое может оказать существенное влияние на формирование института ответственности интернет-посредников в нашей стране.

**Ключевые слова:** *интернет-посредники, оскорбление, клевета, медиа, право, публикация, ответственность.*

## References

- OECD. The Economic and Social Role of Internet Intermediaries. (n.d.). Retrieved June 28, 2025, from [https://www.oecd.org/en/publications/theeconomic-and-social-role-of-internet-intermediaries\\_5kmh79zsz8vb-en.html](https://www.oecd.org/en/publications/theeconomic-and-social-role-of-internet-intermediaries_5kmh79zsz8vb-en.html)
- European Commission. The Digital Services Act. Retrieved June 28, 2025, from [https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act\\_en](https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/europe-fit-digital-age/digital-services-act_en)
- Article 19. (2013). Dilemma of Liability. p. 6. Retrieved June 28, 2025, from [https://www.article19.org/data/files/Intermediaries\\_ENGLISH.pdf](https://www.article19.org/data/files/Intermediaries_ENGLISH.pdf)

- Google. Transparency Report. Retrieved June 28, 2025, from <https://transparencyreport.google.com/>
- United Nations Conference on Trade and Development (UNCTAD). Reports. Retrieved June 28, 2025, from <https://unctad.org/>
- U.S. Congress. (1996). Section 230 of the Communications Decency Act.
- The White House. (2020). Executive Order on Preventing Online Censorship. Retrieved August 12, 2025, from <https://trumpwhitehouse.archives.gov/presidential-actions/executive-order-preventing-online-censorship/>
- Cadwalladr, C. (2018). The Great British Brexit Robbery: How Our Democracy Was Hijacked. The Guardian. Retrieved June 28, 2025, from <https://www.theguardian.com/technology/2017/may/07/the-great-british-brexite-robbery-hijacked-democracy>
- Government of the United Kingdom. Online Safety Act — Explainer. Retrieved June 28, 2025, from <https://www.gov.uk/government/publications/online-safety-act-explainer/online-safety-act-explainer>
- UK Parliament. Online Harms White Paper. Retrieved June 28, 2025, from <https://www.gov.uk/government/consultations/online-harms-white-paper>
- Directive 2000/31/EC of the European Parliament and of the Council of 8 June 2000 on certain legal aspects of information society services. Retrieved June 28, 2025, from <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32000L0031>
- European Court of Human Rights. Case of Delfi AS v. Estonia (Application no. 64569/09). Retrieved June 28, 2025, from <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-155105>
- European Court of Human Rights. Case of Index.hu Zrt v. Hungary (Application no. 77940/17). Retrieved June 28, 2025, from <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-226196>
- European Court of Human Rights. Case of Rolf Anders Daniel Pihl v. Sweden (Application no. 74742/14). Retrieved June 28, 2025.
- European Court of Human Rights. Case of Sanchez v. France (Application no. 45581/15). Retrieved July 23, 2025, from <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-224928>
- European Court of Human Rights. Case of Alexandru Pătrașcu v. Romania. Retrieved July 28, 2025, from <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-238635>
- Deutsche Welle. Germany Implements New Internet Hate Speech Crackdown. Retrieved July 28, 2025.
- The Library of Congress. Germany: Facebook Found in Violation of “Anti-Fake News” Law. Retrieved July 28, 2025.
- Forbes. Germany Threatens Twitter with €50 Million Fine for Failing to Tackle Illegal Content. Retrieved July 28, 2025.
- Légifrance. (2018). French Law No. 2018-1202 of December 22, 2018 on Combating the Manipulation of Information. Retrieved July 28, 2025.
- The Russian Federation. (2006). Federal Law No. 149-FZ “On Information, Information Technologies, and Information Protection” (as amended). Retrieved July 28, 2025.
- Meta. Community Notes and Fact-checking policy changes. The Guardian & VOA News. Retrieved August 11, 2025.
- Amnesty International. (2022). Myanmar: Facebook’s Systems Promoted Violence Against Rohingya; Meta Owes Reparations. Retrieved July 1, 2025.
- European Union. (2024). EU Artificial Intelligence Act. Regulation (EU) 2024/1689 of 13 June 2024.
- The White House. (2025). America’s AI Action Plan.
- National Assembly of Armenia. Draft Law on Amendments to the Civil Code of the Republic of Armenia (Պ-456-04.03.2014-ՊԻ-010/0).
- Electronic Frontier Foundation (EFF). (2014). Armenian Bill Threatens Online Anonymity.
- OSCE. (2014). Legal Analysis of Draft Amendments to the Civil Code of the Republic of Armenia.
- Constitutional Court of Armenia. (2024). Decision No. ՄԴՈ-1752 dated 04.10.2024 on Article 108.7(8) of the Civil Code of the Republic of Armenia.
- Government of Armenia. Draft laws on Amendments and Additions to the Civil Code and the Law on Mass Media. Retrieved July 28, 2025.

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ<sup>✉</sup>, ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵԴՅԱՆ<sup>✉</sup>  
*Երևանի պետական համալսարան*

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ իրավա-  
կարգերում մշակվել են տարբեր մեխանիզմներ՝ ուղղված թույլ կողմի իրավական  
պաշտպանության ապահովմանը՝ սոցիալական արդարության երաշխավորման  
նպատակով: Տեսական և մեթոդաբանական հենքի վրա հոդվածում քննարկվում են  
թույլ կողմի իրավական պաշտպանության վերաբերյալ առկա գիտական մոտեցում-  
ները, առանձնացվում են այն հիմնական հատկանիշները, որոնք հնարավորություն  
են տալիս կողմին դիտարկելու որպես թույլ կողմ: Միննույն ժամանակ շեշտվում է,  
որ այդ հատկանիշների շրջանակը բաց է և կարող է լրացվել նոր չափանիշներով՝  
ելնելով բարեխղճության, հավասարության և ողջամտության սկզբունքներից:  
Հոդվածի շրջանակում արվում են իրավակարգավորման կատարելագործման ա-  
ռաջարկություններ՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի քաղաքացիական  
իրավունքում թույլ կողմի իրավական պաշտպանության շեմի բարձրացմանը:

**Բանալի բառեր** – մասնավոր, թույլ կողմ, անարդար պայմաններ, բարեխղճություն,  
հավասարություն, ողջամտություն, հավասարակշռություն, հատկանիշներ, հանրա-  
յին, հայեցակարգ

### Ներածություն

Քաղաքացիական հարաբերության թույլ կողմի ինստիտուտը համեմատա-  
բար նոր երևույթ է Հայաստանի քաղաքացիական իրավունքի գիտության մեջ  
և գրեթե ուսումնասիրված չէ, սակայն այս ինստիտուտը վերջին ժամանակնե-  
րում հաստատուն քայլերով մտնում է քաղաքացիական իրավունքի դոկտրին:

\* **Արմեն Հայկյանց** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քաղաքացիա-  
կան իրավունքի ամբիոնի վարիչ

**Армен Айкянц** – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой гражданского права ЕГУ

**Armen Haykyants** – Doctor of Law, Professor, Head of YSU Chair of Civil Law

Էլ. փոստ՝ [ahaykyants@ysu.am](mailto:ahaykyants@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0003-4531-4647>

\*\* **Տարիել Բարսեղյան** – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

**Тариел Барсегян** – соискатель кафедры гражданского права ЕГУ

**Tariel Barseghyan** – Applicant at YSU Chair of Civil Law

Էլ. փոստ՝ [tarielbarseghyan3@gmail.com](mailto:tarielbarseghyan3@gmail.com) ORCID ID: <https://orcid.org/0009-0004-6854-9320>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCom-  
mercial 4.0 International License.

Ստացվել է՝ 08.09.2025

Գրախոսվել է՝ 21.11.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ավելի ու ավելի են սրվում կողմերի հավասարության պահպանման, բարեխղճության և արդարության սկզբունքների ապահովման հարցերը:

### Հետազոտական մաս

1. Քաղաքացիական հարաբերության թույլ կողմի ինստիտուտն անմիջական կրողն ու դրսևորումն է բարեխղճության, արդարացիության և ողջամտության սկզբունքների, որոնց նպատակը սոցիալական իդեալի հաստատումն է հանրության շրջանում, ինչպես նաև՝ թույլ կողմի պաշտպանությունը և ուժեղ կողմի նկատմամբ հակակշռումը:

Օբյեկտիվ իմաստով իրավունքի էությունից է բխում իրավահարաբերությունների մասնակիցների միջև հավասարության ապահովումը, այդ էությունը դրսևորվում է իրավունքի սկզբունքների միջոցով, որոնք էլ առարկայանում են կոնկրետ իրավանորմերի և իրավական կարգավորման մեխանիզմների գործադրմամբ<sup>1</sup>:

ՌԴ իրավական համակարգի համար, որին սույն հարցի առնչությամբ համանման է նաև Հայաստանի իրավական համակարգը, ռուս իրավագետ Ե. Վ. Վավիլինն իրավացիորեն նշում է, որ «հայրենական քաղաքացիական օրենսդրությամբ բացակայում են ընդհանուր իրավադրույթներ, որոնք օրենսդրորեն կամրագրեին կողմերի հավասարության սկզբունքից հնարավոր շեղումների ցիվիլիստական հայեցակարգը բոլոր այն դեպքերի առնչությամբ, երբ հարաբերության կողմերից մեկը, օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, թույլ կողմ է: Ենթադրվում է, որ քաղաքացիական օրենսգիրքը պետք է լրացվի այնպիսի իրավակարգավորումներով, որոնք նեցուկ կլինեն թույլ կողմին իր իրավունքների իրացման և պաշտպանության հարցում»<sup>2</sup>:

Քաղաքացիական հարաբերության թույլ կողմի ինստիտուտը բավականին հայտնի է մի շարք երկրներում, որոնցում թույլ կողմի իրավական պաշտպանությունն իրականացվում է ինչպես ընդհանուր նորմերի, այնպես էլ հատուկ նորմերի կիրառմամբ: Այսպես, Թուրքիայի Պարտավորական օրենքի 21-րդ հոդվածով նախատեսվում է, որ պայմանագրի դրույթները մեկնաբանվում են հակառակ պայմանագրի տեքստը պատրաստող կողմի շահերի և հոգուստ պայմանագրին միացած կողմի շահերի, եթե պայմանագրին միացած կողմը հնարավորություն չի ունեցել քննարկելու պայմանագրի պայմանները և ընդամենը միացել է արդեն իսկ կազմված պայմանագրին<sup>3</sup>:

<sup>1</sup> St' u Деннис Л. Идея права / перевод с английского М.А. Юмашева, Ю.М. Юмашев. М. ЮГОНА. 2002, էջ 132-133:

<sup>2</sup> Вавилин Е.В. Осуществление и защита субъективных прав слабой стороны в гражданском правоотношении // Рос. правосудие. 2007. № 6, с. 31-37:

<sup>3</sup> St' u Turkish Code of Obligations // Turkish Code of Obligations (Law №. 6098) – Overview, Key Provisions & 2025 Updates | Turkish International Law & Consulting Firm

Այստեղ պայմանագրին միացած կողմը դիտվում է որպես թույլ կողմ, և օրենքը նրան վերցնում է հատուկ պաշտպանության ներքո: Նման նորմ նախատեսվում է Միջազգային առևտրային պայմանագրերի Ունիդրուայի 1994 թ. սկզբունքների 4.6. հոդվածում (Contra proferentem)<sup>4</sup>:

Միանալու պայմանագրերի իրավափիլիսոփայությունն այն է, որ կա՛մ պետք է ենթարկվես արդեն իսկ կազմված պայմանագրի նախագծի պահանջներին և կնքես, կա՛մ պետք է չկնքես պայմանագիրը («take-it-or-leave-it»)<sup>5</sup>:

Եթե բերված օրինակներում թույլ կողմի իրավական պաշտպանությունն իրականացվում է կոնկրետ իրավանորմերի միջոցով, ապա կան երկրներ, որոնք թույլ կողմի իրավական պաշտպանությունն ապահովում են գնահատողական բնույթի իրավական կատեգորիաների, մասնավորապես իրավունքի սկզբունքների կիրառմամբ<sup>6</sup>: Մասնավորապես, բայց ոչ բացառապես: Իտալիայում քաղաքացիական հարաբերության թույլ կողմի իրավական պաշտպանության համար կիրառվում է բարեխղճության սկզբունքը<sup>7</sup>:

Թույլ կողմի ինստիտուտը կիրառվում է հարաբերությունների տարբեր ոլորտներում. այն առավել արդիական է սպառողների մասնակցությամբ, ինչպես նաև աշխատանքային և սպորտային հարաբերություններում<sup>8</sup>: Սակայն թույլ կողմի ինստիտուտը վերաբերելի է նաև ձեռնարկատիրական հարաբերություններին: Մասնագիտական գրականության մեջ բերվում են օրինակներ, որոնք հենվում են Միջազգային առևտրային պայմանագրերի Ունիդրուայի 1994 թ. սկզբունքների իրավակարգավորումների վրա: Հիշյալ Սկզբունքներում ամրագրված է իրավադրույթ, համաձայն որի՝ «յուրաքանչյուր առևտրային կազմակերպություն իր առևտրային գործունեության շրջանակներում իրեն պետք է դրսևորի որպես հեռատես ձեռնարկատեր»: Արտասահմանյան հեղինակներից մեկը բերում է հետևյալ օրինակը. «Երբ առևտրային պայմանագիր են կնքում ավտոմոբիլային ձեռնարկության սեփականատերը և պետական առևտրային կազմակերպությունը, դժվար թե այս հարաբերությունում թույլ կողմ համարվի առաջինը, քանի որ այս հարաբերության շրջանակներում թույլ կհամարվի այն կողմը, որն այնքան էլ լավատեղյակ չէ պայմանագրի ձևակերպման տեխնիկական հարցերին»<sup>9</sup>:

<sup>4</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Վ., Հակոբյան Լ.Ս., Հակոբյան Լ.Օ.** Միջազգային մասնավոր իրավունք: Միջազգային իրավական փաստաթղթերի ժողովածու: Ուս. ձեռնարկ: Եր., Տիգրան Մեծ, 2005, էջ 152:

<sup>5</sup> <https://www.upcounsel.com/take-it-or-leave-it-contract>

<sup>6</sup> Տե՛ս **Випневский А.А.** Современные тенденции развития структурообразующих институтов банковского права: сравнительно-правовое исследование: Дис. ... д-ра юрид. наук. М., 2014:

<sup>7</sup> Տե՛ս **Cristiana Cicoria.** The Protection of the Weak Contractual Party in Italy vs. United States Doctrine of Unconscionability. A Comparative Analysis // Global Jurist Advances. Germany. 2003, էջ 6:

<sup>8</sup> Տե՛ս **Вавилин Е.В., Волос А.А., Суровов С.Б.** Принцип защиты слабой стороны в правоотношении в гражданском праве и гражданском процессе // Вестник гражданского процесса. 2016, № 6, էջ 170–186:

<sup>9</sup> **Hakan Acar, Ahmet Cemil Yildirim.** The new draft for the Turkish Code of obligation: the comparative study with the UNIDROIT principles of international commercial contracts // Journal of Qafqaz University Turkey. Istanbul. 2008. № 24, p. 22:

Թեև քաղաքացիական հարաբերության թույլ կողմի ինստիտուտը բավականին ակտիվորեն շրջանառվում է արտասահմանյան երկրների օրենսդրությամբ, ակնհայտ է, որ «թույլ կողմ» հասկացության շրջանակները հստակ չեն. այդ շրջանակները հնարավոր է որոշել կա՛մ առանձին երկրների օրենքների ընդհանուր ոգուց բխեցնելով, կա՛մ հենվելով տեսաբանների և իրավաբան գիտնականների տեսակետների, գաղափարների և առաջ քաշած տեսությունների վրա<sup>10</sup>:

1. Քաղաքացիական հարաբերություններում պայմանագրի թույլ կողմի ինստիտուտի ներդրման համար իրավունքի գիտությունը տեսական-հայեցակարգային երկար ճանապարհ է անցել, որի ընթացքում առաջ են քաշվել տարբեր գաղափարներ ու տեսակետներ, ձևավորվել են ամբողջական տեսություններ, որոնց շնորհիվ դրվել են նաև այս ինստիտուտի տեսական-իրավական հիմքերը: Այդ ճանապարհը ձգվում է ընդհուպ 16-17 դարեր, երբ աշխարհն աստիճանաբար թևակոխում էր լուսավորչական ժամանակաշրջան, երբ հավասարության և արդարության գաղափարները դառնում էին նոր ժամանակների մարդու կողմնորոշիչներ, երբ հանրությունը փորձում էր գնալ բնականոն և հավասարակշիռ զարգացման ճանապարհով:

Թոմաս Հոբսն իրավունքի վերաբերյալ իր տեսությունը կառուցում էր մարդու բնույթի և ձգտումների հետազոտության արդյունքներով: Նա համարում էր, որ մարդկանց բնորոշ են մրցակցությունը, անվստահությունը, իշխանության հանդեպ սերը, և այդ ձգտումները մարդկանց տանում են թշնամության՝ «մարդը մարդու համար գայլ է (*homo homini lupus est*)» նկարագրով<sup>11</sup>: Մա մարդկանց բնական վիճակն է և համապատասխանում է բնական իրավունքին, սակայն որպեսզի մարդիկ կարողանան հաղթահարել միմյանց հանդեպ գայլային կամ թշնամական վիճակը, հրաժարվում են ինքնապահպանման իրենց բնական իրավունքից և այն զիջում են պետությանը: Պետությունը ստանձնում է ուժեղներից թույլերին պաշտպանելու և նրանց միջև հարաբերությունները կարգավորելու առաքելությունը: Պետությունը սահմանում և գործադրում է օրենքներ, որոնք ոչ թե մարդկանց ազատությունը սահմանափակելու կամ այն վերացնելու, այլ նրանց ազատությունն ու վարքագիծն ուղղորդելու համար են, երբ մարդիկ կարող էին անել այն ամենը, ինչն արգելված չէր օրենքով:

Բենեդիկտ Սպինոզան, ելնելով բնական իրավունքի դիրքերից, նշում էր, որ մարդու իրավունքը հասնում է մինչև այն սահմանը, որտեղ նրա ուժի սահմանն է: Նա համարում էր, որ մարդը եսասեր և շահամոլ էակ է, ով ամեն կերպ

<sup>10</sup> См. у **Ряузова Е.П.** Слабая сторона в гражданском правоотношении по праву некоторых зарубежных государств. // Вестник Саратовской государственной юридической академии. № 4 (111). 2016, էջ 184:

<sup>11</sup> См. у История политических и правовых учений. Учебник для вузов /Под редакцией докт. юрид. наук, профессора О. Э. Лейста. М. Изд. "Зерцало". 2006, էջ 192:

փորձում է բարելավել իր կենսավիճակը: Դա հանգեցնում է այն բանին, որ սկսվում է պատերազմ՝ բոլորը բոլորի դեմ սկզբունքով: Հետևելով Թ. Հոբսի տեսությանը՝ Բ. Սպինոզան եզրակացնում է, որ մարդիկ գոյասպառ պատերազմին վերջ տալու համար պետք է ապավինեն պետությանը և իրավունքին: Եթե մարդիկ ծնված լինեին այնպես, որ ոչինչ չցանկանային՝ բացի այն ամենից, ինչը նրանց կթելադրեր ճշմարիտ բանականությունը, ապա մարդիկ և հանրությունը պետության ու օրենքների կարիք չէին ունենա: Բայց քանի որ մարդիկ այդպես չեն ծնվել, ուրեմն նրանք չեն կարող գոյություն ունենալ առանց իշխանության և օրենքների: Օրենքները պետք է զսպեն ամբոխին ու մարդուն և ստիպեն ենթարկվել բանականության պահանջներին<sup>12</sup>: Բ. Սպինոզան նշում էր, որ մարդկանց ձգտումներն անհատական են, ուստի և օրենքները պետք է ընդունվեն ընդհանուրի կողմից, որպեսզի հենվեն բոլորի համար գիտակցական ընդհանուրի վրա և կարողանան զսպել անհատական ձգտումներն ու ցանկությունները և այդպիսիք տանեն բոլորի համար ընդունելի ճանապարհով: Բ. Սպինոզան համարում էր, որ պետության և իրավունքի խնդիրը հանգում է այն բանին, որ հանրության մեջ բոլորը՝ թե՛ կառավարողները և թե՛ ենթակաները, պետք է գործեն՝ ելնելով ընդհանուր շահից կամ բարիքից՝ ողջամիտ բանականությամբ համապատասխան, անկախ այն բանից՝ ցանկանում են, թե՞ ոչ<sup>13</sup>:

Ջոն Լոքը համարում էր, որ մարդկանց բնական վիճակն է, երբ նրանք հավասար են, ազատ են և ունեն սեփականություն, դա նաև մարդկանց խաղաղության և բարիկամեցողության վիճակն է: Եվ որպեսզի մարդիկ կարողանան պահպանել այդ վիճակը, նրանց անհրաժեշտ են պետություն և օրենքներ. երբ մարդիկ հրաժարվում են իրենց իրավունքներն ինքնուրույն պաշտպանելու իրավունքից և դա պատվիրակում են պետությանը: Պետությունը պարտավոր է պաշտպանել մարդկանց իրավունքները բոլորի համար հավասար պայմաններով, երբ յուրաքանչյուր ոք կիրականացնի իր իրավունքներն այնքանով, որքանով չի խախտի մյուսների իրավունքը<sup>14</sup>:

Վերոնշյալ տեսությունները որոշակի շեղում ունեցան 16-17 դարերի գերմանական լուսավորչականության շրջանակներում: Այսպես, գերմանացի մտածող Սամուիլ Պուֆենդորֆը, հակառակ Հոբսի, չէր համարում, որ մարդկանց բնական վիճակը պատերազմն է ընդդեմ բոլորի, սակայն միննույն ժամանակ կարծում էր, որ մարդուն բնորոշ են ծայրահեղ էգոիզմը և շահամոլությունը, որոնք պետք է զսպվեն պետության և օրենքների միջոցով՝ հանուն մարդու անվտանգության և բարօրության, այսինքն՝ նաև հանուն ընդհանուր բարօրության<sup>15</sup>:

<sup>12</sup> St' u История политических и правовых учений. Учебник для вузов, նույն տեղում, էջ 199-200:

<sup>13</sup> St' u նույն տեղը, էջ 201:

<sup>14</sup> St' u **Нерсисянц В.С.** Философия права. Учебник для вузов. М. НОРМА. 2001, էջ 466-472:

<sup>15</sup> St' u История политических и правовых учений. Учебник для вузов, նույն տեղում, էջ 229:

Գերմանական լուսավորչականության մյուս ներկայացուցիչը՝ Քրիստիան Թոմազին, հետևելով Ս. Պուֆենդորֆին, նշում էր, որ մարդու բնույթն այնպիսին է, որ հանուն իր անձնական շահի և բարօրության՝ նա ձգտում է ապրել ընդհանուրի հետ համատեղ կյանքով: Սակայն քանի որ մարդը ծայրահեղ անձնական ձգտումներ ունի, նրան դժվար է զսպել միայն բարոյականությամբ, անհրաժեշտ են պետություն և օրենքներ: Մարդիկ բաժանվում են երկու տեսակի՝ հիմարներ և խելոքներ, հիմարներին անհրաժեշտ են ճիշտ խորհուրդներ, իսկ խելոքներին՝ հարկադրանք: Դա կարող է և պետք է արվի պետության կողմից՝ օրենքների գործադրմամբ<sup>16</sup>: Ինչպես նկատում ենք, ըստ Ք. Թոմազիի՝ մարդկանց երկու տեսակներից հիմարները, որոնք կարիք ունենին խորհուրդների, թույլ կոդմն էին, իսկ խելոքները, որոնց նկատմամբ հարկադրանք կիրառելու անհրաժեշտություն է զգացվում, ուժեղ կոդմն են ենթադրում, իսկ թույլերի և ուժեղների միջև պայքարում պետությունը պարտավոր է հանդես գալ իր խորհուրդների և հարկադրանքի գործիքներով:

Առավել ուշագրավ էր ֆրանսիական լուսավորչականության վառ ներկայացուցիչ Վոլտերի (իրական անունն է՝ Ֆրանսուա Մարի Արուե) մոտեցումը: Նա համարում էր, որ մարդը կրոնին պետք է վերաբերվի ոչ թե հավատով, այլ բանականությամբ, քանի որ Աստծո գաղափարը ստիպում է մարդու բանականությանը հաշվի նստել ընդհանուր բարօրության հետ՝ զսպելով անհատական ձգտումներն ու ցանկությունները: Վոլտերը նշում էր. «Եթե նույնիսկ Աստված չկա իրականում, մարդիկ պետք է ստեղծեն Աստծուն»<sup>17</sup>: Նա քննադատում էր աթեիզմը, քանի որ Աստծո ժխտումը ճանապարհ է հարթում անհատական-անձնական ձգտումների և ցանկությունների համար, ինչը մարդուն հեռացնում է ընդհանուր բարօրության համար պատասխանատվությունից: Վոլտերի կարծիքով՝ մարդուն են պատկանում անքակտելի բնական իրավունքներ, ինչպիսիք են՝ ազատությունը, սեփականությունը, անվտանգությունը, հավասարությունը, և այդ իրավունքներից մարդը կարող է օգտվել միայն օրենքներին հետևելով, որոնք սահմանում են ընդհանուր բարօրության և խաղաղության պահանջներ<sup>18</sup>: Այսինքն, ըստ Վոլտերի՝ մարդու կողմից իր իրավունքների իրականացումը թույլատրելի է այնքանով, որքանով անցնում է մյուս բոլոր մարդկանց, ողջ հանրության համար ընդունելի պահանջների, սահմանների և սահմանափակումների պրիզմայով: Վոլտերը նշում էր, որ մարդիկ ծնվում են հավասար և պետք է ապրեն հավասար, որ յուրաքանչյուր մարդ հոգու խորքում իրավունք ունի հավատալու, որ նա հավասար է նույնքան, որքան հավասար են մյուսները<sup>19</sup>: Դա նշանակում է, որ պետության օրենքներն իրենց կարգավորումներով պետք է բավարարեն մարդու սպասումները հավասարության ապահովման ուղղությամբ:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 231:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 271:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 272:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 272:

Նախորդ ժամանակների իրավական հայացքները նոր ամբողջացում ստացան 18-րդ դարում գերմանական փիլիսոփայության մեջ: Գերմանացի ակադեմիկոս փիլիսոփա Իմանուիլ Կանտը համարում էր, որ եթե բնության ճանաչողության հիմքում ընկած է փորձը, ապա բարոյականության օրենքները չեն կարող բխեցվել մարդկանց փոխհարաբերությունների փորձից: Բարոյականության օրենքների հիմում ընկած է բանականությունը, որն էլ պետք է սահմանի այն ընդհանուր կանոնները, որոնցով պետք է առաջնորդվեն մարդիկ: Կանտը նշում էր, որ ոչ մի իրավաբան չի կարող ասել, թե ինչ է արդարությունը՝ ելնելով իր պրակտիկ փորձից, արդարության հիմքերը կարող են գտնվել միայն և բացառապես բանականության ծալքերում<sup>20</sup>: Փիլիսոփայական այս մոտեցումները խոշոր ներդրում էին հասարակության սոցիալական օրենքների ընկալման և նորովի կառուցման ուղղությամբ, որոնք պետք է զսպեին մարդկանց անհատական բոլոր այն ձգտումները, որոնք հեռանում են օբյեկտիվ իրականության ծիրից:

Կանտյան փիլիսոփայության առանցքն էին կազմում նաև պնդումներն այն մասին, որ մարդը բարոյական (հետևաբար՝ նաև՝ սոցիալական) կերպար է դառնում միայն այն ժամանակ, երբ բարձրանում է նրա գիտակցության մակարդակը մինչև հանրության առջև պատասխանատվության աստիճան, երբ մարդու եսասիրական ձգտումներն իրենց տեղը զիջում են հանրօգուտ ձգտումներին: Եվ այստեղ Կանտն առաջ էր քաշում **կատեգորիկ իմպերատիվի պահանջը**, որին այլ կերպ կարելի էր անվանել **պարտք մարդկության հանդեպ**: Ականավոր փիլիսոփան նշում էր կատեգորիկ իմպերատիվի երկու բանաձևեր.

- *Վարվիր այնպես, որ քո վարքագիծը կարողանա վերածվել համընդհանուր կանոնի կամ օրենքի,*

- *Վարվիր այնպես, որ հանրությանը կարողանաս առնչվել ինչպես քո դեմքով, այնպես էլ ցանկացած այլ անձի դեմքով, որ մարդկանց վերաբերվես որպես նպատակի, այլ ոչ թե որպես միջոցի:*

Կանտի իրավափիլիսոփայական հայացքներն ամբողջացրին օբյեկտիվ իմաստով՝ իրավունքի առաքելությունը համադրելու և ներդաշնակեցնելու անձի անհատական կամ եսասիրական ձգտումներն այլ անձանց համարժեք ձգտումների հետ՝ ընդհանուրի հանդեպ պատասխանատվության և բարոյականության համատեքստում:

Գերմանական դասական փիլիսոփայության մյուս ականավոր ներկայացուցիչը՝ Գեորգ Հեգելը, նույնպես նշում էր, որ համընդհանուր ազատությունը պահանջում է, որ անհատի սուբյեկտիվ ձգտումները ենթարկվեն բարոյական պարտքին, քաղաքացու իրավունքները համադրվեն պետության հանդեպ նրա

<sup>20</sup> См. у Нерсисянц В.С. նշվ. աշխ. էջ 487-492:

պարտականությունների հետ, անձի ազատությունը հաշվի նստի անհրաժեշտության հետ<sup>21</sup>: Գ. Հեգելը նաև նշում էր իրավունքի զարգացման երեք աստիճաններ՝ **աբստրակտ իրավունք, բարոյականություն և բարեվարքություն**<sup>22</sup>: Առաջին աստիճանն աբստրակտ իրավունքն է, որը ենթադրում է մարդու ազատ կամքը, որը դրսևորվում է սեփականություն ունենալու անհատի ազատ հնարավորության մեջ: Առաջին այս աստիճանում մարդն իրավունք ունի տիրապետելու գույք, մտնելու այլ անձանց հետ պայմանագրային հարաբերությունների մեջ, պահանջելու իր խախտված իրավունքների վերականգնում, այսինքն՝ առաջնորդվելու իր անհատական-անձնական շահերով:

Երկրորդ աստիճանը բարոյականությունն է, որն ավելի բարձր աստիճան է համարվում և ենթադրում է մարդու գիտակցության բարձրացում սեփական արարքների բնույթի և դրանց հնարավոր հետևանքների նկատմամբ: Մարդն իր բարոյականության շրջանակներում միշտ կարող է գտնվել աբստրակտ իրավունքի հետ բախումնային (կոլիզիոն) վիճակում:

Երրորդ և ամենաբարձր աստիճանը բարեվարքությունն է, որի շրջանակներում հաղթահարվում են մարդու աբստրակտ իրավունքի և սուբյեկտիվ բարոյականության միակողմանիությունը, լուծվում են նախորդ երկու աստիճանների միջև ծագող հակասությունները: Ըստ Հեգելի՝ բարեվարքության շրջանակներում անհատը ձեռք է բերում այլ անձանց հետ շփման բարոյական ազատություն. մտնելով այլ անձանց հետ հարաբերությունների մեջ՝ անհատն իր արարքները գիտակցաբար բխեցնում կամ ծառայեցնում է ընդհանուր նպատակներին:

Է. Կանտի և Գ. Հեգելի իրավափիլիսոփայական դոկտրիններն ամփոփումն էին նախորդ իրավափիլիսոփայական միտքը, թե որքանով կարող են մարդկանց անհատական շահերով պայմանավորված և թելադրված նկրտումներն ընդունելի և համադրելի լինել՝ հանրային կեցության, այլ անձանց համանման անհատական շահերի առկայության պայմաններում: Նրանց իրավափիլիսոփայության առանցքը համընդհանուր օրենքների, կանոնների, բարեվարքության նախապատվությունն է անհատական կամ եսասիրական ձգտումների նկատմամբ, հանրային շահի գերակայությունն է մասնավոր շահի նկատմամբ:

Ներկայացված տեսակետները, տեսություններն ու դոկտրինները ձևավորվել են հասարակության զարգացման այնպիսի ժամանակաշրջանների հաջորդականության շղթայում, երբ հանրությունների առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումն ու մարտահրավերների շրջանցումը հնարավոր էր միայն ընդհանուր ջանքերով՝ անհատականը կոլեկտիվիզմին, մասնավորը՝ հանրայինին ծառայեցնելով<sup>23</sup>: Հանրային այս պահանջմունքը, որը

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 501-502:

<sup>22</sup> Տե՛ս История политических и правовых учений. Учебник для вузов, էջ 343-344:

<sup>23</sup> Տե՛ս Деннис Л. նշվ. աշխ., էջ 229-232:

բազիսային երևույթ է, իր պահանջներն է առաջադրում իրավունքին, որը վերնաշենքային երևույթ է, և միայն բազիսին վերնաշենքի համապատասխանության պայմաններում է հնարավոր ակնկալել հասարակական-պետական բնականոն ընթացք և զարգացում:

Բոլոր այն ժամանակներում և բոլոր այն հասարակություններում, երբ ծառացած կլինեն արմատական խնդիրներ, ինդիվիդուալիզմի բացարձակացումն այդ խնդիրների լավագույն լուծման տարբերակ չի համարվի, լավագույնը կոլեկտիվիստական ձգտումներն են, հանրային կենտրոնացումն է (ինդիվիդուալիզմը հնարավորինս չոչնչացնելու պայմանով), որի համար անհրաժեշտ են նախևառաջ փիլիսոփայական, գաղափարական հիմնավորումներ ու տեսություններ, որոնց շարքում էին վերևում ներկայացվածները:

Խորհրդային ամբողջատիրական համակարգի փլուզումից հետո հետխորհրդային հանրապետությունները, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, նախապատվությունը տվեցին և գրեթե բացարձակացրին ինդիվիդուալիզմը, ինչի մասին են վկայում ՀՀ քաղ.օր. 3-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքները: Օայրահեղ ինդիվիդուալիզմի վնասակար հետևանքներն արդեն զգացնել են տալիս, մասնավորապես՝ քաղաքացիական բնական շրջանառության խաթարման, անհատական շահերին հանրային շահերի ստորադասման, բարեխղճության, արդարացիության և հավասարության սկզբունքների անտեսման տեսքով: Օբյեկտիվ անհրաժեշտություն են քաղաքացիական շրջանառության բնականության ապահովումը, բարեվարքության, արդարացիության և հավասարության սկզբունքների դիրքերի վերականգնումը, ինչը ենթադրում է մի ամբողջ խումբ համալիր միջոցառումների իրականացում: Այդ շարքից է քաղաքացիական հարաբերություններում թույլ կողմի ինստիտուտի զարգացումը: Քաղաքացիական հարաբերություններում թույլ կողմի պաշտպանությունը շեշտակիորեն կբարձրացնի օրենքների իրավականությունը և սոցիալականությունը, հանրության անդամներին կդաստիարակի **«իր մեջ յուրաքանչյուրին տեսնելու և յուրաքանչյուրի մեջ իրեն տեսնելու»** ոգով ու սկզբունքով<sup>24</sup>:

2. Քաղաքացիական հարաբերություններում թույլ կողմի ինստիտուտը զարգացնելու համար նախևառաջ անհրաժեշտ է հասկանալ թույլ կողմի բնութագրական հատկանիշները, որոնք այս հասկացությունը կտարբերեն հարակից ինստիտուտներից և հնարավորություն կտան արդյունավետ մեխանիզմներ առաջարկելու քաղաքացիական հարաբերությունների տարբեր ոլորտներում թույլ կողմի պաշտպանության ուղղությամբ:

Ֆիզիկական անձը քաղաքացիական հարաբերության սուբյեկտ է դառնում իրավունակություն ձեռք բերելու պահից, և ֆիզիկական անձի իրավասուբյեկտությունն ամբողջանում է գործունակության տարիքից: Գործունակության

<sup>24</sup> См. у Нерсисянц В.С. նշվ. աշխ., էջ 72:

տարիքի կամ որ նույնն է՝ չափահասության հասնելով, համարվում է, որ ֆիզիկական անձն ունի ֆիզիկական և մտավոր հատկանիշների ամբողջություն, որը նրան հնարավորություն է տալիս լիովին հասկանալու իր իրավունքները և պարտականությունները, օգտվելու դրանցից և կրելու պատասխանատվություն իր արարքների հետևանքների համար: Մինչև չափահաս տարիքի հասնելը ֆիզիկական անձը ևս ուներ իրավասություններ, որից լիարժեք չէր կարող օգտվել ֆիզիկական և մտավոր թույլ զարգացման հետևանքով: Այսինքն՝ մինչև չափահաս դառնալը ֆիզիկական անձը, մասնակցելով քաղաքացիական հարաբերություններին, տարիքով պայմանավորված, ինքնին թույլ կողմ է, և օրենսդրությունը նախատեսում է մեխանիզմներ՝ խնամակալություն և հոգաբարձություն, որոնց գործադրմամբ քաղաքացիական հարաբերության թույլ կողմը՝ երեխան, կարողանում է օգտվել իր իրավունքներից և պարտականություններից: Չափահաս տարիքի հասնելուց հետո էլ ֆիզիկական անձը կարող է ունենալ ֆիզիկական և մտավոր խնդիրներ, որոնց հետևանքով նա բնականորեն վերածվում է քաղաքացիական հարաբերության թույլ կողմի, և այստեղ էլ քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է «ձգնաժամային» այդ վիճակը հաղթահարելու մեխանիզմներ՝ խնամակալություն, հոգաբարձություն, պատրոնած: Ժամանակին Յու. Ս. Լամբարտվը նշում էր, որ «կան ընդհանուր օրենքներ, որոնք պարտադիր են ողջ հանրության համար, և կան հատուկ օրենքներ, որոնք կիրառվում են այն անձանց նկատմամբ, որոնք ունեն ֆիզիկական և հոգեկան ոչլիարժեքություն և այդքանով չեն կարող ինքնուրույն պաշտպանել իրենց»<sup>25</sup>: Ներկայացված դեպքերը ձևավորում են քաղաքացիական հարաբերության թույլ կողմի **բնական-կենսաբանական հիմքերը**: Սակայն ֆիզիկական անձը կարող է թույլ կողմ լինել նաև շնորհիվ սոցիալական գործոնի, որը կարող է ունենալ տնտեսական, մշակութային, կրթական, հոգեբանական և նմանատիպ այլ դրսևորումներ: Ստացվում է, որ ֆիզիկական անձը լիարժեք է թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես (մտապես), սակայն կարող է հայտնվել սոցիալական այնպիսի բարդ հանգամանքներում, որոնց պարագայում օբյեկտիվորեն չի կարողանա իրացնել իր իրավունքներն ու պարտականությունները, որոնք կիրականացնելու բոլորովին այլ կերպ, եթե չլինեին այդ բարդ հանգամանքները: Նշված հանգամանքները քաղաքացիական հարաբերության կողմերից մեկին դարձնում են «ուժեղ», մյուսին՝ «թույլ», բնականաբար, ուժեղի և թույլի հարաբերման պայմաններում, միշտ շահելու է ուժեղը, և միշտ տուժելու է թույլը: Նման իրավիճակների խրախուսումը հակասում է բարեխղճության, արդարության, հավասարության սոցիալական իդեալին, ուստի պետությունն օրենսդրությամբ պետք է նախատեսի մեխանիզմներ և առաջին հերթին քաղաքացիական օրենսդրության սկզբունքների տեսքով, որոնք կմեղմեն այդ բնական անհավասարակշիռ վիճակը, որից է

<sup>25</sup> Гамбаров Ю.С. Курс гражданского права. Т.1. Часть общая. СПб., 1911, с. 266.

կախված քաղաքացիական շրջանառության բնականոն զարգացման հեռանկարը: Քաղաքացիական հարաբերության թույլ կողմի ինստիտուտը և դրա պաշտպանությունը հենց այն կատեգորիաներն են, որոնց միջոցով զարգացած և կիրթ հասարակությունը փորձում է արձագանքել սոցիալական իդեալից շեղվող դրսևորումներին<sup>26</sup>:

Երբ խոսում ենք քաղաքացիական հարաբերության թույլ կողմի մասին, ինքնաբերաբար նշանակում է, որ նույն հարաբերության մյուս կողմն ուժեղն է, որը կարող է իր կամքը թելադրել, հարկադրել, ստիպել թույլ կողմին, ինչը նշանակում է, որ կողմերի միջև շրջանառությունն ընթանում է ոչ թե կողմերի ազատ կամահայտնության, այլ թելադրանքի միջոցով: Նման վիճակներն ուղղակիորեն հարվածում են քաղաքացիական հարաբերությունների կոորդինացիոն (դիսպոզիտիվ, ոչէնթակայական, հավասարության վրա հիմնված) բնույթին, և դա նշանակում է, որ այստեղ **«քաղաքացիական իրավունքը դադարում է կամ ոչնչանում է»**: Քաղաքացիական հարաբերության թույլ կողմի պաշտպանությունը ընդամենը իրավական ֆորմալիզմի հարց չէ միայն, դա քաղաքացիաիրավական մշակույթի գոյապահպանման հարց է:

Քաղաքացիական հարաբերության թույլ կողմի հատկանիշները հասկանալու պարզ ընկալում կա, համաձայն որի՝ բոլոր այն հատկանիշները, որոնց առկայության պայմաններում հարաբերության մի կողմը կարող է հայտնվել մյուս կողմից կախվածության և նրա ենթակայության ներքո, հենց թույլ կողմի հատկանիշներն են: Դրանք կարող են դրսևորվել ինչպես սուբյեկտիվ՝ անձնական-անհատական բնութագրերի, այնպես էլ օբյեկտիվ հանգամանքների տեսքով: Ռուս հայտնի իրավագետ Ի. Ա. Պոկրովսկին դեռևս 19-րդ դարի վերջին գրում էր, որ *«տնտեսապես թույլ կողմի իրավական պաշտպանությունն անհրաժեշտություն է՝ ելնելով նրա անփորձությունից, կարիքներից, թեթևատուությունից, անհիմն բարձր վստահությունից, կյանքի խիստ անբարենպաստ հանգամանքներում գտնվելուց, գույքային վատ վիճակում գտնվելուց»*<sup>27</sup>: Ի. Ա. Պոկրովսկու նշած հանգամանքները վկայում էին թույլ կողմի ամենադրսևորվող հատկանիշի՝ տնտեսական հատկանիշի մասին, որն իրեն զգացնել է տալիս քաղաքացիական բազում հարաբերություններում:

Խորհրդային իրավագիտության մեջ քաղաքացիական հարաբերության թույլ կողմի ինստիտուտը չի քննարկվել, և դա պայմանավորված է եղել խորհրդային գաղափարախոսությամբ, և համարվել է, որ թույլ կողմի ինստիտուտը բնութագրական կարող է լինել միայն բուրժուական հասարակություն-

<sup>26</sup> См. у Шиктыбаев Т. Т. Мировоззренческая социологическая сущность защиты слабой стороны в деликтных правоотношениях // Вестник института законодательства и правовой информации РК № 2(65), 2021, էջ 53-60:

<sup>27</sup> Покровский И.А. Справедливость, усмотрение суда и судебная опека // Вестник права. № 10. 1899, էջ 59-65:

ներին, որտեղ առկա է մարդու կողմից մարդու շահագործում, իսկ խորհրդային հասարակարգում նման շահագործումը բացակայում է: Խորհրդային հայտնի ցիվիլիստ Մ. Մ. Ագարկովը նշում էր, որ «մանրբուրժուական ակնկալիքների և մոլորությունների դրսևորում է համարվում, երբ բուրժուական պետությունը միջամտում է մասնավոր հարաբերություններին թույլ կողմին պաշտպանելու հույսով ու նպատակով»<sup>28</sup>:

Հետխորհրդային շրջանում քաղաքացիական հարաբերության թույլ կողմի իրավական պաշտպանության հարցն առաջիններից մեկը բարձրացրեց Վ. Վ. Բրագինսկին, ով այս հարցը քննարկում էր պարտատերերի և պարտապանների համատեքստում՝ նշելով, որ «*արհեստավարժ կարգավիճակի և նյութական դրության բերումով, ինչպես նաև հարակից այլ հանգամանքների բերումով պայմանագրային հարաբերության մի կողմը կարող է չունենալ բավարար հնարավորություններ ազդելու մյուս կողմի վրա պայմանագրի նպատակներից բխող պարտավորությունների կատարմանը հասնելու համար: Մինչդեռ պայմանագրային հարաբերության մյուս կողմը կարող է ռեալ հնարավորություններ ունենալ պայմանադիր կողմին թելադրելու իր կամքը: Նման դեպքերում պայմանագրային հարաբերության թույլ կողմի սահմանումն ունի ռեալ իրավակիրառական արժեք, քանի որ իրապես կարող է ազդել դատական պրակտիկայի ձևավորման վրա*»<sup>29</sup>:

Քաղաքացիական հարաբերության թույլ կողմի հատկանիշների վերաբերյալ առավել ամբողջական մոտեցում է ցուցաբերում Ե. Վ. Վավիլինը, ով նշում է չորս հանգամանքներ, որոնցով կարելի է գնահատել քաղաքացիական հարաբերության կողմին՝ որպես թույլ կողմ լինելու հարցում.

**Առաջին՝** քաղաքացիական հարաբերության թույլ կողմ է հանդես գալիս պարտապանը, ով կրում է երրորդ անձանց օգտին գործողություններ կատարելու բեռ (նման մոտեցումն անվանվում է **անվանական՝ նոմինատիվ**),

**Երկրորդ՝** քաղաքացիական հարաբերության թույլ կողմ է հանդես գալիս պարտատերը, ով օժտված է սեփական իրավունքները պաշտպանելու իրավագործությամբ (նման մոտեցումն անվանվում է **ձևական կամ նորմատիվ**),

**Երրորդ՝** քաղաքացիական հարաբերության թույլ կողմ, ով այդպիսին է դառնում կողմերի պայմանագրային պայմանավորվածությունների արդյունքում և չունի կարգավիճակային և տնտեսական հնարավորություններ մյուս կողմի համեմատությամբ (նման մոտեցումն անվանվում է **պայմանագրային**),

**Չորրորդ՝** քաղաքացիական հարաբերության թույլ կողմ է հանդես գալիս նա, ով ունի սուբյեկտիվ իրավունքներ, որոնց ձևը, իրացման մեխանիզմները, ներառյալ դրանց նորմատիվ-իրավական իրականացման գործիքները դեռևս

<sup>28</sup> См. у Агарков М.М. Обязательство по советскому гражданскому праву. М., 1940, էջ 107:

<sup>29</sup> Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга первая: Общие положения. 3-е изд., М., 2011, с. 798.

անկատար են և կարիք ունեն կատարելագործման (նման մոտեցումն անվանվում է **կազմակերպական**)<sup>30</sup>:

Դ. Վ. Սլավեցկին նույնպես առաջարկում է քաղաքացիական հարաբերության թույլ կողմին որոշելու չորս հատկանիշներ, ընդ որում՝ դրանք համարելով փակ շրջանակի հանգամանքներ.

- պայմանագրի կողմերից մեկի խիստ բարձր շահագրգռվածությունը պայմանագիրը կնքելու հարցում,

- հարաբերության մյուս մասնակցի վերաբերյալ տեղեկացվածության իսպառ բացակայությունը,

- հարաբերության մասնակցի՝ սեփական իրավունքների և պարտականությունների մասին իմացության բացակայություն,

- որոշումների կշռադատվածության բացակայություն:

Զերազնահատելով Դ. Վ. Սլավեցկու դատողությունների տրամաբանությունը և արդյունավետությունը՝ այնուամենայնիվ համարում ենք, որ նշված հատկանիշները միանշանակ չեն, մասնավոր դեպքերի առնչությամբ կարող են որոշակի դեր խաղալ, սակայն համընդհանրության հավակնել չեն կարող:

Ավելի կողմնակից ենք Ա. Ա. Վոլոսի այն դիրքորոշմանը, որ քաղաքացիական հարաբերության թույլ կողմի հատկանիշների շրջանակը չի կարելի փակ համարել, ընդ որում՝ այդ հատկանիշները պետք է կրեն օբյեկտիվ, այլ ոչ թե սուբյեկտիվ բնույթ<sup>31</sup>:

Քաղաքացիական հարաբերության, իսկ ավելի շուտ՝ պայմանագրային հարաբերության թույլ կողմի մասին վկայող հանգամանքներ են նշում գերմանացի հայտնի իրավագետներ Կ. Վ. Ցվայգերտը և Խ. Կյոտցը: Ըստ նրանց՝ բանակցային հնարավորությունների անհավասարությունը (inequality of bargaining power) խախտում է «պայմանագրային պարիտետը» և առաջ է բերում թույլ կողմի պաշտպանության անհրաժեշտություն, որի լուծման մեխանիզմներից մեկն էլ նման դեպքերի առնչությամբ իմպերատիվ նորմերի սահմանումն է<sup>32</sup>: Ըստ Կ. Վ. Ցվայգերտի և Խ. Կյոտցի՝ բոլոր այն դեպքերում, երբ պայմանագիրը չի ապահովում կողմերի փոխադարձ պարտավորությունների հավասարություն՝ էկվիվալենտություն, առկա են պայմանագրի անարդար պայմաններ՝ ի վնաս պայմանագրի թույլ կողմի, այստեղ կրկին լուծման բանալին իմպերատիվ նորմերի ձեռքում է հայտնվում<sup>33</sup>:

<sup>30</sup> Տե՛ս **Вавилин Е.В.** Механизм осуществления гражданских прав и исполнения обязанностей: автореф. Дисс. ... д-ра юрид.наук. М. 2009. էջ 12 ( file:///C:/Users/Comp/Downloads/autoref-mekhanizm-osushchestvleniya-grazhdanskikh-prav-i-ispolneniya-obyazannostei.pdf: )

<sup>31</sup> Տե՛ս **Волос А.А.** К вопросу о признании субъекта предпринимательской деятельности слабой стороной в договоре // Юрист. 2014, № 13, էջ 16:

<sup>32</sup> Տե՛ս **Цвайгерт К.Ц., Кетц Х.** Введение в сравнительное правоведение в сфере частного права. В 2-х тт. Том 2. Пер. с нем. М. Международные отношения. 2000, էջ 16:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 11-12:

Բավականին ուշագրավ տեսակետ է հայտնում Վ. Ա. Բաբակովը՝ համարելով, որ քաղաքացիական հարաբերության թույլ կողմ պետք է համարել պետությանը, քանի որ քաղաքացիական հարաբերություններում պետության մասնակցության հարցում կա առանձնահատկություն՝ ի վնաս պետության, այն է՝ պետության անունից հանդես են գալիս կոնկրետ ֆիզիկական անձինք, որոնց փաստացի շահերն ու ձգտումները կարող են չհամընկնել այն նպատակների հետ, որոնք հետապնդում է պետությունը<sup>34</sup>:

Իրավաբան գիտնականների մոտեցումները կարելի շարունակել, սակայն դրանց ամբողջական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք հիմնականում նույն հանգամանքներն են վկայակոչում որպես քաղաքացիական հարաբերության թույլ կողմին որոշելու նկարագրիչներ<sup>35</sup>:

Քաղաքացիական հարաբերության թույլ կողմի հատկանիշների վերաբերյալ դիտարկումներ հանդիպում ենք ոչ միայն իրավաբան գիտնականների աշխատանքներում, այլ պաշտոնական փաստաթղթերում: Հայտնի է Ռուսաստանի Դաշնության Բարձրագույն արբիտրաժային դատարանի 2014 թ. պլենումի որոշումը «Պայմանագրի ազատության և դրա սահմանների մասին», որտեղ նշվել են որոշ դեպքեր, երբ պայմանագրային հարաբերության կողմը կարող համարվել թույլ<sup>36</sup>:

*- երբ պայմանագիրը բովանդակում է պայմաններ, որոնք ակնհայտորեն ծանրաբեռնում են պայմանադիր կողմերից մեկին, ապա առկա են պայմանագրի ակնհայտ անարդար պայմաններ, իսկ ծանրաբեռնված կողմն էլ ակնհայտորեն թույլ կողմն է,*

*- երբ պայմանագրի կողմը գտնվում է այնպիսի պայմաններում, որոնք ակնհայտ դժվարացնում են պայմանագրի պայմանների համաձայնեցումը: Երբ պայմանադիր կողմը գտնվում է դժվար կամ անելանելի բանակցային դիրքում, պայմանագրի կնքումը համարվում է կողմերի շահերի հավասարակշռության պահանջի խախտմամբ կնքված՝ այստեղից բխող հետևանքներով:*

## Եզրակացություն

Եթե ամփոփելու լինենք քաղաքացիական հարաբերության թույլ կողմին բնութագրող հատկանիշների շրջանակը՝ ելնելով իրավունքի գիտության մեջ

<sup>34</sup> Տե՛ս **Бабакoв В.А.** Защита государства как слабой стороны в гражданских правоотношениях // Вестник Саратовской государственной юридической академии. 2015, № 2, էջ 150:

<sup>35</sup> Առավել մանրամասն տե՛ս **Рыженков А.Я.** Принцип защиты экономически слабой стороны в предпринимательских правоотношениях // Гражданское право. 2016, № 2; **Zimmermann D.** Privatrechtsvereinheitlichung in Europa: Das Common European Sales Law und seine Textstufen // Bucerius Law Journal. November, 2014; **Schmid W.** Zur sozialen Wirklichkeit des Vertrages / Duncker and Humblot, 1983:

<sup>36</sup> Տե՛ս Постановление Пленума ВАС РФ от 14.03.2014. № 16 <О свободе договора и ее пределах> // Вестник ВАС РФ. 2014. № 5 [https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_161322](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_161322)

և պրակտիկայում տարածված մոտեցումներից, ապա կարելի է թվարկել դրանց մոտավոր շրջանակը.

- տնտեսական, ֆինանսական, կազմակերպական հնարավորությունները,
- թույլ բանակցային դիրքը,
- անփորձությունը, ոչ պրոֆեսիոնալիզմը, գրագիտության ցածր մակարդակը,
- իրավական իրազեկության պակասը կամ բացակայությունը,
- պայմանագիրը կնքելու հարցում բարձր շահագրգռվածությունը և կյանքի ծանր հանգամանքները,
- պայմանագրի կազմման վրա ազդելու հնարավորության բացակայությունը,
- շուկայում գերիշխող դիրք զբաղեցնողի հետ պայմանագիր կնքելը,
- պետության հետ պայմանագիր կնքելը:

Թվարկված շարքը վերջնական համարել չի կարելի, քանզի քաղաքացիական հարաբերություններում կարող են դրսևորվել անբարեխղճության բազում նոր դեպքեր, հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով բարեխղճության, ողջամտության և հավասարության սկզբունքներից, կարելի է առանձնացնել նորանոր հատկանիշներ, որոնց պարագայում կողմը կհամարվի թույլ և կհավակնի իրավական հատուկ պաշտպանության<sup>37</sup>: Իհարկե, թույլ կողմի որոշակիացման բնութագրիչների առանձնացումն իմաստ ունի, դա պետք է արվի շարունակաբար, քանի որ այդ շրջանակը կարող է նպաստել ինչպես օրենսդրական կատարելագործմանը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի զարգացմանը:

**АРМЕН АЙКЯНЦ, ТАРИЕЛ БАРСЕГЯН – Концептуальные основы и характеристика института слабой стороны в гражданских правоотношениях.** – Научная статья посвящена анализу института «слабой стороны» в гражданских правоотношениях. Изучение зарубежного и международного опыта показывает, что во многих правовых системах разработаны различные механизмы, направленные на обеспечение правовой защиты слабой стороны с целью гарантирования социальной справедливости. На теоретико-методологической основе в статье рассматриваются существующие научные подходы к правовой защите слабой стороны, выделяются основные признаки, позволяющие квалифицировать участника в качестве слабой стороны. Одновременно подчеркивается, что перечень данных признаков является открытым и может быть дополнен новыми критериями, вытекающими из принципов добросовестности, равенства и разумности. В рамках статьи формулируются предложения по совершенствованию правового регулирования, направленные на повышение уровня правовой защиты слабой стороны в гражданском праве Республики Армения.

<sup>37</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Вишнева У.И.** Работник как более слабая сторона трудового права / Наука. Образование. Современность. Science. Education. The Present. 2025, № 2 (июнь), էջ 68-72; **Лукьянцев А.А., Пономаренко Л.А.** Баланс интересов сторон в отношениях по предоставлению потребительского кредита (займа) / Северо-кавказский юридический вестник. 2021, № 1, էջ 142-149; **Файрушина А.Ф.** К вопросу о защите слабой стороны в потребительских правоотношениях / Учений XXI века. 2016, № 4 -3 (17), էջ 67-69:

**Ключевые слова:** *слабая сторона, несправедливые условия, добросовестность, равенство, разумность, баланс, признаки, частный, публичный, концепция.*

**ARMEN HAYKYANTS, TARIEL BARSEGHYAN – *Conceptual Foundations and Characteristics of the Institution of the Weaker Party in Civil Relations.***— The scientific article is devoted to the analysis of the institution of the “weaker party” in civil relations. A study of foreign and international experience demonstrates that in many legal systems various mechanisms have been developed to ensure the legal protection of the weaker party, with the aim of safeguarding social justice. On a theoretical and methodological basis, the article examines the existing scholarly approaches to the legal protection of the weaker party and identifies the essential features that allow a participant to be classified as such. At the same time, it is emphasized that the scope of these features remains open and may be supplemented by new criteria derived from the principles of good faith, equality, and reasonableness. The article further formulates proposals for improving legal regulation, with the objective of enhancing the threshold of legal protection for the weaker party within the civil law of the Republic of Armenia.

**Key words:** *weaker party, unfair terms, good faith, equality, reasonableness, balance, characteristics, private, public, concept.*

## References

- Hovhannisyan V., Hakobyan L.S., Hakobyan L.O. Mijazgayin masnavor iravunk': Mijazgayin iravakan pastatgheer zhoghovatsu: Us. dzernark. Er. Tigran Mets. 2005.
- Agarkov M.M. Obyazatel'stvo po sovetскому grazhdanskomu pravu. M. 1940.
- Babakov V.A. Zashchita gosudarstva kak slaboy storony v grazhdanskikh pravootnosheniyakh // Vestnik Saratovskoy gosudarstvennoy yuridicheskoy akademii. 2015. No 2.
- Braginskiy M.I., Vitryanskiy V.V. Dogovornoye pravo. Kniga pervaya: Obshchiye polozheniya. 3-ye izd., M. 2011.
- Vavilin E.V. Mekhanizm osushchestvleniya grazhdanskikh prav i ispolneniya obyazannostey: avtoref. Diss. ... d-ra yurid. nauk. M. 2009, ej 12.
- Vavilin E.V. Osushchestvleniye i zashchita sub'yektivnykh prav slaboy storony v grazhdanskom pravootnoshenii // Ros. pravosudiye. 2007. No 6. ej 31–37.
- Vavilin E.V., Volos A.A., Surov S.B. Printsip zashchity slaboy storony v pravootnoshenii v grazhdanskom prave i grazhdanskom protsesse // Vestnik grazhdanskogo protsesa. 2016. No 6.
- Vishneva U.I. Rabotnik kak boleye slabaya storona trudovogo prava // Nauka. Obrazovaniye. Sovremennost'. Science. Education. The Present. 2025. No 2 (iyun').
- Volos A.A. K voprosu o priznanii subyekta predprinimatel'skoy deyatel'nosti slaboy storony v dogovore // Yurist. 2014. No 13.
- Vishnevskiy A.A. Sovremennyye tendentsii razvitiya strukturoobrazuyushchikh institutov bankovskogo prava: sravnitelno-pravovoye issledovaniye: Dis. ... d-ra yurid. nauk. M. 2014.
- Gambarov Yu.S. Kurs grazhdanskogo prava. T. 1. Chast' obshchaya. SPb. 1911.
- Dennis Lloyd. Ideya prava / perevod s angliyskogo M.A. Yumasheva, Yu.M. Yumashev. M. YUGONA. 2002.
- Istoriya politicheskikh i pravovykh ucheniy. Uchebnik dlya vuzov / Pod red. dokt. yurid. nauk, professora O.E. Leysta. M. “Zertsalo”. 2006.
- Lukyantsev A.A., Ponomarenko L.A. Balans interesov storon v otnosheniyakh po predostavleniyu potrebitel'skogo kredita (zayma) // Severo-kavkazskiy yuridicheskii vestnik. 2021. No 1. ej 142–149.
- Nersesyan V.S. Filosofiya prava. Uchebnik dlya vuzov. M. NORMA. 2001.
- Pokrovskiy I.A. Spravedlivost', usmotreniye suda i sudebnaya opeka // Vestnik prava. No 10. 1899.
- Ryzhenkov A.Ya. Printsip zashchity ekonomicheskoy slaboy storony v predprinimatel'skikh pravootnosheniyakh // Grazhdanskoye pravo. 2016. No 2.

- Ryauzova E.P. Slabaya storona v grazhdanskom pravootnoshenii po pravu nekotorykh zarubezhnykh gosudarstv // Vestnik Saratovskoy gosudarstvennoy yuridicheskoy akademii. No 4 (111). 2016.
- Shiktybayev T.T. Mirovozzrencheskaya sotsiologicheskaya sushchnost' zashchity slaboy storony v deliktnykh pravootnosheniyakh // Vestnik instituta zakonodatel'stva i pravovoy informatsii RK No 2(65)-2021.
- Tsvaygert K.Ts., Ketz Kh. Vvedeniye v sravnitel'noye pravovedeniye v sfere chastnogo prava. V 2-kh tt. Tom 2. Per. s nem. M. Mezhdunarodnyye otnosheniya. 2000.
- Fayrushina A.F. K voprosu o zashchite slaboy storony v potrebitel'skikh pravootnosheniyakh // Ucheniy XXI veka. 2016. No 4-3 (17). ej 67–69.
- Cristiana Cicoria. The Protection of the Weak Contractual Party in Italy vs. United States Doctrine of Unconscionability. A Comparative Analysis // Global Jurist Advances. Germany. 2003.
- Hakan Acar, Ahmet Cemil Yildirim. The new draft for the Turkish Code of obligation: the comparative study with the UNIDROIT principles of international commercial contracts // Journal of Qafqaz University Turkey, Istanbul. 2008. No 24.
- Schmid W. Zur sozialen Wirklichkeit des Vertrages / Duncker and Humblot. 1983.
- Unconscionability. A Comparative Analysis // Global Jurist Advances. Germany. 2003.
- Zimmermann D. Privatrechtsvereinheitlichung in Europa: Das Common European Sales Law und seine Textstufen // Bucerius Law Journal. November 2014.

## ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ՄԵԴԻԱՑԻԱ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՎԱՐԴՈՒՇ ԵՍԱՅԱՆ<sup>10</sup>

*Երևանի պետական համալսարան*

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանման մեխանիզմի արդյունավետության բարձրացումը չի կարող տեղի ունենալ բացառապես իրավական կարգավորման իմպերատիվ մեթոդների կիրառմամբ, այդ իսկ պատճառով ներկայումս զգալիորեն աճում է այսպես կոչված «ինքնակարգավորման» մեխանիզմների նշանակությունը: Ուստի քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ապահովել վեճի կարգավորման ձևի համապատասխանությունն այդ վեճի բնույթին (“Fitting the forum to the fuss”):

Վեճերի այլընտրանքային լուծումը ներառում է այնպիսի գործընթաց, որտեղ չեզոք երրորդ կողմը ներգրավվում է աջակցելու իրավական վեճերի լուծմանը այնպիսի ընթացակարգերի միջոցով, ինչպիսիք են հաշտարարությունը, արբիտրաժը և այլն:

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակներից մեկը հաշտարարությունն է (մեդիացիա), որը ակտիվորեն կիրառվում է զարգացած իրավական համակարգ ունեցող մի շարք երկրներում և կողմերը ազատ են դիմելու հաշտարարության, որտեղ նրանց օգնում է չեզոք կողմ հանդիսացող հաշտարարը:

**Բանալի բառեր** – *վեճերի այլընտրանքային լուծում, իրավունքների պաշտպանություն, վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերը, հաշտարարության գործընթաց (մեդիացիա), հաշտարար, չեզոք և անկողմնակալ, քաղաքացիական վեճեր*

Թեև դատարանները առանձնակի տեղ են զբաղեցնում իրավունքների պաշտպանության ձևերի մեջ, այնուամենայնիվ ամբողջ աշխարհում գնալով առավել ընդունելի է դառնում այն մոտեցումը, որ կան քաղաքացիական վեճերի լուծման այլընտրանքային ձևեր հնարավոր ավելի հարմար մեթոդներով՝

<sup>1</sup> **Վարդուշ Եսայան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ

**Вардуш Есаян** – кандидат юридических наук, доцент кафедры гражданского процесса ЕГУ

**Vardush Yesayan** – Candidate of Legal Sciences, Associate Professor at YSU Chair of Civil Procedure

Էլ. փոստ՝ [vardyesayan@ysu.am](mailto:vardyesayan@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0000-0003-3361-9208>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 04.06.2025

Գրախոսվել է՝ 23.10.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

կողմերի համար ծախսերի և ժամանակի ավելի մեծ խնայողություններով<sup>1</sup>: Այսպես, կողմերի միջև առաջացած վեճերը կարող են լուծվել տարբեր եղանակների կիրառմամբ, որոնցից ամենատարածվածը, իհարկե, մնում է վեճերի լուծումը դատական կարգով:

Հարկ է ընդգծել, որ մարդու իրավունքների և ազատությունների ապահովման մեխանիզմի արդյունավետության բարձրացումը չի կարող տեղի ունենալ բացառապես իրավական կարգավորման իմպերատիվ մեթոդների կիրառմամբ, այդ իսկ պատճառով ներկայումս զգալիորեն աճում է այսպես կոչված «ինքնակարգավորման» մեխանիզմների նշանակությունը: Ուստի քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ապահովել վեճի կարգավորման ձևի համապատասխանությունն այդ վեճի բնույթին (“Fitting the forum to the fuss”):

Վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերը (Alternative Dispute Resolution) ոչ միայն երաշխավորում, այլ նաև վեճերը առավել արագ և անկողմնակալ լուծելու հնարավորություն են տալիս:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վեճերի այլընտրանքային լուծման ակտիվ զարգացումը սկսվել է դեռևս 1970-ական թվականներից: Ֆ. Սանդերը իր «Վեճերի լուծման միջոցների բազմազանություն» վերստառությամբ աշխատանքում, խոսել է հաշտարարության, արբիտրաժի, ինչպես նաև հաշտարարի (օմբուդսմենի) կողմից վեճի լուծման մասին, որպես վեճի դատական կարգով լուծման այլընտրանք<sup>2</sup>:

Հարկ է նկատել, որ վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերը առավել լայն տարածում ունեն անգլո-սաքսոնական իրավական համակարգի երկրներում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում:

Վեճերի այլընտրանքային լուծումը բացի դատական կարգով վեճի լուծումից ներառում է ցանկացած գործընթաց կամ ընթացակարգ, որտեղ չեզոք երրորդ կողմը ներգրավվում է աջակցելու իրավական վեճերի լուծմանը այնպիսի ընթացակարգերի միջոցով, ինչպիսիք են գործի նախնական օբյեկտիվ գնահատումը, հաշտարարությունը, արբիտրաժը և այլն:

Ժամանակակից աշխարհի շատ երկրներում վեճերի լուծման այլընտրանքային եղանակները ճանաչվում են օրենքով: Նման մեթոդների օգտագործումը և ձեռք բերված արդյունքները ճանաչվում են որպես իրավական ընթացակարգեր և պաշտպանվում են պետական հարկադրանքի միջոցներով: Օրինակ՝ ԱՄՆ-ում քաղաքացիական հասարակության ինստիտուտները նախաձեռնել

<sup>1</sup> St’u Report “Alternative dispute resolution. Mediation and conciliation”, Law Reform Commission, Ireland, [https://www.lawreform.ie/\\_fileupload/reports/r98adr.pdf](https://www.lawreform.ie/_fileupload/reports/r98adr.pdf):

<sup>2</sup> St’u **Kirdly A.** The Mediation Privilege's Transition from Theory to Implementation: Designing a Mediation Privilege Standard to Protect Mediation Participants. Process and the Public Interest, Journal of Dispute Resolution, 1995թ. 4-րդ հատոր, էջ 420:

են հաշտարարության ինստիտուտ և միջնորդական ծառայություններ ձևավորելու անհրաժեշտությունը՝ որպես վեճերի բարդ, ծախսատար և ժամանակատար դատական լուծման այլընտրանք: 2001 թվականին ԱՄՆ-ում ընդունվել է դաշնային օրենք, որը կարգավորում է վեճերի լուծման այլընտրանքային եղանակները, որով հաշտարարությունը սահմանվել է որպես գործընթաց, որի ընթացքում հաշտարարը հեշտացնում է կողմերի միջև հաղորդակցությունը՝ կամավոր համաձայնության հիման վրա վեճը լուծելու համար<sup>3</sup>:

Այսպիսով, վեճերի լուծման այլընտրանքային եղանակներից մեկը հաշտարարությունն է (մեդիացիա), որը որպես ինստիտուտը ի հայտ է եկել XX դարի սկզբին ԱՄՆ-ում, այնուհետև կարճ ժամանակում լայն կիրառություն ստացել Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում և զարգացած ու կայուն իրավական համակարգ ունեցող մի շարք երկրներում:

Որպես վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգ՝ հաշտարարությունը ներկայումս էլ ակտիվորեն կիրառվում է զարգացած իրավական համակարգ ունեցող մի շարք երկրներում և կողմերը ազատ են դիմելու հաշտարարության, որտեղ նրանց օգնում է չեզոք կողմ հանդիսացող հաշտարարը:

Հաշտարարության ինստիտուտը սկզբում զուգորդվում, ասոցացվում էր ժողովրդավարական կառավարման հետ. դեռ ավելին՝ շատերը այն դիտարկում էին որպես ժողովրդավարական սկզբունքներ ու արժեքներ ապահովող ինստիտուտ:

Հարկ է նկատել, որ հաշտարարության ինստիտուտի վերաբերյալ դեռևս չկա միջազգայնորեն ընդունված մեկ միասնական բնորոշում: Այսպես՝ ըստ Մ. Դրագոսի հաշտարարությունը բարդ գործընթաց է, որը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ հաշտարարությունը, հաշտարարության մասին համաձայնագիրը, հաշտարարության արդյունքում ընդունված որոշման իրականացումը<sup>4</sup>: Լ. Մուրմանը հաշտարարությունը դիտարկում է կողմերի միջև ծագած վեճի լուծման արտադատական մեթոդ «չեզոք և անկողմնակալ կողմի»՝ հաշտարարի մասնակցությամբ, որը համակարգում է հաշտարարության գործընթացը և խրախուսում կողմերին առավել շահավետ որոշում կայացնել վեճի վերաբերյալ: Ըստ նրա, հաշտարարությունը, որպես վեճերի լուծման այլընտրանքային ձև, վաղուց հանդիսանում է ձեռնարկատերերի և առևտրականների միջև վեճերի լուծման շատ կարևոր գործիք<sup>5</sup>:

<sup>3</sup> Տե՛ս «Mediation as an alternative procedure for resolving commercial disputes in the countries of the modern world», Nikolai Mayurov, Dmitry Makarov, Pavel Mayurov, Yuri Rychkov, 2019 <https://www.abacademies.org/articles/Mediation-as-an-Alternative-procedure-for-resolving-commercial-disputes-in-the-countries-of-the-modern-world-1544-0044-22-SI-2-373.pdf>

<sup>4</sup> Տե՛ս **Dragos, M.R.**, “Mediation: an alternative way to solve conflicts in the international business environment”, *Procedia Social and Behavioral Sciences*, 62(2), 2012, էջեր 290-293:

<sup>5</sup> Տե՛ս **Surma, L.**, “Mediation in business. 18th International Scientific Conference on International Relations - Current Issues of World Economy and Politics” 2017 թ., Makedon, V., Drobyazko, S.,

Միջազգային մասնավոր իրավունքի Հաագայի համաժողովի կողմից տրված բնորոշմամբ հաշտարարությունը կամավոր գործընթաց է, որի ընթացքում «հաշտարարը» հեշտացնում է վիճող կողմերի միջև հաղորդակցությունը՝ պատասխանատվություն ստանձնելով վեճի լուծում գտնելու համար<sup>6</sup>:

Գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ հաշտարարության վերաբերյալ դիտարկումները տարբեր են, սակայն ընդհանուր մոտեցումն այն է, որ հաշտարարությունը վեճերի լուծման ընթացակարգ է, չեզոք կողմի մասնակցությամբ, որն օգնում է վեճի կողմերին հասկանալու իրենց շահերը, գնահատելու ուժեղ և թույլ կողմերը, ակնկալիքները, հնարավոր ռիսկերը և հիմք ընդունելով դա՝ կամավոր և փոխհամաձայնությամբ բավարարելու երկու կողմերի ակնկալիքները՝ իրենց շահերին համապատասխան: Եվ բացի այդ, հաշտարարությունը փաստացի հնարավորություն է ընձեռում հասարակության անդամներին քաղաքակիրթ եղանակով լուծելու վեճերը:

Աշխարհում գործում են հաշտարարության մի շարք մոդելներ: Լայն տարածում գտած մոդելներից են խթանող (facilitative), գնահատող (evaluative), փոխակերպող (transformative) մոդելները, որոնք ելնելով գործի հանգամանքներից կարող են կիրառվել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ բոլորը միասին<sup>7</sup>:

Հաշտարարության այսպես կոչված խթանող («facilitative») մոդելի հիմքում ընկած է այն սկզբունքը, որ չեզոք և միևնույն ժամանակ նաև անկախ երրորդ կողմի աջակցությամբ վեճի կողմերը կարող են ինքնուրույն լուծել իրենց միջև առաջացած վեճը: Այս մոդելի շրջանակներում հաշտարարի հիմնական դերը միայն գործընթացի կառավարումն է: Հաշտարարն օգնում է կողմերին գտնելու լուծումներ, բայց վեճի հստակ լուծում չի առաջարկում: Հաշտարարության այդ մոդելը կիրառվում է ԱՄՆ-ում, Ավստրիայում: Այսպես, օրինակ ԱՄՆ-ում հաշտարարությունը ամրագրված է 2004 թվականի «Հաշտարարության միասնական ակտով», ըստ որի հաշտարարությունը գործընթաց է, որի ընթացքում հաշտարարը նպաստում է կողմերի միջև հաղորդակցությանը և բանակցություններին՝ օգնելով նրանց վեճի վերաբերյալ գալու համաձայնության<sup>8</sup>:

Հաշտարարության մյուս մոդելը գնահատողական («evaluative») հաշտարարությունն է, որտեղ երրորդ կողմի՝ հաշտարարի, դերը ավելի շատ խորհրդատվական բնույթի է: Հաշտարարը կողմերին հնարավորություն ընձեռնելով ներկայացնել իրենց փաստարկները, գնահատում է դրանք, բացի այդ, հաշ-

Shevtsova, H., Maslosh, O., & Kasatkina, M., “Providing security for the development of high-technology organizations”, Journal of Security and Sustainability Issues, 8(4), 2019:

<sup>6</sup> Տե՛ս The Hague Conference on Private International Law, [https://assets.hcch.net/upload/guide28mediation\\_en.pdf](https://assets.hcch.net/upload/guide28mediation_en.pdf):

<sup>7</sup> Տե՛ս Manuel européen sur la législation en matière de médiation, CEPEJ(2019)9, 14 juin 2019: Հղումը՝ <https://rm.coe.int/cepej-2019-9-fr-manuel-pour-la-mediation-fr/1680966e5e>

<sup>8</sup> Տե՛ս “Uniform Mediation Act” 2004, USA:

տարարը կարող է արտահայտել իր դիրքորոշումը գործի էության վերաբերյալ<sup>9</sup>: Հարկ է նկատել, որ հաշտարարության այս մոդելը ըստ որոշ դիտարկումների հակասում է հաշտարարության հիմնարար սկզբունքներից մեկին. վեճի կողմերի՝ ինքնուրույն որոշում կայացնելու սկզբունքին: Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել միջազգային գրականության մեջ տեղ գտած այն դիրքորոշումը, որ վեճի կողմերը հաշտարարության ընթացքում պետք է հնարավորություն ունենան հաշտարարին խնդրել ստանձնելու մի դեր, որպիսի պայմաններում վերջինս ոչ թե կհանդիսանա երրորդ, չեզոք անձ, որը կողմերին միայն օգնում է ինքնուրույնաբար հասնելու վեճի կարգավորմանը, այլ հնարավորություն կունենա արտահայտելու իր կարծիքը վեճի վերաբերյալ՝ կողմերին առաջարկելով դրա լուծման հնարավոր բարենպաստ տարբերակներ: Որոշ երկրներում հաշտարարին հնարավորություն է ընձեռված կարծիք արտահայտելով ներկայացնելու դիրքորոշում, որը որպես կանոն, խնդրանքի տեսքով է, և պարտադիր, վեճի կողմերի փոխհամաձայնությամբ: Օրինակ՝ Լեհաստանում հաշտարարը տարբեր մեթոդներ իրականացնելով կարող է առաջարկել վեճի կարգավորման տարբերակներ, որոնք կողմերի համար պարտադիր չեն և կարող են չընդունվել նրանց կողմից<sup>10</sup>: Կամ, օրինակ, Իտալիայում, եթե վեճի կողմերը վեճի առարկայի մասին համաձայնության չեն գալիս, հաշտարարը իրավունք ունի վեճի կարգավորման առաջարկ ներկայացնել, եթե կողմերը հաշտարարության գործընթացում դիմում են հաշտարարին համատեղ խնդրանքով<sup>11</sup>:

«Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հաշտարարությունը գործընթաց է, որն ուղղված է կողմերի համաձայնությամբ իրենց միջև առկա վեճն անկողմնակալ երրորդ անձի՝ հաշտարարի օգնությամբ հաշտությամբ լուծելուն: Ներկայումս հաշտարարության ինստիտուտն իր ուրույն տեղն ունի՝ որպես տարաբնույթ վեճերի, մասնավորապես՝ ընտանեկան, քաղաքացիական, աշխատանքային, արդյունավետ լուծման տեսանկյունից:

Միջազգային փաստաթղթերի շարքում կարևոր տեղ է զբաղեցնում Միջազգային առևտրային հաշտարարության և հաշտարարության միջազգային համաձայնագրերի մասին UNCITRAL 2002 թվականի օրենքը: Այս տիպային օրենքը կարգավորում է հարցերի լայն շրջանակ, որոնք առնչվում են հաշտարարության բնականոն կազմակերպմանը և անցկացմանը: Մասնավորապես, սահմանվում են հաշտարարների նշանակման ընթացակարգը, հաշտարարի և կողմերի միջև հաղորդակցությունը, հաշտարարի կողմից կողմերին տեղեկատվության բացահայտման կարգը, ապացույցների քննությանը վերաբերող

<sup>9</sup> St' u Report "Alternative dispute resolution: Mediation and conciliation", Law Reform Commission, Ireland, (LRC 98-2010), հղումը՝ [https://www.lawreform.ie/\\_fileupload/reports/r98adr.pdf](https://www.lawreform.ie/_fileupload/reports/r98adr.pdf) :

<sup>10</sup> St' u The Republic of Poland, the Code of Civil Procedure, հոդված 183:

<sup>11</sup> St' u The Republic of Italy, Legislative Decree of March 4, 2010, հոդված 11 (1):

մի շարք հարցեր, հաշտության համաձայնության իրավական ստատուսը և այլն: Հաշտարարության վերաբերյալ կանոններ են սահմանվել նաև Առևտրային միջազգային պալատին կից գործող Վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների Միջազգային կենտրոնի (International Center for ADR) կողմից: Վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների Միջազգային կենտրոնը, որն առանձնացված մարմին է, համակարգում է Հաշտարարության կանոնների (ICC Mediation Rules) կիրառումը:

Հաշտարարության վերաբերյալ կանոններ են սահմանվել նաև ԵՄ թիվ 2008/52/ԵՄ դիրեկտիվով (այսուհետ՝ Դիրեկտիվ): Դիրեկտիվով տրվում է հաշտարարության հասկացությունը, կարգավորվում են հաշտարարների որակավորմանը, հաշտարարության գործընթացի իրականացմանը, հաշտարարության արդյունքում ձեռք բերված համաձայնության կատարմանն առնչվող հարցեր: Դիրեկտիվի նպատակն է պարզեցնել վեճերի լուծման գործընթացը՝ հաշտարարության կիրառումը խթանելու և հաշտարարության ու դատավարական ընթացակարգերի միջև հավասարակշռություն ապահովելու միջոցով: Դիրեկտիվը կիրառվում է քաղաքացիական և առևտրային գործերով միջազգային բնույթի վեճերի նկատմամբ, բացառությամբ իրավունքների և պարտականությունների, որոնց վերաբերյալ կողմերն իրավունք չունեն ինքնուրույն որոշում կայացնելու կիրառելի իրավունքին համապատասխան:

***Այսպիսով, հաշտարարության կիրառումը՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային եղանակ, թույլ է տալիս հաշտարարության կողմերին խուսափել ավելորդ դատական քաջքշուկներից և ծախսերից, միաժամանակ՝ հնարավորություն ընձեռելով փոխադարձ համաձայնությամբ լուծել առաջացած վեճը:***

Հայաստանում «Հաշտարարության մասին» օրենքի ընդունմամբ սահմանվեցին հաշտարարության իրականացման իրավական հիմքերը: «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է հաշտարարության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով հաշտարարության իրականացման սկզբունքները, հաշտարարի վարքագծի կանոնները, իրավունքները և պարտականությունները, հաշտարարի որակավորման և որակավորումը դադարեցնելու հիմքերը, հաշտարարության իրականացումը կանոնակարգող և այլ դրույթներ: Օրենքի ընդունմամբ սահմանվեցին հաշտարարության իրականացման իրավական հիմքերը, նախատեսվեցին կարգավորումներ հաշտարարության իրականացման սկզբունքների, հաշտարարների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի համաձայն, հաշտարարը անկախ, անկողմնակալ, գործի ելքով շահագրգռվածություն չունեցող ֆիզիկական անձ է, որն իրականացնում է հաշտարարություն՝ կողմերի միջև առկա վեճը հաշտությամբ լուծելու նպատակով:

ՌԴ-ում 2010 թվականին «Միջնորդի մասնակցությամբ վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգի մասին (հաշտարարության ընթացակարգը)»

դաշնային օրենքի ընդունմամբ ի հայտ եկան օրենսդրական դրույթներ, որոնք ամրագրում էին հաշտարարության գործընթացը որպես ոչ դատական հաշտության գործընթաց: Նշված օրենքի համաձայն հաշտարարության գործընթացը սահմանվում է որպես հաշտարարի օգնությամբ կողմերի կամավոր համաձայնության հիման վրա վեճերը լուծելու միջոց՝ փոխադարձ ընդունելի լուծման հասնելու նպատակով:

Հաշտարարության գործընթացին նմանատիպ բնորոշում է տրվում նաև ամերիկյան հայրենական օրենսդրությամբ: ԱՄՆ-ում հաշտարարությունն ընկալվում է որպես ընթացակարգ, երբ միջնորդը (հաշտարարը) նպաստում է կողմերի միջև հաղորդակցության հաստատմանը վեճը կողմերի կամավոր համաձայնությամբ լուծելու նպատակով<sup>12</sup>:

Գերմանական օրենսդրությամբ հաշտարարության գործընթացը սահմանվում է հետևյալ կերպ. հաշտարարությունը գաղտնի և կառուցվածքային ընթացակարգ է, որի ընթացքում կողմերը ձգտում են կամավոր և սեփական պատասխանատվությամբ վեճի փոխշահավետ լուծմանը մեկ կամ մի քանի հաշտարարների օգնությամբ<sup>13</sup>:

Հաշտարարության վերաբերյալ կանոններ սահմանող ԵՄ դիրեկտիվի 3-րդ հոդվածի համաձայն՝ **«Հաշտարարություն»** նշանակում է ցանկացած գործընթաց անկախ դրա նշանակումից, որի դեպքում վեճի երկու կամ ավելի կողմեր դիմում են երրորդ կողմին իրենց վեճը լուծելու նպատակով պայմանավորվածություն ձեռք բերելու համար և անկախ այն հանգամանքից, թե արդյոք այս գործընթացը նախաձեռնվել է կողմերի կողմից, առաջարկվել թե նշանակվել է դատարանի կողմից, թե նշանակվել է համաձայն ԵՄ անդամ պետության ազգային օրենսդրության: Այս սահմանումը ներառում է դատավորի կողմից նշանակվող հաշտարարությունը, բայց ոչ համապատասխան վեճի հետ կապված ցանկացած իրավական գործընթաց: Բսկ **«Հաշտարար»** նշանակում է ցանկացած երրորդ կողմ, որը նպաստում է հաշտարարությունն արդյունավետ, օբյեկտիվ և պատշաճ կերպով իրականացնելու գործընթացին, անկախ համապատասխան ԵՄ անդամ պետությունում երրորդ կողմի անվանումից կամ մասնագիտությունից և, անկախ այն հանգամանքից, թե ինչ եղանակով է երրորդ կողմը ներգրավվել հաշտարարության գործընթացին:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է հաշտարարի իրավունքները: Հաշտարարն իրավունք ունի հաշտարարության ընթացքում հանդիպումներ կազմակերպելու ինչպես հաշտարարության բոլոր կողմերի հետ միաժամանակ, այնպես էլ հաշտարարության յուրաքանչյուր կողմի հետ առանձին, ազատորեն կիրառելու օրենքով չարգելված

<sup>12</sup> St' u Uniform Mediation Act and Official Comments // Journal of Dispute Resolution, 2003. Հատոր 4, էջ 14

<sup>13</sup> St' u **Аболонин В. О.** Закон Германии «О поддержке медиации и других форм внесудебного урегулирования конфликтов» (Mediations G), № 5, 2013, էջ 210:

հաշտարարության մեթոդներ, իր ծառայությունների դիմաց ստանալու վճար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, գովազդելու իր ծառայությունները:

Նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է հաշտարարի պարտականությունները, դրանք են՝ հաշտարարը պարտավոր է մինչև հաշտարարությունն սկսելը հաշտարարության կողմերին պարզաբանել իր դերը, հաշտարարության գործընթացի բնույթը, հաշտության համաձայնության և անհրաժեշտության դեպքում նման համաձայնություն ձեռք չբերելու հետևանքները, հրաժարվել հաշտարարություն իրականացնելուց, եթե գտնում է, որ իր մասնակցությունը հաշտարարության գործընթացին կհանգեցնի հաշտարարության որևէ սկզբունքի կամ հաշտարարի վարքագծի կանոնների խախտման, պահպանել հաշտարարության սկզբունքները և հաշտարարի վարքագծի կանոնները, անցնել հաշտարարների ամենամյա պարտադիր վերապատրաստումը և այլն:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը կանոնակարգում է հաշտարարի արտոնագրմանը, արտոնագրված հաշտարարների ռեեստրին, արտոնագրված հաշտարարների վերապատրաստմանը վերաբերող դրույթներ, նախատեսում՝ արտոնագրված հաշտարարի որակավորում ստանալու ընթացակարգը, ինչպես նաև այն պահանջների ցանկը, որոնց պետք է բավարարի այն անձը, ով ցանկանում է դառնալ արտոնագրված հաշտարար: Այս համատեքստում հարկ է անդրադառնալ արտոնագրված և հաշտարարի արտոնագիր չունեցող հաշտարարների մասնակցության հարցին հաշտարարության գործընթացում, այն է՝ նրանցից յուրաքանչյուրի մասնակցությամբ կնքված հաշտության համաձայնության իրավական ստատուսին: Ինչպես նշվեց կողմերն ազատ են հաշտարարի ընտրության հարցում և չկա որևէ սահմանափակում տվյալ պարագայում:

Հարկ է նկատել, որ «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքը կողմերի միջև առաջացած վեճը հաշտարարությամբ լուծելու համար որպես նախապայման ուղղակիորեն չի դիտարկում հաշտարարի արտոնագրված լինելու հանգամանքը: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներում օգտագործվում է «արտոնագրված հաշտարար» հասկացությունը և ոչ ուղղակի «հաշտարար»: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանը վարույթի ցանկացած փուլում կողմերին հաշտեցնելու նպատակով նրանց համաձայնությամբ կամ միջնորդությամբ իրավունք ունի նշանակելու արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց»: Բացի այդ նույն օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ եթե հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնությունը կնքվել է արտադատական կարգով՝ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ, ապա հաշտարարության յուրաքանչյուր կողմ իրավունք ունի հաշտության համաձայնությունը կնքելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմելու իր բնակության վայրի ընդհանուր իրավասության

դատարան՝ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով: Օրենսդիրը նման իրավունքի իրացման պայման է դիտարկել արտոնագրված հաշտարարի մասնակցությունը հաշտարարության գործընթացին:

Որպես ընթացակարգային գործունեության տեսակ՝ հաշտարարության գործընթացը չի կարող կազմակերպվել և հաջողությամբ իրականացվել առանց որոշակի սկզբունքների առկայության ու պահպանման, որոնք արտահայտում են հանրության պատկերացումները և հաշտարարի օժանդակությամբ վեճի լուծման կազմակերպման և իրականացման հետ կապված պահանջները (ստանդարտները)<sup>14</sup>: Այսպես, հաշտարարության ինստիտուտում գործում են մի շարք սկզբունքներ, ինչպիսիք են կամավորությունը, գաղտնիությունը, կողմերի հավասարությունը, հաշտարարի անկախությունն ու անկողմնակալությունը:

Կամավորության սկզբունքի համաձայն հաշտեցման ընթացակարգի սկիզբը և ավարտը, ինչպես նաև համաձայնության կնքումը և կատարումն իրականացվում են բացառապես հաշտարարության մասնակիցների կամքով: Կամավորության սկզբունքը գործում է ինչպես կողմերի փոխհարաբերություններում, այնպես էլ հաշտարարի հետ հարաբերություններում: Կամավորության սկզբունքը նախ և առաջ ենթադրում է հաշտարարության իրականացում՝ կողմերի փոխադարձ համաձայնության հիման վրա: Երկրորդ՝ հաշտարարության հետագա ընթացքը շարունակելը ևս կախված է կողմերի կամահայտությունից: Երրորդ՝ կողմերի համար փոխադարձաբար ընդունելի որոշումը կայացվում է առանց որևէ արտաքին միջամտության<sup>15</sup>:

Այսպիսով՝ հաշտարարությունը գործընթաց է, որին ներգրավված կողմերը առանց որևէ արտաքին միջամտության, այլ փոխադարձ համաձայնությամբ ընդունում են որոշումներ, հաշտարարը ազատորեն ընտրվում է կողմերի կողմից և ինչպես հաշտարարը, այնպես էլ կողմերը կարող են ցանկացած պահի հրաժարվել հաշտարարությանը մասնակցելուց՝ այն դադարեցնելով:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված 1-ին մասի համաձայն հաշտարարը պարտավոր է պահպանել հաշտարարության գաղտնիությունը: Հաշտարարական գաղտնիք են հաշտարարության ընթացքում բացահայտված կամ արտահայտած տեղեկությունները, հաշտարարության բովանդակությունն ու բնույթը:

Ուշադրության է արժանի այն, որ օրենսդիրը ուղղակիորեն չի սահմանափակում մի կողմից ստացված տեղեկատվությունը, առանց այդ կողմի թույլտվության, մյուս կողմին բացահայտելու հնարավորությունը:

<sup>14</sup> Տե՛ս **Сухова Н. В.**, Принципы процесса медиации, Вестник Тюменского государственного университета. Социальноэкономические и правовые исследования № 3, 2013:

<sup>15</sup> Տե՛ս **Калашникова С. И.** Медиация в сфере гражданской юрисдикции, дис... канд. юрид. наук, Уральская государственная юридическая академия, Екатеринбург, 2010, էջ 32:

Հաշտարարական գաղտնիքը կարող է հրապարակվել, եթե առկա է կողմերի գրավոր համաձայնությունը, դա անհրաժեշտ է քրեական կամ կարգապահական վարույթում իր պաշտպանության համար, և եթե առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն:

Որպես «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում տեղ գտած գաղտնիության սկզբունքի ապահովման երաշխիք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (43-րդ հոդվածի 2-րդ մաս, 4-րդ կետ) սահմանում է, որ որպես վկա չի կարող հարցաքննվել հաշտարարը, իր կողմից կամ իր մասնակցությամբ քննված որևէ գործի վերաբերող քննարկումների առնչությամբ:

Գաղտնիության մասին սկզբունքն ուղղակիորեն մատնանշված է նաև Հաշտարարների վարքագծի եվրոպական կանոնագրքում<sup>16</sup>: Գաղտնիության պահպանումը, համաձայն կանոնագրքի, հաշտարարի մասնագիտական պարտականությունն է: «Քաղաքացիական և առևտրային հարցերով հաշտարարության որոշ հարցերի վերաբերյալ» 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 2008/52/ EC դիրեկտիվի 7-րդ հոդվածը<sup>17</sup> սահմանում է, որ, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը կայացրել են այլ համաձայնություն, հաշտարարը չի կարող հարկադրվել ցուցմունք տալու այն տեղեկությունների վերաբերյալ, որոնք իրեն հայտնի են դարձել հաշտարարության ընթացքում: «Քաղաքացիական և առևտրային հարցերով հաշտարարության որոշ հարցերի վերաբերյալ» 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 2008/52/ EC դիրեկտիվի 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ԵՄ անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ եթե կողմերն այլ համաձայնություն չեն կայացրել, ոչ չէ հաշտարարը, ոչ էլ հաշտարարության իրականացման գործընթացում ընդգրկված անձինք չեն կարող հարկադրվել քաղաքացիական կամ առևտրային գործերով դատական կամ արբիտրաժային վարույթի ընթացքում ցուցմունք տալու հաշտարարության գործընթացի կամ դրանից ծագող տեղեկատվության առնչությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1. դա անհրաժեշտ է ԵՄ անդամ պետության հանրային քաղաքականության վերապահումների հաշվառման համար, մասնավորապես, երբ անհրաժեշտ է երաշխավորել երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը կամ կանխել անձի ֆիզիկական կամ հոգեկան ամբողջականությանը սպառնացող վտանգը.

2. հաշտարարության միջոցով կայացված համաձայնության բովանդակության բացահայտումն անհրաժեշտ է համաձայնության կատարման համար:

<sup>16</sup> St' u European Code of Conduct for Mediators of the European Commission. 2004, <https://www.euromed-justice.eu/en/document/eu-european-code-conduct-mediators>

<sup>17</sup> St' u Directive 2008/52/EC of the European Parliament and of the Council of 21 May 2008 on certain aspects of mediation in civil and commercial matters, 7-րդ հոդված: Հղումը՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32008L0052>

Վեճերի արտադատական լուծման ընթացակարգերում գաղտնիությունն անհրաժեշտ է այն տեղեկատվության տարածումը կանխելու համար, որը հաշտարարության գործընթացի մասնակիցներին հայտնի է դարձել հաշտարարության ընթացքում: Նման տեղեկատվությունը ներառում է, մասնավորապես, անձնական տվյալներ, ֆիզիկական անձանց անձնական կյանքի մանրամասներ, իրավաբանական անձանց առևտրային գաղտնիք, և այլն:

Կողմերի հավասարության սկզբունքը ենթադրում է, որ կողմերը հաշտարարության ընթացքում հավասար են, և ոչ մի կողմ չունի գործընթացին առնչվող արտոնություն:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է հաշտարարի վարքագծի կանոնները, ըստ որի հաշտարարի վարքագծի կանոնների նպատակն է հաշտարարի կողմից դրանք պահպանելու միջոցով նպաստել հաշտարարի անկախության և անաչառության ապահովմանը, ինչպես նաև հաշտարարի հեղինակության բարձրացմանը և հաշտարարության նկատմամբ վստահության ձևավորմանը: Հատկանշական է այն, որ նշված օրենքը, եթե հաշտարարության սկզբունքներն ամրագրելիս նախատեսել է հաշտարարի անկախության և անկողմանակալության սկզբունքը, ապա նշված նորմում առաջ է քաշում ևս մեկ հասկացություն՝ անաչառությունը, որով հաշտարարը պետք է առաջնորդվի հաշտարարություն իրականացնելիս: Քննարկվող նորմի համաձայն, հաշտարարը պարտավոր է, ի թիվս այլնի, բացահայտել կողմերին օրենքով նախատեսված կողմերի հետ փոխկապակցվածության հիմքերի կամ այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մասին, ինչպես նաև ապահովել հավասար, հարգալից և անկողմնակալ վերաբերմունք վիճող կողմերի նկատմամբ: Ըստ «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 9.1-րդ հոդվածի, հաշտարարը պարտավոր է կողմերին բացահայտել օրենքով նախատեսված փոխկապակցվածության հիմքերի կամ այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մասին: Ընդ որում, կողմի հետ փոխկապակցված հաշտարար է համարվում՝

1) կողմի կառավարման մարմնի ղեկավարը, տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) անդամը, կոլեգիալ գործադիր մարմնի անդամը, գլխավոր հաշվապահը (հաշվապահը), ինչպես նաև արդարադատության նախարարության կամ դատարանի կողմից նշանակման պահից վերջին մեկ տարվա ընթացքում նշված պաշտոններից ազատված անձը:

2) կողմի կանոնադրական (բաժնեհավաք, փայսհավաք) կապիտալի 20 և ավելի տոկոսին տիրապետող անձը:

3) կողմի կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձը կամ մարմնի անդամը:

Կողմի հետ փոխկապակցված է համարվում նաև այն հաշտարարը, որը «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 9.1 հոդվածի 2-րդ մասում նշված ֆիզիկական անձանց հետ գտնվում է նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հարաբերությունների մեջ: Ֆիզիկական անձ կողմի հետ փոխկապակցված են համարվում նրա ամուսինը, նրանց հետ երկու աստիճան ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, եղբայրը, քույրը և նրանց հետ ուղիղ վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, ամուսնու եղբայրը, քույրը:

Հաշտարարների վարքագծի եվրոպական կանոնագրքում տարբերակված են մի կողմից՝ անկախության, մյուս կողմից՝ անկողմնակալության սկզբունքները: Անկախությունը ենթադրում է, որ եթե առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են ազդել կամ կարող են դիտարկվել որպես ազդեցություն հաշտարարի անկախության վրա կամ առաջացնել շահերի բախում, հաշտարարը պետք է բացահայտի այդ հանգամանքները կողմերին՝ կամ մինչև գործի քննությունը, կամ քննության ընթացքում: Ըստ Կանոնագրքի, այդ հանգամանքներն են՝

1. կողմերի կամ նրանցից մեկի հետ ցանկացած անձնական կամ գործնական հարաբերությունը,

2. հաշտարարության արդյունքներով ուղղակի կամ անուղղակի ֆինանսայության կամ այլ շահագրգռվածությունը,

3. հաշտարարի կամ այդ կազմակերպության որևէ աշխատակցի՝ ի շահ կողմերի կամ նրանցից մեկի գործելու փաստի առկայությունը հաշտարարությունից տարբերվող այլ գործընթացում<sup>18</sup>:

***Անփոփելի վերոգրյալը կարելի է նշել, որ հաշտարարությունը վեճերի լուծմանն ուղղված անկախ գործընթաց է, որը կարգավորվում է հատուկ օրենսդրությամբ: Հաշտարարության գործընթացի կազմակերպման համար պատասխանատու է հաշտարարը, որը պարտավորվում է բացարձակ չեզոքություն պահպանել վեճի կողմերի հարաբերությունների նկատմամբ:***

**ВАРДУШ ЕСАЯН – Общая правовая характеристика медиации.** – Повышение эффективности механизма обеспечения прав и свобод человека не может происходить исключительно за счет использования императивных методов правового регулирования, поэтому в настоящее время существенно возрастает значение механизмов так называемого «саморегулирования». Поэтому для повышения эффективности защиты прав граждан необходимо обеспечить соответствие формы разрешения спора характеру этого спора («соответствие форума сути дела»).

Альтернативное разрешение споров подразумевает процесс, в котором участвует нейтральная третья сторона для содействия разрешению правовых споров посредством таких процедур, как медиация, арбитраж и т. д. Одним из альтернативных методов

<sup>18</sup> St' u European Code of Conduct for Mediators of the European Commission. 2004, հղումը՝ <https://www.euromed-justice.eu/en/document/eu-european-code-conduct-mediators>

разрешения споров является медиация, которая активно применяется в ряде стран с развитыми правовыми системами, и стороны свободны прибегнуть к медиации, где им помогает медиатор, являющийся нейтральной стороной.

**Ключевые слова:** *альтернативное разрешение споров, защита прав, альтернативные процедуры разрешения споров, процесс медиации (медиация), медиатор, нейтральный и беспристрастный, гражданско-правовые споры.*

**VARDUSH YESAYAN – General Legal Characteristics of Mediation.** – Improving the effectiveness of the mechanism for ensuring human rights and freedoms cannot be achieved solely through the application of imperative methods of legal regulation. Therefore, the importance of so-called “self-regulation” mechanisms is significantly increasing today. Consequently, in order to enhance the effectiveness of the protection of citizens' rights, it is necessary to ensure that the form of dispute resolution corresponds to the nature of the dispute (“Fitting the forum to the fuss”).

Alternative dispute resolution involves a process in which a neutral third party is engaged to assist in the resolution of legal disputes through procedures such as mediation, arbitration, and others. One of the methods of alternative dispute resolution is mediation, which is actively used in many countries with developed legal systems. The parties are free to resort to mediation, where a neutral party mediator assists them in reaching a resolution.

**Key words:** *alternative dispute resolution, protection of rights, alternative dispute resolution procedures, mediation process (mediation), mediator, neutral and impartial, civil disputes.*

## References

- Abolonin V.O. Zakon Germanii “O podderzhke mediatsii i drugikh form vnesudebnogo uregulirovaniya konfliktov” (MediationsG).
- Dragos, M.R., “Mediation: an alternative way to solve conflicts in the international business environment”, *Procedia Social and Behavioral Sciences*, 62(2), 2012.
- European Code of Conduct for Mediators of the European Commission. 2004.
- Kalashnikova S.I. Mediatsiya v sfere grazhdanskoi yurisdiksii, dis. ... kand. jurid. nauk, Ural'skaya gosudarstvennaya yuridicheskaya akademiya, Ekaterinburg, 2010.
- Manuel européen sur la législation en matière de médiation, CEPEJ (2019)9,14 juin 2019
- Report “Alternative dispute resolution. Mediation and conciliation”, Law Reform Commission, Ireland, [https://www.lawreform.ie/\\_fileupload/reports/r98adr.pdf](https://www.lawreform.ie/_fileupload/reports/r98adr.pdf)
- Sukhova N.V. Printsipy protsessa mediatsii, Vestnik Tyumenskogo gosudarstvennogo universiteta. Sotsial'no-ekonomicheskie i pravovye issledovaniya, No. 3, 2013.
- Surma, L., “Mediation in business. 18th International Scientific Conference on International Relations - Current Issues of World Economy and Politics” 2017թ., Makedon, V., Drobyazko, S., Shevtsova, H., Maslosh, O., & Kasatkina, M., “Providing security for the development of high-technology organizations”, *Journal of Security and Sustainability Issues*, 8(4) 2019:
- The Republic of Italy, Legislative Decree of March 4, 2010.
- The Republic of Poland, the Code of Civil Procedure.
- Uniform Mediation Act and Official Comments / *Journal of Dispute Resolution*. 2003. v. 4.
- Uniform Mediation Act. 2004, USA.

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆԲԱՎԱՐԱՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՔՈՎ

ՄԱՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 

*Երևանի պետական համալսարան*

Հոդվածի շրջանակներում ներկայացվել է փորձաշրջանի ինստիտուտը և փորձաշրջանում գտնվող անձի հետ աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկությունները թե՛ նյութաիրավական, թե՛ դատավարական տեսանկյունից: Անդրադարձ է կատարվել դոկտրինալ մոտեցումներին, արտասահմանյան երկրների փորձին և Վճռաբեկ դատարանի վերաբերելի որոշմանը:

Ներկայացվել են օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ, որոնք ուղղված են փորձաշրջանի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման ինստիտուտի հստակեցմանը և առավել լիարժեք կարգավորմանը: Մասնավորապես առաջարկվել է ամրագրել աշխատողի նաև մարդկային և այլ որակները փորձաշրջանի ընթացքում ստուգելու հնարավորություն և դրանով պայմանավորված՝ ազատման հրամանում պայմանագրի լուծման հստակ պատճառը չնշելու գործատուի իրավունքը:

**Բանալի բառեր** – փորձաշրջան, պայմանագրի լուծում, ազատում փորձաշրջանի հիմքով, փորձաշրջանի պայմաններ, փորձաշրջանով աշխատանքային պայմանագիր, փորձաշրջանի ինստիտուտը, փորձաշրջանն աշխատանքային պայմանագիր կնքելիս, աշխատանքային փորձաշրջան, փորձաշրջանի գնահատում, փորձաշրջանի արդյունքներ

### Ներածություն

Փորձաշրջանի ինստիտուտն աշխատանքային իրավունքին ավանդաբար հայտնի ինստիտուտներից է, որի շնորհիվ գործատուն և աշխատողը փոխադարձաբար հնարավորություն ունեն որոշելու հետագա աշխատանքային հարաբերությունների շարունակման նպատակահարմարությունը: Իհարկե, գործնականում այս ինստիտուտը կոչված է ծառայելու հենց գործատուի շահերին՝ նրան տալով հնարավորություն գնահատելու աշխատողի համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին և կատարած աշխատանքին, քանի

• **Մանե Կարապետյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

**Мане Карапетян** – кандидат юридических наук, преподаватель кафедры гражданского права ЕГУ

**Mane Karapetyan** – Candidate of Legal Sciences, Lecturer at YSU Chair of Civil Law

Էլ. փոստ՝ [mane.karapetyan@ysu.am](mailto:mane.karapetyan@ysu.am) ORCID ID: <https://orcid.org/0009-0009-4989-3851>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 10.09.2025

Գրախոսվել է՝ 24.10.2025

Հաստատվել է՝ 28.11.2025

© The Author(s) 2025

որ աշխատողը, անկախ փորձաշրջան սահմանված լինելու կամ չլինելու հանգամանքից, առանց որևէ պատճառաբանության ցանկացած ժամանակ իրավունք ունի իր նախաձեռնությամբ լուծելու աշխատանքային պայմանագիրը:

Սույն հոդվածում ներկայացվում է փորձաշրջանի ինստիտուտը՝ որպես աշխատանքային իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը, վեր են հանվում վերջինիս վերաբերյալ առկա իրավական խնդիրները, ներկայացվում են դոկտրինալ մոտեցումները և դատական պրակտիկան:

### Հիմնական մաս

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ աշխատանքային պայմանագրի կնքման ժամանակ կողմերի համաձայնությամբ կարող է սահմանվել փորձաշրջան: Այն կարող է սահմանվել գործատուի ցանկությամբ՝ նախատեսված աշխատանքին (պաշտոնին) աշխատողի համապատասխանությունը ստուգելու նպատակով, կամ աշխատանքի ընդունվողի ցանկությամբ՝ առաջարկվող աշխատանքին (պաշտոնին) իր համապատասխանությունը որոշելու համար: Փորձաշրջանի մասին պայմանները պետք է սահմանվեն աշխատանքային պայմանագրով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ փորձաշրջանի ժամկետը չի կարող երեք ամսից ավելի լինել, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «երե գործատուն կարծում է, որ նախատեսված աշխատանքում (պաշտոնում) աշխատողի համապատասխանության ստուգման նպատակով սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով աշխատողը չի համապատասխանում առաջադրված պահանջներին, ապա կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը աշխատողին ազատել աշխատանքից՝ այդ մասին երեք օր առաջ գրավոր ծանուցելով նրան»:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ փորձաշրջանի ինստիտուտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1. փորձաշրջան կարող է սահմանվել աշխատողի կամ գործատուի նախաձեռնությամբ,
2. փորձաշրջանը սահմանվում է որոշակի ժամկետով, որի ընդհանուր տևողությունը երեք ամիս է<sup>1</sup>,

<sup>1</sup> ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում կարող է սահմանվել մինչև 12 ամիս տևողությամբ փորձաշրջան, ինչը, մեր կարծիքով, արդարացված չէ ժամկետի երկարատևության տեսանկյունից, սակայն փորձաշրջանի ժամկետի վերաբերյալ հիմնախնդիրը սույն հոդվածի ուսումնասիրության տիրույթից դուրս է, ուստի այս մասով վերլուծություններ սույն աշխատանքում չեն կատարվում:

3. փորձաշրջանի սահմանվելու դեպքում պետք է սահմանվեն նաև փորձաշրջանի պայմաններ,

4. փորձաշրջանի ընթացքում կարող է կատարվել նախատեսված աշխատանքում (պաշտոնում) աշխատողի համապատասխանության ստուգում:

Ինչպես արդեն նշել ենք, սույն հոդվածի քննարկման առարկան հենց գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման հնարավորությունն է փորձաշրջանի ընթացքում, քանի որ աշխատողի ցանկության դեպքում հավելյալ դրկտրինալ ուսումնասիրությունների անհրաժեշտություն, մեր կարծիքով, առկա չէ, քանի որ աշխատողը, անկախ փորձաշրջանի առկայությունից կամ բացակայությունից, միշտ կարող է իր նախաձեռնությամբ լուծել աշխատանքային պայմանագիրը՝ առանց որևէ պատճառաբանություն ներկայացնելու պարտականություն կրելու:

Առկա իրավական կարգավորման համատեքստում գործատուն փորձաշրջանի անբավարար արդյունքների հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս առնվազն բախվում է հետևյալ երկու խնդիրներին.

- արդյո՞ք ունի իրավունք փորձաշրջանի անբավարար արդյունքների հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատանքային պայմանագրում սահմանված չեն փորձաշրջանի պայմաններ,

- արդյո՞ք ազատ է փորձաշրջանի արդյունքները գնահատելու հարցում՝ այդ թվում հաշվի առնելով ոչ միայն աշխատողի մասնագիտական, այլ նաև մարդկային և այլ որակները:

### **Փորձաշրջանի պայմաններ սահմանված չլինելը՝ որպես աշխատանքային պայմանագրի լուծման խոչընդոտ**

Հատկանշական է, որ 2004 թ. ընդունված աշխատանքային օրենսգրքի տեքստում սահմանված չի եղել փորձաշրջանի պայմաններ սահմանելու պարտականություն, և այս փոփոխությունը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածում կատարվել է միայն 2015 թ. հունիսի 22-ին ընդունված՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքով՝ ըստ էության աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դրվելուց շուրջ տասը տարի անց:

Միայն այն փաստը, որ փորձաշրջանի պայմաններ սահմանելու վերաբերյալ պարտականությունը օրենսդիրը սահմանել է ավելի ուշ կատարված օրենսդրական փոփոխությամբ, արդեն հուշում է, որ այս ինստիտուտը հստակ կարևորվել է և չի կարող անտեսվել:

Այդուհանդերձ, օրենսդիրը չի սահմանել, թե որոնք են փորձաշրջանի պայմանները: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 91-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ փորձաշրջանի ընթացքում աշխատողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սահմանված են աշխատանքային օրենսգրքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով:

Ստացվում է, որ փորձաշրջանի պայմանները չեն կարող դրսևորվել աշխատողների իրավունքների կամ պարտականությունների այլ ծավալ սահմանելով, իսկ ինչպես կարող են դրսևորվել, սահմանված չէ:

Ինչպես իրավացիորեն նկատել է Ս. Յու. Գոլովինան, հասկացությունների ոչ հստակ սահմանումները կամ դրանց բացակայությունը իրավակիրառողին հնարավորություն են տալիս մանիպուլացնելու դրանց իմաստը<sup>2</sup>:

Նման պայմաններում ցանկացած գործատու, ըստ իր ճաշակի, ցանկացած նախադասություն կարող է ձևակերպել որպես փորձաշրջանի պայման, քանի որ չկա սահմանված չափանիշ, և «փորձաշրջանի պայման» եզրույթը նաև հանրահայտ չէ, ավելին, անգամ միասնական գիտական մոտեցում առկա չէ փորձաշրջանի պայմանների վերաբերյալ:

Այլ խնդիր է, թե որն է լինելու փորձաշրջանի պայման չսահմանելու հետևանքը, արդյոք այն հանգեցնելու է առհասարակ փորձաշրջան սահմանված չլինելուն, թե՛ դրա հետևանքը լինելու է, օրինակ, տեսչական վերահսկողության արդյունքում աշխատանքային օրենսդրության խախտման արձանագրումը:

Այս հարցի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը հայտնել է իր դիրքորոշումը 2021 թ. ԵԴ/40356/02/19 որոշմամբ (**այսուհետ՝ Վճռաբեկ դատարանի որոշում**)՝ հայտնելով մասնավորապես հետևյալը. «Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ փորձաշրջանի պայմանները կարող են չտարբերվել աշխատանքի ընդհանուր պայմաններից, այսինքն՝ փորձաշրջան սահմանված չլինելու դեպքում, կողմերի միջև սահմանված սովորական աշխատանքային պայմանները կարող են նույնանման լինել, ինչ որ փորձաշրջանի ընթացքում աշխատանքի պայմանները, նկատի ունենալով, որ օրենսդրի կողմից փորձաշրջանի պայմանների վերաբերյալ որևէ որոշակի պահանջներ սահմանված չեն: Հետևաբար տարբերվող պայմաններ սահմանված չլինելը դեռևս չի նշանակում, որ փորձաշրջանի պայմաններ սահմանված չեն»:

Ինստիտուցիոնալ առումով ՀՀ վճռաբեկ դատարանը պարզաբանել է այն վիճելի հարցը, որ փորձաշրջանի պայմաններ սահմանված չլինելը չի կարող հանգեցնել փորձաշրջան սահմանված չլինելուն: Այս առումով մենք կիսում ենք Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, սակայն համամիտ չենք այն հարցում, որ գործատուն ըստ էության չունի փորձաշրջանի պայմաններ սահմանելու պարտականություն:

Մեր համոզմամբ՝ օրենսդիրը ավելի քան հստակ է սահմանել գործատուի պարտականությունը՝ փորձաշրջան սահմանելու դեպքում աշխատանքային

<sup>2</sup> См. и Головина С.Ю. Проблемы формулирования дефиниций в трудовом законодательстве России // Законодательная дефиниция: логико-гносеологические, политико-юридические, морально-психологические проблемы: материалы междунар. «круглого стола» / под. Ред. В.М. Баранова и др., Н.Новгород: Нижегород. Исслед. Науч.-приклад. Центр «Юридическая техника», 2007, էջ 655:

պայմանագրում ներառել փորձաշրջանի մասին պայմաններ, իսկ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ տարբերվող պայմաններ սահմանված չլինելը դեռևս չի նշանակում, որ փորձաշրջանի պայմաններ սահմանված չեն, ուստի, ըստ էության, ՀՀ վճռաբեկ դատարանը հնարավոր է համարել փորձաշրջանով աշխատանքային պայմանագրերում փորձաշրջանի պայմաններ չսահմանելը:

Ինչևէ, ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ փորձաշրջանի պայմանների բացակայությունը արգելք չէ փորձաշրջանի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման համար:

### **Փորձաշրջանի ընթացքում աշխատողի համապատասխանության ստուգման սահմանները**

Հատկանշական է, որ օրենսդիրը չի սահմանել համապատասխանության ստուգման բովանդակությունը և ձևաչափը. արդյո՞ք դա վերաբերում է բացառապես մասնագիտական պատրաստվածությանը կամ աշխատանքը կատարելու հմտություններին, թե՞ նաև մարդկային որակներին:

Տարբեր երկրներում փորձաշրջանի գնահատմանը տարբեր չափանիշներ են սահմանվում: Օրինակ՝ Ֆրանսիայի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը սահմանում է, որ փորձաշրջանի նպատակը աշխատողի հմտությունների ստուգումն է՝ նրա փորձի հաշվառմամբ<sup>3</sup>:

Միացյալ Թագավորությունում փորձաշրջանի վերաբերյալ հարաբերությունները կարգավորվում են դատական նախադեպով, որով սահմանված է, որ փորձաշրջան սահմանելիս գործատուն պետք է աշխատողին տեղեկացնի, թե ինչ սպասումներ ունի նրա գործնական հատկանիշներից<sup>4</sup>:

Բելգիայում փորձաշրջանի փոխարեն լայնորեն տարածված է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրեր կնքելը<sup>5</sup>, ինչն էլ, ըստ էության, նույնն է, թե առանց աշխատողի վարքագծին վերաբերող պատճառի աշխատանքային պայմանագրի լուծումը ժամկետը լրանալիս:

«Դատարանների կողմից ՌԴ աշխատանքային օրենսգրքի նորմերի կիրառման մասին» ՌԴ գերագույն դատարանի պլենումի 17.03.2004 թ. որոշմամբ սահմանվել է, որ աշխատողի գործնական հատկանիշները ներառում են ոչ միայն աշխատողի մասնագիտական որակները, այլ նաև անձնական հատկանիշները<sup>6</sup>:

<sup>3</sup> Sté u Art. L1221-20 Code du travail (2007 vers. 2021) Available at: [https://www.legifrance.gouv.fr/codes/section\\_lc/LEGITEXT000006072050/LEGISCTA000019067609/#LEGISCTA000019071115](https://www.legifrance.gouv.fr/codes/section_lc/LEGITEXT000006072050/LEGISCTA000019067609/#LEGISCTA000019071115) (15.02.2025)

<sup>4</sup> Sté u Employment Relations Act № 24 (2000 vers. 2021), Available at: [http://www.nzlii.org/nz/legis/hist\\_act/era20002000n24280.pdf](http://www.nzlii.org/nz/legis/hist_act/era20002000n24280.pdf) (15.02.2025)

<sup>5</sup> Sté u Employment Law Overview. Brussels, 2020, էջ 6:

<sup>6</sup> Sté u **Белозерова К.А.** Значение термина «деловые качества» для определения пределов рассмотрения сторон трудовых отношений при приеме на работу// Рос.юстиция. 2016. № 12, էջ 13:

Կան երկրներ, որտեղ հստակ նշված է, որ գործատուն փորձաշրջանի անբավարար արդյունքների հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման բացարձակ հայեցողությամբ օժտված չէ: Օրինակ՝ Իրաքի աշխատանքային օրենսգրքով սահմանված է, որ գործատուն իրավունք ունի փորձաշրջանի ընթացքում լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատողը չունի աշխատանքը կատարելու համար բավարար որակավորում<sup>7</sup>:

Ինչպես տեսնում ենք արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությունից, կան պետություններ, որոնք փորձաշրջանի ընթացքում միայն մասնագիտական հմտությունների ստուգման հնարավորություն են սահմանում, և կան պետություններ, որոնք գործատուին առավել լայն հայեցողություն են տրամադրում:

Մասնագիտական գրականության մեջ բաց է մնում այն հարցը, թե արդյոք գործատուն փորձաշրջանի ընթացքում անսահմանափակ հայեցողություն ունի աշխատողի ունակությունների և վարքի գնահատման հարցում. եթե այո, ապա գործատուի այդ իրավունքը չի կարող դառնալ դատական վերահսկողության առարկա, և աշխատողների կողմից ներկայացված անարդար ազատման վերաբերյալ բոլոր հայցերը պետք է մերժվեն<sup>8</sup>:

Հատկանշական է, որ մասնագիտական գրականության մեջ նույնպես միասնական մոտեցում առկա չէ այն հարցում, թե արդյոք աշխատողի միայն մասնագիտական, թե նաև մարդկային և այլ որակները կարող են ստուգվել փորձաշրջանի ընթացքում:

Ըստ Ն. Տ. Մելեշենկոյի՝ փորձաշրջանի էությունն այն է, որ գործատուն հնարավորություն ունենա փորձաշրջանի ընթացքում ստուգելու աշխատողի որակավորման համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին և պարզեցված կարգով ազատելու նրան աշխատանքից՝ համապատասխան մակարդակի որակավորում չունենալու փաստի ապացուցման դեպքում<sup>9</sup>:

Ըստ Օ. Վ. Զավգորոդնայայի՝ փորձաշրջանի ընթացքում աշխատողի անհամապատասխանությունը հավաստելու համար պետք է փաստվեն այն դեպքերը, երբ աշխատողը չի կարողանում պատշաճ կատարել իրեն հանձնարարված աշխատանքը կամ կատարում է այլ խախտումներ, օրինակ՝ խախտում է աշխատանքային կարգապահությունը: Այս փաստերը պետք է փաստաթղթավորվեն՝ հնարավորության դեպքում նշելով պատճառները<sup>10</sup>:

<sup>7</sup> Տե՛ս **Omed A. Ismail**. Unfair Termination Review During Probationary Period. The Case of Iraq in Light of New Judiciary Trends. Pro Futuro 2019/4, էջ 81:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 82:

<sup>9</sup> Տե՛ս **Мелешенко Н.Т.** Сущность испытательного срока как условия трудового договора. //Вестник ТвГУ. Серия "Право", 2019 № 2(58), էջ 110:

<sup>10</sup> Տե՛ս **Завгородняя О.Н.** Испытательный срок: правовые аспекты и типичные ошибки.// Журнал трудовое право, №1, 2009, էջ 78:

Առանձին գիտնականների կարծիքով՝ փորձաշրջանի արդյունքները գնահատելու գործատուի իրավունքը չի կարող կրել բացարձակ բնույթ, քանի որ այն կհանգեցնի չարաշահումների, և փորձաշրջանով աշխատողների հետ պայմանագրերը կարող են լուծվել ցանկացած պատճառով: Հետևաբար, գործատուին աշխատողի համապատասխանությունը գնահատելու բացարձակ իրավունքի վերապահումը կհանգեցնի աշխատանքային իրավունքի հիմնական էության խախտմանը, որը միտված է աշխատողներին բավարար պաշտպանությամբ ապահովելուն<sup>11</sup>:

Մենք համամիտ ենք իրավաբանական գրականության մեջ հանդիպող այն դիտարկմանը, որ փորձաշրջանում գտնվող աշխատողն ունի աշխատանքի պաշտպանվածության ավելի ցածր շեմ, քան հիմնական աշխատողները, և հիմնական տարբերությունը վերաբերում է պաշտոնավարմանը<sup>12</sup>: Ակնհայտ է, որ եթե փորձաշրջանի ընթացքում գործատուն իրավունք ունենա ստուգելու աշխատողի բացառապես մասնագիտական որակները, ապա կիմաստագրկվի փորձաշրջանի ինստիտուտն իր հիմնական բովանդակությամբ, քանի որ «վատ մասնագետի» հետ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքեր առկա են նաև փորձաշրջանի ժամկետը լրանալուց հետո, իսկ «մարդկային անընդունելի որակներ» ունեցող անձի հետ աշխատանքային պայմանագրի լուծման որևէ հիմք առկա չէ:

Օրինակ՝ նաև շատ լավ մասնագետը կարող է սուտ խոսել, ստեղծել անառողջ մթնոլորտ, չարաշահել կարծիք արտահայտելու իր իրավունքը՝ առանձին դեպքերում վիրավորելով այլ անձանց կամ բացահայտելով այլ աշխատողներին վերաբերող անձնական բնույթի տեղեկություններ, քննադատել գործատուին, այդ թվում սոցիալական ցանցերում կամ զանգվածային լրատվամիջոցներով և այլն:

Ուստի, մեր համոզմամբ, գործատուի և աշխատողի շահերի ողջամիտ հավասարակշռման տեսանկյունից փորձաշրջանի ընթացքում գործատուները պետք է ունենան աշխատանքային պայմանագրի լուծման բացարձակ հայեցողություն:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարել լրացում և հստակեցնել, որ փորձաշրջանի ընթացքում ստուգվում է աշխատողի մասնագիտական, անձնական և այլ որակների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին և կատարած աշխատանքին: Մյուս կողմից, ի տարբերություն մասնագիտական որակների ստուգման, անձնական որակների

<sup>11</sup> Stéu **Bonvin, Jean-Michel-Farvaque, Nicolas**. Promoting Capability for Work: The Role of Local Actors. In: Deneulin, Séverine-Nebel, Mathias-Sagovsky, Nicholas (eds.): Transforming Unjust Structures: The Capability Approach. Springer, Dordrecht, 2006, 121–142. (doi: 10.1007/1-4020-4432-1\_7)

<sup>12</sup> Stéu **Elangkovan Narayanan, Leena Ismail, Palani Krishnasamy** etc. Why do Employers Extend the Probationary Period of Fresh Graduates after Employment Feedback from The Human Resource Managers. International Journal of Academic Research in Business & Social Sciences, էջ 591:

ստուգումը չափելի չէ, ուստի չի կարող դառնալ դատական վերահսկողության առարկա:

Այս տեսանկյունից խնդրահարույց է փորձաշրջանի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում հրամանում փաստական հիմք սահմանելու գործատուի պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «Դատարանը բոլոր դեպքերում վիճարկվող անհատական ակտը ճանաչում է անվավեր, եթե դրանում նշված չէ համապատասխանաբար աշխատանքային պայմանագիրը կամ անհատական իրավական ակտը փոփոխելու, լուծելու ... **փաստական** կամ իրավական հիմքը»:

Այս առումով մենք համամիտ չենք Ս. Ռ. Բագենսթոնի այն մոտեցմանը, որ գործատուները միևնույն է՝ փորձաշրջանի ընթացքում աշխատանքային պայմանագիրը լուծելիս պարտավոր են ապացուցել «արդար պատճառ»-ը<sup>13</sup>, քանի որ «արդար պատճառ»-ի վկայակոչման դեպքում այն դառնալու է դատական վերահսկողության առարկա, և դատարանն է ի վերջո որոշելու այդ պատճառի արդար կամ անարդար լինելը, և դա էլ լավագույն դեպքում, եթե հնարավոր լինի ապացուցել այդ պատճառի առկայությունը թույլատրելի և վերաբերելի ապացույցներով:

Մեր համոզմամբ՝ փորձաշրջանի դեպքում փաստական հիմքի ուղղակի վկայակոչումը, հատկապես այն դեպքերում, երբ գնահատվել է փորձաշրջանում գտնվող անձի մարդկային որակը, խիստ խնդրահարույց է: Օրինակ, եթե անձի հետ պայմանագրի լուծման փաստական հիմքը նրա կողմից տարբեր անձանց վատաբանելն է, ապա դա դատարանը կարող է դիտարկել որպես խտրականություն կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրացման առումով, եթե անձի հանդուգն կամ անհարգալից պահվածքն է, ապա սա որպես փաստական հիմք նշելու դեպքում մեծ հավանականությամբ հնարավոր չի լինելու ապացուցել, եթե չարությունը կամ նախանձն է, ապա սա բարոյական նորմերի խախտման հարթությունում է, որը իրավական նորմերի կիրառելիության տեսանկյունից չափելի չէ և այլն:

Ուստի, մենք լիովին կիսում ենք ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ հայտնած այն դիրքորոշումը, որ փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հանգամանքը որպես փաստական հիմք նշելը արդեն իսկ բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի պահանջի պահպանման տեսանկյունից:

Հատկանշական է, որ նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից սահմանված չափանիշը փորձաշրջանի մասով մեղմ է: Մասնավորապես, 1982 թ. ընդունված Աշխատանքային պայմանագրի լուծման մասին ԱՄԿ 158-րդ կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում է, որ անդամ պետությունները

<sup>13</sup> St' u **Bagenstos, S.R.** Employment Law and Social Equality, Michigan Law Review, Vol. 112, No. 2 (November 2013), էջեր 225-273, էջ 112:

կարող են բացառել կոնվենցիայի բոլոր կամ առանձին դրույթների կիրառումը նախապես որոշված և ողջամիտ ժամկետով սահմանված փորձաշրջանի ընթացքում աշխատողների նկատմամբ<sup>14</sup>:

### Եզրահանգում

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ փորձաշրջանի ինստիտուտը, որպես աշխատանքային իրավունքի կենտրոնական ինստիտուտներից մեկը, թերի է կարգավորված, ինչն էլ իր հերթին հանգեցնում է գործնական խնդիրների թե՛ վերջինիս կիրառման, թե՛ դատական մեկնաբանությունների համատեքստում:

Ստացվում է, որ մի կողմից գործատուները փորձաշրջանով աշխատող ընդունելիս չեն կարող լիարժեք պատկերացում կազմել՝ արդյո՞ք պարտավոր են հիմնավորել, թե ինչու են անբավարար համարում փորձաշրջանի արդյունքները, մյուս կողմից իրավական կարգավորումն անորոշ է նաև աշխատողների համար, և հստակ չէ՝ արդյո՞ք նրանց, օրինակ, մարդկային որակները, որոնք չափելի չեն, կարող են գնահատման առարկա դառնալ փորձաշրջանի ընթացքում, թե՛ ոչ, և արդյո՞ք նրանք կարող են ստանալ պատճառաբանված անհատական ակտ՝ աշխատանքային պայմանագիրը փորձաշրջանի անբավարար արդյունքների հիմքով լուծվելու դեպքում:

Այս համատեքստում փորձաշրջանի ինստիտուտը լիարժեք կարգավորելու համար ներկայացվում են թե՛ նյութական և թե՛ դատավարական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկություններ:

Նյութական իրավունքի զարգացման տեսանկյունից առաջարկում ենք ՀՀ աշխատանքային օրենսգրքի 91-րդ հոդվածում կատարել լրացում և հստակեցնել, որ փորձաշրջանի ընթացքում ստուգվում է աշխատողի մասնագիտական, անձնական և այլ որակների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին և կատարած աշխատանքին:

Այս լրացման շնորհիվ փորձաշրջանի ինստիտուտը կդառնա հստակ կարգավորված և կանխատեսելի թե՛ աշխատողի և թե՛ գործատուի շահերի պաշտպանության տեսանկյունից:

Այդուհանդերձ, միայն նյութական իրավունքի զարգացումով գիտության առջև դրված խնդիրը չի լուծվի, եթե համապատասխանաբար չհամապատասխանեցվի դատավարական օրենսդրությունը:

Ուստի անհրաժեշտ է լրացում կատարել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածում՝ սահմանելով, որ հրամանի փաստական հիմքը փորձաշրջանի անբավարար արդյունքների հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում առկա է համարվում բոլոր այն դեպքերում, երբ անհատական ակտը պարունակում է նշում փորձաշրջանի

<sup>14</sup> St' u [https://normlex.ilo.org/dyn/nrmlx\\_en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100ILOCODE:C158](https://normlex.ilo.org/dyn/nrmlx_en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100ILOCODE:C158) (14.04.2025):

արդյունքներն անբավարար գնահատված լինելու վերաբերյալ: Այս փոփոխության կատարման դեպքում կլինի հստակ իրավական կարգավորում առ այն, որ փորձաշրջանի դեպքում գործատուն պարտավոր չէ պատճառաբանել իր գնահատումը, և աշխատողն էլ չունի նման պատճառաբանություն պահանջելու իրավունք:

Վերը նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, մեր համոզմամբ, փորձաշրջանի ինստիտուտը կլինի հստակ կարգավորված և կանխատեսելի թե՛ աշխատանքային իրավունքի սուբյեկտների, թե՛ դատարանների համար՝ բացառելով նույն նորմի տարաբնույթ մեկնաբանությունները:

**МАНЕ КАРАПЕТЯН – *Расторжение трудового договора в связи с неудовлетворительными результатами испытательного срока.*** – В статье рассматривается институт испытательного срока и особенности расторжения трудового договора с лицом, находящимся на испытательном сроке, как с материально-правовой, так и с процессуальной точки зрения. При этом были сделаны ссылки на доктринальные подходы, опыт зарубежных стран и соответствующее решение Кассационного суда.

Внесены предложения по внесению изменений в законодательство, направленных на уточнение и более полное регулирование института расторжения трудового договора с учетом испытательного срока. В частности, предложено уточнить возможность проверки человеческих и иных качеств работника в период испытательного срока и, соответственно, право работодателя не указывать в приказе об увольнении точную причину расторжения договора.

**Ключевые слова:** *испытательный срок, расторжение трудового договора, увольнение на основании испытательного срока, условия испытательного срока, трудовой договор с испытательным сроком, установление испытательного срока, испытательный срок при заключении трудового договора, испытательный срок при приеме на работу, оценка испытательного срока, результаты испытательного срока.*

**MANE KARAPETYAN – *Termination of Employment Contract Based on Unsatisfactory Results of the Probationary Period.***– The article presents the institution of the probationary period and the peculiarities of terminating an employment contract with a person on probation, both from a substantive and procedural point of view. Reference is made to doctrinal approaches, the experience of foreign countries, and the relevant decision of the Court of Cassation.

Proposals for legislative amendments are presented, which are aimed at clarifying and more fully regulating the institute of terminating an employment contract on the basis of a probationary period.

In particular, it was proposed to clarify the possibility of testing the employee's human and other qualities during the probationary period and, accordingly, the employer's right not to indicate the exact reason for the termination of the contract in the dismissal order.

**Key words:** *Probationary period, termination of contract, dismissal on the basis of a probationary period, probationary period conditions, employment contract with a probationary period, the institution of a probationary period, probationary period when concluding an employment contract, labor probationary period, probationary period evaluation, probationary period results.*

**References**

- Bagenstos Samuel R., Employment Law and Social Equality, Michigan Law Review, Vol. 112, No. 2 (November 2013), pp. 225-273.
- Bagenstos, S.R. Employment Law and Social Equality. Mich.L.Rev., 225:
- Belozérova K.A. Znachenie termina “delovye kachestva” dlya opredeleniya predelov usmotreniya storon trudovykh otnoshenii pri prieme na rabotu // Ros.yustitsiya. 2016. No.12.
- Bonvin, Jean-Michel–Farvaque, Nicolas: Promoting Capability for Work: The Role of Local Actors. In: Deneulin, Séverine–Nebel, Mathias–Sagovsky, Nicholas (eds.): Transforming Unjust Structures: The Capability Approach. Springer, Dordrecht, 2006, 121–142. (doi: 10.1007/1-4020-4432-1\_7)
- Elangkovan Narayanan, Leena Ismail, Palani Krishnasamy etc. Why do Employers Extend the Probationary Period of Fresh Graduates after Employment Feedback from The Human Resource Managers. International Journal of Academic Research in Business & Social Sciences:
- Golovina S.Yu. Problemy formulirovaniya definitsii v trudovom zakonodatel'stve Rossii // Zakonodatel'naya definitsiya: logiko-gneseologicheskie, politiko-yuridicheskie, moral'no-psikhologicheskie problemy: materialy mezhdunar. “kruglogo stola” / pod red. V.M. Baranova i dr., N. Novgorod: Nizhegorod. Issled. Nauch.-priklad. Tsentr “Yuridicheskaya tekhnika”, 2007.
- Meleshenko N.T. Sushchnost' ispyatel'nogo sroka kak usloviya trudovogo dogovora // Vestnik TvGU. Seriya “Pravo”. 2019, No.2(58).
- Omed A.Ismail. Unfair Termination Review During Probationary Period. The Case of Iraq in Light of New Judiciary Trends. Pro Futuro 2019/4:
- Zavgorodnyaya O.N. Ispyatel'nyi srok: pravovye aspekty i tipichnye oshibki // Zhurnal Trudovoe Pravo, No.1, 2009, p. 78.

Խմբագրության հասցեն՝ Երևան, Խ. Աբովյան փող., 52ա  
Адрес редакции: Ереван, ул. Абовяна 52а  
Address: 52a, Kh. Abovyan str., Yerevan

Գայք՝ [journals.ysu.am](http://journals.ysu.am)  
Էլ. փոստ՝ [ephbanber@ysu.am](mailto:ephbanber@ysu.am)

Հրատարակչական խմբագիր և  
թողարկման պատասխանատու՝  
Издательский редактор  
Publishing Editor

Արմեն Հովակիմյան  
Армен Овакимян  
Armen Hovakimyan

Վերստուգող սրբագրիչ՝  
Контрольный корректор  
Proofreader

Գայանե Գրիգորյան  
Гаяне Григорян  
Gayane Grigoryan

Տեխնիկական խմբագիր՝  
Технический редактор:  
Technical Editor:

Հասմիկ Նազարեթյան  
Асмик Назаретян  
Hasmik Nazaretyan

Ստորագրված է տպագրության 28. 11. 2025: